

ԽԱՉԻԿ ՍԱՄՈՒԵԼՅԱՆ

Հ Ի Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի  
Կ Ո Ւ Լ Տ Ո Ւ Ր Ա Ն

ԵՐՐՈՐԳ ՀԱՏՈՐ

АКАДЕМИЯ НАУК СССР — АРМЯНСКИЙ ФИЛИАЛ  
ИНСТИТУТ ИСТОРИИ И МАТЕРИАЛЬНОЙ КУЛЬТУРЫ

ПРОФ. Х. САМУЭЛЯН

# КУЛЬТУРА ДРЕВНЕЙ АРМЕНИИ

ТОМ ТРЕТИЙ

*Бронзовый и ранний железный век*  
СОЦИАЛЬНАЯ КУЛЬТУРА

(На армянском языке)

ИЗДАТЕЛЬСТВО АРМФАН-а  
ЕРЕВАН 1 9 4 1

37(47.925)  
21-17

ՍՈՍՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԱՍՏԱՆ ՖԻԼԻԱԼ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

62.

ՊՐՈՖ. Խ. ՍԱՄՈՒԵԼՅԱՆ

# Հ Ի Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Կ Ո Ւ Լ Տ Ո Ւ Ր Ա Ն

ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐ

Բրոնզե ու վաղազույն երկաթե դար  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՈՄՆՏՈՒՐԱ

8065

Ա Ր Մ Ֆ Ա Ն - Ի Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Չ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
ԵՐԵՎԱՆ 1 9 4 1

### ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Պրոֆեսոր Կալիկ Սամուելյանի (1873—1940) ներկա աշխատությունը մեր շին Հայաստանի կուլտուրան և առհասարակ մտնողրափայլի վերջին մասն է: Մտնողրափայլի առաջին հատորը լույս է տեսել 1931 թվին Հայկոտերատի, երկրորդը՝ 1941 թվին սկզբներին ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական փիլիալի Պատմության և Նյութական Կուլտուրայի Ինստիտուտի հրատարակությամբ:

Սամուելյանի ուսումնասիրության, ինչպես առաջին և երկրորդ, այնպես էլ ճերկա երրորդ մասը գիտական խոշոր արժեք ունի քե՛ փաստական հարուստ մատերիալի և քե՛ ընդհանուր բնույթ կրող եզրակացությունների տեսակետից: Ճիշտ է, սույն հատորը, որ շարագրել է հեղինակը 1933—1934 թ. թ. ընթացում, ունի վիճելի մի շարք դրույթներ, սակայն չնայած դրան, Հայաստանի մշտրական կուլտուրայի հարցերի լուսարանման բնագավառում բեղմնավոր սյրոփեսորի մտնողրափայլան դեռևս մնում է սրպես միակ լուրջ գործը:

Ներկա հատորը, ինչպես կտեսնի ընթերցողը, չունի իլյուստրացիոն մատերիալ: Հեղինակը չէր հավաքել հարկ եղած մկարները, իսկ առանց հեղինակի հեռարավոր չեղավ կատարել այդ գործը:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՒՎՏՈՒՐԱՅԻ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ

## ՅԱՆԿ ԿՐՃԱՏՎԱԾ ԱՆՈՒՆՆԵՐԻ

ԿՄԿ—Կ. Մարտի, Կապիտալ, I հատոր:

ՄԲԲ—Կ. Մարտի, Քաղաքաանասության քննադատության շուրջը:

ԷԸԾ—Յր. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության  
մտպույժը:

ԷՄԳ—Յր. Էնգելս, Անտի-Պյուրիզմ:

ԱԼ—«Ազգայնական Լանդես, Քիֆլիս»:

ՎՀՆ—Պ. Վանցյան, Հում նյութեր հայ համայնքի ուսումնասիրության  
«Մուրճ» ամսագիր, 1896 թ. Ձ 1, Քիֆլիս:

ԼԳԳ—Արվ. Լալայան, Գամբաների պեղումներ Պարսրդային Հայաստանում,  
Երևան, 1932 թ.

ԿՄԿ—К. Маркс, Капитал, III т.

ԿՄՈՅ—К. Маркс, Перетиска с В. Засулич. Архив К. Маркса и Ф.  
Энгельса, т. I.

ՄՃ—И. Мещанинов, Халдоведение, Баку, 1927 г.

ԼՏ—Ленин, Полное собрание сочинений.

ԼՄԱ—Lehmann-Haupt, Armenien einst und jetzt. II հատոր, Ա մասը—II<sup>1</sup>,  
Բ մասը—II<sup>2</sup>.

„Если рассматривать какое угодно общественное явление в процессе его развития, то в нем всегда окажутся остатки прошлого, основы настоящего и зачатки будущего“.

Ленин

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

ՆԱԽՆԱԳԻՐՅԱՆ-ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԿՎՈՒԹՅՈՒՆ

I

ՏՈՃՄ ԵՎ ՅԵՂ

Հայկական լեռնաշխարհի նյութական կուլտուրան, որ սեռ-ստեփան առանք նախորդ շարահյուսության մեջ (II հատոր), վկայում է, որ հին Հայաստանի բրոնզե ու վաղադուրյն երկաթե զարերի ժողովուրդները ներկայացնում էին այնպիսի հասարակական կազմ, ուր արդեն սկսվել էր սոցիալական շերտավորումը: Մտկայն մինչև այդ՝ սեղանի ժողովուրդներն աղբյուր էին նախնադարյան-համայնական հասարակարգով, որի քայքայման պրոցեսն իր վերջին շունչն էր մշտնապես երկաթե խնդուստրայի սկզբնավորման շրջանում:

Մենք արդեն տեսնք (I հատոր), որ տախվին նեոլիթի սկզբից սկսում է զարգանալ տունային կարգը: Այդ շրջանին յուրահասանելի արտադրական հարաբերությունների շնորհիվ, սրոնք ստեղծվել էին արտադրողական ուժերի զարգացման ցածր տասն-ձաններում, այդ սոցիալական կազմը բացառապես մտորելարիասական, մայրիշխանական էր (I, 216—269): Դա այն տունային կազմն էր, ուր նախնադարյան կոմունիստական սնանասության մեջ դերակշռող ու ղեկավար դերը պատկանում էր կնոջը՝ մորը, որն առաջինն զբաղվեց երկրագործությունով, հողի մշակման գործով: Ուստի առհմն ամբողջովին կառուցված էր մորական

արյունահեղութեան վրա, տղզակցութեան մտրական դժի վրա, ուր զատկանները նշուեցան ու բարձրագույն կազմով էին մտր հետ ու մտանգում էին միմիայն մտր գծով:

Մակայն մայրական տունն իր մեջ պարփակում էր ներքին հակասութեաններ, որոնք պայմանավորում էին նրա ինքնաշարժումը, հրք մատրիարխատի մի քանի էական—հիմնական հասկոթյուններն սկսում են դառնալ հենց իրենց հակադրութեանները: Արտագրութեան որոշ պատմական ձևերի հակասութեանները զարգացումը, ասում է Կ. Մարքը, նրա քայքայման ու նորի (ձևի) զարգացման միակ պատմական ուղին է» (ԿՄԿ 1): Այդ սոցիալական հակասութեանները՝ կառնում են նրա քայքայման պատճառը: Մայրական տունը հազմաբազմակ է և իր միջին հետադիմական առաջացում է նոր ծագող սոցիալական տանը: Մատրիարխատը փոխարինվում է պատրիարխատով՝ հայրիշխանութեամբ:

Բայց այդ սոցիալական փոփոխումով չեն փոխվում տոնմային հասարակութեան էական հիմքերը, որոնք ըստ Մարքսի բնորոշման՝ կայանում են հետևյալում. 1) նախնադարյան տոնմային համայնքները միացած ու ամբացած են արյան սերտ ու կայուն կապերով. նրանք հանդուժում են իրենց անդամների միջև դրսևյան ունեցող արյունակցի տղզակցութեան հարբերութեանները վրա. 2) տոնմային համայնքների անտեսական հիմքն են հանդիմանում ընդհանուր սունն ու բնակարանը. 3) տոնմային համայնքներում աշխատանքը կատարվում է ընդհանուր կերպով, կոլեկտիվորեն և ընդհանուր արդյունքը բաշխվում է սուննի անդամների միջև ըստ չաբքանչչուրի սպառման կարիքի, բացառութեամբ արդյունքի այն մասի, որը հատկացվում է վերաբերութեան համար: Միևնույն ժամանակ տոնմային հասարակութեան սոցիալական կառուցքը շարունակում է պահպանել սեռահասակային բնույթ, որ բլխում է նրա աշխատանքի սեռական ու հասակային բաժանումից (ԿՄԿ, 272 և 284):

Տունները, թե ինչպես ներքին հակասութեանները պայթեցրին մայրական տունն ու առաջացրին հայրական տունը:

Մայրական տունում, ինչպես գիտենք, կնոջ կարյալը որոշ դեր էր խաղում: Նա իր արական ֆիզիկական ուժի շնորհիվ հանդիմանում էր իր քրոջ ու նրա զավակների գաշտպանը, տոնմային

դինոթրն ու որսորդը. նա որոշ չափով ծանր ֆիզիկական աշխատանք էր կատարում թե իր քրոջ համար և թե իր կնոջ համար, որը դառնում էր այլացող մայրական տունում: Կնոջ կորը այդ սոցիալական դերը, այսպես կոչված ավուճկուլատը, արքեն բնորոշ է նրանով, որ հանդիմանում էր մի տեսակ փոխանցիկ սոցիալական աստիճան, որով մայրիշխանության մեջ թեքումն է ստանալուով գեղեկ այդ մարդու իշխանութեանը, միևնույն ժամանակ ամուր պահելով դեռևս մայրական իրավունքի նշանակութեանն ու սոցիալականը:

Արտագրական ուժերի զարգացումով ու տեխնիկայի կատարելագործմամբ մայրիկային երկրագործութեանը, որ դառնում էր միայն կնոջ ձեռքին բնակարանին կից փոքրիկ հողամասում, հետզհետե ընդարձակվելու և զարգանալու էր, որովհետև երկրագործական այդ եղանակը բավարար քանակով բերք չէր տալիս և չէր կարող գոհացնել երգած և անոց կարիքը: Պահանջ էր զգացվում երկրագործության համար նորանոր հողամասեր ձեռք բերելու: Այդ արվում էր հաճախ անասունը հաստանելով կամ աչրկելով, բացառ հողերը ծառերի կանգերից ու հաստանելով արմատներից մաքրելով: Այդ աշխատանքը կանացի ուժերից վեր էր և դառնում էր այդ մարդկանց գործ:

Լայնացած հողերն այլևս անկարելի էր բրխելով մշակել, և անա բրխելին դալիս է փոխարինելու նոր, համեմատաբար այլևի կատարյալ գործիք՝ նախնական արորը, լակ հետագայում էլ դուրբանը: Արորի հիմնական կոնստրուկտիվ զարգացումը մագում է բրխելից, որը վերածվում է լստի: Արորը, որ սկզբներում քարեում էին մարդկային ուժով և ապա միայն խոշոր եղջյուրավոր անասունների ընտանեցումով՝ եղների ու գոմշների միջոցով, այլևս հնարավոր չէր կանացի ձեռքով տաջ ասներ: Այստեղ էլ այդ մարդու աշխատանքը տիրեց սպարիդին. սպարիդը երկրագործական ծանր ու պատասխանատու աշխատանքի տեր դարձավ՝ կնոջը թողնելով գաշտային թեթև և երկրորդական աշխատանքը:

Մյուս կողմից էլ որսորդութեանը, որ մայրական տունի անտեսութեան մեջ, իբրև այդ մարդկանց զբաղմունք, գերադասող տեղ էր բունում, ժամանակներին ընթացքում կորցնում է իր անտեսական նախկին նշանակութեանը: Այդ անտեսութեան գի-

շատիչ ձևի շնորհիվ, հետզհետե նվազում է որսի քանակը սվայլ տոնի սեղանի սեղանի սահմաններում, որի անձկուքյունն սկսում է զգալի դառնալ բնակչության ստվարացումով: Բացի այդ՝ որսորդությունն ինքնին անապահով, չարքաշ աշխատանք էր, լարված թափափոխի կյանքի հետ կապված, նա շատ անգամ իր արդյունքներով չէր համապատասխանում թափած եռանդին և չէր բավարարում սննդի պահանջները քանակին: Այստեղից ծագում է կենդանիների, այդ նախկին որսերի, բնակչացման անհրաժեշտությունը: Որսորդն սկսում է արդեն անասնապահությունը դրսևել: Ուրեմն անասնապահությունն էլ դառնում է այդ մարդու դժոճ:

Պարզիով մայրական տոնի մեջ հեղաշեռն զարգանում են տրորային երկրագործությունն ու անասնապահությունը: Մրանք հանդիսանում են հիմնական արտադրական ճյուղերը. մեկը՝ երկրագործության համար նպաստավոր զաշտավայրերում, անասնապահության բացասանքում, իսկ մյուսը՝ անասնապահության համար անհրաժեշտ կեր մատակարարող սեղանական տափաստաններում և սարավանջերում:

Այդ երկու արտադրական ճյուղերը կենսորոնացնելով իր ձևերը, այդ մարդը դառնում է այն առաջըրը, որի շուրջն է այնուհետև սկսում պտտվել տոնի բովանդակ անասնապահությունը, նրա անորոշությունն տակ է անցնում բոլոր արդյունքներից, նա դառնում է հասարակական հարստության տնօրինողն ու սեփականասանքը: Սկսում են առաջանալ նոր արտադրական հարաբերություններ, որոնք միանգամայն հակասում են մայրական տոնի սոցիալ-անասնապահ կառույցներին: Փոխվում են կերը և սարքը, հոր և մոր միջև հարաբերությունները, որոնք սկսում էին մայրական տոնում: Այնտեղ հայրը պատկանում էր միշտ այլ տոնին, իսկ նրա զավակները՝ մոր տոնին: Ըստ մայրական տոնի սոցիալական իրավունքի՝ զավակները չէին կարող ժառանգել հորը: Մայրական իրավունքն այդ հոր պայմաններում դառնում էր մի սեռակ արգելակ հասարակական զարգացման համար, որովհետև կուտակված հարստությունը հոր մահվանից հետո անցնում էր նրա տոնին և դառնում նրա արյունակից տոնիկների սեփականություն: Ուստի մայրական իրավունքը պետք է ոչնչացվեր: Այդ առթիվ Ձր. Էնդելսոն ասում է. «Շա-

րստությունների ավելացումը մի կողմից՝ տղամարդուն ավելի ազդեցիկ դիրք էր տալիս ընտանիքի մեջ, քան թե կնոջը, իսկ մյուս կողմից՝ մղում էր առաջ բերում օգտագործելու այդ մարդացած դիրքը նրա համար, որպեսզի փոխվի ժառանգության նախնական իրավունքի համաձայն: Պետք էր ուրեմն ստացվել այն, և իսկապես էլ ստացվեց այն: Այդ այնքան էլ զժվար չէր, ինչպես մեղ է թվում այսօր: Որովհետև այս ռեալիտան,—ամենավճռական ռեալիտաներից մեկը, որ այդի է մարդկությունը—կարիք չուներ շոշափելու որևէ տոնի կենդանի անգամներից և ոչ մեկին: Նրա բոլոր անգամակցները կարող էին էլի մնալ այն, ինչ որ եղել էին: Բավական էր միայն պարզ որոշում կայացնել, որ այսուհետև տոնի արական անդամների զավակները պետք է նույն տոնի մեջ մնան, իսկ իրական անգամները զավակները պետք է նույն տոնի մեջ չմնան, այլ անցնեն իրենց հոր տոնի մեջ: Դրանով վերացվում էր ազգակցությունը կանացի գծով հաշվելու սովորությունը և մայրական ժառանգական իրավունքը և նրա վերաբերյալ հաստատվում ազգակցության հայրական գիծն ու ժառանգության հայրական իրավունքը» (ԷԸՄ, 62—63):

Տղամարդը կենսակցություն համար այլևս չէր գնում զեպի մայրական տոնը, այլ ձևաք էր բերում իր համար կին, սուսանգելով կամ գնելով այլ տոնից: Այդ կինն ստիպված էր այժմ մտնել նրա սուսը, նրա տոնը և այնտեղ մշտապես ապրել այդ մարդու իշխանության ներքո: Նա զրկվում է իր նախկին իշխանությունից, իրավունքներից, իր անասնապահությունից, իր արտադրից, որոնք մի ժամանակ մայրական տոնի հիմքերն էին կազմում: Այսպիսով մատերաբխատը փոխվում է պատերաբխատի «Մայրական իրավունքի ստացումը կամացի սեռի կամաշխարհային պարտությունն էր: Տղամարդն իր ձևքն առավ նաև սուս զեկավարությունը. կինն ստորացվեց, ստրկացվեց, զարձավ լոկ նրա ցանկությունների ստրկուհին և երեխա ծնելու գործիք» (ԷԸՄ, 64):

Ի՞նչ հասարակական ձև է ստանում մայրական տոնին հաջորդող հայրական տոնը, պատերաբխատը:

Պատերաբխատը կուտակված է հայրական իրավունքի ըմ-

բըռնման վրա, ազգակցութեան հորական գծի վրա: Հայրական տոհմի անդամները կապված են իրար հետ հորական ծագումի արյունակցութեամբ, ուր սրդիները ծնող են ճանաչում միայն իրենց հորը և ժառանգում են հորական գծով: Այդ սոցիալ-իրավական հոր ըմբռնումն առաջանում է նրանից, որ ամուսնութեամբ նստնում է պատրիարխի ամուսնական հարաբերութեանը: Կանգնում են սղամարդու՝ հոր տան հարկի տակ, զավակները ծնվում են հոր տանը, ճանաչում են արգին իրենց հորն անձնապես: Հայրական իշխանութեանն սկզբներում, երբ մայրական տոհմի նախնավանդ սովորութեաններն ու մտայնութեանը գեներա իսպոտ չէին վերացել, այնքան էլ խիստ ու միահեծան բնույթի, բռնակալ հատկութեան չէր կրում, ինչպես հետագայում մայրական տոհմի անկացումով:

Հայրական տոհմի գլուխն է համարվում տոհմապետը, կամ տոհմի նահապետը՝ պատրիարխը, որ այժմյան հուլաուրացիս հետամնաց մտղավորդներն՝ ալայրենիք ցեղերի մեջ, որոնք տակալին ապրում են տոհմային կարգերում, ընտրվում է քրոջը տոհմակիցների կողմից կամ, որ ավելի հաճախ ու սովորական է, տոհմի ամենահարուստ ու ամենապղծիցի կերպաստանից նահապետ են դառնում ժառանգաբար: Տոհմային հարաբերութեաններում վերանում են խմբակցական ամուսնութեան ձևերը և տիրում է դուրյալին կինակցութեան: Տոհմի անդամները իրավունք չունեն ամուսնանալու իրենց տոհմի կանանց հետ, այլ կարող են կին վերցնել միայն օտար աստից: հետևողիս ամուսնութեանն էքսպրեսիվական (աշխարհ) է: Միևնուրեքի գուրբը տոհմի ստամանդներից գուրբ չի կարող ելնել, այլ անցնում է տոհմակիցներին, մտալով միշտ տոհմի մեջ: Տոհմակիցները պարտավոր են օգնել ու պաշտպանել իրար, վրեժխնդիր լինել իրենց աստիակիցների սպանութեան կամ վիրավորման զեպքերում: Տոհմը կարող է իր մեջ ընդունել օտարներին որպես հարազատ անգամ՝ որպիսորութեան հպանակով և նրանց ճանաչել իրավազոր տոհմակիցներին: Տոհմի ընդհանուր իրավասութեանն ու համայնական սեփականատիրութեան տակ է գտնվում ամբողջ վարելահողը և արտավայրերը: Տոհմն ունի իր սեփական անունը, որով նա տարբերվում է ու ճանաչվում մյուս տոհմերի կողմից, իր տոհմային տոները, ճանգիտները, գերեզմանները: Ահա սրանք են հայրական տոհմի,

պատրիարխատի էական բնորոշ գծերը, որոնք հետագա մեր շարահյուսութեան մեջ ավելի կմանրամասնենք հին Հայաստանի հայրական տոհմի սոցիալ-տնտեսական ձևերը տեսութեան անկախ:

Պատրիարխատական տոհմատիրութեան հետ սերտորեն կապված է հայրիշխանական մեծ ընտանիքի կամ, ինչպես հայերի մեջ հայտնի է, նահապետական գերպատանի գոյութեանը: Նահապետական գերպատանը առաջանում է մասնավոր սեփականութեան, նախ և առաջ տնասունների վրա տարածվող սեփականատիրութեան ծագումով: Նրա մեջ թաքնված են սաղմային գրութեամբ և՛ ճարտային և՛ ստրկական հարաբերութեանները: Այնտեղ տիրում է հոր, նահապետի տնտեսման իշխանութեանը: Հայր-իշխանական (նահապետական) գերպատանն այսպիսով առաջանում է այն ժամանակ, երբ նախնադարյան-համայնական հասարակութեանը, կամ ինչպես ընդունված է նաև սակ նախնադարյան կոտունիզմն սկսում է քայքայվել, երբ տոհմի մեջ գոյատևում են ճեղքվածքներ, սոցիալական տրոհումներ: Փ. էնդելսը նահապետական գերպատանը, հայրիշխանական ընտանիքական համայնքը համարում էր նախնադարյան կոմունիզմի վերջին կտավը, երբ նրա մի քանի հիմնական հատկութեաններն սկսեցին դառնալ իրենց հակադրութեանը, երբ դրսևորվեցին ու ձևավորվեցին նախնադարյան կոմունիզմից դեպի ավելի բարձր հասարակական — տնտեսական կազմը փոխանցող ժամանակաշրջանի բնորոշ գծերը:

Որոնք էին նախնադարյան-համայնական հասարակութեան քայքայիչ գործոնները:

Այդ հասարակութեան գոյութեան պայմաններն էին՝ չափազանց անզորագամ արտադրութեանը, որ ամբողջված էր բացառապես համայնքի ինքնակազմ ասումաներում, արտադրողական ուժերի զարգացման ստոր մակարդակը, պրիմիտիվ տեխնիկան: Արտադրողական ուժերի ստոր տնտեսման արտահայտվում էր բնականորեն աճած սեռա-հասակային ու միջնամայնքային աշխատանքի բաժանումով, որը զարգանում էր համայնական սեփականատիրութեան շրջանակներում: Սակայն արտադրողական ուժերի աճումով սեռա-հասակային և համայնամիջյան աշխատանքային բաժանումը դառնում է այն մեկնակետը, որից արգին

ծագում և զարգանում է աշխատանքի հասարակական բաժանումը, որն և աարբալուծում, քայքայում է նախնազարյան կոմունիզմի հիմքերը:

Համայնամիջյան աշխատանքի բաժանման հետ ուրտորեն կապված էր համայնամիջյան փոխանակութունը: Համայնամիջյան փոխանակութունը, որպես փոխանակության առաջին, ամենահին ձևը, միանգամայն տարբերվում է հետագա բոլոր փոխանակական ձևերից: Այսպեղ փոխանակող կողմեր էին հարկատուում ոչ թև մասնավոր անձաններ, համայնքի նոսանձին անդամներ, քանի որ գոյութուն չուներ անհատական սեփականատիրութունը, այլ առանձին համայնքները, տոնային միավորները, իբրև ժամկետորեն կապված ամբողջութուն» (Վ. Մարքս), որոնցից յուրաքանչյուրը զարգացնում էր իրեն հատուկ և մյուսներից տարբերվող մասնագիտական արտադրութուն: Համայնամիջյան աշխատանքի բաժանումն առաջին անգամ արտահայտվել է աշխատանքի այն մեծ հասարակական բաժանման մեջ, որով անասնապահութունը արտմել է երկրագործութունից (էԸԾ, 193), իսկ այդ պարագան բնականորեն առաջացնում էր փոխանակութուն երկրագործական ու անասնապահական համայնքներին միջև իրենց արտադրած արգասիքներով: Այնուհետև աղի է ունենում աշխատանքի երկրորդ խոշոր բաժանումը՝ երկրագործութունից անջատվում է արհեստը (էԸԾ, 198): Մրա հնա միասին ավելի լայնանում է համայնամիջյան փոխանակութունը արհեստավորական արտադրանքներով:

Համայնամիջյան աշխատանքային բաժանումը և համայնամիջյան փոխանակութունը հանդիսացան այն գործոնները, որոնք սկսեցին քայքայել տոնմային կապը, արոհել նախնազարյան կոմունիզմի ժամկետորեն շարժակալված ամբողջութունը, առաջացնելով ներհամայնական աշխատանքի բաժանումը, որի սաղմերը տակավին պարփակված էին բնականորեն աճած աշխատանքի բաշխման, այն է՝ սեռա-հասակային աշխատանքի բաժանման մեջ:

Տոնմի կազմալուծման, նախնազարյան կոմունիզմի քայքայման պրոցեսը ցայտուն կերպով բնորոշում է Լենինը հետևյալ խոսքերով. «Երբ համայնքի մեջ թափանցեց աշխատանքի բաժանումը և նրա անգամներն սկսեցին յուրաքանչյուրն առանձին

պրոպղիլ որևէ արդյունքի արտադրությամբ և այն հանել վաճառքի, այն ժամանակ ավարանքարտադրչների այդ նյութական ասանձնացման արտահայտումը հանդիսացավ մասնավոր սեփականության ինստիտուտը» (ՄԸ, 1, 72):

Տոնմային հասարակական ձևերում գոյութուն ունեն նաև ավելի խոշոր սոցիալական միավորներ՝ ցեղեր: Մրանք ներկայացնում են խնկապես տոնների միություններ, որոնք իբրև հետ սիրտ կապեր են պահպանում մի կողմից՝ ազգակցական ու ամուսնական բնույթի և մյուս կողմից՝ անտեսական (փոխանակության միջոցով) ու ռազմական բնույթի: Տոնն ինքնին որոշ իմաստով հանդիսանում է ցեղի սաղմային ձևը, նրա սկզբնական բջիջը: Ժամանակների ընթացքում աճելով ու բազմանալով, կրթ արդեն չափազանց սավաբացած տոնն անկարող է իր տոնմասկառի կենտրոնաձիգ ազդեցությամբ տարածել և նրա իրավունքն ու արտջնորգությունը պահպանել բնակչության նսուսումով չայնարժակ ծավալ ստացած տերիտորիայի վրա և աշխուղ ծավալված արտադրական հարտերությունների մեջ, տոնը արոհվում է: Անջատվելով գոյանում են, հետագա հեղակետև արճուումներով, առանձին նոր տոններ: Մրանք պահպանում են իրենց սոցակցական կապերը, շարունակում են իբրև կառչել փոխադարձ արտադրական հարաբերություններով ու սոցիալ-ամուսնական շահերով, պահպանում են սկզբնական մայրենի լեզուն ու տոնմային կենցաղային և պաշտամունքային բնուրոշ գծերը: Այդպիսի տոնումով գոյացած տոնները, նույնիսկ դարեր անցնելուց հետո, իրենց շարկապող հարաբերությունների, հավատալիքների ու ավանդությունների, իրենց փոխադարձ կոնկակով սոցիալության ու պաշտպանության ձևերակառնների մեջ վառ են պահում մի նախատոնից սերվելու և գոյանալու հեշտատվը, մի նախահամայնքի անտեսությունից անջատվելու դադափաբը, որ իր արտահայտումն է դսնում առանձին տոնմիբին պատկանող համայնական հողերի պարփակումը բոլոր տոնների ընդհանուր հողի ցեղական համայնականության մեջ, Ահա այդ նախատոնից բաժանված տոնները, չլեղելով իբրևից սոցակցական ու անտեսական կապերի վրա հիմնված հարաբերությունները, մնում են իբրև միացած մեկ ցեղի մեջ, որն ինքնին մի սավաբացած բազ-



մատթեճան ստեճմային հասարակություն է, բողկացած ստանձին տոճմային կողեկաիվ միավորեճերից:

Այդ եճ սողացուցուճ բողմոթիվ ազգազրակոճ տվյաճերը թեճ նեկեա Վյաթեճեթ ժողովուրդեճերի և թեճ Նիճ պտոճական ժողովուրդեճերի նկատոճմամբ:

II

ՏՈՂԻՄ ԱՐԽԱՅԻԿ ՇՐՋԱՆՈՒՄ ԸՄՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ

Արդ դաճոճանք Հայեկական Առնաշխարհին և տեճնեճք, թե այդ սեղ բրոճղե և վողազույճ երկաթե դարաշրջոճում իճնչ հասարակական կողմ է դոյություն ուճեցեղ: Այդ դեպքուճ վտաճեկի աղբյուրեճերն եճ հոճղկաճարու տնշուշտ հոպոթությունեճ ու լեղվտաճարոճությունը: Սակայճ միճչև արժմ մեր ուճեցոճմ հոպոթական տվյաճերը, կարելի է ստեղ բողացապեճ վերաբուճում եճ դոճմաճնեթին և սրաճց պեղուճով արտաբերվոճմ գերեղմոճնային իճվեճտարին, որոճք որոշակի չեճ պարզուճ մեղ հեճտաքքբբոզ հարցը: Այդ տվյաճերը լուսավորուճմ եճ ստեղ մեղ մոճմեճոր, այճ էճ թողմոճն հեճ աղերս ուճեցող հավատալեթեճերն ու կեճցողային մի բաճի դճերը, որոճք միեճյճ աղտ ուղինեթ եճ բաճում այդ հիճնավուրց հասարակական ձեկերի մեջ թափաճեցեղու համար: Միճչղեճ այդ կողմից ալեկի շաճեկան ու թաճեղաթեթ էին լինեղու այճ տվյաճերը, որոճք պտոթկերացնում եճ կեճցողին կյաճքը, անտեսական դորճոճեկությունը, արտադրական հարտաբերությունեթեր բրոթըճող նյութթական կուլտուրայի իրեղյեճն վտաոթերը: Այդ տեճակ տվյաճեր կարող եճ պաճպաճվոճմ լինել գլխավորապեճ հոպոթյուն բնակակոյաճնեթերի, շեճերի, գյուղավոյրերի, բնակարաճնեթի ալեկրակ մոպողղեճերուճ, որոճք սակայճ ցարղ չեճ հայտաբերվիլ, որովհետեճ այդ ուղղությամբ հոպոթաոթական հեճտախուզումեթեր ու պղուճմեթր սակալին չեճ կաճտարվոճմ: Իսկ գիպվոճմորեճն միճչև օրս հայտաբերվոճմ կաճ պեղվոճմ հոպոթական բնակաոթեթերը վերաբերուճմ եճ ալեկի հեճանազույճն դարերին, երբ սոճմային հասարակության սորհուճով աղեճն տիրուճ էր ֆեոդոլական դասակարգային կողմը:

Նույճն ստեղու եճք լեղվտաճարաճության մասին, որն սո այժմ ալեկի սող նյութ է ներկայացնում մեղ հեճտաքքբբոզ դաճ

աղբյուրանի նկատմամբ: Մեղ հայտնի չեճ Հայեկական լեճնաշխարհի այդ արխայիկ դարերի ժողովուրդեճերի լեղուճեթը, նրաճց աղիակական տեթմիճնեթը, քաճի որ երբեմին այդ խոտաճ, կեճցողանի լեղուճեթը չքացեղ եճ անհեճ, իսկ նրաճցից մնացած սակավթիվ գոպոթարազրական ու հիերոգլիֆյաճն լեղվտական նշաճնեթը մըճնում և և կիճան թեթրեճ անլեթմաճնելի: Այդ տեսակեճից հուստաու գրավականեթ է ներկայացնում այպեճ կոչվոճմ կաթերակաճ լեղվտգիտուճիճյունը, որը, հիճնվոճմ լինելով ու սոաջ մղվելով սկապեկեկու Ն. Մաոթ ուսուճմաթերությունեթեր շերտիվ, մեղ հայտնի բաճերի սեճմաճիկ շարքերի վերլուճմամբ դորճում է գրեճտեղ նրաճց սցիլոպական հիմքերն ու արտազրական հարաբերությունեճի միջավայրը: Ստեղոճն հարեթական լեղվտգիտությունը, սակալին նոր լինելով և դեճ լիովին չհաղթելով իր ուսուճմաթերի թնողավոճը, աւաճոճմ այճքաճն էլ հարուստ չէ արդյունքեթերով: Բեճնագրեթով մեղ հայտնի ու վերճմվոճմ ամեճնաճիճն բնիկ լեղուճն Հայկական լեճնաշխարհում ցարղ հոճղիտաճնում է խողղակաճը (չհաշվոճմ հաթականը), որն արղեճն վերաբերուճ է նույճպեճ գոսակարգային հասարակությանը՝ վողազույճ ֆեոդոլիցով շրջոճնին:

Հայեկական լեճնաշխարհում պեղվոճմ դաճմաճնեթը պտոթկանում եճ գլխավորապեճ բրոճղե դարերի վերջալուճին և վողազույճն երկաթի սղգեճնական շրջաճնեթերին (II, 21—37), Այդ բրոճոճները, կապվոճմ լինելով թողմոճնաճ առնչող հավատալեթեճերի հեճ, որոշ չափով պարզում եճ տերող կրոճապաշտաճմաճքային հայացքեթերը, որոճք մեղ ամաճում եճ ֆեոդոլական հասարակությունից դեպի ալեկի հոպոթյուն հասարակական ձեթերը, ֆեոդոլիցովին նախըճեթաց սցիլոպական աշխարհն իր հողեթր կուլտուրայի բնորոշ գճերով: Դա սոճմային հասարակարգն է:

Տոճմային հասարակության կրոճապաշտաճմաճքային հայացքեթերը բեկվոճմ եճ անիմիտաճական հավատալեթեճերի հոպոթալություն մեջ, ուր սոճմայնակարգ սեղ էր բաճում սոճմի հիմնալուճն և բնղհանրապեճ սոճմապեճանեթի և սպա սոճմի մյուս անղամեթերի ողիների մճմարուճը, որ վերաճվոճմ էր մայեթիեթի պաշապաճմաճի: Նախնեթերի պաշտաճմաճքն առակիլուճակ գորղաճում է պատրիարխատական՝ հայրական սոճմային հասարակարգուճմ, դաճոճալով կրոճական հավատալեթեճերի այճ ժաճմաճկաճ

8265

անկյունաքարը և յուրամտուկ կնիք դրոշմելով կենցաղային բովանդակ կազմի վրա: Տոհմային հասարակության անիմաստական հայացքներով, նախնիների ուղիները շարունակում են իրենց ազգայնական կապը պահպանել կենդանի տոհմակիցների հետ: Ուստի վերջինները պարտավոր են անմուսաց պահել նրանց հիշատակը, սիրաշունչ այդ ուղիներին, որոնք շարունակում են հանդերձյալ կյանքում ապրել նյութական նույն պահանջներով, նույն անհատական և հասարակական ձգտումներով, սբն ունեին իրենց կենդանի կյանքում, իրենց սոսմի միջավայրում: Այստեղից էլ առաջանում էր այն հավատալիքը, որ անհրաժեշտ է մեռած նախնիներին պահանջներն և կարիքները բավարարել, հողով նրանց հանդերձյալ գոյությունը բարորությամբ պահպովելու, որպեսզի այդ ուղիացած նախնիները լինեն առաջվա պես պաշտպան իրենց սոսմի և հարստացնող նրա նյութական բարիքների, հսկասակ պարագայում այդ ուղիները կլցվեն բարկությամբ և իշնամանալով, հարստե չարիք կզառնան կենդանի տոհմակիցների համար: Ուստի սոսմի մահացած անդամին թաղելիս, զերեղծանում նրան շրջապատում էին այն բոլոր կենցաղային պարագաներով, որոնք նրան հասուկ էին կենդանության մասնանկ:

Անս այդ սոցիալական մոմենտն ենք նկատում այն բոլոր դամբաններում, որոնց մասին խոսվել է շարահյուսությանն նախորդ հատորում: Թեև այդ դամբանները պակասում են վաղադուր մնացող ինդուստրիայի շրջանի արզեն շերտավորվող հասարակական կաղմին, բայց և այնպես թաղման բոլոր հանդամանքներում տակավին մնացել են զեղա-տոհմային պատրիարխատական հավատալիքների վերապրուկները: Մեռյալին զետեղում էին քարտրիզի մեջ, որ համանշ ռեսպեկտն էր նրա երբեմնի բնակատեղանի: Մեռյալի հետ զնում էին այն բոլոր մարտական և ալտարդրական գործիքները, այն բոլոր կենցաղային պիտուկները՝ զեխտաներ, զարքարանքներ, ամաններ մեջը լի կերակրով և ըմպելիով, որոնք նա գործածել էր կենդանության օրերին, նրա հետ երբեմն թաղում էին նույնիսկ իր կնոջն և երիտասարդին, փոխարական միջոցները՝ ձի, եղ, ուղտ, նմանազես սաղը, թերես և սարուկները՝ որպեսզի այդ ամենը նա իր հետ տանի

հանդերձյալ կյանքում նույնպես վայելելու, ինչպես և այս կյանքումն էր վայելում:

Նույնը պետք է սուկ դիակիլովան նկատմամբ, որը, ինչպես ազգացուցված է հնարիտական ուսումնասիրություններով, սուրանված է եղել նեոլիթի վերջին դարերում և բրոնզե դարաշրջանի սկզբներում, այսինքն տոհմային հասարակություններին գոյության ընթացքում: Դիակիլովան երեսյթներ մենք գտնում ենք նաև Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան կուլտուրային պատկանող դամբաններում (1, 150—160. II, 37—39): Դիակիլովան մեջ նույնպես պարծախված է անիմաստական հավատալիք, որով հայտակ ունեն անդորրությամբ և հանդիստ կյանքով շրջապատել հանդուցյալին հանդերձյալ աշխարհում: Անիմաստական հավատալիքներով առգործված նախնապարյան մարդը համոզված էր, որ մեռյալի հողին, միշտ տեղնալով զեպի երկիրն և կենդանի յարարիները, փոքնում է վերադառնալու և, մանկիով իր մարմնի մեջ, թափառել կերկրում, որ անշուշտ նրան տանջանք է պատճառում: Որպեսզի վերանա այդ հնարավորությունը, ոչնչացնում էին մեռյալի մարմինը, այն այրելով խաբուսկի վրա, նմանապես այրում էին բոլոր նրան ուղեկցող շնչավոր և անշունչ առարկաները: Այդպիսով նախնիներին հողիներն խաղաղ ապավում էին երկրային հողսերից և շրջապատված իրենց պատկանելի ոգիացած առարկաներով, անդորր և անհող կյանք էին վարում հանդերձյալ աշխարհում և միշտ բարիք հղում կենդանի տոհմակիցներին:

Վերջապես նշեմք մի երկու գիծ ևս, որ նկատում ենք հնազարյան թագուհիներում և որը բնորոշում է ցիլա-տոհմային հասարակության երբեմնի գոյությունը Հայկական լեռնաշխարհում: Նախ և առաջ շնչանք, որ այդ մարդիկ միշտ թաղված են իրենց կանանց հետ միասին, որպիսի հանդամանքը վկայում է սերնդ պատրիարխատական տոհմային հասարակության մասին, ուր գործում էր այդ մարդու, ամուսնու իշխանությունը: Հետևյալ բնորոշ գիծն է՝ թագուհիների կրկնակիվ ձևը, որի մեջ անդրաշարձել է կենդանի տոհմային կուկետիվի տեսողիծը: Մեռնի շրջանի և հարևան մարդերի պեղված դամբաններում հայտարարված են երկու տեսակ թագուհիներ: Մեկը՝ տասնմիկն դամբանային թագուհիների ձևն է, երբ մի քարակրկի մեջ զետեղված են բազ-

մաթիկ, հաճախ մի քանի տասնյակի հասնող դիակներ իրենց ուղեկից կենցաղային պարտզաներով: Սեանի շրջանի Ղշաղ գյուղի Մանիչար բլրի մի դամբասում գտնվում էին միասնադ թաղված 18 կմաթքներ: Նույն Ղշաղ գյուղի Վեղբրի գլուխա կոչված տեղում պեղված դամբանի մեջ հայասրերվել են 32 մարդկային կմաթք, 2 ձիու և այլ կենդանիների կմաթքներ (ԼԿՊ, 82, 84): Մյուս կողմիով թաղան և՛եը, որ ավելի համա- տարած է, կայանում է նրանում, որ սոսմի անդամների անհատա- կան դամբանները կուտակված ու կենտրոնացած են մի վայրում, կազմելով մի տոնմային բնդանուտը գերեզմանատուն, կոկիկովի դամբանախումբ՝ հումանի մի վայրում կենտրոնացած կենդանի տանային կոկիկովին:

Անս աչգոյն է արտացոլել թագման սովորույթները ու հա- վատույթների մեջ ցեղա-տոնմային հասարակութայն սոցիալա- կան էությունը:

Մակոյն մի շարք հնագիտա-պատմագիտիկ կարծիք են հայտա- նել, թե Հայկական լեռնաշխարհի բրոնզե ու վաղադույն երկաթե դարերին հարող այդ դամբանները տեղական ծագում չունեն, նրանք պատկանում են գրեթե, օտար ժողովուրդներին՝ զուցե կիմերներին, սկյութներին, թերևս խաղերին և այլն: հետևապես այդ թաղաններում երեան հեղջ տոնմային դեկր պետք է վե- բազդել ոչ թե բնիկ ժողովուրդին, այլ Հայկական լեռնաշխարհի այդ վայրերը ներկուստղ օտար էթնիկ տարրերին: Աչգոյնի կարծիքները զբաղան վաստայրութայնք հիմնավորված չեն, դրանք սոսկ ենթադրութուններ են, հիմնված անստույգ մամա- նախադրութայն և մանավանդ օտարերկրյա վաղադույն մետաղե դարերի դամբանային բրածոների համեմատութայն փորձերի վրա: Մինչդեռ անդրկովկասյան մեք դամբանային իրականութունն այլ բան է ասում: Եթե ուշադրութայն ասենք ըստ պեղված դամբանների ներքին իրային բավանդակութունն ու թաղման բոլոր պայմանները, կենդանիք բնորոշ էական մի գիծ: Դա նա է, որ թագունների ու դամբանների իրազրութունը ցույց է տալիս մնայուն, հաստատահիմն, հանդիսա նսամած ու լի կենցաղի միջնորդ, որ բնավ չէր կարող հատուկ լինել զբոսիչ նորիկ, նոր բնակատեղում գեռես չհաստատված ու վերջնականորեն չհիմնված ժողովրդական պանդվածներին, որանք, ինչպես կիմերները, սկյութ-

ները, ամպրոպի սրբնթացութայնք երեացին Հայկական լեռնաշ- խարհում և նույն արագութայնք անկրուցութան, աղոտ հեռքեր ու հիշատակներ թողնելով մեր կարգի պատմութայն մեջ: Նմանապես այլ դամբանները չեն կարող խաղաղան ծագումն ունենալ, քանի որ նրանք ավելի հին են, քան թե խաղերի երկալը Հայաստանի այլ հյուսիսային մասում: Ի վերջո, ինչպես վերայում է Վ. Բեկբը, մեր կրկրի բրոնզե ու վաղադույն երկաթե դարերին պատկանող դամբանների նմանները՝ քարակղզիները բնավ չեն հանդիպում Արարից զեպի հարավ ընկած մարդերում, հենց նույն իսկ խալ- գական հիմնավորք երկրում, այժմյան Վասպուրականում և ընդ- հանրապես Վանի լճի շրջակայքում: Ընդհակառակն, վերոհիշյալ դամբանների ամբողջ ներքին իրազրութունը, կենցաղային բո- վանդակ պատկերը, մանավանդ մի քանի գործիքների ու կավի անոթների դամբանալի նմանութայնք մինչև վերջին փամանակ- ները տեղական բնակիչների գործազրութայն մեջ եղած իրերի նու, ինչպես զա բնագծե կնք նախորդ հատորի մեր շարահյուսու- թյան մեջ, վկայում են միանգամայն, որ այդ դամբանները պատ- կանում են տեղական հիմնավորք էթնիկ զանգվածներին:

Վերջապես նշենք մի կարևոր հանգամանք ևս: Հնագիտա- կան համեմատական կոմպլեքսային ուսումնասիրութունները հաստատում են, որ տոնմային հասարակութունն իր զարգացման է հասել բրոնզե դարաշրջանում: Անդրկովկասի հին հայկական այն պեղումները, որանք կատարվել են Ե. Բոսսիերի, Բյուսովիկու, Վ. Բեկբի, Ժ. Մորգանի, Ե. Լյուրյանի և ուրիշների ձեռքով, իրենց բրածոներով հիմնականում ներկայացնում են բրոնզեդարյան կուրտուրա: Հետևապես այդ դամբանները պատկանում են սոս- կային հասարակական ձևին: Իսկ այն հանգամանքը, որ այդ դամբաններին կից հանդիպում են նաև այնպիսիները, որանք բրոնզե իրերի հետ միասին պարունակում են նաև երկաթե ի- րեր, զա ապացույց է, որ արդեն տոնմային հասարակութայն մեջ տեղի ունի որոշ շերտավորում, որ տոնմային հասարակութունն սկսել է բարձրվել ու զրմեղ զեպի դասակարգային հասարա- կական ձևերը:

Բացի այդ՝ վերահիշյալ պեղումները շնորհիվ հայտաբերված մի շարքի կենցաղային իրերը, ինչպես օրինակ՝ բրոնզե գո- տիներն ու կավե ամանները կրում են զարգանակարներ, որանք

ընտրոջ են իրենց «գաղանային ոճով» (II, 169—176): Այդ ոճը, ինչպես բացատրել ենք նախորդ շարահյուսութեան մեջ, պատկանում է տոսեմիտական աշխարհայեցողութեանն ու շարունակել է պոստյանովի տոնմային հասարակութեան մեջ, երբ արտագրութեան եղանակներում շարունակում էր գոյութեանն ունենալ դեռևս որոշ չափով նաև որսորդութեանը, սրից և հետագայում զարգացել էր անասնապահութեանը, տոնմային հասարակութեան տնտեսական գործունեությունը գլխավոր ճյուղի՝ երկրագործություն կից: «Պագանային ոճի» սիմվոլիզմը՝ վերջում է, որ տոսեմիտիկ գորդանկարները սիմվոլիզմի վերջում է, որ տոսեմիտական հավատալիքներն անհանում են, տեղի տալով կոսմոկրակային մտայնություններին, այսինքն արտատոնմային պաշտամունքի, որով սարցողություն է տոնմային հասարակութեան քայքայումն պրոցեսը: Վերջնական կերպով կրակային պեղածոները, որոնք, մասնավորապես վաղադարձ մետոդի դարերում ծագանել էին թե տնտեսական և թե կրոնա-պաշտամունքային նպատակներին, նույնպես ցայտուն վերջեր են այն արևմտյան ժամանակվա սոցիալական հարաբերություններին: Այդ կազմ անոթներն արտացոլում են իրենց մեջ մի կողմից՝ տոնմային հասարակության ցրտացումն և իրենց մեջ մի կողմից՝ տոնմային հասարակության արդեն այն մոմենտները, երբ տոնմային հասարակությունն արդեն քայքայվում է ու առաջանում են սոցիալական շերտավորումն ընտրոջ հատկանիշները: Այդ մասին այստեղ կանոջ չենք առնում, քանի որ այդ արդեն տնտեսության է առնված սույն աշխատությունների նախորդ հատորում (II, 121—154):

### III

#### ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ԿԱՉՊՆ ԱՍՈՐԵՍԱՆԻ ՈՒ ԽԱՂԻՆԻ ԱՐՇԱԿԱՆՔՆԵՐԻ ԴԱՐԱՇԻՋԱՆՈՒՄ

Հայկական լեռնաշխարհի նյութական կուլտուրայի հնագիտական մնացուկներից կան և այլ հուշարձաններ, որոնք նույնպես վկայում են տոնմային հասարակության երբեմնի գոյությունն մասին: Դա այսպես կոչված կիկլոպյան ամրոցներն են, որոնք մեծ թվով ցրված են հնադարյան Հայաստանի սահմաններում և

որոնց մասին առիթ ենք ունեցել խոսելու ներկա աշխատությունում նախորդ գրքերում (I, 141, II, 231—251)՝ նյութական կուլտուրայի աղբյուրով, առանց վերլուծելու նրանց սոցիալական հիմքերը, այդ վերապահելով ներկա շարահյուսությունը:

Կիկլոպյան ամրոցների անընդհատ շարանը բունում է մի տարածություն, որ սկսվում է Ջրղըր լճից և ապա Դուս ու Արաք գետերի միջին ավազաններով, Սևանի լճի վրայով, Տիգրիս ու Եփրատ գետերի վերին ավազաններով ձգվելով, հասնում է մինչև Վանի լիճը:

Ամենահին վիճագրի հուշարձանները, որոնք խոսում են կիկլոպերի սեպտիկություններով Հայկական լեռնաշխարհի հնագույն երկրների՝ այն է՝ Նայրիի «թագավորությունների» մասին, արձանագրում են ստորեասանյանների պատերազմական արշավանքները վերոհիշյալ երկրներին վրա սկսած XV դարից՝ մեր թվականությունից առաջ: Համեմատաբար ավելի շատ տեղեկություններ հաղորդում են խաղաղան սեպտիկությունները հին Հայկական լեռնաշխարհի նյութական մարզերում, այժմյան Անդրկովկասում, 8-րդ դարի սկզբից վերած արշավանքների մասին, որոնք հենց այդ լեռնաշխարհում Նայրիի «թագավորությունների» միջև զոչացած Բիսյանայի՝ ըստ խաղաղական կամ ըստ ստորեասանյան հորջորջման՝ ուրարտյան թագավորները ձևանալով էին նվաճողական նպատակներով: Այդ արձանագրություններում աշխարհակալ-նվաճողները սնազարծ ոճով պատում են իրենց հաղթանակները, բյուրավոր մարզկանց սպանելն ու դերելը, բազմաթիվ զբաղանքներին, ամրոցների ու պալատների գրավումն ու ավերումը, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ վերոհիշյալ կիկլոպյան ամրոցների այժմյան ավերակները, որոնք այսօր համր վկաներ են Հայկական լեռնաշխարհի նախահայ պատմության հնագույն հասարակական ձևերի զարգացման:

Ինչ էն բարբառում այդ սեպագրի հուշարձանները: Ասորեստանի թագավորների արշավանքները գլխավորապես ուղղված էին Նայրիի երկրներին՝ Ուրարտույի «թագավորություններին» դեմ և Տիգրիսի ու Եփրատի վերին ավազաններից այն կողմը չէին անցել: Այդ երկրները կազմում էին այն տեղիտորիսն, ուր հետագայում կազմվեց խաղաղական թագավորությունը: Ասորական արձանագրություններից երևում է մի ընտրոջ երևույթ՝ Նայրիի

երկրներին այդ ամբողջ տարածությունը վրա, որն ընդգրկում էր մտավորապես այժմյան Թյուրքահայաստանը, սկսած Իրարբերից, Չուրնաս (այժմյան Էրեբունի) գետից, ուր կա ամենահին տարեկանյան արձանագրությունը Սալմանասար 1 թագավորի (1330—1316 թ. թ.), մինչև Տիգրիս-Եփրատ երկգետի վերին ավազանները, Արածանիի հովիտը, Թիգրիս-Պատասար 1-ը (1115—1103) նվաճել էր, պատերազմելով նախ 23 թագավորների երկրները և այդ ասպատակելով 60 թագավորների երկրներին, որոնք օգնություն էին եկել հիշյալ 23 թագավորներին։ Արեւմտե Կասպիանիայի մասին տարածության վրա, ըստ ասորեստանյան վկայությունից, գտնվում էին շուրջ 83 թագավորություններ՝ իրենց անձնանուններով, որոնք հրի ու սրի էին մատնվել։

Նույնպես բազմաթիվ թագավորներն ու երկրներն և արանց քաղաքներն (մոտ 250) նվաճման մասին է խոսում Ասուրնազի-բարով ասորեստանյան թագավորը (884—865)։ Նույնն ենք կարգում վերջինի որդի Սալմանասար III-ի (860—825) թողած արձանագրություններում, ուր հիշատակվում են Նայիրիի 100-ից ավելի քաղաքների զբաղման ու ավերման մասին (MX, 10—16)։ Ասորեստանյան թագավոր Շամշի-Ադաս V (Շամշի-Ռաման IV, 825—812) իր երկրորդ արշավանքում զեպել Նայիրի, շարժվելով արևելքից զբաղվում է 11 քրդի և 200 քաղաքներ և այդ հասնում վանի ձյունին. այստեղ մեղ ստակվում անհայտ Թիրանա մարզում նվաճում է 300 քաղաքներ, իսկ երրորդ արշավանքի ժամանակ այդ թագավորն ասպատակում է 500-ից ավելի քաղաքներ (MX, 18)։

Սակայն IX դարի վերջին կեսում Նայիրիի երկրներում տեղի է ունենում ինչպես նորակայվում է հետագա արձանագրություններից քաղաքական մեծ վերափոխություն։ Նայիրիի երկրներին մեջ առաջանում է քաղաքական մի նոր խմբավորում, որի հետևանքն է լինում IX դարի վերջերը Բիսյանայի (Վանի) թագավորության ուժեղացումը։ Սա զինքի ուժով նվաճում ու հզորացում է մի շարք Նայիրյան երկրներ, ստեղծելով հզոր խաղաղական թագավորությունը Վան (Տուշգա) մայրաքաղաքով։ Այս դարավերջից սկսած իսպառ չբանում է պատմական ու քաղաքական ասպարեկից Նայիրիի անունը։ Խաղաղական այս նոր

թագավորությունը մի կողմից՝ հարստե պատերազմներ էր մղում արդեն քաղաքականապես թուլացող Ասորեստանի դեմ իր անկախության ու ինքնակալ իշխանությունից համար, իսկ մյուս կողմից՝ պարբերական արշավանքներով ու շարունակական պատերազմներով զեպել հյուսիս ձգվող երկրներն զեմ, ընդարձակում էր իր պետական սահմանները, վարելով աշխարհակալ-նվաճողական քաղաքականություն, և անս խաղերը, սկսած VIII դարի սկզբներին, անցնում են Տիգրիսի և Եփրատի վերին հոսանքներից այն կողմն ու Արարատի վրայով անցնում Հայկական լեռնաշխարհի հյուսիսային մասը, հարավային Անգրիզովհաս Այստեղ նրանք թողել են իրենց սեպագիր հուշարձանները, որոնք ամենահյուսիսային սահմանը ներկայացնում է Չրլլըր լիճը, արևելյան սահմանը՝ Սևանի լիճը, իսկ արևմտյանը՝ այժմյան Դարսա-չայ գետն ու Սարիգամիլը։

Խաղաղական այդ արձանագրությունները հիշատակում են բազմաթիվ երկրներ ու մարզեր, քաղաքներ ու թագավորներ Արարատ գետից զեպել հյուսիս, որոնք նվաճվում էին խաղա թագավորների զենքով։ Մյուսայն Սևանի լճի մերձակնյա տարածության վրա հաշվում են 23-ից ավելի թագավորություններ։ Սևանի լճին եզերող փոքրիկ Անեկիտի երկիրը (ներկա նոր Բայազետի շրջանը) ուներ 22 քաղաքներ մի թագավորի իշխանությունից ներքո։ Խաղաղական թագավոր Մարդուր III-ը (750—733) պատմում է իր սեպագրության մեջ, որ մեկ օրվա ընթացքում նվաճել է Իգանիի երկրում (Չրլլըր լճի մոտերքը) 200 քաղաքներ և 35 թագավորական ապարանքներ (MX, 28—34)։ Այսպես օրինակներ կարելի էր շատ բերել, սակայն մեր թվամաներն էլ բավական են իրականությունը բնորոշելու համար։

Բարդ վերորդիչալ միաստեի մեջ աչքի է ընկնում այն ասորիական երևույթը, որ համեմատաբար փոքր տեղիաբնական ասորածություն վրա գոյություն ունեն հարյուրավոր քաղաքներ իրենց ամբողջություններով ու պալատներով, նույնքան էլ թագավորների ու արքայալ իշխանների։ Իսկ եթե նկատի առնենք այն հիստորիալ գրքերի Հայկական լեռնաշխարհի արտադրողական ուժերի թուլ զարգացումը, արևող բնատնտեսության պայմանները, ապա ավելի ևս անհարկ կթվան այդքան քաղաքների ու թագավորների գոյությունը, երբ նրանց ներկայացնենք մեզ

ներկա առումով: Բանն այն է, որ այստեղ մենք գործ ունենք հիշյալ ժառանգքը ու ճիշտագիտությունը տեղի ունենալիս այն յուրահաստեղ իմաստավորման հետ, որ հպացվ էր նախ՝ ստորեասանյան և հետո՝ խորակալի արձանագրողների մտածելակերպի մեջ:

Ասորեստանը հանդիսանում էր Տիգրիս ու Եփրատ երկդե-տյան հովտի միջին ու հարավային մասերում ստորածվող միտան-ծան, լայնածավալ մի պետություն կենտրոնացված կառավարու-թյամբ, որին ղլխավորում էր ինքնակալ թագավորը: Իր սոցիալ-անտեսական էությունը լինելով դասակարգային պետություն, շեշտակի ֆեոդալական բնույթով: Ասորեստանը միաժամանակ բա-նուկ վաճառականական երկիր էր: Նրա ձևաբան էր գտնվում ստեպրական մեծ ճանապարհը, մի կողմից Պարսից ծոցից, Տիգրիս ու Եփրատ գետերով զեպի Փոքր Ասիան, այն է՝ զեպի Միջերկ-րական և Սև ծովերը, իսկ մյուս կողմից՝ զեպի Կասպից ծովը ու նրան հարակից կենտրոնական Ասիայի այնպիսի վաճառաշահ երկրները, ինչպես Հնդկաստանն ու Չինաստանը: Այդ պայա-զան խթան էր հանդիսանում Ասորեստանի աշխարհակալական էքստանսիային, նաև իր առևտրական ճանապարհներն ապահու-վելու նպատակով անվերջ սազմորդափնիք կատարելու զեպի հա-րեան երկրները, մասնավոր զեպի հյուսիս՝ Նախիրի երկրները, որոնք ընկած էին այդ առևտրական ճանապարհի վրա: Ահա Ասու-րեստանում այդ առևտրական ճանապարհի վրա ծաղկում էին ոչ այնքան մեծ թվով, բայց բազմաբնակ վաճառաշահ մեծ քաղաք-ներ (Բաբելոն, Նինիվե և այլն) իրենց հատուկ ամբողջություն-րով, որոնց պարիսպների ներքև կուռվ էր կյանքը, պարզանում էին արտադրության միջոցները, ղիզվում էին տիրապետող դա-սակարգերի հարստությունները, խիռվ էր պետական-վարչական բազիլիսակը:

Իսկ սրա հանդեպ լին էին ներկայացնում Նախիրի թագա-վորությունները: Ասորեստանյան աղբյուրներից տեսնում ենք, որ Հայկական լեռնաշխարհը, սվյալ զեպում Նախիրի երկրները, բազմաթիվ էր բազմաթիվ մանր մարդկերից, որոնք իրարից միասն-զամայն այնչառ էին և յուրաքանչյուրն ունեիր իր իշխող տերը՝ ճիշտագիտությամբ, ամեն մի մարդն ունեիր իր զքաղաքը: Հնաևակալս դուռնություն չունեիր այդ ինքնուրույն, իրարից անկախ մարդերը շարժկապող համակենտրոն իշխանություն, որով բնորոշվում է

ամեն մի պետություն իր կենտրոնական կառավարությունը: Հանդերձ: Իսկ պետությունը, իբրև որոշ սոցիալ-քաղաքական կամ պատկանում է դասակարգային հասարակությունը, նա հե-տանք է դասակարգային խորը շերտավորման, երբ իշխանու-թյունը գտնվում է տիրապետող շահագրգռող դասակարգի ձևա-բան, որին ղլխավորում է թագավորը, միապետը, ինչպես դա Ասորեստանում էր: Առաջի կերակրացնելու ենք, որ հիշյալ հա-րայուրվող ժառանգներն իրենց երկրներով ու թագավորներով չէին ներկայացնում պետական միավորներ կենտրոնական, վարչ-ական իշխանություն, չէին հանդիսանում սոցիալապես շերտա-վորված հասարակություններ, այլ զեպում էին դեռևս ցեղա-տանձային հոտորակաչան ձևերում, որ բնավ չկային ժառանգ-ներ այն ատումով:

Ասորեստանը, արշավելով Նախիրի երկրները, ուր էր գնում այդպիսի այն ժամանակ, երբ այդ մարդերում տիրում էր ցեղա-տանձային կազմը, եթե ոչ իր հասակ սոցիալ-տնտեսական կազմով, զեպ նրա սկսված քայքայման էտապում Այդ մանր մարդերը՝ թագավորությունները՝ իսկապես առանձին տոհմերի կամ ասաների միություններն էին, այն է՝ ցեղերի բնակած տերիտորիա-ներն էին, հայրիշխանական (պատրիարխատական) համայնքներն էին: Իսկ թագավորներն այն ցեղապետներն էին, որոնք զե-կավորում, ստաջնորդում էին իրենց համայնքները: Մակոյն ցե-ղա-տանձային կազմակերպությունների մեջ արդեն սկիզբ էր տակ սոցիալ-տնտեսական շերտավորումը, և սոսմոպետներն ու ցեղապետները, շնորհիվ իրենց տնտեսական-նյութական հարըն-ստություն, շնորհիվ իրենց հասարակական զիրքին ու ձևաբան-ում ազդեցության, արդեն որոշ չափով օժտված էին արտանյալ զրույթյամբ: Իշխանություն իրավունքներով, որոնք սակավին պատրիարխատական նախապետական բնույթ էին կրում: Այդ ցե-ղապետներն ու սոսմոպետներն ապրում էին քաղաքներում, որոնք հանդիսանում էին ամբողջ մարդկ ցեղա-տանձային հասա-րակություն կենտրոնատեղին, նրա սոցիալ-տնտեսական կյանքի զեկավար ու կազմակերպիչ կենտրոնը:

Ասորեստանի արշավանքների ժամանակ Նախիրի երկրները դեռևս ապրում էին պարզապես բնական ընդհանուր կառավարչի պայմաններում, որպիսի հանդամանքը հիմք է հանդիսանում բնու-

բոլորու նրա բնակչութիւնը, որպէս տոնմային հասարակութիւններ, թիրախավոր-Պալատաբը նայելու իր արշավանքը նկարագրելու իմիջի այցոյց տաւով է, որ 16 ահազին լեւները նա անցել է իր արտահառքով, իսկ զժամարին սեղերը ճանապարհը հարդարել է բրոնզե բրիչներով<sup>1</sup>, Նուշն է աւուճ Ասուր-Նասիրբալը, հիշատակելով իր ընդարձակ արձանագրութիւն մեջ, որ երկաթե բրիչներով ճեղգել է լեռը ու այն հարդարել բրոնզե բրիչներով, որոնք, ինչպէս նկատու է նշ, պիտավորապէս բրոնզեց լեւներու ճանապարհներ է փորել իր զորքի համար բարձր թիւերով<sup>2</sup>։ Անտարակուս, այդ ուղիով անձնական ճանապարհները փորվում է հարդարվում էին սեղական միջոցներով, այն է՝ նայելի երկրներում վերցված սպիտակ բրնձի ձևերով ու սրանց զործիքներով, որոնք, ինչպէս նկատու է նշ, պիտավորապէս բրոնզեց էին, իսկ մի զեղքում հիշված «երկաթե բրիչները» վկայում են արդէն երկաթե զործիքների երեսն դարը մասին, որպիսի պարագան նշում է տոնմային հասարակութիւն ստեղծական քայքայման փաստի վրա։

Նայելի երկրներից ցեղա-տոնմային կազմի գոյութիւնը երկրորդ հազարամյակում մեր տարեթիվաբաշխութիւնից առաջ սպայացեցվում է նաև նրանց անտեսութիւն ձևերով, որի վրա էր կոտորվում այդ հասարակարգը։ Դա, ինչպէս վկայում են, թեև ազատ սեղիկութիւններով, ստորեւտանյան արձանագրութիւնները, տիրող անտեսական գործունեութիւնն էր, ուր ոչ պակաս գերակշռող տեղ էր բռնում անասնապահութիւնը երկրագործութիւն հետ։ Երկրի լեւնային ուղիքը, իր սրտով շարժելով, մեծապէս նպաստում էր անասնապահական անտեսութիւն զարգացմանը, իսկ երկրագործութիւնը տիրում էր հովիտներում, գետերի ուղղութիւնով։ Ասորեստանյան արձանագրութիւնները հիշատակում են հսկայական ավարտաւանութիւն մասին, որոնք բաղկանում էին տասնյակ ու հարյուր հազարավոր խոզեր ու մանր եղջրաբոր սնասուններից, ինչպէս և հացահատիկների հնձից, նուշիակ հարկից (II, 256—270)։ Նմանապէս անասնապահական նյութներով ու երկրագործական միջոցներով էին հարկագրվում նվաճված նայելիները Ասորեստանի կողմից։ Իսկ նկատի առնելով Նայելի երկրների խիստ բնակչութիւնը, որ ակնհեր է Ասորեստանի ամեն մի արշավանքից վերցրած բազմահազար գե-

րիների քանակից, պետք է կռահել, որ անասնապահութիւնն անենալու էր ավելի շատ հովիտական և ոչ թե քոչվորական բնույթի։

Անա Նայելի ցեղա-տոնմային հասարակական կազմի այդ ստեղծութիւնը պետք է բացատրել այն բազմաթիւ մասեր, տնջատ գիտալուծութիւններին, երկրների, հարյուրավոր քաղաքներին՝ գոյութիւնը համեմատաբար անձուկ տարածութիւն վրա, որոնց նվաճելու մասին արձանագրում են ասորեստանյան սեղանագր հուշարձանները։ Այստեղ ստորեւտանյան արձանագրողները, սնված ու սուղորված լինելով իրենց ֆեոդալական պետութիւն մտայնութիւնը, պետութիւն ու քաղաք բառերի իմաստը նուշնութիւնը կիրառում էին միասնամասն տարբեր բովանդակութիւն նկատմամբ։ Նրանք իրենց սեփական իմաստավորումն էին տալիս Նայելի երկրների ստեղծահասարակական ձևերին, առանց հաշի տանելու սեղական յուրահաստէլ իրական պայմանները։ Իսկ եթէ արձանագրողը, ից թե որոշ շափով կարողանում էր նշմարել Ասորեստանի ու Նայելի միջև պետական-հասարակական տարբեր տարբերութիւնը, այնուհանդերձ նա, սահմանափակված լինելով ասորեստանյան սեղանագր նշանների ատանձնահաստէլ բնույթով, գործողընու էր Նայելի մարզերի, բնակատեղիների, ղեկավար անձների վերաբերմամբ նուշն այն գաղափարադրերը (դիտողութեաները), որոնք իսկապէս արտահայտում էին Ասորեստանի պետական-հասարակական կազմը։ Եվ անա տոնմայինների ու ցեղապետների կից զրոյոգ որոշիչներն արձանագրվում էին «թաղափոր» բառն արտահայտող զաղափարաբարով, սահմանին համայնքների պարսպապատ բնակավայրը՝ «քաղաք» զաղափարաբարով։ Դրա հետեւանքը լինում է թերևս այն թշուրիմացութիւնը, որ սեղանագրերի արդէ վերձանողներն ու կարգացողները «թաղափոր» ու «քաղաք» սերմինները նշանակող զաղափարաբարներ, որոնց իմաստը համապատասխանում էր Ասորեստանի իրականութիւնը, նուշնութիւնը տարածեցին նաև Նայելի պայմաններ վրա, նրանց տալով թաղափորի ու քաղաքների իսկական անունը։ Մինչդեռ Նայելի այդ «թաղափորները» պետք է տոնմայիններ կամ ցեղապետներ լինեին, «թաղափորութիւնները»՝ ցեղա-տոնմային սերնետարիներ, իսկ «քաղաքները»՝ սմբցված բնակատեղիներ, որոնք իսկապէս այն կիրկոյան կառույցներն էին լինելու, որոնց սովերակները պահպանվել են այսօր էլ Տիրախի ու Եփրատ-

տի հովիտներում մինչև Վանի լիճը: Թի լճի աղերս ունեն այդ գրգռաբները՝ մեր ներկա հնադրտական կրկնույցյան ամբողջներին հետ, կիսունք հաջորդ գիտում:

Ասորեստանի բովանդակ պատմութեան մեջ տեսնում ենք, որ նա սխտեմատիկ ու մշտական արշավանքներ էր ձեռնարկում զեպի Նայիրիի երկրները: Դա մի միջոց էր, որով զինվորա-Ֆեո-զալական Ասորեստանը շահագործում էր հարևան երկրները ուղղ-մտկան ասպատակումներով, զերթվարութեամբ, ավարտումով ու հարկահանութեամբ: Այստեղ դասակարգչությունը կարգացած պետ-տութեանն բնորոշում էր ցեղա-ասոմային հասարակութեան հետ, որն եթե այլ արշավանքների մասնակալը շնանում չունե-նար դուռ անդասակարգային կազմ, այնուամենայնիվ նրա ծաղ-քերում նոր սկսվում էր սոցիալ-անտեսական շերտավորում: Այդ շերտավորմանը մեծ դարկ Ասորեստանի ներգործութեանը, որ արտահայտվում էր մի կողմից՝ նվաճած աշխատավոր ժողո-վրդի ինտենսիվ շահագործումով և մյուս կողմից՝ անտարական հարաբերութեանների կողմերով, որ բերում էին նվաճող ասո-րեստանցիներն իրենց առաջխաղացութեամբ՝ Նայիրիի երկրներ-ում սպորդ բողաթիվ ցեղա-ասոմային հասարակութեանների մեջ, որոնք ասորեստանյան արձանագրութեանների հորջորջու-մով «թագավորութեաններ» էին կոչվում: շնորհիվ շերտավորման արտագրած պրոցեսի սկսվում է նոր ձևավորումն իր սոցիալ-անտեսական ներհակութեաններով, որոնցին կրկնկրկնվածի կր-ծանմանով:

Հայկական շնանաշխարհի այս մասի սոնմային հասարակա-կան կազմը՝ արդեն իսկ պատրիարխատի հասարակական ձևերում, էր արտադրողական ուժերի զարգացումով ու սելխատանքի բա-ժանումով սկսում է սոցիալիզմի մասնավոր սեփականութեանը և, սոնմային հայրեշխանութեան շնորհիվ, առանձին նահապե-տական գերդաստաններում սկսվում է արտադրական նյութերի կուտակումը, իր մեջ ծնում է իր իսկ հակոտնյան՝ զաւրք դասա-կարգային կազմը: Իսկ էրը քայքայվող սոնմատիքութեան մեջ ներս է թափանցում առևտրական փոխանակութեանը: նա արդեն իսկառ կազմալուծվում է: Չքանում է սոնմը, վերանում է նախ-նադարյան կոմունիստական համայնքը: Տոնը վերածում է դա-սակարգային հասարակութեան, որը Նայիրիի երկրներում իր

վերջնական ձևավորումն է ստանում, էրը պատմական ասպարե-զում երևան են գալիս խաղերը:

Սոցիալը, սակավին վերջնականորեն չլուծված կարծիքով, որը փորձում են հիմնավորել մի շարք հնագիտական, սոցիալա-կան ու պատմագիտական ավյալներով, շարժվել են իրենց սկզբը-նական բնակավայր ֆոքը Անիայից ու հաստատվել Վանի լճա-նյա երկրում, ենթադրաբար ասորեստանյան Թիգրատ-Պալատ 1 (1117—1030) և Ասուրնուսիրթալ 1 (1047—1029) թագավորների իշխանութեան միջոցում: Եկիտ խաղերը, ամենայն հավանակա-նությամբ, արդեն զասակարգորեն շերտավորված հասարակու-թեան էին ներկայացնում, որի սոցիալական վերնատախ իր հետ բերում էր իր ֆեոզալական ձևը, որն արդեն պատրաստի հող էր գտնում Նայիրիի երկրներում տեղական սոնմային կող-մի քայքայումով ու տեղական ֆեոզալականացման նախադրյալ-ներով վերածվող նոր արտադրական հարաբերութեաններով: ինչպիսիք նվաճողները, շնորհիվ տեղում առաջացած նոր սոցիալ-տն-տեսական հարաբերութեանների, միաձուլվեցին նախկին սոն-մային հասարակութեանների շերտավորման հետևանքով տեղում արոնված սոցիալական բնիկ վերնատախի հետ ու ամբողջին այն ֆեոզալական հասարակարգը, որն այնպես բնորոշ է նախկին բողաթիվ «թագավորութեանների» փոխարեն հետազայում բարձ-րացած խաղական միասնական թագավորութեանը: Հիմք դրվեց մի նոր պետութեան, որի կրկնվել էր Բիսյա քաղաքն (Վան) իր մտքով, որը առաջին անգամ հայտնի եղավ խաղ անունը, սրը պատկանում էր նորիկ նվաճող էթնիկ տարբեր Այսալից ֆեո-զալ իշխաններն սկսեցին իրենց նվաճողական էքսպանսիան, հե-տընհետ գրավեցին հրով ու սրով և իրենց իշխանութեանն են-թարկեցին Նայիրիի բոլոր «թագավորութեանները»: Այսպիսով ասալացյալ մի նոր հոր ֆեոզալական պետութեան, որի մեջ խմբվեցին նախկին ցեղա-ասոմային հասարակութեան տրոնու-մով ձևավորված տիրապետող, շահագործող սոցիալական վերնա-խավերը: Այդ ֆեոզալական շրջանի մասին մանրամասնորեն կանգ կառնենք ուշից զրքի հաջորդ մասում:

Խաղական պետութեանը, տարածվելով Վանի լճի լճի մինչև Եփրատի ու Տիգրիսի վերին ավազանները, կանց շատով իր առաջ-խաղացման մեջ, նա իր նվաճումները շարունակեց, սոք գնելով



Արաքս գետի մյուս կողմը, Հայկական լեռնաշխարհի հյուսիսային մասը, այժմյան Անդրբովկասը, ուր չէին հասել Ասորեստանի նվաճողական հորձանքները: Այստեղ ֆեոդալ խաղվեր խաղացին նույն գերը և ունեին նույն ներգործությունը, ինչ որ ֆեոդալ Ասորեստանը մի ժամանակ նախրիի «թագավորությունների» ու «քաղաքների» նկատմամբ: Հայկական լեռնաշխարհն Արաքսից այն կողմը տակավին դեզերում էր նույն սոցիալ-անասական պայմաններում, ինչ որ գոյություն ունեին նախրիի երկրներում Ասորեստանի արշավանքներից առաջ: Խաղցական թագավորների նվաճումներն արձանագրող հուշարձաններից սեսնում ենք, որ Հայկական լեռնաշխարհի այս մասն էլ ներկայացնում էր բազմաթիվ մասը «թագավորությունների» ու «քաղաքների» իրենց հարակից մարքերով համեմատաբար ոչ այնքան մեծ արածուխյան վրտ: Ահնեի է, որ այստեղ էլ գոյություն չունեին քաղվ պետական միավորներ, պետական իշխանություններ կենտրոնացած վարչական կազմով, գոյություն չունեին «թագավորներ» ու «քաղաքներ» մեր առումով: Եթե խաղցական սեպագրություններում հելլոսում են քաղվաթիվ թագավորներ ու քաղաքներ, նրանք ունեն նույն իմաստավորումը և բեկվել են խաղ արձանագրողների մտապատկերներում նույն կերպով, վերաբրադրվել են նրանց գրիչների առի նույն ձևով, ինչպես նախորդ ասորեստանյան արձանագրողների մոտ նախկին նախրիի երկրների իրավիճակում նկատմամբ: Խաղցական արձանագրություններում էլ հիշատակվող «թագավորներն» իրականում եղել են ցեղա-տոհմային համայնքների գեղավորներ ու առաջնորդներ, թերևս դատարխատական տոհմապետներ ու ցեղապետներ, «թագավորությունները» եղել են նրանց բնակելի համայնական սերտությունները: Վերջապես «քաղաքներն» էլ եղել են նրանց պարապարտ տարացած բնակավայրերը, դրանք այն բազմաթիվ կիկլոպյան ամրացման են, որոնք իբր ցանցով ախլված են Արաքս և Փուռ գետերի միջև ընկած աշխարհապրական տարածությունում: Հայկական լեռնաշխարհի այս մասը, շնորհիվ արտաբնական ուժերի թույլ դարգացման, գտնվում էր քնտանտեսություն պայմաններում: Տիրում էր լիակատրուպես անասնապետությունն ու երկրագործությունը: Երկրի լեռնային ուղեվեր նպաստավոր պայմաններ էր ընձեռում անասնապետական անասնությունը:

որն ըստ խաղցական սեպագրի ավյունների գեաք էր շատ դարգացած լիներ (II, 266—267) և կազմում էր Ժողովրդական անասնություն զլիավոր հարստությունը: Խաղցական թագավոր Սարգուր III (750—733 թ. թ. մեր տարիթիվակ, առաջ) ավար էր վերցրել այստեղ 214,700 ոչխար, 40,353 եղջեր, 3,500 ձիեր (M.X.34): Ավարի մեջ չեն հիշատակվում երկրագործական արգասիքներ, բայց այդ հանգամանքը չի կարող ենթադրել առաջ այդ պայտանտեսական Հյուսիս բացակայության մասին: Թերևս երկրագրական աբեք տարվ այդ ավարանյութին, արձանագրողներն ավելորդ են համարել նրանց հիշատակումը, զուցիս և կարի չունենալով երկրագործական մթերքներ, որոնք կարող էին առատ լինել հենց իրենց հարկների օրում, խաղցրն ավար չէին վերցնում հացահատիկները: Սակայն երկրագործության մասին վկայում են այն հնագիտական ավյունները, որոնք հայտարարվել են այդ դարաշրջանին պատկանող գամբաններում:

Կիկլոպյան ամրոցներն իրենց բնակավայրերով հանդերձ գրեթե միշտ գետերի եղբերներին են տեղավորված, ուստի և հնարավոր էր լինում, առանց արհեստական ջրանցքաշինարարության, սակ տեղական հասարակ առանների միջոցով ոտորջ ջուր ունենալ երկրագործական մշակույթների համար, որոնք, անշուշտ, չէին կատարվում: Արհեստական մեծածախլ շինարարությունն անհնարին էր այն ժամանակվա սոցիալական պայմաններում, երբ քաղվաթիվ անջատ տոհմա-ցեղային միավորներն ի վիճակի չէին, իրենց կենտրոնախույս կապերի շնորհիվ, արձարձի ջրանցքային ցանցեր շինարարություն, որը պահանջում էր գրանապան մարզերի միտանավորում մի ընդհանուր ղեկավար ու սնորհնող դրոսների առկայությունը:

Երկրագործության զարգացման այստեղ ավելի զարկ տվին հենց իրենք խաղցրն իրենց շտանգործական նպատակների համար, կատուցելով ջրոտցման մեծ անցքեր, ինչպես հաղորդում են Սարգարապատի, Կարակալայի, Արմավիրի, Զվարթնոցի և այլ սեպագրեր հուշարձանները, որոնք ընդգրկում են շուրջ մի դարամիջոց (780—650 թ. թ.): Հիշյալ ջրաշինարարական գործերը վերաբերում են դաշտային մարզերին, որ ձևոնարելվում էին երկրագործությունը զարգացնելու այդ հիմնական միջոցառումները: Ինչպես

ենթադրելու է, երկրագործութիւնը համեմատաբար անասնապահուածութիւն հետ՝ ավելի նվազ ակզ էր բռնուած Հայկական լեռնաշխարհի հյուսիսում հնազարթան տոնմային հասարակութիւններին տնտեսութեան մեջ: Դա ակնհայտ է մասամբ նրանից, որ կիկլոպոյան ամբուսթիւններն ու կառույցներն ավելի մեծ քանակով ու խիտ ցանցով էրեւում են լեռնային զոտու սարալանջերում (Նար-Բարյոպետի, Շիրակի և այլն), որոնք տակալին աշօր էլ մեր անտոնապահութեան զարգացման ամենահարմար վայրերն են հանրիտանում: Իսկ զաշտային մարզներում (Արարատյան դաշտ և այլն), որոնք նպատակաւ են երկրագործութեան համար, մեր տեսութեան առած դարաշրջանում կիկլոպոյան ամբուսթիւնները համեմատաբար ավելի նվազ էին իրենց քանակով ու խտութեամբ, քանի որ զուրկ էին արհեստական ոռոգման սխեմանից: Դա ապացուց է, որ երկրագործական մշակութիւն այն ժամանակվա տոնմային հասարակութեան մեջ, արտադրական միջոցների ու տեխնիկայի թույլ զարգացման հետեանքով դեռևս չէր ստացել անհրաժեշտ ծավալումը:

Այս այս տնտեսական միջավայրում էին գտնուած հարյուրավոր քրդազները, որոնց մասին խոսում են խաղաղան սեպտորութիւնները, իբրև այն բազմաթիւ երկրների՝ թաղավորութիւնների կենտրոններ, որոնք նվազում էին խաղչ ֆետոզայնների ձեռքով:

#### IV

### ԿԻԿԼՈՂՅԱՆ ԿԱՌՈՒՅՑՔԵՆՐ

Կիկլոպոյան կառույցների կոնստրուկցիայում պետք է ուշադրել այն աղբյուր, վոր նրանք ունեն տոնմային սոցիալական կազմի հետ, քանի որ այդ ամբուսթիւններն իրենց նպատակներով և ֆունկցիաներով ծառայում էին ավելի հասարակական կազմի կարիքներին ու պահանջներին: Ուստի կիկլոպոյան կառույցներն իրենց կոնստրուկտիվ տեսանկէրով, իրենց իրադրութեամբ համապատասխանում են սոցիալ-տնտեսական զարգացման որոշ աստիճաններին: Այդ տեսակետից անհրաժեշտ է պարզել հիշյալ կառույցների տիպային ձևերը, թեև պետք է ասած, որ նրանք

մինչև այժմ չեն ենթարկվել տակալին մանրամասն ու սխառնատիկ հետզհետական հետազոտութիւններին:

Բուս ու Արաքս երկզեայան երկրամասում հայանի եղած կիկլոպոյան ամբուսթիւններն իրենց ծագումով պատմականորեն մասամբ կանոնում են նեոլիթի սոցիալ-տնտեսական միջավայրին (I, 141—148), բայց ավելի մեծ թիվով նրանք մտնում են վաղագույն մետաղի դարաշրջանին, երբ տեխնիկական միջոցների կատարելագործումով հնարավոր էլինում կիկլոպոյան կառուցումներին տալ անպիտի կոնստրուկտիվ ձևեր, որոնք համապատասխան լինելին հասարակական ավելի զարգացած կազմավորմանը և սոցիալ-տնտեսական այն պահանջներին, որոնք առաջանում էին պարսիստատական տոնմի կարգերում: Չնայած, որ մեր այս աշխատութեան առաջին երկու հատորներում կանգ ենք առել կիկլոպոյան կառույցների նշանակութեան վրա, դիտարկում են նյութական կուլտուրայի զարգացման տեսակետից, այնուամենայնիվ անհրաժեշտ ենք սեղանով վերադառնալ այստեղ մանրամասնորեն արծարծել այդ հարցը, որպէսզի պարզենք նրանց սոցիալական հիմունքները: Ահպին քանակով զոյութիւն ունեցող կիկլոպոյան կառույցներն այնքան բազմազան են իրենց արտաքին տեսքով, որ դժուար են ենթարկվում որոշ զստակարգման: Սակայն և այնպէս նրանց որմերի շարվածքի ձևերն ու տեխնիկան, ամբուսթիւնի դիրքն ու հասակադիւր գրեւորում են բնորոշ դիւր, որոնք աներկբա վկայում են այդ շինքերի կառուցական կայան այն հաստատական կազմի զարգացման տարիճաններին հետ, որին նրանք կոչված էին սպասարկելու իրենց ֆունկցիաներով:

Կիկլոպոյան ամբուսթիւնների ամենաբնորոշ ձևը պետք է համարել այն շինքերը, որոնք հայտարարել ու նկարագրել է ճարտարապետ-հնագետ Թ. Թորամանյանը Շիրակի զավառում Այլ ամբուսթիւնների պարիսպները, որոնք իրարից այնքան էլ մեծ տարբերութիւններ չունեն, կառուցված են ըստ կարելիութեան զովարամբժ բլուրների վրա և ներկայացնում են միաշար կամ երկշար անտաշ, կողիտ քարեր, սրանք մեծ մասամբ վիթխալի ծավալի են հասնում, ունենալով մինչև 6 մետր երկարութիւն, 1 մետրից ավելի բարձրութիւն ու բարձրութիւն և շարված են առանց որևէ շաղախի, որմի ամբողջ բարձրութիւնը շատ անգամ հասնում է 5—7 մետրի: Պատասխան կտորները միանգամայն բնական

նորին ինքնաբերաբար պայթած վիճակին մեջ դասավորված են պատերուն մեջ, եթե նուշխակ կարելի լինի շարք տնվանել, ավելի միտյանց վրա կուտակված են, քան թե շարված»։ Այս կարգի ամբողջները բաղկացած են լինում մի քանի շարք, երեք—չորս—հինգ, համակենտրոն պարիսպներից, որոնք շրջապատում են բլրի լանջերը և սույս գաղաթի վրա վերջավորվում են միջնաբերդով։ Բայց այդ՝ հիշյալ ամբուսթյունների ասանձնահատուկ դիժը, որ անշուշտ ծառայում է սարսափելիական նպատակներին, այն շատավերածն պատաշարներն են, որոնք ձգվում են զազաթից լանջն ի վայր դեպի բլրի ստորոտները։ Այս ախպի կիկլոպիկ ամբողջները Թ. Թորամանյանը վերագրել է նեոլիթի դարաշրջանին, որը մենք հավանական ենք գտնում<sup>2</sup>։ Նուշխանման պատաշար ամբողջներ են և Նոր-Բաշադիսի հնագրայան ամբողջները<sup>3</sup>։ Կանոց շատնեկով նուշխանման եղանակով կառուցված այլ կիկլոպյան ամբողջներ վրա, որոնց հանդիպում ենք ուրիշ մարդկերում, քանի որ այդ մասին առիթ ենք ունեցել խոսելու (3, 141—148), և ենք հանդուս ենք այն եզրակացություն, որ այս ախպի ամբողջներն իրենց ծագումով ու բնույթով ամենահինն են (տես նկարներ 1, 46—54)։

Այնուհետև գալիս է այն ախպի կիկլոպյան ամբողջների շարանը, որոնց պարիսպն անշաղխա շարված է նուշխակի վիթխարի էրոստո, անտաշ քարերից, բայց յերկու զուգահեռ շարվածքով, որի միջուկ տարածությունը լցված է անշաղխ մանր քարերով։ Մյուսնց միջնաբերդերը մեծ մասամբ ոչ թե ասանձին համակիսարան կետ են կազմում բլրի դազաթում, այլ միջնաբերդն ստացվում էր ամբողջ ամենահարմար ու ամենամասնաչելի մտում ասանձին նուշխակի ձևի պարիսպ կառուցելով, որը բաժանում ու առանձնացնում էր այդ մասը բերդի մնացյալ ավելի մեծ տարածություն ունեցող մասից։ Այդպիսի ինքնատիպ է ներկայացնում Նոր-Բաշադիսի հնագրայան բերդը, որի նկարագրիչը բերված է մեր աշխատության 11 հատորում (էջ 245—247)։ Այս ախպի ամբողջները պարիսպների անկյուններում երբեմն ունեն երասաներ, որոնք բուրգերին նմանող կառույցներ են հանդիսանում և ծառայելիս են եղել միտամանակ թե պարիսպների ամբողջումանը և թե ուղղմական պաշտպանունակությունը։ Հիշյալ կիկլոպյան ամբողջներ, համեմատաբար նախորդ ախպի հետ

ախպի հետագա ծագումն ունեն։ Մյուսը արդեն որոշ տեխնիկական ու կոնստրուկտիվ կառարեկազորմունքներ են ցուցաբերում, ավելի մեծ տարածություն են բռնում և պատասխանում են սոցիալ-տնտեսական դարգացմանը ավելի առաջիմամ հասարակական կազմի պահանջներին<sup>1</sup>։

Վերջապես հանդիպում են երրորդ տեսակի կոնստրուկտիվ գծերով ամբողջներ, որոնք իսկապես չէր կարելի նուշխ ասումով կիրառյալան անվանել, ինչպես նախորդ երկու տիպերը, քանի որ սրանց շարվածքի քարերը համեմատաբար այնքան մեծ չեն, մասավորապես 1 մետր երկարությամբ են։ Մյուսնց զլխավոր հատկությունն այն է, որ պարսպի քարերը արասաբուստ տաշված են, իրենց կողերով կիպ հողում են խոր, դռված են մաժուցիկ շաղախով։ Այդ եղանակով է կառուցված Արմավրի բլրի ամբողջ, որի միայն չնչին մնացորդներն են պահպանվել, ուստի և հնարավոր չէ նրա կոնստրուկտիվ մանրամասնությունները հայտարարել։ Նուշխն է ներկայացնում Դաշքուռունի ամբողջ (ՄԱԿ, VI, 37—38)։ Այդ ախպի ամբողջներն ավելի համախալի հանդիպում են խաղաղական պետության շրջանում, Արագսի մյուս կողմում՝ Հենց Վան քաղաքի հնագրայան բերդը, ծովափի ափին, այսպես կոչված Սարգուրի ամբողջ, որ դուռ խաղաղական ծագումն ունի, կառուցված է այդ եղանակով։

Ի վերջո նշեցք այն բնորոշ դիժը, որ բոլոր վերոհիշյալ ախպի ամբողջների ստորոտում կից կամ շուրջը, եթե նա վերք է, տարածվում էր բնակավայրը։ Այստեղ նշենք այն բնորոշ հանգամանքն ու առանձնահատուկ դիժը, որ առաջին, մասամբ էլ երկրորդ տիպի ամբողջներին կից բնակատեղերը պարտոված չեն, հետևաբար բնավ քաղաքների բնույթ չեն կրում։

Առաջին երկու տիպի կիկլոպյան ամբողջները, որոնք կառուցված են եղել տեղական վաղեմի բնիկների ձեռքով և այնպիսի վիթխարի ծանրաշարժ քարերից, կարող էին շարվել միմյանց կոնկրետով աշխատանքով, Իսկ այն դարերի արտադրական ու սոցիալական պայմաններում աղբյուրի աշխատանքը հնարավոր էր կատարել միայն ստհմային միավորումներին համախալական գործակցության եղանակով, կոնկրետով ջանքերով։ Ուստի կիկլոպյան այդ ամբողջներն իրենց կառուցումով և իրենց գործնա-

կան նպատակներով ինքնին որդին կարող էին հղանալ ու կանգնել միայն սոսնմա-ցեղային հասարակական կազմում<sup>12</sup>։

Անս վերոհիշյալ այդ երկու տիպի ամբողջներն էին, որ գործում էին, երբ խաղիները սեղանին արշավել ու նվաճել Հայկական լեռնաշխարհի հյուսիսային այն մասը, որ բնիկն է Քուռ և Արաբս երկրատարի տանձաններում։ Այդ ամբողջներն են, որոնց մասին խաղական սեղադիր հուշարձաններում արձանադրված է, թե հարյուրներով քաղաքներ ամենակարճ ժամանակում նվաճում էին հաղթական խաղից, սպառախուրտ և գերում նրա բնակչությունը, թալանի ու ալիքի մատնում բնակավայրերը, գերում թագավորներին եմ այդ հարյուրավոր «քաղաքներն» ու քաղմարիտի «թագավորությունները» գտնվում էին մի այնպիսի փոքր երկրում, որն ընդգրկում էր այսօրվա Լենինականի, Գարեի, Նոր-Բայազետի, Գանձակի, Երևանի և Մուրմալուի զավառները, մուսուլմանական նախկին սուլթանության Աղբրովկայի երեք նահանգները։ Թալանը ուղիղ գնում էր նախաֆեոդալական Հայկական լեռնաշխարհը, իրենց ֆեոդալական իմաստավորումով էին բնորոշում այդ ամբողջները՝ հարակից բնակատեղիերով, նրանց անվանելով «քաղաք» — patari բառն արտահայտող գաղափարազրով (իդիոտզրամս), որը ֆեոդալական խաղը պետություն մեջ նշանակում էր միջնաբերդ<sup>13</sup>։ Մինչևև այդ դարաշրջանում խաղական քաղաք — patari միասնաբանյալ տարբերվում էր Քուռ և Արաբս երկրատարի «քաղաքներից»։ Մալը ֆեոդալական պետությունն իր սոցիալական շերտավորման կնիքն էր դրոժմել քաղաքի վրա, այն անվանելով patari՝ միջնաբերդի ստուգուով։ Ինչպես վկայված են հնագիտական տվյալները, խաղական քաղաքները բաղկացած էին միջնաբերդից, որ կառուցված էր լինում սովորաբար կղզիացած բլրի կամ բարձունքի վրա, և հարակից բնակատեղ շենանոցից, որ նույնպես պարտաված էր լինում։ Սակայն խաղական միջնաբերդը չէր հանդիսանում սակ ռազմական ֆունկցիաներ ունեցող կառույցը, նա միասնանակ թագավորի կամ ֆեոդալ իշխանի ազարանքն էր, ուր նա մշտական ապրում էր անջատ իր հպատակ ժողովրդից, ուր նա ամեն հարմարություն ունեւր սպահաւոյալես տիրելու և ճնշելու իր հպատակներին, որոնք ապրում էին ամբողջական բերդից դուրս, նրա ստորոտում, անջատվելով տիրող իշխանից ու միշտ եմբակա նրա հարված-

ներին, էթի հանդգնեին բնրատանալ իրենց շահագործողները պեմ նույն իսկ խաղական ժայռակուփ ամբողջները նույնպիսի ֆունկցիոնալ նշանակություններ էին կառուցվում։ Այդպես էին վառի, Հայկաբերդի, Հասանքեֆի, Հին-Բայազետի, Բալուխ և այլ քաղաքներով ժայռակուփ ամբողջները Բիտանայի թագավորության սահմաններում։

Միանշամայն այլ պատկեր էին ներկայացնում Հայկական լեռնաշխարհի «քաղաքները», երբ խաղիներ իրենց նվաճողական կրպակներով տարված սաք են գնում այդ երկրերը։ Այստեղ ամբողջները ծառայում էին այլ նպատակի, նրանց ֆունկցիոնալ պիրը բղթում էր տեղի սոցիալ-տնտեսական պայմաններից։ Այստեղ էլ քաղաք — patari բաղկացած էր բլրի վրա ձգվող միջնաբերդից ու նրա ստորոտում տարածվող բնակավայրից։ Միակայն միջնաբերդն ու ամբողջն անբնակ էր խաղող ժամանակը։ Տոսնային-ցեղական հասարակությունը գեոսես չուներ իր մեջ իշխաններ, տիրակալներ, որ այդտեղ բնակություն գրավեին։ Ղեկուսարտագրական հարաբերությունները չէին բնորոշվում գաղափարային ներհանություն, սոցիալ-տնտեսական տիրապետության հանդամանքներով, որպեսզի աւիտված լինեին իրենց տոնակիցներից անջատ ազրել Հեռակալես այդ ամբողջներն իրենց միջնաբերդով չուներին այն սոցիալական ֆունկցիան, որն այնպես հատուկ էր խաղական ֆեոդալիզմին։ Բայց և այնպես այդ ամբողջները ծառայում էին ռազմական նպատակներին։

Այդ հիմնվուրը դարերմն էլ պատերազմներն անպակաս չէին ցեղերի ու օտար տոհմերի միջև, Հայկական լեռնաշխարհում անտանապահությունը, ինչպես արդեն տակ ենք կրեւոր տեղ էր բունում անտեսական գործունեություն մեջ, անտուռներին հոտերը կազմում էին սոսնային համայնքները կոլեկտիվ հարստություն ամենակական մասը, իսկ անտանապահության արտադրական հիմքը կազմում էին արտավայրերը։ Արտավայրերն տիրանալու, լավագույն արտոտտեղի գրավելու, հաճախ նաև հարստունների համայնքները հողի վրա ծաղող թշնամական հարաբերություններն ու բնդարտմները սովորական երևույթներ էին, ինչպես և այսօր ցեղա-տոհմային սոցիալ-տնտեսական պայմաններում ապրող Ախրայի անտանապահ ժողովուրդների և բնդահանրապես «վայրերի» ցեղերի մեջ Աֆրիկայում ու Ամերիկայում

Դրանք միջոտնամային ու միջնդեպային արյունալի պատերազմներ էին, որոնք սակայն կարճատև ու անցողիկ էին և միևնույնի փամանակ իրես հաճախակի, մանավանդ որ տոճմային հասարակորում տիրում էր վրիժառուլթյան սովորութեան իրավունքը։ Անս այդ պատերազմների, միջոտնամային ու միջնդեպային արյունալի բախումների ու հորձակումների միջոցին այդ կիկլոպյան ամբողջների պարեսպների տակ էին պաշտպանութունը գտնում զաշտավայրի կամ ամբողջին կից սպրտ տոճմային համայնքներն իրենց անասուններով։ Երկրագործական միջերջներն իհարկե նրբանք կիկլոպներին այնքան, որքան անհրաժեշտ էր բերքում պաշտված ժամանակում սպառելու համար, իսկ մնացած պաշարը նրանք անշուշտ հորած ունեին գետին մեջ թաքստոցներում, որն այդ եղանակով շատ անգամ փրկվում էր հարձակվողների ու սուպատակողների թայանուձից։ Ինչպես հայտնի է, հորբում հացահատիկներ ու արմատիք պահելու հնամենի սովորությունը պահպանվում էր Հայաստանում մինչև վերջին ժամանակները։ Հարձակման ու կռվի վտանգը անցնելուց հետո, բերելու արատանածները դուրս էին գալիս պարեսպների պաշտպանութունից և վերստին գտնում իրենց բնակատեղիքը, մինչև որ մի նոր հարձակողական աճակոչը կտրկեր նույն ձևով վարվելու։

Անս այդ տոճմային հասարակության միջավայրում կիկլոպյան ամբողջներն ստանձնում են պաշտպանողական ֆունկցիոնորություն համեմատ էլ նրանք ունենում էին հատուկ կոնստրուկտիվ կառույցներ իրենց միջնաբերդով ու համակենտրոն պարիսպներով շրջաններով, շատավիթաձև պատաշարներով՝ գծվարանք՝ բլրի վրա, որը միաժամանակ պետք է ունենար նաև բնական ամբողջուն ու անախիկ գերք։ Միջնաբերդը հանդիսանում էր պաշտպանողների ռազմական գլխավոր կետը, այստեղ էր կենտրոնանում կռվի զենավարությունը հանձնախոս տոճապետի, ցեղապետի կամ այլ փորձված առաջորդի՝ տոճիկներից ընտրված, որի աջերի տաջ բաց փռված էր լինում թշնամու հարձակման ու սուպատակման ենթակա գաշտավայրը մինչև հեռավոր հորիզոնները և որի տեսողութունից չէին վրիպում ամբողջութունների տակ վիտայ թշնամու գործողութունները։ Միջնաբերդից ստորև ձգվող պարեսպների ետք պատասպանվում էին կանայք, երիտասարդներ ու ձերեր այս պարսպաշարքերում կանգնած մարտիկների

պաշտպանության ներքո, իսկ ամենատոճներն ամբողջին օդակում կուտակվում էին անասունների հոտերը։

Որ իրոք այդ կիկլոպյան ամբողջունները բնակելի չեն եղել և միայն պարբերաբար ծառայել են արտաքին հարձակումներից պաշտպանվելու զենքերում, զա բացահայտ է հիշյալ կառույցների մեջ պարիսպված հողի ազքատ կուտուրական շերտից, ուր շատ քիչ են հայտարբրվում հնագիտական իրեր միշտ է, կիկլոպյան այդ ամբողջուններում սխտեմատիկ ու մասսայական պեղումներ ու հնագիտական հետախուզումներ չեն կատարվել։ Բայց և այնպես սույ տվյալներն առ այժմ այդ են վկայում։ Գուցե և սպագայում մեր հնագիտությունը կհարստանա սովելի հիմնավոր տվյալներով, եթե այդ ուղղությամբ կատարվեն սխտեմատիկ ու մանրագին հետազոտություններ, այն ժամանակ ինքուս ավելի կպարզվի Հայաստանի կիկլոպյան ամբողջների դերն ու նշանակութունը։ Ցարք մեզ այստեղ տվյալներն են կպի մակերեսում գտնված հնագիտական իրերը, որոնք իսկակուս շատ ազքատ են, բազկացած լինելով ոչ այնքան մեծ քանակով միայն ջարգված ամաններ կավե խեցիներից ու բրոնզե, շատ սակավ երկաթե զենքերի բեկորներից։ Մյուս կողմից էլ հայտնի են մի քանի կատարված պեղումներ, սակայն անհետանք արյունքներով։ Ի. Բվանովսկին Ղանլիշայն կիկլոպյան ամբողջուններում, ուր միայն բարակ հողային շերտ է եղել, պեղելիս՝ չի հայտարբրել հնագիտական իրեր (ՄԱԿ, VI, 61)։ Բացի այդ, ինչպես վկայում են հնագիտական հետախուզումները, Հայկական ինտնաշխտանի այս մասի կիկլոպյան ամբողջների մեջ չեն նկատվում բնակարանների մնացորդներ։ միջնաբերդում, ամբողջ ամենավերին ու կենտրոնական մասում պահպանվել են հաս ու կրատր անհայտ կառույցվածքներ, սենյակներ ճամնաղությամբ չեն բերի ավերակներ, որոնք նշանակութունն առայժմ որոշելու հնարավորություններ չկան։ Սակայն բնակարանային շենքերի ավերակ մնացորդներ հայտարբրվել են միայն այդ ամբողջներին կից, ստորոտում, և հաս այս հանգամանքն ապացույցում է, որ բնակատեղին իրոք եղել է ամբողջների պարեսպներից դուրս։ Այս կարծիքը հաստատվում է նաև անաղիսյով, որ տալիս են Արմավրայան Եվրոպայի հնագիտական աշխարհում պահպանված կիկլոպյան ու այլ ամբողջների հոմանիչ տիպերը, որոնք վերաբերում

են ներդրվածն ու վաղապես ըրնդն դարերին Լնագիտական հետախուզումներն այնտեղ ապացուցում են, որ այդ ամբողջականը չեն ամփոփել երբևէ իրենց մեջ մնալուն բնականություններ, այլ եղել են ամբողջներ, սեր խաշնարած ու երկրագործ շրջակա բնակիչներն ապավինեն, որպեսզի կազմվ պաշտպանվեն հարձակվող թշնամիներից (1, 145—147):

Այս սեռակետից հետաքրքիր են այն պաշտպանողական ամբողջությունները, որոնք կառուցում էին հին գերմանական ու կելտական ցեղերը, որոնց մասին հազարգում են իրենց պատմագրութուններում Լուչիոս Կեսարը (102—44 թ. թ. մեր տարեթվառաջ) և Տակիտոսը (55—120 թ. թ.): Այդ դարերում գերմանները, կելտերն ու այլ նրանց ցեղակից ժողովուրդները ներկայացնում էին տոնմային հասարակութուններ, որոնց հասարակական ու տնտեսական կազմը մանրամասնորին վերլուծել է Յրեկեզիսը (ԷՆՃ, գլ. VII և VIII)<sup>15</sup>: Տակիտոսը գերմանացիներին մասին գրում է. «Շայտնի է, որ Գրյամիեյի ժողովուրդները քաղաքներում չեն ապրում և ընդհանրապես նրանք չունեն հոմ քունակութուններ»: Իսկ Տակիտոսից մոտ մեկ դար առաջ Լուչիոս Կեսարը բացատրում է, թե ինչ է ներկայացնում գալլիական ամբողջ՝ oppidum (= քաղաք): Oppida — ամբողջները ըստ Լուչիոս Կեսարի՝ կելտերի ամրացված ճամբարներն էին: Նա նշում է, որ Գալլիայում թշնամիների հարձակումներից պաշտպանվելու նպատակով ընտրվում էին զփոխարանք ու անառիկ կետեր, բնությունից արդեն ամրացած բարձունքներ, oppidum egregie naturae munitionum<sup>16</sup>: Այնուհետև նա ավելացնում է, որ թշնամիների մտենալու և հարձակվելու զեղքում, այդ ամրոցի՝ oppidum-ի մեջ հավաքվում էին հարևան բնակութուններից գյուղերի բնակիչներն ու այնտեղ ապաստանում էին իրենց անասունների հոտերով<sup>17</sup>: Մի այլ կելտական ցեղ՝ Երբրտաներն oppida էին անվանում անմասնիկ անասնաչին վայրերը, պատանելով ամրացած, որ ամբողջը թափվում էր, որպեսզի ապաստանի թշնամիների հարձակումներից<sup>18</sup>: Վերոհիշյալ ավյաններից պարզորոշ հետևում է, որ գերմանական ու կելտական ցեղերն ու տոնմերը չունին քաղաքներ մեր առումով, այլ ապրում էին գյուղանման բնակատեղիներում, իրենց oppida — ամբողջները շրջակայքում և միայն թշնամիների հարձակումից պաշտպանվելու անհրաժեշ-

տություն դեպքում իրենց ընտանիքներով ու անասուններով ապավինում էին այնտեղ:

Այսպես սերմն շաղկապան լեռնաշխարհի կիկլոպյան ամբողջները, միանգամայն տարբերվելով խաղաղական պետություն ֆեոդալական նշանակություն ունեցող ամբողջներից, բնակելի քաղաքներ չէին, այլ պաշտպանողական կետեր տարբեր ցեղերի, տոնմային համայնքների: Այդ կիկլոպյան ամբողջներն իրենց կոնրատրուկտիվ սեռագծերով զբաղում են գիմագրական այնպիսի հատկանիշներ, որոնք հասուկ են սոցիալական տեխնիկայի թույլ զարգացմանը, պրիմիտիվ մարտական եղանակներին, որ բնորոշ է տոնմային հասարակական կազմին:

Տոնմային հասարակութունը, դեռ ևս սոցիալապես շերտավորված չլինելով, չէր բովանդակում իր մեջ առանձին դիմաբական դաս, պրոֆեսիոնալ սոցիալական խմբեր, ինչպես դա սովորական է քառակարգային հասարակության մեջ, սկսած ֆեոդալական շրջանից. առհաս ըլողը հասած այդ մարդիկ մեծամասնակ և սոցիալիկներ էին, որոնք պարտական էին պաշտպանել իրենց տոնմը կամ ցեղը թշնամական հարձակումներից: Գրանսով պետք է բացատրել, թե ինչու այնպիսի գյուղութային ու արագություն էին արշավող խաղերը նվաճում այդ ամբողջները, խաղերը, որոնք, իրենց գիմաբա-ֆեոդալական պետականութային շնորհիվ, սոցիալական սեռակետից ավելի բարձր էին կանգնած և ներկայացնում էին կազմակերպված ու զարգացած գիմաբալական ուժ:

Հայկական լեռնաշխարհի կիկլոպյան ամբողջները պրիմիտիվ կոտորյցքը սոցիալական սեռակետից սոսալիստային աչքի է զարնում վերը նկարագրված ամբողջների առաջին ասիպին, որն անշուշտ պատկանում է տոնմային հասարակության զարգացման սկզբնական շրջանին: Իսկ երկրորդ ասիպի կիկլոպյան ամբողջները, որոնք համեմատաբար ավելի կատարելագործված կոնտրատրուկտիվ տարբեր են պարունակում, իրենց սոցիալ-տեխնիկական սեռակետից համապատասխանում են արդեն տոնմային հասարակության հետագա զարգացման շրջանին, երբ հայրիշխանական տոնմային կազմերը ներսում սկիզբ է առնում սոցիալական շերտավորման պրոցեսը, տոնմային համայնական հարստության կուտակումը և սրա հետ միասին համայնական գիմաբալական հոր:

Նաճապետի իշխանութեան զբեռնումը և ուժեղացումը, սոսնձապետերի սոցիալ-տնտեսական բյուրեղացումը: Գրա հետեանքով էլ առաջանում են շահադրդոված սոսնձապետների ազդակցական միավորումները սոսնձային միությունների, ցեղերի և այլ ցեղական միությունների՝ ցեղապետների զլխավորութեամբ: Այդ նոր սոցիալ-տնտեսական ձևավորումներն իրենց մեջ պարփակում են արդեն ապագա պետութեանը կազմավորող սպաները: Այդ պայմաններում երկրորդ տիպի կիրկույան ամբողջների կոնսուրուկտիվ տեսողմերն ավելի կայուն ու դիմադրական ուժ հանդիսանալով շարժվածքով պարիսպները, բուրգերը, միջնաբերդի անմիջական կապն ընդհանուր բերլի հետ և միտածամանակ մեկ որմով նրանից բաժանվելը, որով արտահայտվում է սոսնձապետի, համայնքի նաճապետի և այլ ցեղապետի իշխանութեան կենտրոնացումն ու դրեղացումը, և վերջապես ամբողջ ամբուլթեան համեմատաբար ավելի մեծ ասարածութեանը՝ զալիս էին բավարարելու հարկելանալան սոսնձի սոցիալ-տնտեսական պահանջները, սոսնձային հասարակութեան մեջ կենտրոնաձիգ իշխանութեան զարգացմանը, որ դրեկորված էր ցեղային միութեան տաղանդով:

Հայկական լեռնաշխարհի ցեղա-սոսնձային հասարակութեան մեջ սկզբած շերտավորման մասին որոշ չափով վկայում են հնագաբայան բազմաթիվ դամբանները, որոնք վերաբերում են բրոնզի դարերի կուլտուրային: Գամբանային այդ կուլտուրաները, որոնք կազմում են հնագաբայան գերեզմանոցներ՝ նեկրոպոլիսեր, շատ հաճախ գտնվում են կիրկույան ամրոցներից ոչ այնքան հեռու, զլխավորապես նրանց կից բնակավայրերի շրջակայքում, այն էլ մեծ մասամբ կիրկույան ամրոցների երկրորդ տիպի առնչութեամբ: Այդպես են նոր-հայտնակ և ընդհանրապես Սևանի շրջանի, ինչպես և Ազրբեջանում գտնվող Գետաբեկի (Գանձակի գավառ) և այլ նեկրոպոլիսերը:

Անշուշտ, մեծ վերապահութեամբ կարելի է այդ դամբանները կապել հարևան կիրկույան ամբուլթյունների հետ, քանի որ թաղման ձևերը խիստ բարդ պատկեր են ապլիս իրենց նըման ու ասբեր գծով հարակից բնակավայրերի նկատմամբ: Գամբանները՝ պարունակելով պաշտամունքային հանդամանքներ, իրենց մեջ կիրկույան իրերով չեն կորող լիովին արտացոլել բնակավայր

րի բովանդակ կենցաղը, ուստի նրանք որոշ չափով խզված են հանդիսանում իրենց ժամանակակից շրջապատ կյանքից և ավելի շատ նայում են դեպի նախորդ կենցաղը: Չնայած իրենց պահպանողական բնույթին՝ թաղման պաշտամունքային ձևերն այնուամենայնիվ մոտիմոտում են հասարակական նոր զարգացման աստիճաններից բլխող կրեակական հավասարչենների հետ: Իժախարհոր մինչև այժմ մեր Հայկական լեռնաշխարհի դամբանների պեղումները կոտարվել են առանց որևէ աղերսի հարակից կիրկույան ամրոցների ու հինավուրց բնակատեղիների հետ, որի հետեանքով դամբանային բրածոները զգալիորեն կորցնում են իրենց հնագիտական-պատմական արժեքը, եթե մնան աչքդիսի անշտա միճակում:

Վերերեյակ ավայրներից մեկներով, կարծում ենք, որ կիրկույան ամրոցները, մանավանդ առաջին տիպին պատկանողները, ավելի հին ծագումն են ունենալու քան հարևան նեկրոպոլիսերը, որոնք շատ անգամ բովանդակում են իրար հաջորդող գանաղան զարգացման աստիճանների թաղումներ: Այդ դամբանները պարունակում են հասարակական շերտավորման տիպերն ընտելի կրող թաղումներ. օրինակ՝ թաղած իրերի հարստութեանը և նույնիսկ որոշ չափով ձևիութեանը համեմատած այլ հարևան թաղումների հետ, որոնք ավելի աղքատ են: Գոտում ենք այնտեղ իրենց տերերի հետ միասին թաղված սարուկներ, իսկ մյուս կողմից՝ նույն այդ դամբաններում թաղման ամբողջ միակուս կապը պահպանել է սոսնձային հավատալիքների ու պաշտամունքի բնորոշ գծեր, որոնց մասին խոսք եղավ վերև:

Ան Հայկական լեռնաշխարհի հյուսիսային մասում, արդի Անդրկովկասյան երկրեկտրում սխմված բողոմաթիվ այդ կիրկույան ամրոցներն էին, որ հանդիպել էին թաղվերն իրենց արշավանքների ժամանակ ու նրանց անվանել «քաղաքներ» և միտածամանակ այդ «քաղաքներին» հարող բնակավայր-մարբերն անվանել են «երկրներ» այս կամ այն թաղավորի կամ պարզապես «թաղավորութեաններ»: Այստեղ խաղ նվաճողի իմաստավորումով՝ բնակավայրն ու երկիրը կազմում էին մեկ ամբողջութեան, «որը նրան ներկայանում էր իբրև պետական ձևավորում, ստանալով անկախ թաղավորութեան նշանակութեան, մանավանդ, որ իբրք այդ քաղաքներն իրենց շրջապատ բնակավայրերով

հանդիսանում էին իբրբայ անջատ, անկախ, երբեմն իսկ թշնամական միավորները: Խաղերն իրենց ֆեոդալական տեսանկյունով էին չափում նվաճած քաղաքներին ու «երկրներին» սոցիալական սարուկառուցան, որը սակայն իրականում դեռևս դուրս չէր եկել ցեղա-տանձախն հասարակական կազմից: Այդ պարագան մի կարևոր մասնն է, որ չի կտրելի անտեսել հնադարյան Հայաստանի կուլտուրայի ուսումնասիրության ժամանակը:

Հիրավի, խաղական սեպագրություններից ակնհեր է, որ խաղերը բնավ չէին օգտագործում իրենց ռազմա-նշանոցական նպատակների համար: Անշղկոկկայան երկիրներում դրաված ամբողջները՝ քաղաքները, այլ ստորաբար կամ կառուցում էին նոր ամբողջներ կամ վերանորոգում էին գրաված ամբողջները, հարմարեցնելով իրենց պետքերին: Այլույն էին Արմավիրի, Գաշտուռուհի, Էլառն, Նոր-Բայազետի և այլ մի շարք ամրությունները: Այդ ուշադրավ փաստը հիմք է առկա եզրակացնելու, որ տեղական կրկիտոյան ամբողջներն իրենց կոնստրուկտիվ տեսազօհրով ու նշանակությամբ, որոնք համապատասխանում էին տեղական բնակչության սոցիալ-տնտեսական պայմաններին ու լիովին բավարարում էին նրանց պաշտպանողական պահանջներին, բնավ չկարողանալով ծառայել նվաճող խաղերի պահանջներին ու կարիներին, դառնում էին այլևս նրանց համար անպետք:

Մենք արդեն վերը մեջ բերած նկարագրում հիշեցինք խաղական ամբողջների հատուկ տեսազօհրը: Հետևապես, եթե նվաճող խաղերն անպետք էին համարում տեղական բազմաթիվ ամբողջներն ու ձեռնամուխ էին լինում նորերի կառուցման կամ հնրի վերանորոգման, կանգնեցնելով նորերը, որոնք հիմնովին սարբերվում էին տեղական ամբողջներից և որոնք մեր նկարագրության մեջ մտնում են Հայկական լեռնաշխարհի հյուսիսային մասի ամբողջների երրորդ տիպի շարքում: Դա մի սպացույց է, որ տեղական կրկիտոյան ամբողջներն իրենց նշանակությամբ ծուղել էին միանգամայն այլ սոցիալ-տնտեսական պայմաններին, որոնք անհարիբ էին խաղերի ֆեոդալական հասարակարկային և որոնք հետևապես բնորոշ էին միմյանայն անդասակարգ հասարակությանը, ներկա գեպրում ցեղատանձային կազմին, որն արդեն սպրում էր քայքայման ու սկսված շերտավորման վիճակը՝ խաղերի նկարչավի մասնատին:

Խաղերը Հայկական լեռնաշխարհի գրաված «երկրներում» կառուցում էին ոչ միայն նոր ամբողջներ և հիմնովին վերակառուցում հնրը, այլև նորնված երկրում ձեռնարկում էին լայնածավալ շինարարությունը, որի մեջ առաջնակարգ տեղ է բռնում քրանյրների կառուցումը, բարձրացնելով տեղական երկրագործական մշակույթը կամ հիմնելով նոր մշակութային տարածություններ: Ուստի բարձրանում էին նոր ամբողջներ, խաղական շինարարական տեխնիկայով կառուցված, որոնք դառնում էին նվաճողների տեղական իշխանությունն առանձին հենակետեր: Այսպես նստում էին խաղ ֆեոդալականության ներկայացուցիչներն ու իրենց կոյազորներով նպատակության լծի ներքո պահում տեղական բնակչությունը, հանդերձ նրա քաղաքներով՝ ու «խաղավորներով», եթե վերջինները գերի չէին ապրված: Այդ հենակետերը ձգվում էին երկարուն շղթայով գլխավոր ռազմական ճանապարհի ուղղությամբ, սկսելով հենց Արարատի սահմանից, այժմյան Գաշտուռուհից, և ապա Արմավիրի ու Էլառի վրայով մի ճյուղը գեպի այժմյան Լենինականի և Ղարսի կողմերը, որ վերջանում է Չլդրը լճի ամբողջով, իսկ մյուս ճյուղը գեպի Սևանի լիճը՝ Նոր-Բայազետի ու Քոլազուսի ամբողջներով: Այսպեղ մենք նկատում ենք ամբողջների կառուցման նույն ղեկավար սկզբունքները, որոնք տիրում էին խաղերի վանյան-սարաթական թագավորության սահմաններում: Այդ ամբողջներն սխտանատիկ դասավորումը խաղային պետության տերիտորիայում, որպես հենակետեր իշխող դասակարգի տերապետության, մի օրակոլ շղթա է հանդիսանում ամբողջ երկրում, կենտրոն ունենալով Վան մայրաքաղաքը, ուսկից շատավիդներով ձգվում էր դեպի ծայրամասերը:

Խաղ նվաճողները, քերելով իրենց հետ Հայկական լեռնաշխարհի գրաված այլ հյուսիսային երկիրը ֆեոդալ հասարակությանը յուրահատուկ արտադրական եղանակները, նվաճող ախրապետոլ զսասկարգի ձեռքով տեղական բնակչության հարստագործումը, ուսկոլ դարկ ավին այն քայքայման պրոցեսին, որ դարձնում էր ներսկոլ ցեղա-տանձային հասարակական կազմի մեջ յուրազրոգական ուժերի զարգացման իմանենա պայմաններում: Արդեն, մինչև խաղերի ներխուժումը սկսված սոցիալական շերտավորումը, այժմ նորիկ գործոնները ազդեցությամբ արագ թափ



## Տ Ե Ղ Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր

էր ստանալու և սրբնից զինելու զեպի դասակարգային հասարակութիւն: Այդ մասին ավելի հանգամանորեն կանգ կառնենք սույն շարահյուսութեան երկրորդ մասում, ֆեոդալիզմի վերաբերյալ դուրսնելու և Այստեղ շեշտենք միայն, որ 'ի վերջս խաղաղան ներարշավը, խաղաղան ֆեոդալ պետութեան ներդրութեւնը Հայկական լեռնաշխարհի Ռուս և Արաքս երկզկեպի մասում խաղաց նույն զերը և ունեցալ նույն նշանակութիւնը երկրի ֆեոդալիզացիայի և սոսնձային հասարակութեան սոցիալական շերտավորման զբժժում, ինչ որ ավելի առաջնեքն Ասորեստանը՝ Հայկական լեռնաշխարհի հարավում՝ նայելիս Վասպուրականի յուսնեքնում:

Անշուշտ այդ նոր հասարակական ձևափոխման հետևանքով, կատարվող սոցիալ-անասակարգ հեղափոխումով, երբ ցեղա-ասոսմային կազմը վերջնականորեն սեղի էր տալիս ֆեոդալ-դասակարգային հասարակութեան զարգացմանը, սկսում են կորցնել իրենց սոցիալական դերն ու նշանակութիւնը և սրանց նյութական կուլուրայի այնպիսի յուրահատուկ երևույթները, ինչպիսին էին կիկլոպայան ամբոցները: Նրանք արդեն կորցնում էին իրենց վազմի ֆունկցիոնալ նշանակութիւնն ու զերը, ցեղա-ասոսմային կարգերի վերացումով նրանք բնականորեն լքվում են, բարձի թողնվում, իբրև արդեն աննպատակ ու անպետե կառույցներ, և վերջնապես խաղաղ ամսյանում են իրենց հարակից բնակատեղիքով, նրկար ու ձիւզ դարեր ավերակ մնալով մինչև մեր օրերը: Նրանց փոխարեն բարձրանում են ֆեոդալական ամբոցներ, խաղաղիք ձևեքով կառուցված, և կայուն են մնում մինչև խաղաղան թագափոխութեան վերջնական կործանումը: Այժմ կիկլոպայան ամբոցները, չնայած բնութեան դարավոր քայքայիչ ազդակներին, նաև մասնավանգ հարևան բնակիչների արհեստական ավերումներին, երբ այդ հինավուրց քարերը թաղանվում են նոր շինքերի կառուցման համար, մնում են սոսկ համարխտ հակ վկայութե հնագոյրայան անցած-գնացած կուլուրայի, որոնք միայն վերստոյ հնագետի ու հետադոտող պատմագետի ուշադրութեւնն են իրանց վրա դաժում որպես արխայիկ սոսնձային հասարակութեան երբեմնի դոյութեան խոստե հուշարձաններ:

Երբ տեսութեան ենք առնում Հայկական լեռնաշխարհի քաղաքների ու երկրների անուններն ըստ խաղաղան սեպագրութեւնների, նկատում ենք, որ այդ անունները գրեթե բոլոր վերջնում են զնո (խիւի) սմանցով, որ շատ անգամ սղվելով գտնում է զի (խի) կամ ու (նի), օրինակ՝ Էտիուխիւի—Էտիուսի, Էրիուխիւի—Էրիուի, Արիւխիւի/իւի—Արիւխիւի/իւի և այլն: Այդ զնո վերջածանցը ոչ այլ ինչ է, եթև ոչ մի տեղմին, որ նշանակում է սարգիս: Նույն ենք ասելու ասորեստանյան սեպագրութեւնների վերաբերմամբ, ուր նիշատակվում են նայելի վիտայովորութեւնները:

Սեպագրութեւնների սեղանունները, ինչպես ցույց է տալիս նրանց բնորոշ վերջածանցը, գոյացել են սոսնձային անուններից, որոնք իրենց հերթին դարձել էին իշխանների կամ Վեպագրութեւնների՝ զինատիրական անունների: Իսկ սոսնձային անվան վերջածանց օրգիս տեղմինը մեզ տանում է ավելի հեռավոր ազգարանական խորքերը, զեպի տոսմիզմը: Այդ սոսմեական վերջածանցը հետագա զարգացմամբ սկսում է փոխվել նոր սոցիալական միջավայրում և, պահպանելով իբրև վերապրուկ, դասում է տեղանվան ամանց: Եվ խաղաղան արձանագրութեւններում այդ անունները տակալին պահպանում են տեղական սոցիալական սարակուրայի զարգացման ու փոխանցման կապները չվերջացած սոսնձանները: Ուստի շատ անգամ դժվար է լինում որոշել, թե խաղաղան գրութեւնների արգոյք նկատի ունեն միայն տեղանուն թե՛ սոսնձանուն, թե՛ դինաստիայի, այն է Վեպագրութեւն» տան անունը: Ասելով, օրինակ՝ Էտիուի, խաղաղան արձանագրութեւնը միաժամանակ անվանում է և՛ երկիրը, և՛ ցեղը, որ բնածած ասելով ավելի երկիր, և՛ վերջնապես Վեպագրութեւն», այսինքն մի տեսմով՝ տալիս է գինաստիական անունն այդ ցեղի պետին, առաջնօրգին, զեղափար ավագին: Թեև նույն այդ արձանագրութեւններում ուն կամ ու վերջածանց անուններով են կոչվում նաև միայն ցեղերը, ինչպես, օրինակ՝ Արմավրի սեպագրութեւններում՝ Շելուխի, Արիւխիւի և այլն<sup>10</sup>, Հեռեպես պետք է նեթազերել, որ այդ գա-

բաշքընում արդեն տոնմային կողկոթիքներէ սահմաններում զոյսնում էին ցեղեր, որոնք իրենց բռնած տերիտորիայով մտում էին դեռևս անջատ միավորներ, սրանք անշուշտ ապրում էին այնպիսի արտադրական հարաբերութիւններում, որոնք տանում էին նրանց զեպէ ասաջիկո նոր ձևավորումները, որ հանդիւռ էին սինտուլթան կազմավորմանը:

Վերորբըյալ ուշագրավ երևույթից պարզորոշ հետևում է, որ Հայկական լեռնաշխարհի հյուսիսային մասի սոցիալական սարկուստրան խաղերի ներառչովի մասնանրէ ներկայացնում էր քայքայովո տոնմացեղային հասարակութիւն, որի մեջ ծագող հասարակական շերտավորումն արտացոլել է խաղի իմաստավորման մեջ ֆեոդալական հասարակակարգի պատկերացումով: Այստեղ բացանայտ երևում է, որ Հայկական լեռնաշխարհի այդ մասը չէր ներկայացնում մի հանուր կենսարոնածիզ իշխանութիւն, չկար միասնական իշխող սուլնորդ՝ միաստե թագավորի առումով, այլ կային միայն առանձին մարդեր, երկրներ իրենց քաղաք-ամրոցներով, իրարից անկախ և ինքնուրույն: Բնական է, որ զորքի՝ անբմիւսային վերջածանցով անուանելն ավելի հոճախ հանդիպում են խաղային նուշարձաններում Հայկական լեռնաշխարհի, քան թե Վանյան թագավորութիւն վերաբերմամբ, որն այդ ժամանակներն արդեն ֆեոդալականացած շրջանն էր ապրում, ուր այդ տեսակ անուանելը կամ չքացել էին տոնմացեղային կազմութիւնների անհայտնում կամ թե իբրև վիրապրուկ փոխանցել էին ֆեոդալական իշխաններին, որոնք ինքուրի ավելի սակավաթիվ էին, շնորհիվ կենտրոնացման պրոցեսի, քան նախկին բազմաթիվ տոններն իրենց զլխավորող պետերով: Աւելին խաղային արձանագրութիւնները, հիշատակելով ամբողջ շարան անուանիք թողի՝ վերջածանցով, որն Բուսպեա տոնմացեղային առում ունի, այն իմաստավորում էին տեղանվան առումով: Նրանք ասում էին ոչ թե այս ցեղի կամ տոնի քնսիակայլեր ու երկրներ կամ քաղաքներ ու մարդիկ, այլ այս կամ այն երկրի մարդիկ, «թագավորներ», իշխաններ, քաղաքներ: Խաղ նվաճողները սեպագրում էին, որ էպիտոնի կամ Ուելիտոնի երկրին տիրեցին, Ալբանիիսի կամ Նրախի երկրի քաղաքները գրավեցին, էպիտոնի երկրի «թագավորն» կամ մարդկանց զերեցին և այլն:

Այդ տուտեմ-տոնմային բնորոշ վերջածանց՝ «թողի»—inl,

in—նայ իբրև վերապրուկ ոչ միայն խաղային ֆեոդալական լրջութեմ, այլև նրա շարունակութիւն՝ հին Հայաստանի ցեղայնութեան էտոլում՝ հայ նախարարական տանների անուններում նույն վերջածանցով, որ ստացվել էր ունի կամ թի ձևը, ինչպես որինակ, Արժուռնի, Ամասուռնի, Բագրասուռնի, Մյուռնի, Արշարուռնի, Ապահուռնի, Սիլուռնի և այլն: Նույնիսկ յախ կամ ան սմանցները, որոնցով վերջավորվում էին մի շարք նախարարական անիւրի անունները՝ Մամիկոնյան, Մանավոյան, Գաբրիլյան, կամտարական, Մուրացան և այլն, միևնույն ու ամանցի վերափոխված ձևերն էին, որոնք գոյացել էին ֆեոդալական կազմի ավելի հետագա սոցիալ-տնտեսական պայմաններում: Նախարարական անիւրի այդ դիմաստիտեան անունները, թեև գոյացել էին տիրող մտապատկերներում իրենց տուտեմական իմաստավորումը և վերապրում էին ֆեոդալ իշխանի զասկարգային առումով, այն կապելով անվանադիր հերոսի (էպիտիմի) հետ: Այդ անուններում միևնույն ժամանակ պահպանվեց զորքայալ այն բնորոշ գիծը, որով տոնմային հասարակութիւն մեջ, ինչպես վերը անսանք, տոնմանուըն փոխանցում էր տոնի բռնած երկրին ու դոտնում էր տեղանուն: Հիրավի, նախարարական Հայաստանում հին աշխարհագրական անուններից շատերը կրում էին դիմաստիտեան բնույթի՝ Մյուռնիք, Ապահուռնիք, Արշարուռնիք, Վարամնուռնիք, Բիզուռնիք, Ուշուռնիք, Արեղյանք և այլն և այլն:

Վերորբըյալ հնագիտական ու լեզվագիտական ավաւնիքը բացահայտ դրոշում են, որ Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմտյան մասում ըրանցեղային կուլտուրայի ժամանակաշրջանում ծագկում էր տոնմային հասարակական կազմ: Այդ հասարակական ձևը, մոտավորապես առաջին հազարամյակի սկզբներում մեր տարեթիվադրուկ առաջ, սրտաշրդդական ուժերի զարգացման հետևանքով ներքուստ ենթարկվել էր շերտավորման: Առաջ էին եկել հարուստ ու աղքատ գերաատասնական համայնքներ՝ իրենց նահապետներով: Հնագնեստի զարգացող արտադրական հարաբերութիւններում ծայր է առնում տոնմային համայնքի վերասերումը, ճանապարհ հարկիւրով զասկարգային շերտավորման առաջ:

Սակայն տոնմային այդ ներքին արոման հետ զուգահեռ

տեղի է ունենում նաև ցեղային միավորման պրոցեսը, տոնմային հասարակութայն գերակեկակի զարգացման էտապներից մեկը: Կենսոլորտնախում են առանձին տոնմային միավորները ցեղային կոլեկտիվի մեջ. կենսոլորտնախում են առանձին, անջատ երկրներն ու այնանոց խխ կերպով ցրված կիկլոպայան ամբողջազգայինները, նրանց ընտանիքայինները, նրանց արտոսավայրերն ու մշակելի հողերը:

VI

ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՂԷ

Հայկական լեռնաշխարհում տոնմային հասարակութայն երբեմնի գոյություն մասին արձագանքներ ենք գտնում հայ ժողովրդական հին վեպում ևս ավանդություններում, որոնք Մովսես Քորենացու հիմք են ծառայել կառուցելու Հայաստանի ու հայոց պատմութայն սկզբնական, նախնական շրջանը: Շարահյուսելով իր գրքում Հայաստանի պատմութայն այսպես կոչված հիբոսակյան կամ հայկազանց դարաշրջանը, Մովսես Քորենացին իր օգտագործած առասպելական նյութերին առիթ է պատմական իրողութայն, փաստական ղեկգրերի բնույթ, որն անշուշտ իր էությունը գործն է նրա դրչի տակ իրօք ոչ թե պատմություն, այլ մնացել է նույնպես առասպելաբանութայն: Բայց և այնպես այդ առասպելաբանութայնը վերաբերելով, նրա մեջ գտնում ենք պատմական հիմքեր այն չափով, ինչ չափով ժողովրդական վիպասանութայնն ու ավանդությունները հանդիսացել են որոշ սոցիալական կազմի վերնաշինքը, ինչ չափով այդ ժողովրդական բանահյուսութայն մեջ արտացոլել են համապատասխան սոցիալական միջավայրի բնորոշ գծերն ու հասարակական կառույցը:

Հայերենում հնուց ի վեր գործածվող տախմ բառն ունեցել է մի այլ հոմանիշ տերմին՝ ազն, որ հին հայերենում ավելի գործածական էր իր բնորոշ հատկութայն: Սակայն այդ երկու տերմինները իրանական-արիական ծագում ունեն տախմ—tauma և ազն (այդտեղից էլ ազգ՝ ցեղի առումով)—zana բառերից: Հետևապես, մեզ չին հասել բուն տեղական տերմինները այն հասարակական կազմի, որի մասին է մեր խոսքը և որը, անտարակույս, գոյություն ունեցել խորը հնուց, քան իրանական-արիական

ազգիցութայն մուտքը հնագույն Հայաստանում: Այդ հնութայն են վկայում հին հայկական առասպելները հայերի ծագման մասին: Ինչպես դեռևս, հայ էթնիկ տարբեր գոյացել է երկու հիմնական շերտերից, ըստ որում այդ էթնոսի անունը մեզանում կա, իսկ օտարների մոտ արևեն է հորջորջվում. մեկը՝ տեղական էթնիկ տարբեր է, իսկ մյուսը՝ եկվոր, նվաճող (1, 88—102): Առասպելական ավանդութայնը՝ առաջին անունով հայերի ծագումը կապում են անվանադիր հերոս Հայկ նահապետի, իսկ սրբնաշինքները կապում են Արամնայակ կամ Արմենակ անվանադիր հերոսից, իսկ ըստ Մովսես Քորենացու՝ նրան հերոսից: Երկու զեպոսմն էլ, ինչպես տեսնում ենք, հայ էթնոսի գոյացման պատմութայն հիմքն է հանդիսանում տոնմա-ցեղային կազմը: Այդ ստիվի Մովսես Քորենացին, օգտվելով հնագրայն ժողովրդական պոլյնիերից ու ավանդություններից, պատմում է Հայաստանի ծագումը, ներկայացնելով բնորոշ ցեղա-տոնմային հասարակութայն մի պատկեր: Հայերը՝ զուտ արարեալ գնաց երկիրն Արարտայ, որ է ՚ի կողմանս հելսիտոյ, հանդերձ որդուովք իւրովք և զըտտերօք և որդւոց որդուովք, արամբ դորսուորօք՝ թառով իբրև երեք-հարուր, և սլավք ընդօծնօք, և կիօք յարեցիւովք ՚ի նա և բլլօր աղիւիւս<sup>20</sup>: Նա շինում է բնակութայն համար մի գլուգ, որն իր անունով կոչում է Հայկաշեն: Այնուհետև, երբ Հայեր մեռնում է, հունձնում է իր սղորմանդակ աղնն՝ իր որդի Արմենակին, «իսկ աշխարս մեր կոչի յանուն նախնուայն մերոյ Հայկայ՝ Հայք»<sup>21</sup>: Այս Մովսես Քորենացին ավանդում է, թե քե այս ազգը նորս և ծնունդք և աշխարհ բնակութեան, և յայսմ հետև սկսան, ստէ, յազմանալ և շնուլ գերկիրն<sup>22</sup>:

Վերոհիշյալ մեջբերումներից ակնհեր է, որ Մովսես Քորենացին գործածում է ազն, հայնակի ազգ, այնուհետև ծնունդ բառերը, որոնք ըստ նրա տեղմինաբանութայն՝ առաջինը տան է նշանակում, իսկ երկրորդը՝ սերունդ: Հետևապես Հայկի տոնմը բազմապատ էր մոտ 300 հոգուց, այն էլ իր որդիներից, այնուհետև զուտարներից, որդիների որդիներից, այսինքն թոռներից, որոնք արդեն հասակ առած էին. բայց այդ՝ նրա հետ էին այլ մարդիկ՝ ընդօծիները, թերևս և զայիերը: Թոռներ սակել, անշուշտ պետք է եզրակացնել, որ նրանք ոչ միայն որդիներից էին, այլև զուտարներից, մանավանդ որ այդ թոռները հիշատակվում

են դուստրներք հետս Ուրեմն այդ դուստրներք ամուսնանան  
էլ նուչն տոմի մեջ էին մտեր Աշտուղ մենք նկատում ենք մաս-  
րիարխտի մնացուկներ, երբ այք մարդիկ զալին էին ամուսնա-  
կան հարաբերությունների համար կանանց մաս, բեկ կարճատև  
մամանակով. մինչդեռ ներկա գեղքում նրանք, ըստ երևութիւնի,  
մշտապես մնում էին իրենց կանանց մաս, հարելով նրանց տո-  
մին Այս հանգամանքը բնորոշ է նրանում, որ մեր առաջ է պա-  
րիարխտական տոմի սկզբնական զարգացման շրջանը, երբ  
մասրիարխտական տոմային գծերը տակալին վերացած չեն և  
նրանց մնացորդները գեուև ապրում են նոր հասարակարգում հե-  
տընդենտ անէանալու տենդենցով:

Մովսես Քորենացու այդ առասպելական պատմության մեջ  
արտացոլում է տոմային հասարակության կազմը ոչ միայն վե-  
րորերյալ գծերով, այլև նրանով, որ Հայկը հանդիսանում է ան-  
վանադիր հերոս (կադմիմ), նրա տոմին՝ «ժնուհներէք բազմա-  
նարով, բամանվում են նոր տոմներ, թաղք», որոնք հետագայում  
ցեղական կազմի վրա ձևավորվում են մի ուրույն ազգության  
նույն այդ տոմային հասարակության բնորոշ գիծն է, որ նրա-  
նից զարգացած «աղք»՝ ազգերը, շարունակելով կրել իրենց  
նախահայր հերոս՝ Հայկի անունը, կաշվում են հայեր և այդ «Հայք»  
անունով էլ հորջորջվում է նրանց բնակության երկիրը:

Այդպես է ամանդում հին հայ ժողովրդական առասպելը, որի  
վրա է հիմնվում Մովսես Քորենացին իր պատմությանը հյուսե-  
լիս Մակայն Հայկի առասպելի համաձայն Մովսես Քորենացու  
բացատրությանը հայ ազգի ծագման հասին հարկ է շուս առ  
հակառակ իմաստով: Մեկնելով այն հասարակաց երևութից, որ  
արևայիկ հում ժողովուրդներու ցեղա-տոմային միություննե-  
րի և նրանց պաշտված աստծու անունները միևնույնն են լինում  
(խալդերն ու թալք աստվածը, ասուրները կամ Ասորեստանը և  
Աստուր աստվածը և այլն), պետք է հետեցնել, որ Հային էլ  
աստվածն էր այն ցեղի, որի անուն էր հայ: Անս այդ էթնիկ  
հայ անունից արվեստական վերացականացումով առաջացել է ան-  
վանազիր Հայկը, իբրև աստված<sup>3</sup>: Հետագայում արդեն, քրեա-  
տոնական միջոցառում, էթնիկ Հայի աստվածությանը կորց-  
նում է իր աստվածային նշանակությունը և հանդես է գալիս  
ժողովրդական ասույթներում և առասպելներում հերոսի, դու-

յազնի գերում: Այդ իմաստով են նրան ներկայացնում Մովսես  
Քորենացին, Անանունը, Թամ Արծրունին, պատկերացնելով  
նրան իբրև օղեղապաշտան և անձնեայ, քաշղապագուր, խայտա-  
կրն, հաստարգուկ, քաջ և երևելի ՚ի հակառակ:

Մակայն Մովսես Քորենացու առասպելաբանության մեջ ար-  
տացրում է ոչ թե հին Հայաստանի այն դարաշրջանը, երբ հայ  
էթնոսն ապրում էր տոմային հասարակական կազմով, այլ այս-  
պես կոչված ճնտխանչկական շրջանը: Դրան ասպայույց կարող  
է լինել տոմային տերմինաբանությանը: Հին հայերենում տո-  
մի իմաստով գործածական թաղմբուր, ինչպես վերը նշել ենք,  
իրանական ծագում ունի և ասպարեղ է եկել այն սոցիալական  
նպարգման էտապում, երբ արդեն տեսնում ենք դասակարգային  
հասարակություն: Մեր մատենագրական ամենահին ավայնեբով  
«պլն» բունն սոցեղ էր դասակարգային իմաստավորում: Ազն  
հասկացվում էր իբրև տոմային սնունդ, տոմային ճյուղ, իսկ  
այդ բայից դուրսացած ազատ, ազատանի տերմինները, որպիսի  
անունով էին հայտնի հին Հայաստանի նախարարական շրջա-  
նում տիրապետող դասակարգին պատկանողները, իսկ նետագյում,  
Հայաստանի միջնադարյան ու նոր պատմության մեջ նրան փո-  
խարինող պլնվակամ բուր, նշանակում էին իսկական տոմիկ,  
տոմից ձագած<sup>4</sup>: Հետևապես սղատները, գոյատևողով աչեն, այ-  
սինքն տոմի սոցիալական տրոհումից, երբ տիրապետող գիրք  
են գրավում նոր հասարակական կարգերում նախկին տոմի հա-  
րուստ տարրերը, սեփականատեր դարձաները — հանդիսանում են  
այն սոցիալական վերնախավը, որը միայն իրեն էր վերադասում  
տոմային ծագումը: Մինչդեռ նույն տոմի շերտավորումով չբա-  
վար, ընչազուրկ տարրերը կորցնում էին իրենց հասարակական  
նշանակությունը, դառնալով շահագործվողներ, վերնախավից արն-  
սետականորեն կախում ունեցողներ. հետևապես նրանք խորթա-  
նում էին այն տոմին, որից իրենք էլ կրթեմիկ սերվել էին,  
բայց որից ծագելու ծննդարանության իրավունքը բունարտիկ  
կերպով յուրացրել էին տրոհված վերնախավին պատկանողները:  
Ուրեմն հնազույն հույց պատմությանը մենք տեսնում ենք  
սկսած՝ արդեն դասակարգային հասարակության ֆորմացիայում:  
Հայ ժողովուրդը այնպես, ինչպես մինչև այժմ նա մեկ հայտնի  
է պատմական ավայնեբով, արդեն դուրս էր եկել տոմային հա-  
սարակության կարգերից:

Եթե այդ այգոյն է, ապա նաճապետի տոնմա-ցե-  
ղային կազմի վերաբերյալ նկարագիրը մեզ տանում է զեպոյ ավե-  
լի հնագույն դարերը, զեպոյ նախահայկական շրջանը։ Այս զեպո-  
քում մենք մտնում ենք թեքին Հայկական լեռնաշխարհի կեկելապյան  
ամբոյնների զարաշըջանք, երբ տակալին կենսունակ էր առնա-  
ցեղային հասարակութիւնը, որի մեջ զեա նոր էր ծայք առնում  
սցեղայական արձման պրոցեսը։

Յեղա-տոնմային հասարակութիւնի երբեմնի զոյության հի-  
շողութիւնը արտացոլել է ոչ միայն հին հայկական առասպելնե-  
րում ու վրդասանական զրույցներում, որոնց վրա է կառուցում  
Մովսէս Սորենացին իր պատմութիւն մեջ հայ ազգի ծագումն ու  
նախնական զարգացումը, այլ մեր ժամանակակից հայ ֆոլկլո-  
րում, գլխավորապէս դուշապահան վիպասանութիւններում, թեև որոշ  
չափով հետագա դարերի կենցաղային ու պատմական  
գծերով գունավորված, թեև մեծ չափով դասակարգային հասա-  
րակութեան հատուկ զարգացումը հատուկ զարգացումը ազգված։

Յեղա-տոնմային հարաբերութիւնների հետքերը պարզ երևում  
են «Դալիթի և Մհեր», «Ասամանց ծուր» և այլ դուշապահան  
հայաքերում, որոնք բնկվել են մեր ժամանակակից հայ ժողովրդական  
հայաքերում դարերի համադասական գծերով։ Այդ վեպերում  
թագավոր անվան ներքո հանդես է գալիս իսկապէս կամ դուշ-  
պահան տանտներ, ոես կամ հին մեկը, կամ քրդական զեպոյեան  
երբեմն անկախ, երբեմն էլ ենթակա ուրիշին, որն իրենից ավելի  
զորեղ է։ Նա նաճապետ է իր ամբողջ ցեղի կամ դավառի Օրենք  
չկա։ Նա կառավարում է ու հրամայում իր հասկացած ձեռով, կար-  
գաբար է ժողովրդի վիճակն իր ցանկութեամբ, վաշխում է նրա  
հարգանքն ու սերը<sup>25</sup>։ «Թագավորի իր ցանկութեամբ հարաբերու-  
թիւնը շատ մտերմական է ու հասարակ։ Նույնիսկ ռամիկն  
աղատ էլ ու մուտ ունի նրա մտա։ Գալիս է իր ցավերը հայտնե-  
լա և դանգառվելու։ Եվ թագավորն անմիջապէս անօրհնութիւն  
է անուամ։ Ժողովուրդը թեպէս ենթարկվում է թագավորին, բայց  
ճորտ ու սարսուկ չէ։ Կարող է ազատ կերպով թողնել հետանալ իր  
բնակութիւն քաղաքից ու դավառից, եթե թագավորը չի լսի իր  
բողոքին ... Ոչ մի բան այնքան չի պարզում իշխողի ու ռամիկի  
այս նահապետական հարաբերութիւնը, որքան Դալիթի և իր  
նշրայր նախորդի անկեղծ, բարեկամական սերը։ Նրանք իրար

չատ մտակ է սերտ կապված սրտեր են, բայց և երբեք չի մո-  
ռացվում վեպի մեջ, որ մեկն իշխող է, մյուսն իշխուղ-մեկն  
իրբի սեր հովանավորում ու պաշտպանում է մյուսին, որ իր  
կողմից ծառայութեան է անում իր տիրոջ որդուս<sup>26</sup>։

Հայ ժողովրդական դուշապահանութեան մեջ հաճախ հիշա-  
տակվում են թեև ցեղը և թեև տոնմա իրեն նրա լազկացուցիչ մա-  
սը, ազգ հորժըջումով։ «Ասանա ծուրում» պատմվում է, թե Դա-  
լիթը «զպաց իրեն ցեղից մի ութ-ին-տաս ազա պերեց» (ԱՆ,  
IX, 135)։ Նույն դուշապահանութեան մեջ ասված է, թե ինչպէս  
Դասնիկ Որբիկին թագավոր հաստատելիս, Բեռի Թորոսը նրան  
ամուսնացնում է. «զնացին իրենց սերունդից, իրենց ազգից մի  
ազնիկ ուզին ու պահեցին Դասնիկ-Որբիկին» (ԱՆ, IX, 134)։  
Արարտանում «Էլ-Աղասին» հարջնում է դուշապահ Դալիթին «Էլբը  
սպոյն ետ».— «վերցրեց, թե Գոյ թագավորի ազգին եմ, Արարտ-  
նիքի ազնի եմ» (ԱՆ, XIII, 59)։ Հիշատակվում են «Մասապոր  
ցեղ», «Մասանա ցեղ», «Ջոջանց տուն», որ նշանակում է Ջոջանց  
տուն և այլն։ Այսպիսի օրինակներ կարելի է մեծ թվով առաջ  
բերել, սակայն այդ էլ բավական է մեր ասածները հաստատելու  
համար։

## VII

### ՏՈՂՄԱՅԻՆ ՎԵՐԱԳՐՈՒԿՆԵՐ

Մինչև այժմ մեզ հայտնի հնագիտական տվյալները զեռու  
յա վարար չափով հնաբազմութեան չեն ընձեռում լուսաբա-  
նելու։ Հայկական լեռնաշխարհի հինավուրց ցեղա-տոնմային հասա-  
րակութեան բնորոշ գծերը, նրա զոյութեան հիմնական տարրերը։  
Սակայն այդ թեքին գալիս են լրացնելու հայ ազգագրական նյութ-  
իցը, որոնք այդ կողմից համեմատարար ավելի հարուստ նյութ են  
ներկայացնում։ Դրանք այն վերապրուկներն են, որոնք պահպան-  
վել էին մինչև անցյալ դարի կեսերը հայ ժողովրդական կենցաղում,  
որոնք հետամնաց հայկական դուշի անստեղծական-հասարակական  
հարաբերութիւնների մեջ տակալին որոշ չափով ապրում էին և  
պարտաւանակ էին Կարլ Մաքսի խոսքերով տասն<sup>27</sup> զարգացած,  
խեղձ յուրբած, կարիկատուրային, ամենայն դեպս, էպոսն փոխա-  
ված ձեռք տոնմային հասարակարգի յուրահատուկ գծերը։

Հարց է ծագում, թե մերքան մեր ժամանակակից ազգագրական տվյալները կարող են հիմք ծառայել մեր մտապատկերներում վերականգնելու հնադարյան տոնմային հասարակութային կազմը և վերլուծման նյութ հանդիսանալ երբեմնի դյուրեթյուն ունեցած սոսնային հասարակութայինը բնորոշելու համար: Չէ՞ որ հենց ստաջին իսկ հայացքից նկատում ենք, որ արզի ազգագրական տվյալները հանդուրժում են միանգամայն տարբեր սոցիալ-տնտեսական կարգերի վրա, ուր արտադրական հարաբերությունները մեզ տանում են դեպի դասակարգային հասարակութային և ուր տվյալ ազգագրական առարկան (օրեկտը) գտնվում է կապիտալիստական շրջապատման պայմաններում: Հետևապես արզի ազգագրական նյութերի վրա հենվելով՝ հնադարյան տոնմային հասարակութայինը բնորոշելը արիթ կտար մեզ մեզանշեղու այն մեթոդաբանական դրուժի դեմ, որի համաձայն ազգագրական նյութերը՝ հասարակութային ու նրա նյութական արտադրությունն պատմութունն ուսումնասիրելու համար պետք է օգտագործվեն, հաշվի առնելով ստադիալ կղանակը, այսինքն միշտ պետք է հաշվի առնել հասարակական զարգացման որոշակի էտապները: Այդ մեթոդաբանությունը էլը ղեկավարում Ֆր. Էնգելսը, որ օգտագործում է նաև ազգագրական նյութերն իր «Լնտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» կլասիկ աշխատությունում: Նա ազգագրական և այլ նյութերը կիրառում էր ոչ թե բնդամարտական բնորոշելու համար նախնադարյան հասարակությունը, այլ հետազոտելու, ուսումնասիրելու համար հասարակական արտադրությունն ու հասարակական հարաբերությունները նախնադարյան հասարակության զարգացման այս կամ այն էտապում:

Սակայն մենք բնավ աչքաթող չենք առնում այդ հիմնական տեսակետը մեր ներքա հետազոտության մեջ ազգագրական նյութերին դիմելիս: Գլխավոր հետազոտողի նպատակն այս կեպքում լինելու է այն, որ մտանալով ազգագրական նյութերին, նա պետք է դրսևորի այն տվյալները, որոնք հնարավորություն են բնձնուում ճիշտ տեղեկություններ քաղելու, ստադիալ համապատասխան հատկանիշներ հայտարարելու հասարակական զարգացման նախընթաց էտապների մասին: Անշուշտ, սոսնային հասարակության վերաբերյալ նյութերը պարփակում են իրենց մեջ որոշ տվյալներ հասկանալու և պատկերացնելու

համար ավելի վաղադույն ստադիաները: Նմանապես դասակարգային հասարակության վերաբերյալ նյութերը հետազոտողին հնարավորություն են տալիս թափանցելու սոսնային հասարակության սոցիալի ռուտինային կազմակերպության և նրա ստեղծմանից հիշելի հարկ Մարքսի բնորոշ խոսքերը: «Բուրժուական հասարակությունն արտադրության ամենազարգացած ու բազմակողմանի պատմական կազմակերպությունն է: Այն կատարելաները, որոնք արտադրում են բուրժուական հասարակության հարաբերությունները, նրա կազմակերպության բնորոշումը, միամտմանակ հնարավորություն են տալիս ըմբռնելու բոլոր հասարակաձևերի կազմությունն ու արտադրական հարաբերությունները, այն հասարակաձևերի, որոնք բեկորներից ու տարրերից կառուցվում է բուրժուական հասարակությունը, մասամբ շարունակելով՝ էարշ տալ իր ետևից մախրեքաց ձևերի դեռ յնարակարված մնացորդները...» (Ընդգծումն մերն է) (ՄՖՔ, 49—50):

Անս այդ «չհաղթանարված մնացորդներն» են այն վերադրուկները, որոնք դեռ կենսունակություն են պահպանում կապիտալիստական շրջապատման պայմաններում: Նրանք թեև չեն վերադրուկում անցյալի հարազատ ու ճշգրիտ պատկերը, բայց և այնպես նույնիսկ իրենց «խեղաթյուրված, կարկիտառային ձևերում» հայտարարում են նախորդ էտապներին, ներքա դեպքում, սոսնային հասարակության հարաբերությունները: Վերադրուկները նույնիսկ այն սրադիցիտաներն են, որոնք, չնայած ժամանակի հասանքին, դարերի բովի միջով անցել են ու հասել, պահպանվելով մինչևսովետական շրջանի հայ գյուղացիական կենցաղում, որն աչքի է զարնում իր զարմանալի պահանջարկանությունը: Նախ բնորոշ է այդ կողմից Լինինի խոսքերը, որոնք կարևորություն են ստանում ամեն մի ուսումնասիրողի համար, որը զբաղվում է հասարակության զարգացման պատմությունը: «Ընդհանրապես երկրադարձությունն և հասանալի գյուղացիությունը վրա են ծանրանում ամենամեծ ուժով հնույնիսկ արադիցիտաները, նահապետական կենցաղի սրադիցիտաները, և հետևապես կապիտալիզմի կերպարանափոխող դարձողությունն... սյակեղ արտահայտվում է ավելի մեծագույն զանազանությունը ու տարիճանականությունը» (ՄԸ, Կ. III, էջ 125):

Անս վերլուծելով այն ազգագրական նյութերը, որոնք բնութագրում են հայ գյուղացիական կենցաղը տակավին անցյալ դարի կեսում, երևան ենք հանում բազմաթիվ վերապրուկներ, որոնք հետագարած մզումով մեզ տանում են դեպի այն տեղեր զարբեր, երբ հասարակական կազմը տոմսային էր, երբ տիրում էր արտադրութայն նախնադարյան կամուսխատական եղանակը՝ հողի ու այլ արտադրութայն միջոցների սեփականութայն համայնական ձևերով: Տեսութայն առնելով այդ վերապրուկները, մենք հանդուրդ գլուխներում արժարժում ենք երկու էական մամենաներ, որոնք պատկերացնում են մեզ տոմսային համայնության կառույցը: Նախ՝ անտեսական մամենաը, այն է՝ հիմնական աշխատանքային պրոցեսներին կողմնակի մեզ, արտադրութայն միջոցների կոնկրետ սեփականութայն, կոնկրետ արտադրութայն արդյունքների համայնական բաշխումը, ապա՝ սոցիալական մամենաը, որ բղխում է հիշյալ արտադրական հարաբերութայններից, սոցիալիզմ է այն վերապրուկներում, որոնք ժողովրդական կենցաղում արտահայտում են հասարակական-իրավական հարաբերութայնները, այն է՝ տոմսային արյունակից հայրական-ազգակցական կապը, սեռա-հասակային փոխհարաբերութայնները, վրեժխնդրութայն, ընտանիք, ամուսնութայն:

### VIII

#### Ն.Ա.Խ.Ա.Գ.Ա.Ր.Յ.Ա.Ն.Ն.Ա.Մ.Ա.Յ.Ն.Ա.Կ.Ա.Ն. ՀԱՍԱՐԱԿԱՆԻՑԱՆ ՎԵՐԱՊՐՈՒԿՆԵՐԸ ԸՍՏ ԱԶԳԱԿՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ

Նախնադարյան-համայնական հասարակութայն կամ արխայիկ ֆորմացիայի բնորոշ սոցիալ-տնտեսական դիմն էր նախնադարյան կամուսխատական, որ արտահայտվում էր կոնկրետ արտադրութայն, կոնկրետ սեփականութայն և արտադրութայն արդյունքների կամուսխատական բաշխումով: Այդպես են հիմնադրում Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսն արխայիկ ֆորմացիայի հարցը: Կ. Մարքսի խոսքերով սասմ՝ արտադրական պրոցեսի կոնկրետ կազմակերպութայն հանդիպում ենք բոլոր կուլտուրական ժողովուրդներին պատմութայն շեմքում: Նախնադարյան համագործակ-

ցութայնն ինքնին բղխում էր արտադրական ուժերի զարգացման տվյալ մակարդակից: Արտադրական ուժերի թույլ զարգացման պայմաններում անհատական աշխատանքն անզոր էր պահելու մարդուն զոյութայն կոլովում: Միայն սոցիալական կազմակերպմանութայն, երբ արյունակից-ազգակցական տոմսային հասարակութայնն է առաջանում, մարդը, դառնալով հասարակական կոնկրետ բաղկացուցիչ ու անբաժանելի մասնիկը, կարողանում է պայքարել բնութայն ուժերի դեմ և փորձով սոցիալի նրանց ենթարկելու իր անտեսական նպատակներին: Կոնկրետ պայքարը բնութայն դեմ, հալածական աշխատանքը տոմսային հասարակութայն պայմաններում սակցմում են նաև արտադրութայն միջոցներին կոնկրետ սեփականութայն: Իսկ այն ժամանակ արտադրութայն հիմնական միջոցը հողն էր, որ և գտնվում էր կոնկրետ սեփականութայն տանտակերանական ձևեր: «...համարյալ բոլոր ժողովուրդներին վերաբերման արտադրության կ վարելահողերի ընդհանուր մշակութայնը տոմսի և հետագայում կամուսխատական բնտանեկան համայնքների կողմից, ... սասում է Ֆ. Էնգելսը (ԷԼՄ, 168): Ներկադարմութայնն իր նախնական շրջանում, երբ մշակում էին բրիններով ու պրիմիալ և կոպիտ արբրով, կամ մաքրում էին վարելահողերի համար տեղեր անտեսանալի ու ջարերից ազատելու եղանակով, անդուշտ պահանջվում էր բազմաթիվ մարդկանց հավաքական աշխատանք, որ կարող էր կատարվել միայն տոմսային կամուսխատական հասարակութայն մեջ: Նույնը պետք է ստել սկզբնական անասնապահութայն նկատմամբ, ուր հարկավոր էին լայնատարած արտադրանքի ճարակող անասունների համար և այդ անասունների սրված հտերի պահպանումը գիշատիչ զազաններից ու ավարտում թշնամի տոմսերից:

Անս այդ հասարակական կարգից մնացած վերապրուկները գտնում ենք տակավին անցյալ դարի հայ ժողովրդական կենցաղում, սոցիալութայններում ու հավատալիքներում: Սակայն չմտանալով, որ ներկա շարահյուսութայն մեջ տեսութայն ենք առանում նախնադարյան (պարտիքատական) տոմս, որը հանդիսանում է նախնադարյան-համայնական հասարակութայն այն կտավը, ուր սկզբում է այդ հասարակութայն բաշխումը, մասնավոր սեփականատիրութայն ինստիտուտի հանդես գալով: Անտա-

բակույս, այլ փոխանցական շրջանում տոմսային կոլեկտիվ աշխատանքն էլ տրոսվում է ավելի մանր խմբական միավորներով: Արտադրական գործիքներին ու զենքերին ավելի կատարելագործումով հնարավորություն էր ստացվում անհատական գործունեություն համար, որը սխիսիկայի զարգացման այդ աստիճանում առաջ էր բերում նաև անհատական սոցալաման-յուրացման անհրաժեշտությունը: Սակայն այս չպետք է պատկերացնել բառացիորեն և գյուղական համայնքի կյանքում կոլեկտիվ աշխատանքը, հասարակական կյանքում շարունակվեց շատ երկար ժամանակ: Անհատական համայնքի այդ բնորոշ գծերը ցայտուն կերպով դրսևորվում են այն վերադրուկներում, որոնց հանդիպում ենք նախատվիտական հայ ժողովրդական սովորույթներում և գյուղական կենցաղում:

Հայ ժողովրդական կենցաղում գյուղական ունեցող համայնական աշխատանքի ձևերը տարածվում են արտադրական այն եղանակներին վրա, ուր միայնակ մարդն անկարող էր ինքն առանձին ի կատար անել աշխատանքը, որն անշուշտ, եղև է խոր հնում, բառիս իսկական առումով, համայնական: Ուստի գյուղացին ստիպված էր դիմել համայնքի աջակցությանը, աշխատանքը պետք է կատարվի համագործակցությամբ, որի մեջ շահագրգռված են բոլոր անասունությունները:

Համայնական ձևի աշխատանքին ամենից ավելի մեծ նպաստ էր հանդիպում ենք երկրագործության սապարիզում: Այդ համագործակցությունը հայ ժողովրդի մեջ հայտնի է եարաբաշ, հարաբաշարյուղ անունով: Երկրագործական աշխատանքի հենց առաջին քայլը՝ հողի պարարտացումը, պահանջում է համագործակցություն: Գյուղում ամբողջ ձևովա ընթացքում կոտակված գոմարը պետք է տրտերը կրելու ել անա դյուղական համայնքը, ինչպես օրինակ, Դարաբաղում և ուսիների՝ (Վարդաշեն գյուղում) մեջ, օգնություն էր գալիս իր սայլերով ու եղներով: Ավելի բնորոշ է հողի վարելը, որ ինքնին ամենածանր ու շարժող աշխատանքն է և պահանջում է գործիքներ ու անասուններ, որոնք երբեք մի անասունության մեջ, բացառությամբ իհարկե սակավաթիվ հարուստ ընտանիքների, միտանել չեն կարող լինել: Գութանին սովորաբար լծում են 5—8 զույգ և ավելի եղ կամ

գումիչ: Իսկ գյուղերում շատ քիչ ընտանիքներ կղանվեն, որ հնարավորություն ունենան իրենց սեփական անասուններով գութան լծելու: Բայց այդ՝ հենց գութան գործիքն էլ իր թանգությունը պատճառով, շատ քիչ են ունենում: Ուստի գութան լծելու նպատակով համախմբվում են մի քանի ընտանիքներ, յուրաքանչյուր 2 զույգ եղին հարկավոր է մի հոտաղ, մի մածկալ և քատ զույգերի քանակի՝ լուծել: Միութայն բաժանարարը համարվում է մի զույգ եղները, որ հավասարվում է մեկ օրվա աշխատանքի արժեքին, գութանը՝ 3 բաժանարարի, մածկալը՝ 2 բաժանարարի (2 օր) և այլն (ՎՆԵ, 99):

Սակայն հարաբաշությունը մի քանի վայրերում, ինչպես՝ Արարատյան դաշտում, ունեցել է ավելի լայն ծավալով համայնական բնույթ, ուր կոլեկտիվ սկզբունքը պարզակիվել է ոչ միայն երկրագործական հերկի մեջ, այլ բնագրիկ է նաև հողի օգտագործման ու բերքի սպառման եղանակները: Այստեղ հարաբաշությունը կազմակերպվում է չքավոր ու մեծազույգ գյուղացիներին, որոնք հնարավորություն չունեն անհատական ուժերով տանել իրենց տնտեսությունը, նախ հողաբաժիններ ժանրություն ու կոտորակության պատճառով և ապա՝ աշխատավոր ձևերի, սոսուսանների, գործիքների և այլ անհրաժեշտ պիտանքների սղություն կամ բացակայություն հետևանքով: Նրանք զիմում են համայնական ձևի տնտեսություն, միացնում են իրենց հողարածինները, իրենց հասանելի ուսպման շուրջը, աշխատավոր ձևերը, անասունների ուժը, երկրագործական պարագաները՝ սկսած գութանից և վերջացրած՝ բահով: Այդ համայնքային անասնական ձևը, վերացնելով անհատական հողարածինների տանձնակի մանրությունն ու կոտորակությունը, հնարավորություն է տալիս սակավահող գյուղացուն օգտվել տեղական բոլոր անասնի մշակվող բույսերից: Հարաբաշության հողերից մի մասը ցանվում է հացահատիկով, մյուսը բամբակով, երրորդը բանջարեղենով և այլն: Համայնական երկրագործության մյուս անասնավորության շնորհիվ՝ չքավոր գյուղացին, թեև վտեր քանակով, բայց և այնպես ստանում է երկրագործություն ամեն տեսակի արգասիք, որից նա զուրկ կլիներ իր առանձին հողամասը միայնակ մշակելիս: Հարաբաշությունը սովորաբար կազմվում է մեկ տարով, և նրա բոլոր անդամներն օգտվում են հավասար



իրավունքներով համաարապետ տանում են իրենց պարտականությունները, գաշտալին աշխատանքները կատարում էին համարժանակցությամբ, բերքը բաժանում էին իրենց միջև՝ համապատասխան թափած աշխատանքի և յուրաքանչյուրի հողաբաժնի մեծությամբ<sup>25</sup>:

Չափազանց հետաքրքիր է, որ հարաքառությունը հայերի մեջ գոյություն է ունեցել տակավին 12-րդ դարում և իրավաբանական արտահայտությունն է գտել հին հայկական օրենսդրությունում Մխիթար Գոշը, պաշտպանության անհեղձ հարաքառչների իրավունքներն ու շահերը, հատուկ կետ է հասկացնում այդ նպատակին իր հարինած Գոտոստանագրքի երկրորդ մասի ձմև հոդվածում, որ կրում է «Յատկաց պատասխանաց այգեործաց» բնկերտաբ մասնուորաց հարակշաց և վարձկանաց» խորագրերը<sup>26</sup>:

Երկրագործության երբեմին գոյություն ունեցող կոնկուրսիվիզմի վերապրուկ է հանդիսանում այն տոնական սովորույթը, որ կատարվում էր անցյալ դարում Ղազարի գավառի գյուղերում: Այդ տոնակատարման նկարագրերը առկա է հնագետ ու պատմադիր Արեքսանդր Երեցյանը, որ անձամբ ներկա է եղել նրան 1885 թ. մայիսի 9-ին: «Համարձման տոնի հաջորդ հինգշաբթի օրը տեղական հայերի մեջ կատարվում է արտասովոր մի հանդես, որ կոչվում է գուրամալորների տուն: Գյուղի այգիները ծալում, հինավուրց մատուռի մեջ տեղի ունեն եկեղեցական արարողությունը, որին ներկա էին վարձարապետ կանայք ու ձեռակները: Պատարալից հետո, այտեղից շարժվեց եկեղեցական թափուր զեպի կաղնիների մեծ պուրակը, ուր ամեն մի ծառի տակ հավաքվել էին յուրաքանչյուր պատրաստի զուգթանի հետ միասին աշխատավորներն առանձին խմբակներով: Բոլոր խմբակների թիվը 44 էր, որ ցույց էր առկա այսի զուրս եկող զուգթանների քանակը: Գուգթանավորների յուրաքանչյուր խմբակը, հայերի մեջ տիրող սովորույթի համաձայն, մտադր էր անում սնրթխելով այտեղ սլխար. ծառերի տակ երվում էր մատաղի մի-մի: Երբ եկեղեցական թափուրը վերջացավ, կաղնիները սաղարթախան շվաքում ծածկվեց մի ընդհանուր սեղան մի քանի հարյուր հոգու համար: Նստան ճաշելու բոլոր ներկանիսը, բացի զուգթանավորներից, որոնք սպասարկում էին սեղանավորներին և

մատուցում էին իրենց երկած մատաղի ճաշը, զինի, հաց և այլն: Ընչ ավարտելուց հետո, հուկերակնուգթյունն օրհնեց ու բաժնեպիղծեց այդ օրվա մատան ու սկսելի զաշտալին աշխատանքը: Ընչեցին երգեր, զուգթանի երաժշտությունը և սկսվեց հասարակական պարը: Այս անուակատարության հաջորդ օրը, ստապոսյան կրոնիս, բոլոր երեկվա զուգթաններն իրենց աշխատավորները հետ միաժամանակ շարժեցին զեպի իրենց արտերը, վարք սկսելու համար»<sup>27</sup>: Վերորբյալ երկրագործական սովորույթը, որով հողամշակումը սեղվում է ամբողջ գյուղական համայնքի կողմից միաժամանակ, որոշ չափով նմանութուն ունի հին գերմանական անձայնի հասարակություններում և միջնադարյան Եվրոպայում գոյություն ունեցող Flurzwang-ին, որով գյուղական համայնքը պարտավոր էր միաժամանակ ձեռնարկել գյուղատնտեսական մշակութային աշխատանքը, լինչպես և միաժամանակ օրավիլ այդ հողերից, բերքը հավաքելուց հետո, սրպես արտասովորներից:

Նույն համայնքային աշխատանքի մեացրողնեյ: են երեում երկրագործության հետ անհնոց խոտորքի մեջ: «Ամբողջ մարգագետինը, կամ չայիրը, բաժանվում է ըստ համբայության»<sup>28</sup> մի քանի մասերի, և համբայության անդամները խոտը հարում են, հավաքում և գրգռում միասին. ապա վիճակով բաժանում են համապատասխան համբայության ստորձանին: Ամեն մի ընտանիք իր ստանակից խոտի համաձայն՝ վարդիկ է ներկայացնում, շատ ստացող կամ քիչ ստացողը համապատասխան սակավությամբ նստահարքի ընթացքում աշխատողները նախաձեռն, ճաշ և սլխինք հացը» (ընթերիք) բոլորը միասին են անում. ամեն միսը ներկայացնում է իր ունեցածը. խնդիր չկա, թե մեկը զարի և ցամաք հաց է բերել, իսկ մյուսը պատանական կերակուր» (ՎՀԷ, 98):

Ղարաղում, Պարսկաստանից եկած հայ զավթականները մեջ համայնքային ընտելի է ստանում բանջարանոցի մշակումը: Մի քոնի ընտանիք միացած զուգթան են լծում և վարում համայնական հողի մի մասը և բանջարեղեն ցանում: Այլուսղ ընդհանուր է և՛ հողը, և՛ սերմը, և՛ աշխատանքը, ջրում են ընդհանուրին պատկանող ջրով մի-երկու անգամ հերթով կամ միասին, բաղանն անում համադրեժակցությամբ: Հասած բերքը հավաքում են դորձյալ միասին և ապա բաժանում են համաձայն զուգթա-

ներն լծած հզներէ թվին (ՎՂՆ, 99): Այս համայնքային ձեռք, ինչպէս տեսնուած ենք, հարունման է արտերէ մշակման վերջը նկարագրած հարաքառութեանը:

Սակայն ամբողջ ցայտուն գծերով պահպանվել են համայնքային աշխատանքի ձեռքը երկրագործութեան բնագավառում հասկացելու կանոննց մեջ, որը հիշեցնում է սոսնձային հասարակութեան մեջ երբեմնի արեւոյ աշխատանքի հասակահետեւին բաժանուածը: Այդ համայնական աշխատանքը կոչվում է մեքի Բարձր Հայքում, Արարատեան գոշուում՝ միջի, Զանգեզուրում՝ միքի և այլն: Մեղրուում և այլուր դարնանք, երբ սպամարդիկ վարում են բամբակի արտերը, հավաքում են գոյւլի կանանց ու երեխաներին, որոնք, հետեւելով աղբի ընթացքին, հողը մաքրում են սխոզանից, դա Մեղրու բարբառով կոչվում է իզմահան: Նույն հավաքական աշխատանքի է կատարվում կանանց ու երեխաների ձևագով, երբ սրանք հավաքվում են այս կամ այն համագոյւղապետութեանը: Առաջինն՝ այսպէս կոչված քամալլալսմ է, իսկ երկրորդը՝ խարբ:

Նույնպիսի կողմերով արտագրական եղանակներ ենք գրանցում անասնապահութեան մեջ: Այստեղ համայնքն օգնութեան է դառնալիս իր անդամին կամ անասունների ասղով կամ կաթ մատակարարելով: Դա վերապրուէ է այն արխայիկ դարերից, երբ անասունների հոտերը կազմուէին առնձի կողմերով սեփականութեանը, ինչպէս և այդ անասուններից ստացված կաթը դասնում էր ամբողջ առնձի գերդաստանների ընդհանուր սպասման օտարելու: Առաջինն՝ այսպէս կոչված քամալլալսմ է, իսկ երկրորդը՝ խարբ:

Թամաղուտը, չնայած այդ բառի թուրքական հորջորջմանը, նույնպէս թուրքական է, որքան և հայկական, իբրև արեւոյ ասղութիւթ: Ամեն մի գոյւղացի, որը դուրէ է անային անասուններից և ցանկանում է այդպիսին ունենալ, իր մաս ճաշի է հրավիրում իր համագոյւղացիներին, որպէսզի հրավիրելուին ըստ իրենց ցանկութեան նվիրեն նրան իրենց ունեցած անասուններից՝ ոչխար կամ կով, այս դեպքում ձի կամ հզներ չեն նվիրում: Թամաղուտի նշանակված օրը գոյւղացին սրատարոյի սպասում է հյուրերին Հարկով, որքան շատ հյուրեր են դալիս, այնքան մեծ է լինում նրա ուրախութեանը, որովհետև հյուրասիրական հրա-

վերին գալիս են նրանք, որոնք արշնի են նրան ընծայարեւել մեկ ոչխար, եթէ հրավիրող մտազիբ է ոչխարների հոտ կազմել, կամ հորթ, նույնիսկ կով, եթէ գոյւղացին ցանկանում է խոշոր եղջյուրավոր անասուններ ունենալ: Հյուրասիրական խնձույթից և կույտ կերութեանից հետո, ամաններով ամենամերձավոր անձերից մեկը բարձրածայն հրավիրում է ներկաներին հայտնել, թե ով ինչ է նվիրում: Այդ անձը, որ նույնպէս թուրքերին հորջորջուով կոչվում է քուլարալի (լի գուլս), մի առ մի կանչում է հյուրերին, և վերջիններից յուրաքանչյուրը բարձրածայն հայտնում է, թե ինքն ինչ է տալիս: Թուրքաշին արտասանում է նվիրողի անունը և հյուարարուում է ի լուր ամենքի նրա նվերն ու հոտն էլ գովասանքներ թափում նրա հասցեին: Հանրոյ օրը թամաղուտի կանչված հյուրասիրվածներն ուղարկում են ըստ պատկանելույն իրենց խոստացած նվերը: Երբեմն էլ պատահում է, որ թամաղուտի հրավիրող տանտերն ինքն է գնում սասնալու խոստացված նվերը: Բնորոյ է, որ այս գեղաբուն ստացող ոչ թէ խնդրում է, այլ պահանջում է խոստացված անասունը, որպէս արդեն իր սեփականութեանը, սովորութեան իրավունքի ուժով ձեռք բերված ու իրեն պատկանող օտարելու: Թամաղուտը կերակրում է նաև այն դեպքերում, երբ գոյւղում օտարպիտիկ ցավերից տնասուններ ևս կատարվում, որի հետեանցով շատ գոյւղացիական անասնութեանները զրկվում են անասուններից<sup>31</sup>:

Խարբ համայնքային անասնութեան չափազանց ընորոյ և համատարած մի մնացուէ է: Նրա էութեանն այն է, որ մի խումբ համագոյւղացիներ, առավելապէս կանայք, միացնում են իրենց կթած կաթը, որպէսզի կարճ միջոցում, 2—3 օրվա ընթացքում նրանցից յուրաքանչյուրը հերթով կարողանա պատրաստել ձմեռվա պաշտը՝ պանիր և յուլ: Հակառակ պարագայում, եթէ ամեն մի տնտեսութեան, մանավանդ օտակավթիկ կաթնատնաս անասունների տերը, ինքնուրույն կերպով միմիայն իր կաթից պատրաստելու լինի, պետք է երկար ժամանակ կորցնի, որի ընթացքում կաթը կարող է կամ փչանալ, կամ սպասվել քիչքիչ ուտելով: Այդ կաթնատնասական կողմերով կոչվում է Բարձր Հայքում խարբլսագ, այլ միայրերում միայն խարբ, իսկ իզիրում՝ կարբլսագ: Դարունքը բացվելուն պէս գոյւղացի կանայք ժողովում են խարբ սկսելու: Եթէ գոյւղը մեծ է, նրանք

քամանակում են մե քանի խմբերի, յուրաքանչյուրը սովորաբար 20—30 առան, իսկ կի՞ն գյուղը փոքր է, ապա հենց ամբողջ գյուղը ներկայացնում է մի խումբ Առբին մասնակցողներն ընտրում են մայր կամ խորգյուխ, որն առաջինն է ընդունում հարեաններին կաթը և առաջինն է վճարում յուր պարտքը։ Երբ մայրն ընտրվեց, հարեաններն ամեն առավոտ ու երեկո՞ կովկիթից հետո, կաթը խար են ըերում, այսինքն փռել են առխիս եմարը որով ամառով ու շամոխի։ Եթե, օրինակ, բոլոր մասնակցողները 20 ընտանիք են, ամառըը գուրս գալով, մնում է 10 պարտատու, որոնցից յուրաքանչյուրն առանձին ճեպտուներ՝ սխաղեք ունենու Այդ ճեպտուների վրա նշանակում են տված կաթի քանակը հեռակալ կերպով։ հարեան Ա., օրինակ, որով մի աման ունի, որով նա ամեն օր կաթ է ըերում և մի որոշ ճեպտու, որը կոխում է կաթով չի ամանի մեջ մինչև հատակը և ապա դանակով մի փաքերի ակոս կամ գլի՛ն է կտրում՝ յոպղ է անում ճեպտուս այն կիտում, որը ցույց է առխիս այդ օրվա կաթի քանակը։ Նույնն են անում Բ, Գ, Դ և այլք իրենց ամաններով։ Եւ խաղեքով Այդ խաղեքը համապատասխանում են պարտատերի մուրհակին։ Այդ խաղով ու ամանով ամեն մեկը ետ է ստանում իր հերթի ժամանակ յուր պարտք տված կաթը խաբի ըողը անգամներին։ Այսպիսով յուրաքանչյուր ընտանիք, իր ամենօրյա կաթը քիչ-քիչ հարեաններին տալով, իր հերթին միտնեցմեց այնքան կաթ է ստանում, որ մի քանի օրվա մեջ պարտատու և պաշարում է իր տարեկան յուղը, պանիրը և այլ կաթնային մթերքները (չորաթան, վազնաա և այլն) (Վ՛՛ն, 100—103. Նաև «Юридическое обозрение», Тифлис, 1884 г., № 183)։

Վերջ նկարագրված երկրագործական ու անասնապահան անասնաբնական կուլիկախի ձևերի վերադարձները, որոնք վկայում են հնագուրյան առնձային հասարակութայն երբեմնի զոյուկյան մասին, միաժամանակ ապացուցում են, որ հայրենական պոլոզին ևս մինչև վերջին ժամանակներն էլ խորթ չի եղել կուլիկախի աշխատանքն ու կուլիկախի անասնաբնական սկզբունքը։ Սակայն մեծ տարբերություն կա մեր նկարագրած առնձային հասարակութայն էությունը բնորոշող կուլիկախի անասնաբնական ձևերի և այժմ կոռուցվող մեր կոմունիստական հասարակութայն գյուղատնտեսական կուլիկախի ձևերի միջև։ Տոհմային կուլիկախի ձևով էր

բնասնասնաբնական վրա, զարգանում էր արտադրողական ուժերի ու սեխնիկալի ստոր մակարդակի վրա, երբ մարդը տակավին բնութայն աարերը զերին էր, որը միայն երկար ու ձիգ դարերի ծանձաղ հասանքում կուտակում էր փորձառություն և զործնական դիտելիքներ այդ բնութայն լծից ազատվելու համար։ Տոհմային հասարակութայն անասնական գործունեությունն ընթանում էր սուսնց պլանավորման, սուսնց շինարարական հետանկարներով, կոնտրվատիվով կեղևով պարտրված, որ հարմարեցվում էր տվյալ կանկրետ մասենտին, անձուկ պրակտիցիզմին։ Ներկայիս կոմունիստական հասարակութայն մասնավորապես գյուղատնտեսական կուլիկախի ձևով հիմնվում է խական պլանայնացման վրա, կուլիկախի աշխատանքի խական հասարակական կարգավորման վրա, ուր բնութայն տարերքը ենթակա է կուլիկախի դիտակցողան նպատակից գործողություններին, կուլիկախի, որ սպասուպինվում է գիտութայն հզոր գեներով ու ստեղծագործող տեխնիկայով, երբ կուլիկախի մարդի սկսում է արիպական բնութայն ու ենթարկել նրա տարերքն իր նպատակներին։ Կոմունիստական հասարակութայն արդի կառուցման մեջ գյուղատնտեսութայնն այլևս դուրս է եկել իր նախկին էքստենսիվ ձևից ու մեկ է բարձր ինտենսիվութայն հասնող մակարդակի, ուր ամբողջ գյուղատնտեսութայնը կառուցվում է ինտեսարացման հիմքերի վրա։

## IX

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԶԵՎԵՐ

Գյուղացիական կենցաղում մինչև անցյալ դարի վերջերը պահպանվում էին մի շարք սովորութիւններ, որոնք, իբրև վերապրուկներ, մեղ զարժայա ստանում են դեպի նախնադարյան հասարակական կարգերը։ Այստեղ նկատում ենք կուլիկախի աշխատանքային եղանակներ, որոնք մի կողմից՝ ծառայում են գյուղական համայնքի տնտես հանդիսացող առանձին զերգատաններին, իսկ մյուս կողմից՝ հենց ամբողջ գյուղական համայնքին, իբրև այլուխին։ Այստեղ առաջնախաղը տեղ է գրավում օտոգման հարցը, որ այնքան կենսական նշանակություն ունի ձայնատանի զաշտավայրերի երկրագործական մշակութայն համար։

Դա առաւելներ կատուցումն ու պահպանումն է, որ հնարավոր էր իրականացնել միայն կոլեկտիվ գործունեութեամբ: Այդպէս էր մինչև վերջին ժամանակները Հնդկաստանի գյուղական համայնքներում, ուր տոնամային կազմը կայուն էր մնում ջրանցքային սիստեմի կատուցման ու պահպանման պահանջների դրա:

Նույնն է ասվելու նաև հայ գյուղական համայնքի մասին, որը միշտ սեր ու անօրին է հանդիսացել առուների կատուցման ու պահպանման, ջրի բաշխման ու օգտագործման՝ երկրագործական կարիքների համար: Ուղղման սիստեմը գտնուում է մեծ մասամբ ոչ միայն մի գյուղական համայնքի, այլ և մի շարք այն գյուղական համայնքների կենսաթիրխու հարցը, որոնք ընկած են ավշալ գետափնայա շրջաններում: Ուստի այդ հարցում ստեղծվում են նաև միջգյուղական համայնքներ, որոնց մեջ է կենտրոնանում ջրանցքաշինարարութեան ու ջրանցքապահպանութեանը:

Հայաստանում առանձինպես զարգացած են ջրանցքաշինարարութեան հետ կապված համայնական կոլեկտիվ աշխատանքները Արաքս գետի հովտում, Արարատյան դաշտում: Այդտեղ ոչ միայն առուներ են հանել կոլեկտիվ աշխատանքով, այլ և գարբեր շարունակ դարձնելով հողատարութեամբ պահպանել են այդ ջրային կատույցները երբ Արաքսը հորդանալով, ինչպես, օրինակ՝ Իզդիբի շրջանում, կորում է այդինները հոսող առուներ, համայնքն ամբողջովին գնում էր այդինների ջուրը նորից վերականգնելու: Իզդիբում, որ ջուրն Արաքսից է ստանում, առուներն է ունը շատ շուտ տիրել է ընտում, որը խանգարում է ջրադրոշմի կանոնավոր գործունեութեանը, և առաջանալով ստեղծում համայնքը ամբողջովին ձեռնարկում է նրա մաքրմանը, որ տեղի է ունենում մեծ հանգիսով ու տեղական բարբառով կոչվում է վաշտա (պարսկ. օգնութեան, օժանդակութեան, քիիկումք), չնայած, որ ջրադրոշմները լինում են մասնավոր սեփականութեան (ՎՀԸ, 90): Նույն այդ Արաքսի զարնանային վարարումներից իրենց առուները և գյուղերի ցանքերը պաշտպանելու նպատակով՝ համայնքները դուրս են եկնում և կոլեկտիվ աշխատանքով կալում են ամենի հորձանքների դեմ, երբ Սևազը պալիս է:

Հանրային նպատակներին ծանայող ըուրը կատույցները կատարվում էին համայնական ուժերով: Այստեղ առանձին կարևորութեան են ստանում ճանապարհները, այնուհետև ջրադրոշ-

մերն ու ձիթանները, որոնք թեև մասնավոր սեփականութեան են լինում: Ջրադրոշ ոչ միայն առուներ, այլ և աղբիբի ակադին ծանրութեան քարերը բերելուս մասնակցում էին գյուղականներն իրենց սայլերով, եղներով ու մարդկանցով: Նույնն էր լինում ձիթանների քարերի համար: Մեղրլում, ուր ճանապարհները, շնորհիվ լուծային սեյսմիկ ոչ մի կառային հարմարութեան չեն ներկայացնում, այդ սեռակ քարերը գյուղացիներն իրենց ունեցով են կրում՝ 30—40 մտրը միաժամանակ նմանապես զարոցակներ ու կերպեցակներ շենքերը կատուցվում էին ամբողջ գյուղական համայնքի կոլեկտիվ աշխատանքով:

Սակայն համայնական աշխցութեան զարգացումը կիրառվում էր նաև մասնավոր՝ համայնքին պատկանող անգամի կարիքների բավարարելու համար այնտեղ, ուր անհատական ուժն անբարոյ էր միայնակի կատարածիկ այդ ինչպես օրինակ՝ սուներ կատուցելիս, ձեռքը գերեզման փորելիս, գերեզմանի համար ծանր սալաքարեր բերելիս: Բարձր Հայքում գյուղացիներն սպորում են ահադին հողով ծածկված սներում: Որպեսզի սուներ դիմանա անձրևներին ու առողիկ քանակով տեղացող ձյաններին, անհրաժեշտ է կտուրը երկու արշինաչափ հողով ծածկել: որ մի քնտանիքի ուժերից վեր է, մանավանդ որ դա հարկավոր է ուսերի վրա քնցողներով կրել տանիք և այն էլ 1—2 օրվա մեջ, որ քամին կամ անձրևը չցրեն քիչ հավաքած հողը: Ուստի, երբ սուներ պատրաստ է և մնում է միայն կտրի հողը վրա սուները ամբողջով հրովելով հարեան երկտասարգները միացած և ընդհանուր ուժերով մեկ օրվա մեջ ամբողջ տանիքը ծածկում են պահանջված քանակի հողով և կրիտակով պնդանցում են (ՎՀԸ, 90): Նույնն է կատարվում Ջանգղուրում, ուր շատ անգամ հարեանները մասնակցում են նաև սուներ պատերի շարմանը:

Համայնական աշխցութեանն ու օգնութեանն ախիլի րայն չափերով արտահայտվում է ընտանեկան այն աշխատանքներում, որոնք կանանց ձեռքերն են կենտրոնացված և իրենց նպատակահարմարութեան տեսակետից պահանջում են կոլեկտիվ ուժի կիրառում: Այդ ընտանեկան աշխատանքները իրենց բնույթով թեև թեթև են, բայց իրենց էությունամբ այնքան մեծ են, որ մեկ ընտանիքի կանայք անկարող են միանգամից կատարել այդ ամենը. սուղ է զալիս կոլեկտիվ աշխատանքի անհրաժեշտու-

թյանը, որ հանդիսանում է մեխի կամ միջի կանչելու սովորույթը Այժմ վերադարձվել թվացող այդ սովորույթը սակայն արևմտյան դարերում տոճառյին համայնքի կոլեկտիվ արտադրության եղանակներից մեկն էր: Հայ կենցաղի բազմաթիվ օրինակներից հիշատակենք միայն մի քանի բնորոշ փաստեր:

Երբ ոչխարի բուրբը խուզած պտարաստ է, տանտիրուհին կանչում է գլուզի կանանց մեջից, որոնք հավաքվում են բուրբը զգելու և մանկուռ համար: Մանկը սովորաբար հասակավոր կանանց է պատկանում, իբրև ավելի փորձառութուն պահանջող դարձ, իսկ զգելը աղջիկներին: Այգուխի զեպքերում առհասարակ կանչում են այնքան հոգի, որ հնարավոր լինի մեկ օրվա ընթացքում ամբողջ դործն ավարտել: Այդ մեջինները միտմանմանակ ծառայում են որպես զպրոց՝ սովորելու բուրբ զգելու և մտնելու արհեստը և կատարելագործվելու նրա մեջ: Ետո դյուզներում սովորութուն կա աշնանը պտարաստել մեծ քանակով երիշտա, հայկական մակարոնը, ամբողջ ձմեռվա պաշարի համար, որն անշուշտ մի ընտանիքի կանանց ձեռքով երկարատև ժամանակ կը պահանջվու: Երեկոյան հավաքվում են տանտիրուհու ծառայողներն աղջիկները, որոնք խմորն են հունցելու: Առաջ ալյուրը ցրադալը են անում, ապա նրբ քիչ ջուր օտած է լինում, հանում են առշարից և դնում հասկապին զրա համար պտարաստի տավարնուղկների մեջ, որ սովորաբար այժի մոթից են լինում: Այդա աղջիկներն երկերկու բարձրանում են այդ տիկերի վրա, սկսում են ոտներով հարվածել, մինչև խմորի կանոնավոր հունցելը: Ունեքի հարվածները կրում են սխիթիլ բնույթ, որը տալիս է ամբողջ այդ աշխատանքին կոլեկտիվ շարժան շարժում, որը պահանջում է որոշ վարժություն և այդ եղանակի ծանոթություն: Այդ մեջին տեղի է ունենում գիշերը, որպեսզի խմորն առավոտյան կանուխ պատրաստ լինի: Աղջիկները գործն ու ընթերիքն ավարտելուց հետո գիշերում են հրավիրող տանտիրուհու տանը: Առավոտը կանուխ նրանք ցրվում են և նրանց փոխարեն հավաքվում են կանայք: որոնք էրեշտա կարելի գիտեն: կանանցից ոմանք գնդում են պտարաստի խմորը, ոմանք բաց են անում խմորը, մյուսներն էլ տրդեն բացած խմորը, մի քանի ծալ անելով կտրում են էրեշտան, մի քանիսն էլ կտրած էրեշտան տանում են արևի տակ չորացնելու և ապա բովելու (ՎՋՆ, 93):

Արտադրության կոլեկտիվ ձևերը, որոնց մնացուկներն ու վերադարձվելը անստեփյան առանց վերը, հանդիսանում են նախադասակարգային հասարակության, մասնավորապես տոճառյան կողմի բնորոշ սոցիալ-տնտեսական հիմքը: Նույնիսկ արտադրության միջոցների ու զործիքների կոլեկտիվ սեփականություն այն բնորոշ գիծը, որ հատուկ էր նախնադարյան հասարակությանը, հաստատվում է մի շարք ազգագրական տվյալներով, որոնք իբրև վերադարձվելու պահանջվել են սովորութիանը իրավունքում, ինչպես նաև հայ զեպքիկան նահապետական կենցաղում: Գյուղացիների մեջ գործիք վարձու տալու զազպարս անվան շէտա ուրաջ, կացին, գերանիլի, կոտն, սայլ մինչև անգամ եղներ միմյանց փոխ են ապրիս առանց որևէ վարձի ահլուկայության: Ետո բացառիչ զեպքում կարող է հարևանը զրացուն մերձի մի գործիք փոխ տալու և չի էլ կարող մերժել որովհետև մի ժամ հետո ինքն է շտապում հարևանից մի քան ունջելու և նույն միջոցը կատարար: Ծան կտարաբեր կա, սղինձ, անձեղեն, անկողին, հատիք և խալիչա՝ անխտր փոխ են տալիս կանայք (ՎՋՆ, 100): Ավելի բնորոշ է արտահայտվում այդ գիծը ձարերգի հայ դյուզացիների մեջ: Եր նախադասական կենցաղավարության մեջ մեջ սերող փոխադարձ օգնություն սովորութիւններն, ընդհանրացած օրենքներն իր կյանքին անբարձեշտ պայմաններն են եղած զտրերով: Գյուղացի առանն կա. դուրանի փրթող ներս կուղա, մեկ բան մը կուղա, ուրինձ՝ այս ինչ բանը կլիբրցնե ու կերթա առանց տանտիրոջն իմաց տալու... Վերջապես ամեն գործածական զործիք, սան կանեղեն, սղինձ, տաշտ, կապերտ և այլն դյուզական հասարակության մեջ սրամաղքուն են մեկ մեկուսի՞:

Վերոբերյալ փաստերն ակներև ապացույցներ են բուրժուական սոցիալոգների այն կարծիքների զմե, թե նախադասակարգային հասարակության մեջ իբր թե ընթացող այն գործիքների անձնական, անհատական սեփականություն էին կազմում: Մինչդեռ, ինչպես տեսնում ենք ներկա զեպքում, աշխատանքային գործիքները, լինելով իբրևկանուխ անտնտեսական սեփականության մեջ, միտմանակ զառնում են այնուամենայնիվ համայնական կոլեկտիվի բոլոր անդամների անխտր գործածության տարակա: Վերահիշյալ փաստերը, լինելով վերադարձվելու տոճառյան

բակուբլյունից մեզ հասած, անշուշտ ժամանակակից հասարակա-  
կան շերտավորման պայմաններում, պետք է որ գունավորված  
լինեն մասնավոր սեփականատիրական գաղափարով, բայց և  
այնպես իրենց մեջ պահպանել են վաղեմի կուլտուրիլիզմի հետ-  
քերքը Այլադղես չէր էլ կարող լինել Նախնադարյան մարքն իր  
գործիքով տոնմային հասարակական պայմաններում այսպես թե  
այնպես աշխատում էր այն բովանդակ հասարակական խմբի  
համար, որի անբաժանելի մասնիկն էր ինքը, և բնավ չէր օգտը-  
լում թեկուս մշտապես իր ձեռում ունեցած գործիքով իր այդ  
«սեփականութեամբ» ուրիշներին շահագործելու կամ ուրիշներին  
կողմից շահագործվելու նպատակով:

Կուլտիվով արտադրութեան ու սեփականութեան պայմաննե-  
րից բխելով է նաև արտադրութեան արդյունքների բաշխումը:  
Քեյն ամենը ինչ որ ստեղծված է ընդհանուր ճիգերով, սպառում  
են ամենքը և կազմում է ընդհանուր սեփականություն», առում  
է Ֆ. Էնգելսը Կուլտիվով բաշխման այդ ձևի հետքերը գտնում  
ենք նույնպես հայ սովորութեական իրավունքի մնացուկներում:

Մարբերդի գյուղացու տանը Եսեղյանի նստիք եւ. հանկարծ  
յոթնասուր մը պատանաբար վրա կուգա, բարեկերով նույն ծուկը  
կը դառնե, ան ալ առաջին հրավերով մը ու աննկատ միևնույն  
դղալը կերկնցնեն կերակուրին: Կան որ պարտեզ չունենար, ամա-  
ռը ուզած ստենին կրնան պարտեզ մը մտնել, կշտանալ և դուրս  
գալ, կամ կողով մը նրկուք դրկել թուել՝ ծիրան ուզելու: Ով որ  
հայ թիի, դուռ դրացնի, աղափաններու անպատճառ 2—3-ական  
հաս կըլլի: Զավար պարտասելու համար անպիսի կաթնանք  
կըզնեն ստջե, համբուն վրա ու կսիսեն տակեն վատել, վրայեն  
ալ շերեփներով ցորեն խոտնել խաշելու համար: Գեղջուկ մանուկ-  
ները հասկ-հոնկի, ամեն կողմեր կհավաքվին փեշերին: Բացած-  
ու տանտիկինն ամենուն ալ բաց քոպնցքները կըլեցնե եփած  
հատիկով, կերթան կուտեն ու նորեն կըլիբադարանան, մինչև որ  
պղինձները վար սանվին և մուխը դադրե՞<sup>33</sup>:

Օտար այրուց Մարբերդի վերոհիշյալ սովորույթով օգտվե-  
լու ձևը, որ տոնմային հասարակութեան դարերից կուլտիվով բու-  
պատման մի մնացուկ պետք է համարել, գոյութիւն է ունեցել  
Հայաստանում տակավին 12—13-րդ դարերում և օրինացվել է  
հայկական իրավունքի մեջ: Միևիկար Գոշն իր Գասասանադրքի

|| մասի ՀԹ հոդվածով<sup>34</sup>, նաև Մմբան Գունդստարըն իր Կլիկյան  
Գասասանադրքի ՃԿԹ հոդվածով<sup>35</sup>, անշուշտ ինկատի ունենա-  
լով այդտեսակ ընդհանրացած սովորութեանը, սահմանում են,  
որ ամեն որ կարող է մտնել օտարի աչքին և այնտեղ օգտվել  
պատույներից միայն սեռելով, իսկ պտուղը դուրս տանել արգել-  
վում է:

Նույն կուլտիվով սպառման գաղափարն է պարփակված հայ  
մայրլիդական կենցաղում այնքան համասարած սովորույթներում,  
ինչպես օրինակ՝ «հասարակական հոգեհացը» մեռյալների հիշա-  
սակին, համայնական մատաղները զտակին և այլ տոներին,  
գյուղական հարսանեկան ճաշերն ու ընթերցները, որին սովո-  
րարք մասնակցում էր գրեթե ամբողջ գյուղը, վերջ նկարա-  
գրած համայնական ու կուլտիվով աշխատանքների (մեչի և ալյն)  
ժամանակ արվող ուտելիքը և հյուրասերութեանը: Տոնմային  
կուլտիվով սպառման հետքեր է պարունակում Մովսես Մորենացու  
ավանդած պատմվածքն այն մասին, որ Մաման քրմապետի  
կիրեղանի վրա բաղին էր կառուցվել, ուր ամբողջ օրը կենդա-  
նական զոհեր էին մատուցվում և այդ զոհերի միւր վայելում էին  
անխախտ բոլոր անցորդներն ու ճանապարհորդները (Մովս. Մոր.,  
Պատմ. հայոց, գրք. Բ. զր. ԿԶ):

Վերջնական կուլտիվով սպառման ձևն այլափոխված պահպան-  
վել է հայ ժողովուրդական կենցաղում այնքան հայտնի «հասարակ-  
ական հյուրասերութեան» սովորույթի մեջ, որպիսին գոյութիւն  
ունի շատ ժողովուրդների մեջ, որոնք տակավին շարունակում են  
դիպելել բնատնտեսութեան միջավայրում ու նահապետական կեն-  
ցաղի պայմաններում: Նահապետական հյուրասերութեանն ոչ այլ  
ինչ է, և թե ոչ կամուրջատական բաշխման երբեմնի տիրող սխտեմի  
ցայտուն վերապրուկը: Այդպիսի համայնական հյուրասերութեան  
գուռեղ պատկեր է ներկայացնում հին հայերի մասին հուշն  
պատմադիր Քսենոֆոնը, որ 401 թ. մի տարեթվակ. սուղ 10  
հազար հուշն զորքի հետ Հայաստանի վրայով նահանջում էր  
Պարսկաստանից դեպի Սև ծովի եզրերը՝ Հուռաստան վերադառ-  
նալու նպատակով. հուշն զորքերը հայ գյուղերում, որոնց կեն-  
ցաղը, ըստ Քսենոֆոնի նկարագրի, տոնմային զծերն են պարու-  
նակում, գտնում էին ճոխ հյուրասերութեան թե օթեանում և թե  
առան կերակուրներով ու ողելից խմիչքներով: Հյուրասերութեան

այդ ձևը հայ ժողովրդական կենցաղում մինչև անցյալ դարը սակավին ուներ սովորութեան իրավունքի ուժ և ստացել էր կրօնական իմաստավորում: «Հայրն սասածուն է», սասու է հայ ժողովուրդը. սաստի հայրը վայելում է մեծ պատիվ, հարգանք ու պաշտպանություն նրբ զլուրում երևում էր մի ճանապարհորդ և կանգ էր առնում հանգստի համար, նա առաջնորդվում էր զուգական համայնքի որոշ օձախները, ուր նա կորոզ էր գտնել ազատ հյուրասիրություն թե օթևանով և թե կերակրով, նաև ժամանցով: Հայրը համարվում էր սասն, ընտանիքի անդամ, քանի որ նա վայելում էր այդ սասն հյուրասիրությունը (1, 231—232): Հայր էր սասնն մի օտարական, որ ոտք է դնում սասն շեմքը և տեղ է գտնում սասն ծածկի տակ: «Եվ էլ լինես, մի անգամ որ դու իմ շեմքը ոտք և դրել, բարով, հազար սարով ես կկեք— այսպիսի սղջունի խոսքերով էր զիմամբրում սովորաբար հայ նահապետական զերգասասանի մեծը նորեկ հյուրերին, ճանապարհորդ օտարին:

X

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Մենք տեսանք, որ նախնադարյան-համայնական հասարակության արտադրական հարստություններն ամբողջովին հիմնրված են կրեկտիվ արտադրություն վրա: Մակայն այդ կրեկտիվ արտադրություն մեջ գոյություն ունի նաև աշխատանքի բաժանում, որ կրում է այդ հասարակությանը հատուկ բնույթ: Դա սկզբնական, բնականորեն գոյացած աշխատաբաժանումն է, որ ծագել է, ինչպես Կ. Մարքսն է սասում «սեռական ու հասարակյին ստորբերությունների հեռեանքով, այսինքն զուտ բնախոսական (Ֆիզիոլոգիական) հոգի վրա» («Կապիտալ», 1): Այդ աշխատանքային բաժանման մեջ, հակառակ այն աշխատաբաժանման, որ տիրում է դասակարգայնորեն շերտավորված հասարակության մեջ, աշխատանքային արտադրություն պայմաններում, անհատական աշխատանքը մասնավոր, միայն անհատ մարդուն պատկանող աշխատանք չէ, նրա աշխատանքի արդյունքը նրա մասնավոր սեփական արդյունքը չի համարվում: Ճոհմային հասարակության մեջ սասնն մի անհատական աշխատանքը հանդի-

սանում է մյուսնական հասարակական օրգանիզմի մի զործողություն, համայնքի, ամբողջ կրեկտիվի համահավաք աշխատավորների մի մասնիկը, օրգանը: «Ասանձին աշխատանքը հանդես է գալիս տնիշարար իբրև հասարակական օրգանիզմի մի անդամի ֆունկցիոն» (ՄՔԲ, 76), իսկ սասնձին անհատական աշխատանքի արդյունքը՝ որպես կամուսնիասական բաշխման առարկա:

Աշխատանքի սեռական բաժանման սկզբնական ձևը մենք տեսնում ենք մարդկային հասարակության կազմավորման հենց սասային շրջանում, երբ տիրում էր յուրացողական անտեսություն ձևի, երբ այդ մարդը օրտոզ էր, իսկ կին մարդը՝ հայնքուդ, որ այնուհետև դարձավ սասջին երկրագործը: Այդ անտեսական դործողություն մեջ տիրող յուրահատուկ աշխատանքային բաժանման վրա էր հիմնված սասմային հասարակության նախնական ձևը՝ մայրական սասմը, մատրիարխատը (1, 216—269):

Ինչ կինն իր հավաքողական աշխատանքի հետևանքով սասային երկրագործը հանդիսանցավ, այս սղամարդն էլ իր որսորդական դործունեության մեջ սղջունից բնակեցանել անասուններին: Իսկ երբ երկրագործական արվեստի հետագա կատարելագործումով ու տրբի հայտաբերումով՝ անհրաժեշտ զգացվեց երկրագործական աշխատանքներին զործագրել անասունների ուժը, այս այր մարդը, որն սկզբում երկրագործությունը համարելով կանայցի զործ, սովորաբար արձամբարհանքով էր վերաբերվում այդ անասնական զործունեությանը, ստիպված եղավ արորային վարի հետ կապված աշխատանքները, հետզհետե նաև այլ երկրագործական աշխատանքները ինքը կատարել: Կինն այլևս զաղտրեց միակ երկրագործը լինելուց, որովհի զործունեությունը զարմավ պլանավորպես այր մարդուն հասուկ աշխատանք:

Նույնն էր և կավադործության (կերամիկայի) մեջ, որն սկզբներում կանայցի զործն էր հանդիսանում, իսկ հետագայում, մասնավորապես այրով՝ զուսնում է նաև սղամարդկանց աշխատանքը: Այսպիսով, սասիճանաբար սկսում է վերանալ աշխատանքի նախկին սեռական բաժանումը և կանայց աշխատանքները մի մասն անցնում է այր մարդկանց ձեռքը:

Ահա այսպես է բնորոշում ձ. Էնգելսն աշխատանքի սեռական բաժանումը. «Աշխատանքի բաժանումը զուտ բնարտադր է. այն գոյություն ունի միայն երկու սեռերի միջև: Տղամարդը

պատերազմ է մղում, որտեղում թյուրքումբայմբ ու ձկնորսությամբ է պարսպում, հայթայթում է հում սննդանյութը և նրա համար անհրաժեշտ գործիքները: Կինը պարսպում է անտեսությամբ և սննդի ու հագուստի պատրաստությամբ, երբում է, գործվածքներ գործում, կարուև նրանցից յուրեքանչյուրը տեր է իր բնագույնում: Սղամարզը՝ անտառում, կինը՝ սաննը Ամեն մեկը սեփականատեր է իր պատրաստած և գործածած գործիքներին— սղամարզը՝ զենքերին, որտեղում թյուրքումբայմբ և ձկնորսության պարսպաների, կինը՝ տան կարասիքի: Տնտեսությունը կոմունիստական է մի քանի, համախ շատ կոմունիստի համար: Ինչ որ շինվում է գործ է ածվում բոլորի կողմից, այն ընդհանուր սեփականություն է, ինչպես՝ տունը, պարտեզը, մեծ նավակը: Ուրեմն այստեղ, և միայն այստեղ զուտն զոյություն ունի քաղաքակրթված հասարակության իրավաբաններն ու անտեսողեաններն հնարած «ինքնաշխատ սեփականությունը» (ԷԼՄ, 192—193):

Սակայն միտածանալով զոյություն ունեւ աշխատանքի բաժանումն ըստ հասակի, որ բղղում էր մարզու Ֆիդիկական կարողությունից, նաչած նրա տարիքի հետ կապված ընդունակություններին: Երեխաներն ու ծերերը, անկարող լինելով որտեղական աշխատանքներին մասնակցելու, երեխաներն ու պատանիները ընկերակցում են կանանց՝ հայտնաբերող անտեսության աշխատանքներին, իսկ ծերերը մեծ մասամբ աշխատում էին որտեղական ու մարտական զինքեր շինելու վրա կամ ալիքի հատի ստանձում էին աշխատանքի գլխավոր հսկողությանն ու զնկավարման զերը, որ լաբորավում էր նրանց անցյալ՝ աշխատանքի երկարատև ընթացքում ձևաք բերված փորձագիտության ու հմտության վրա:

Աշխատանքի սեռական ու հասակային բաժանման վերացումը սկիզբ է առնում առհմային հասարակության քայքայման պրոցեսում, պատրիարխատական շրջանում, երբ առհմային կազմի ներքում առաջանում են ինքնուրույն անտեսական բլիշներ, գերդատանական անտեսությաններ:

Ահա այդ հասակա-սեռային աշխատաբաժանման վերացումը կհերը պահպանվի էին հայ գլուխացիական կենցաղում մինչև սոցյալ գարի վերջերը:

Հայ նահապետական գերդատանի բովանդակ անտեսական

գործունեությունը բաժանվում էր երկու տեսակ աշխատանքի՝ զրաի ու Ռերալի: Գրաի, գլխավորապես երկրագործական աշխատանքները կատարում էին այդ մարդիկ առն մեծի՝ նահապետի՝ զնկավարությամբ, որը սովորաբար ինքն անձնապես էր մասնակցում այդ աշխատանքներին իր մեծ տարիքի պատճառով: Նա միայն անտեղնում էր աշխատավոր ձևաբերը, բաժանում էր սրանց յուրաքանչյուրի պարտականությունները, որոնք ըստ ավանդական սովորությունից պղծն մի առ միշտ սահմանված են ու անփոփան պահպանվում են: Նմանապես տղամարդիկ էին սեռային արեկտատարները: Նրանք շինում է նորոգում էին իրենց գյուղատնտեսական և այլ գործիքները, տան կահկարասին, տունը, հարակից շենքերը և այլն: Մանր աշխատանքները՝ վաղը, ցանքար, հունձը, խոտաբերը կատարում են գերդատանի սովալ անգրամները: Ալիքի հեշտ աշխատանքները կատարում են կրտսեր անգրամները—բերքը սայլերով կրել, կահել, գումում անասուններին խնամել Իսկ ամենալրտեսները՝ պատանիներն ու երեխաները լինում են հասարակ որտաներում արածոց անասուններ վրա: Բնական այսպես է նկարագրում Բուլյանը ինչ հայ գերդատանի անտեսական գործունեությունը: «Գործը կամ աշխատանքը, որովհետև միություն է կրթիս, գարուն բացվելուս պես առաջիններեց (ազամաբղկանից) մեկը մտնիալ է, մյուսը վարող, ցանող, մյուսը քողող, երկրորդը կապող, երրորդը փոցիաղ, չորրորդը կրող ու ձեծոց և այլն»: Բնորոշ է, որ ցորենի ցանքս անելու կապված է որոշ հատակի հետ: Զավախքում չամանակացաններն իրավունք չունեն ցորեն ցանելու: Այս սովորութեան կրթականը մեջ խմստավորվում է հիշյալ աշխատանքի նշանակությունը ցանողի չափահասության հետ, որը, ըստ ժողովրդական նայացքի, արտահայտվում է նրա ամուսնությամբ և սիմվոլիկ ձևով նրա պապահրության նշանակությամբ:

Ժողովրդական տուսմն առում է. «Մարզը գրաստ պատն է, կինը՝ ներսիս: Ինչպես տղամարդիկ գուրը, նույնպես էլ կանայք գերդատանի ներսն են աշխատում, այդ աշխատանքն ըստ հասակի ու իրենց գրության բաժանվում է բոլոր կանանց մեջ: Մեծ մար, տատի, այսինքն նահապետի կնոջ (կնի վերջինս կենդանի է, այն ժամանակ ավագագուն հորը) զնկավարության ներքո է գտնվում ընտանիքի ներքին կառավարությունը, նրա անտեղ-



նության տակ է անային բովանդակ աշխատանքը, նրա ձեռքին է շերտեր՝ առնախորհուսելիս սխմելով: Նա է աշխատանքը բաժանում ու դասավորում ընտանիքի բոլոր կանանց միջև: Գերգաստանի պահեստների բանալիները նրա ձեռքին են լինում կանայք են բուրդ գրում, մանուս, գործում, կարում, կարկատում և այլն: Կանանցից ամենամեծը սովորաբար հաց է թխում, հաշ պատրաստում, պանիր շինում և այլն: Գուտարներն ու աղաղ աղջիկները պարտավոր են աղբյուր գնալ՝ ջուր բերելու և ընդհանրապես օգնել մորը կերակուր եփելու: Աղջիկները ու հարսները ձեռքով աղբյուրից ջուր կրելու սովորությունը գտնում ենք հին հայերի մեջ տակավին 400 տարի մեր արևելիվարկութունից առաջ, ինչպես վկայում է հույն Փանոֆոսն իր «Ելուրուն նահանջին պատմություն» մեջ (Kirou anabasis, գլ. V, § 9): Հարսներից ամենը զուգուց ու զըրհակ անող է, մյուսը՝ խմոր շաղպ, երբորդը՝ ձծուս զորկող և այլն: Նոր եկած հարսի պարտականություն է երեկո առաժող սառն առխար (հատակը) ավել, ժնխ (աղբ) թափել, առաժողը քնից վերկեցողների ստանձանները պատճառ պահել, անկողիններ վերցնել ու պարսել, լվացվողները ձեռքին ջուր ամել և այլն: Եվ այս ծառայությունը կռեկ, որքան մի ուրիշ նոր հարս բերված չէ<sup>39</sup>:

Հայ նահապետական գերդաստանում վերապրուել սովորությունի սեռա-հասակային աշխատանքի բաժանման ավելի ցայտուն նկարագիր է տալիս Ե. Կալայանը Լուռու հայերի կյանքից: «Մեկնսուրը հաց է թխում, կերակուր եփում ու բաժանում, ճախարակ մանուսն Առաջին ավաղ հարսը խմոր է հունցում, ճախարակ մանուսն, կով կթում, սար գնում, ուր պանիր է պատրաստում, խնոցուց յուղ հանում: Երկրորդ և երրորդ հարսներն այլուր են մագում, թոնրի վառում, զորդ, կարգես գործում, կարում, կարկատում, հաց սանում արտը, կալը կալում, թեզում: Փոքր հարսը առաժողը շատ վաղ գնում է ջուր բերում (բաց ոչ հարսնության պահիին կես կամ ամբողջ տարին), սկսելով ու սկսորայրի հանդերձները հազցնում, ձեռներին ջուր ամում, անկողինները հավաքում, առնն ավելում, կրակ անում, մինը զուրս գնալիս՝ չուստերն առաջը դնում, զուրս բաց անում, կերակուր մատուցանում, սկզանը հավաքում, բացի իր ամուսնուց բոլորի տրեխները հանում, սոնները շփում, շարթթը մի-երկու անգամ ջուր սաքաց-

նում, բոլոր աղամարդկանց սոնները լվանում, անկողինները զցում, սկեորայրի, սկեսրոջ և մեծ սեղրի հանդերձները հանում, ճրագը մարում: 10—15 տարեկան աղջիկը ջուր է բերում, զորդ, կարպես գործում, կալի ցորենը խախալում, աղուն է շինում, քաղհան անում, կար անում: 6—10 տարեկան աղջիկը զուլպա է գործում, առնն ավելում, ամանները լվանում, ջուր բերում, կալ է բշում, պանիր ու եղն է արածացնում դյուղի մտակայքում<sup>39</sup>:

Վերորբրյալ նկարագրություններից հետևեցնում ենք, որ առանձին անհատը նահապետական գերդաստանի մեջ բազմապիսի դրագունք ուներ, զմագան սեռակի աշխատանք էր կատարում: Դա տոնմային հասարակության բնահատուկ դիմն է, որ բոլորում է կոնկրետի աշխատանքի ու բաշխման սկզբունքներից: Դա հասարակության այնպիսի մի դրություն է, երբ աշխատանքի զանազան սեռակները հանդիսանում էին սուկ միևնույն անհատի աշխատանքի ձևափոխությունները և ոչ թե զանազան անհատների շեշտակի առանձնացած ֆունկցիաներ (կՄ Կ, 1): Այս դեպքում երկրագործությունն ու արհեստը միացած են, անբաժան են միևնույն համայնքի մեջ: Այդպիսով՝ նախնազարյան հասարակության բնականորեն աճած աշխատանքի բաժանումն իրականում հանդիսանում էր աշխատանքի բաշխումը միանական արագորական օրգանիզմի մասերի միջև և զբանից չէր կարող առաջանալ այդ օրգանիզմի սրահույն առանձին քիչ թե շատ ինքնուրույն ըջիջներին: Այդ սեռակներից, Կ. Մարքսը նախնազարյան կոմունիզմի, այսինքն տոնմային հասարակության, բնականորեն աճած աշխատանքային բաժանումը չէր համարում աշխատանքի իսկական բաժանումը:

Աշխատանքի իսկական առումով բաժանումը սկիզբ է առնում այն մոմենտից, երբ արտադրողական ուժերի աճումով բարգաճող տնտեսական գործունեություն իր զանազան ճյուղերով չէր կարող կատարվել միևնույն անձի ձեռքով, արևեստը բաժանվում է երկրագործությունից ու առաջանում է տոնմային կոնկրետի ներսում աշխատանքի հասարակական բաժանումը: Այդ հանգամանքն արգեն գառնում է նախնազարյան համայնական հասարակության քույրբայան գործին, որի հետևանքով տոնմային մեջ ձևավորվում են ինքնուրույն ու առանձին տնտեսություններ՝ տղամարդու փասական գերիշխանությունը ընտանիքի մեջ,

հայրական իրավունքի, պատրիարխատական սկզբունքի հաղթանակով Աշխատանքի նախնադարյան բաժանումն ըստ հասակի ու սեռի՝ տեղի է առյախ աշխատանքի բաժանմանն առանձին ընտանիքների միջև, անհատական-ընտանեկան աշխատաբաժանման: Այն գերդաստանների շարքում, որոնք բացառապես զբոսովում են երկրագործութեամբ, գոյանում են գյուղական համայնքներում նմանապես ընտանիքներ, որոնք բացառապես պարապում են որոշ արհեստներով—բրուտագործութեամբ, հյուսնութեամբ, դարբնութեամբ, մետաղագործութեամբ, ջուհհակութեամբ և այլն և այլն: Առանձին նշանակություն է ստանում մետաղագործական արհեստը, երբ հնազարյան հասարակության մեջ հայտարարվում է մետաղի՝ նախ բրոնզի և ապա երկաթի գյուտն ու մշակումը: Նույնիսկ այդ արհեստները, անցնելով առանձին ընտանիքներից, կենտրոնանում են առանձին գյուղական համայնքներում, որոնք մասնագիտանում էին հատուկ արհեստներում: Տակավին մինչև անցյալ դարի վերջերը գոյություն ունեին առանձին գյուղեր, որոնց տնտեսական բովանդակ գործունեությունը պարբերակվում էր մի որոշ արհեստի մեջ. կային գյուղական համայնքներ, որոնց գլխավոր զբաղմունքն էր կամ բրուտագործություն, կամ պղնձագործություն, կամ հյուսնություն, կամ գորգագործություն, կամ կտավի ու այլ գործվածքների արտադրություն, նույնիսկ այդպիսի գյուղերի անունները հորջորջվում են ըստ իրենց արհեստների: Բավական է հիշել, որ Հայաստանի մի շարք վայրերում կային բազմաթիվ գյուղեր, որոնք կոչվում էին Չանաղլի:

## XI

### ՄԻՍԱԿԱՆ, ՍՈՎՈՐՈՒՅՑՆԵՐ

Հայ գյուղացիական կենցաղում պահպանվել են ընտանեկան գանապան ստանալատարումներ, հանդիսավոր ծիսական կարգեր, որոնք համայնքային բնույթ ունեն և որոնք վաղեմի ստանալին հասարակության ցայտուն վերապրուկներ են: Տոնմային կուլիկտիվիզմի վերադարձները նկատում ենք այն սովորությունների ու ծիսական կարգերի մեջ, որոնցով ուղեկցվում են հարասնիքները, այսինքն ամուսնությունները, ծննդաբերությունները

ու թագունները: Դրանք այն կարևոր մոմենտներն են, որոնք ստանալին հասարակության մեջ խնամավորվում էին իրեն ստանալի ֆիզիկական գոյություն ու զարգացման, տոնի արշունակից անդամների քանակի անման պայմաններ:

Հայ գյուղական հարսանիքներում սիրող ծխական սովորություններն ու հանդիսատեսարանները բովանդակվում են իրենց մեջ վաղեմի տոնի հասարակական հարաբերությունների բնորոշ գծեր: Հարսանիքը մի սեսակ սրբագործումն է ամուսնական ակտի, որն այնքան մեծ նշանակություն ունի տոնի հարստություն համար, մասնավորապես պատրիարխատական շրջանի աշխարհայացքներում: Ամուսնություն ակտով և նրան հետևող ծննդաբերություն էր անում ու ամբողջովում այն հիմքը, որի վրա խարսխված էր տոնի արշունակից-ազգայական կապը: Հետևապես հայ նահապետական հարսանիքը, իրեն իրավաբան ձևավորումն ամուսնություն, որի մեջ շահագրգռված էր ամբողջ տոնը, պարբերակվում էր համայնական արտադրական հարաբերությունների տեսագծեր: Բավական է միայն շիշտել, որ հայ նահապետական հարսանիքն ինքնին հանդիսավոր գործողություն էր, որ տևում էր 3—5 օր, մասնակցությունը ոչ միայն ամուսնացողների ազգականներին, այլև զերթն ամբողջ գյուղական համայնքի: Փեսացուն հարսանիքի ամբողջ ընթացքում շրջապատված է լինում գյուղի երիտասարդներով, որոնք կազմում են այսպես կոչված մակարների կամ ապրիկի խումբը՝ մակարբաշու կամ ազարբաշու գլխավորություն, որոնք իրեն մի կուլիկտիվ իրենց սկսելով մասնակցություն և ուրախություններով՝ հանդիսավորություն, կենդանություն և տոն են տալիս ամբողջ հարսանիքին: Հարսանիքի հետ կապված մի շարք տնտեսական ու սոցիալական մոմենտները, ինչպես ամուսնացողներին, մասնավորապես նորաստեղծ զարսանիքի պատրաստումը, հարսանիքները, որոնք աղբու ունեն հարսանիքի պատրաստություն հետ, հյուրասիրությունը, հարսնաբը, խնձուղն ու պարերը, խաչկերտություն (քավություն), կուսություն ամուսնավայրում և այլն՝ կրում էին տոնմատարական կենցաղի բնույթ:

Հարսանիքի սկզբի օրը հարևան ու ազգական կանայք հրավիրվում են զարսնալը, ամեն մի կին այդ օրն իր հետ բերում է կարագ, որով հավաքվածները միասին պտտատում են հարսանիքի զաթան: Այլիկ հետաքրքիր է տաշտալիքի կամ

տաշտադրանքի սովորույթը, որը մի քանի դյուղերում, ինչպես՝ վայոց ձորի (Պարալազյազի), կոչվում է ալլարմազի: Նոր-  
հայկականի գավառում հարսանիքից երկու օր առաջ, սովորաբար  
հինգշաբթի օրը, փեսացուի տանը տաշտադրեք է լինում, պատ-  
րաստիկ նարսանիքի համար հաց: Հավաքվում են հարս, աղջիկ  
բաստիկ ու հարսանիքի համար Մի պատվի կին, հացթուխը,  
զնում է տաշտը հացատան մեջ տեղը, շորս մոմ վառում տաշտի  
շուրջը, մի-մի մոմ էլ բաժանում այդպիսի հավաքված հարսներին,  
առջիններին ու երկրորդներին, մեղքը ձեռքն առնելով,  
բարեմաղթում է, որ ուրախության, բախտավորության հաց լինի,  
և աղա հրավիրում է իրեն նվիրներ տալ, որպեսզի սկսի ալլարմ  
մեղքը: Նախ փեսացուի մալը, քավոր-կինը, փեսացուն և աղա  
բոլոր հրավիրյալները զրամ են ձգում մեղի կամ տաշտի մեջ:  
Այնուհետև նա սկսում է մեղել ու հետո հունցել, իսկ հրավիր-  
ված երեսասարգ-երկուսարգուհիները տաշտի բոլորքը շքան-  
ված, վառ մոմերը ձեռներին, ուսլիխ-ներ երդելով պարում են:  
Ամբողջ հունցելուց հետո թեթև ընթրիք է մատուցվում բոլորին:  
որից հետո բոլորը սրվում են: Մնում են միայն մի քանի  
մտածիկ ազգակառուցիկներ հաց թխելուն օգնելու<sup>40</sup>: Նույն տե-  
սողիկն է պարունակում եզմարթիի ծեսը, որով պատրաստում  
են հարսանեկան խնձուղքների միջև հանդիսավոր կերպով  
զավառ-զուռնայի երաժշտությամբ ու ներկաների պարերով  
մոթրվում անասունը<sup>41</sup>: Նմանապես համայնական մասնակցու-  
թյան բնույթ ունի ազգավազել կոչված սովորույթը: Պատկից  
մի քանի օր առաջ նորափեսայի անեցիկները հավաքում են աղաբ  
երեսասարգ ազգականներին ու ընկերներին շորերն ու նորափեսայի  
շորերի հետ լվանում են: Մինուչին անում են հարսանցուի  
հավաքում են աղաբ աղջիկներին ու նորահարսի ընկերու-  
հաները հավաքում են աղաբ աղջիկներին: Հետ լվանում<sup>42</sup>:  
Ձեռք նկարագրում նույնանման տեսողիկ պարունակող մի շարք  
հարսանեկան այլ ծիսակատարումներ, ինչպես օրինակ՝ հիմնադրեմ,  
շորածեթ, բազանիս, սափրում և այլն:

Վերոբերյալ ծիսակատարումների մեջ նկատում ենք վերադ-  
րուկների այն հինավուրց սովորույթներին, որոնց մեջ արտա-  
քրույն է տոնմային հասարակության կենցաղի որոշ գծերը: Այս և  
նման այլ սովորույթներն իմաստավորում են բովանդակ տոնի

շահագրգռումն իր արունակից անդամի ամուսնություն մեջ:  
Հիշենք նաև երաժշտը, երբ հարսանիքի օրը փեսացուն իր  
ընկերների՝ մակարների խմբի, իր հոր, բոլոր ազգականների ու  
հարսանիքին հրավիրված հյուրերի հետ միասին, երաժշտությամբ  
մեկնում են հարսանցուի տունը: Այդպիսի պատկազրություն  
համար: Նույն խմբական հանդիսավորությամբ է կատարվում  
հարսնառը, երբ նորահարսն այլ գյուղում է ապրում Այս դեպ-  
քում հասարակաց է մաղաբ իջեցնելու սովորությունը: Մաղաբը  
(անշուշտ մակար ըստից է) մի խումբ ծխավոր երեսասարգեր են,  
կամավոր կերպով գյուղից հավաքված, որոնք ուղեորվում են  
հարսը պատկի բերելու: Այնուհետև սովորությամբ ազնվա գյուղի  
համայնքի անդամներից շատերը վաղորդք պատրաստությամբ են  
անսնում ծաղաբ իջեցնելու և փեսացուի խմբի գալուն պես  
ամեն մեկը 4—5 ձիավոր հյուր հրավիրում է յուր տանը, ուր  
ընթրում և ուրախություն են անում: Այդպիսով մաղաբ բաժան-  
վում է 5—10 տուն խումբ-խումբ, մինչ ատամոտյան զուռնայի  
հրավիրը, երբ նորա կրկին միայնակ հարսին ուղեկցում են զե-  
պի իրենց գյուղը<sup>43</sup>:

Մակայն ամենից ուշագրավն է առջուկ կամ կակնի սովորու-  
թյունը, որի իմաստը կայանում է նրանում, որ հարսանիքի հետ  
կապված ծախքերի ծանրությունն իր վրա է վերցնում ամբողջ հա-  
մայնքը: Դա այն ընծայարբությունն է թե զրամով, թե իրերով  
և թե անասուններով (զլխավորապես մանր եղջյուրավոր), որ կա-  
տարվում է հարսանիքի ճաշերույթից հետո հանդիսավոր բացա-  
կանությամբ ու ներկա եղողներին զշն կենսա՝ բարձրագույն բարե-  
մաղթություններով: Առաջին ընծայողը լինում է միշտ քավորը, որ  
սովորաբար ապխտ է 3—10 սուրբ և ապա հերթով ըստ ավագու-  
թյան ու պատվի զախտ են մյուսները: Յուրաքանչյուր ընծա իս-  
կայն բարձրագույն կանչվում է նվիրողի անվան հետ ի դրամությամբ  
բոլոր ներկաներին: Այդ կանչակով հավաքված զուռնաբը հասնում է  
սովորաբար մի քանի հարյուր սուրբու: Բնորոշ է, որ այդ ընծայա-  
րբությունը մասնակցում են ոչ միայն ներկա եղող հյուրերը, այլ և  
նրանք բոլորը, որոնք հրավիրվել էին հարսանիքի, բայց չէին  
եկել: Այն է՝ ամբողջ ազգակառուցություն ու զրացուիթյունը<sup>44</sup>:  
Մաղաբ կամ կանչի սովորությունն իր էությունով ու իմաստով

զրեթե նուշանալիչ է թամազուխի հետ, որի մասին խոսք եղավ վերը (էջ 66): Թյուրքահայաստանում, ինչպես վիպում են ազգագրական նյութերը, նույնպես ահին սովորությամբ հարս ու փեսայի բոլոր ազգականները և գյուղի համայնքը կը մասնակցեն հարսանիքի բոլոր ծախքերին Այսպես՝ նշամուսուխներին կամ պսակի իրիկուն ամեն ոք իր կողմն հարսին ճակատք կարվելու համար կըրկե կամ կհանե կուսա բուրի, մահմուդիե, կյուլլե, սաամբուլ սակինները: Գեղերուն մեջ վիպիքին ձիեր, ուխաբներ և ուրիշ ընծաներ: Ոմանք հարսին կամ փեսային այս ինչ հարուստը կամ այն ինչ պետքը կհագանան:

Ի վերջո կանգ առնենք հարսանեկան երկու սովորությունների վրա, որոնք մեղ ստանում են դեպի վտղմի տոհմային հասարակության իրավաբանական Պա Կավարի խոցացած գեղն է հարսանիքում և կուսուրյան նշանի հանդիսավոր ցուցաբերումը:

Հարսանիքի ամբողջ ընթացքում և նրա բոլոր ծիսական կազմերում աչքի ընկնող դեր է կատարում քավորը, ավելի մեծ նշանակություն ունենալով, քան նորահարսների հայրերը: Պա-վորի նշանակությունը հայ նահապետական կենցաղում այն-քան դրալի մեծ է, որ նա միշտ տոհմական է լինում և յուր այդ տոհմանահատուկ գեղը շարունակում է պահպանել ավյալ գերդաստանի ներքին կյանքում, նրա անգամներին, մանավանդ իգական սեռի վերաբերման, և նույնպես ակնբայի զրեհարվում է ամուսնության հետեանք՝ որդեծնության ժամանակ: Այստեղ կանց չենք առնում այդ յուրահատուկ ինտիմուտի ծագման ու սոցիալական նշանակության մասին, քանի որ այդ առթիվ առ-ձարձիկ ենք մեր կարծիքը մտաբարխատի վերաբերյալ արձ սեռ-սության մեջ (1, 242—247): Սակայն այստեղ շեշտենք մի անգամ ևս, որ քավորությունը մի միացուկ է այլաբովում ձևով, որը տոհմային հասարակության քայքայումով՝ իր մեջ պահպանել է այնխիլի տոհմապետի կամ տոհմային ավարի ֆիզիքին նոր հասարակական պայմաններում, ուր տոհմային համայնքի արտ-հումով նրա նախկին սոցիալ-տնտեսական նշանակությունը իր տոհմապետական ավագության և իշխանության սկզբունքի վերապարտելով՝ գեթ անվանորեն վերապահվել է նոր առաջացած ընտանեկան համայնքների կողմից որոշ անձերի նկատմամբ ու ժա-

մանակի ընթացքում վերածվել է իրավաբանական սովորության, անդիտակցական ծխակատարման:

Հայ հարսանեկան ծեսերում մինչև անցյալ դարի վերջերը պահպանվել էր մի շարք վայրերում հեղուսթյան առնվազնային: Հարսանիքի ավարտին, երբ հարս ու փեսան առաքատ են մտնում, քիջվանը կամ խոհարարուհին դրան ետևը պահ է մտնում, սպասելով կուսությունն ապացուցող շարքավիճակ: Ստանալով արյուն-նոս չարսավը, խոհարարուհին տանում է այն, ցույց տալիս փե-սի ու հարսի մարը և շնորհավորում նրանց: Հաջորդ առաջվաշայն կանուխ հավաքվում են ազգական ու զրկից կանայք, որոնք կյուրասիրվում են ճաշով, որից առաջ նախապես հանդիսավոր կերպով ի տես ամենքի բերում են արյունուտ չարսավը և դրանով հրապարակորեն վկայվում է նորահարսի կուսությունը<sup>16</sup>, Բագ-րևանդում առաջատի մտած հաջորդ օրը ազգական կանայք հավաքվում են նորապսակներին տանը, կտեսնեն շատիկը, այ-սինքն կուսության նշանարյունն և յուրաքանչյուրը 3—4 զրուշ գրամ կընվիրաբերեն<sup>17</sup>:

Կուսության գազափարն իր սոցիալական առումով քնորո-շ է տոհմային հասարակության զարգացման վերջին էտապի ու նրա քայքայման մոմենտը: Պա հետեանք է այն զարգացման, որով մատերխարխատին զիտիկտորեն հաջորդում է պատերա-րխատը և իր հետ բերում այդ նոր էտապում սրբամածորեն ներ-հակ, նախորդ հասարակական կազմին հակոտնյա սոցիալ-տնտե-սական կարգեր ու իրավական ըմբռնումներ: Եթե մատերխարխա-տի շրջանում, մայրիշխանական տոհմային հասարակության մեջ ընթակներեն չէր կարող գոյություն ունենալ կուսության գազափարը, անիմաստ էր նրա սոցիալական նշանակությունը: ապա պատերախարտական տոհմային կարգերում, ընդհակառակը, աղջկա կուսությունը դառնում է հասարակական այն կրույթներից մեկը, ուր բացորոշ արտահայտվում է հայրական իրավանքը, այդ մարդու իշխանությունը կնոջ վրա, վերջինիս պատկանելի-ությունը տղամարդուն, հետևապես մատերխարխատական հասարակության սոցիալ-տնտեսական հիմքերի խորտակումը: Նոր առաջացած պատերախարտական տոհմային, այժմ շահագրգռված լինելով իրենց սոցիալ-տնտեսական յուրահատուկ պայմաններում իրենց հորական իշխանությամբ ու տոհմային պատկանող արյունա-

կից զավակներով, խստիվ հետևում են կուսութեան պահանջին և այդ վավերացնում են հրապարակութեն, համայնքային քննութեամբ ու հավաստումով:

Դառնանք հայ նահապետական կենցաղում նշանակութեան ունեցող մի այլ ակտին՝ արդեմնուլրյալն, որ նույնպես կրում է իր ուղեկից ծխական կարգերում վաղեմի տոճալին հասարակութեան վերապրուկները: Դա ծննդկանին կերակրեն է, որ համայնական պարտականություն է համարվում: Ուժապատ ծննդկանին սնելամեղտ է սննդաբար կերակրով ապահովել: Ուստի «բառասունքի» ընթացքում ամեն մի սրտգիան, հարուստ լինի թե աղքատ, բոլոր ազգականներից ու հարևաններից ամեն օր ստանում է թարմ կերակուրներ: Նույնիսկ ստամոքսը իր աշխատանքով վարձը ստանում է նմանապես ծննդկանի այցելուներէց: Համայնական այդ սովորւթի մեջ նկատում ենք մի մնացորդ այն վաղեմի իմաստավորման, որ տոճը ողջունում էր իր նոր անդամի աշխարհ վաղը և նրա մօր խնամքն ու հոգաբարձութեան իր վրա էր վերցնում մինչև նրա ապաքինումը: Այդ պարտականութեան մեջ արտացոլում էր այն տեսպիժը, որ նորածինը միայն իր ծնողներին չէր պատկանում, այլ ամբողջ համայնքին<sup>48</sup>:

Վերջապես մահվան ու թաղման հետ կապված մի շարք հավատալիքներում ու կենցաղային արարողութեաններում նույնպես պահպանվել են զմեր, որոնք բնորոշում են նրանց իրեն նախնադարյան կոմունիզմի վերապրուկները: Մեռյալի հուղարկավորութեանը մասնակցում է ամբողջ գյուղական համայնքը: Բոլոր ազգականներն ու հարևանները «պասեղան» են ուղարկում մեռյալի տունը թաղման երեկոյին: Սգասեղանը բաղկացած է լինում հետևյալ կերակուրներից ու խմիչքներից՝ փլավ, տապակած կամ խաշած հավ, լոբի (եթե պատ է), զինի, օրև և այլն: Ապա հանջող օրն սպիտի տանից մեկը գնում է ու հրավիրում սգասեղան ուղարկողներին և նրանց հյուրասիրում են թե այդ ստացած, թե իրենց պատրաստած կերակուրներով ու խմիչքներով<sup>49</sup>: Նույնը տեղի է ունենում «մեռելների»՝ Գյուղերում հատուկ զերեզմանափոխերի գոյութեան չունեն, այլ սովորաբար հավաքվում են բարեկամներն ու հարևաններ և փորում են գերեզմանը:

Համայնականութեան սկզբունքի պատկերն ենք տեսնում Բաղրևանդի հայ գյուղերում «Գյուղական համայնքի առանձին

անդամները խտնվում են գերդաստանների վիճակի մեջ, երբ գերդաստանը հեղինակութեան ու հռչակ է վայելում եթե այդ գերդաստանը մի փորձանքի է պատահում, նյութապես նրան օգնում են ձի, կով, եղ, ոչխար օտարով: Եթե նա նոր տուն է կառուցում, բոլորն իրենց աշխատանքով օգնութեան են պալիս: Ամբողջ համայնքը ձգտում է բարձր պահել գերդաստանի վիճակը, քանի որ այդ համարում են գյուղի պատվին ու շահը: Համայնքն օգնութեան է դալիս այդ գերդաստանին, երբ նրա հունձը հասած է, նրա ջրատեքին, ցանքսին, վարին և այլ պետքերին՝ կամովին ու անարտոճջ արամաղբերով իր օգնութեան աշխատանքով: Երբ գերդաստանը հարսանիք ունենա, համայնքը ամեն միջոց դորժ է գնում այդ հարսանիքը կամ հանգստը ուրախ անցկացնելու, ամեն տեսակ միջոցներով օգնել, որպեսզի նրա հարսանիքի և այլ հանդեսների ծախքերը թեթևացնեն: Եթե գերդաստանին որևէ զժբախտութեան է պատահում, կամ որևէ նրա անդամը մահանում է, համայնքը սղավոր է, եթե հիվանդութեան է պատահում, բոլորը գնում են միևմիտքելու: Նույնիսկ այս դեպքում այցելում է նաև թշնամի զրացին<sup>50</sup>:

## XII

### ԱՄՈՒՄԸՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐ

#### 1. ԱՄՈՒՄԸՆՈՒԹՅԱՆ ԱՌԵՎԱՆՊՄԱՐԻ ՈՒ ԳՆՄԱՐԻ

Ամուսնանալու ամենահին ձևերը, որոնք օրինական են համարվել նախնադարյան հասարակութեան սովորութեան իրավունքով, կնոջ առևանգումն է և գնումը: Թե ի՞նչպես են ծագել ամուսնութեան այդ երկու եղանակները և թե որչոյ՞ք ստեղծվում պետք է համարել սկզբնական ձևը, որից հետագայում ծագել է ու զարգացել գնումը, տակավին մտած են գյուղից հարցեր, չնայած որ այդ մտքին բազմակողմանի ու հարուստ զբաղանքություն է կուտակվել վերջին երկու դարում: Հակասակ մի շարք սոցիոլոգների ու ազգագրագետների պաշտպանած սեսակիսներին, պետք է այնուամենայնիվ ընդգծել, որ, ինչպես նախ այն ամուսնի մինչև այժմ մեղ հայտնի պատմագրական ու ազգագրական նյութերը, առևանգման հետ միտժամանակ նույն

մողութեանը մեջ զոյգութունն է ունեցել նաև կնոջ գնումը եւ միանգամայն բացակայում են դեռևս փաստեր, որով հնարավոր լիներ ազատուցել ամուսնանալու այդ երկու ձևերի մեկը մյուսից ծագելու կամ զարգանալու տակզմիւմը<sup>1)</sup>։

Առևանգմամբ ու զնամամբ ամուսնութեանը ծագել է ու զարգացել է պատրիարխատական տոնմային հասարակութեան մեջ, այն էլ միխիայն էքսոգամիական (այլացեղ) ամուսնութեան պայմաններում էնդոգամիան (համընտանի, համատունային ամուսնութեան) ըստ իր էությունից միտոգամային բացատրում է այդ ձևի ամուսնութեանները և այդ ինտիմուտեի համար ոչ մի սոցիալ-անտեսական նախադրյալներ չի բովանդակում իր մեջ։

Սակայն կնոջ առևանգումը և գնումը, զոյգանալով ու ծագելով էքսոգամիայի պայմաններում, կարող էր ծագել միայն այն արտադրական հարաբերութեաններում, այն սոցիալ-տնտեսական միջավայրում, ուր արդեն ճանապարհ էր բանում իր համար մասնավոր սեփականության զարգացումը, առաջին քայլում անշուշտ ընտանեկան համայնքի, նահապետական դերապատանի առումով։ Հետետայես առևանգմամբ և գնմամբ ամուսնութեանը հարում է այն սոցիալ-անտեսական մոմենտներ, երբ սկիզբ է առնում տոնմային հասարակութեան արտոնումը, նախնադարյան կոմունիզմի քայքայումը։ Իսկ այդ մոմենտը, ինչպես քանիցս անգամ անդիմ ունեցանք վերը շեշտելու, այն շրջագրած կեսն է, որ նախկին մատրիարխատական տոնմի սոցիալական ու տնտեսական կառույցին իսպառ անէացել է ու նրա ավերակները վրա ստերացել է պատրիարխատական տոնմային հասարակութեան իր հարբիշխանական իմաստավորումով։ Այսպիսի կենն արդեն կարցրել է իր նախկին նշանակութեանն ու զերը, որպես տոնմի սոցիալ-անտեսական գոյութեան առաջնակարգ գործն, որպես տոնմի հասարակական-իրավական կենտրոն։ Պատրիարխատական տոնմի պայմաններում, երբ սկսում է ավերակները տրամադրու իշխանութեանը, երբ նա ավերակառոյ դեր է ձևուք բերում արնտեսական կյանքում, կիրք դառնում է սուկ իրավանց առարկա, որը ծառայում է պատրիարխատական տոնմի ամրապնդմանն ու զարգացմանը, իրրի աշխատավոր ձևուք, զրևիկ ստրկական աստիճանի հասցրած, և իրրի ծննդարբութեան գործիք տոնմի բնական սահման համար։ Կիրք, ինչ եղանակով էլ որ նա ձևուք բեր-

ված լինի՝ առևանգմամբ թե գնմամբ, համարվում է, համենայն դեպս, այդ մարդու սեփականութեան, նրա բացարձակ իշխանութեան ենթակա։

Ուրեմն մայրիշխանական սոնմային հասարակութեանն իր էությունը չի բովանդակում այնպիսի նախադրյալներ, որոնցից ծագելին ու զարգանային առևանգմամբ ու գնմամբ ամուսնական ձևերը։ Սակայն և այնպես ներկայումս էլ կան սոցիոլոգներ, որոնք, հենվելով մատրիարխատական կարգերով ապրող հետամնաց ցեղերին վերաբերյալ ազատագրական նյութերի վրա, փորձում են ապացուցել առևանգմանն ու գնման գոյութեանը մատրիարխատի հասարակական հարաբերութեաններում Բայց այդ սեռակետը պաշտպանողներն աչքաթիւղ են արել մի կարևոր հանգամանք, որ մեր ժամանակակից մատրիարխատական տոնմըը չէին ներկայացնում իրրի աշակերտի զուտ մայրիշխանական հարաբերութեանները, որոնք հատուկ էին արխայիկ մատրիարխատի։ Մայրիշխանական կենցաղով ապրող արդի վայրենի ցեղերը, որքան էլ խզված լինեն իրենց շրջապատի կապիտալիստական օրակից, այնուամենայնիվ զեղերում են սոցիալ-անտեսական այն էտապում, ուր արդեն մատրիարխատի հիմքերից երբևից են ու ձևերն այլափոխվել, շատ հեռանալով մեր պատկերացրած նախնադարյան կոմունիզմից, և արդեն մտել են ցեղամիջյան ապրանքային փոխանակութեան սկզբնական, թեև պրիմիտիվ բնույթի հարաբերութեանները մեջ։

Մտում է, որ առևանգմամբ ու գնմամբ ամուսնութեան մեկնակետը որոնենք պատրիարխատական հասարակութեան մեջ, հարբիշխանական ցեղա-տոնմային հարաբերութեաններում։ Այդ սոցիալ-անտեսական պայմաններում ամուսնութեան հեշտալ երկու կառուցիկները բլրում են. ինչպես վերը հիշել ենք, էքսոգամիային նախադրյալներից։ Սակայն էքսոգամիայի պարբնն էլ մինչև այժմ մնում է բաց, այն թիք ու զնմ առարկուններն ու հիմնավորումներն շրջակույտում, որ գոյացել է սկսած Մակ-ձիննայայից (1865 թ.) մինչև Կորուզյու Ք. Ջելիգմանը (1929 թ.)։ Լույսիսկ մարքոստական գրողանութեան մեջ այդ հարցը տակալվել և պատշաճ է իր հետոգոտութեանը, չնայած, որ զրանով զբաղվել և զբաղվում են շատերը։ Մեղ թվում է, որ այդ հարցը հետապայում էլ անհնարին կլինի լուծել, քանի որ նրա ծագման

պայմանները մեր աչքից կորել են իսկական նախնազարյան սոսնժային հարաբերությունների անկացումով, իսկ այն լուծել սուկ արդի տոսնային հասարակություններին վերաբերյալ ազգագրական նյութերի հիման վրա, ավելի քան անբավարար ու խախտու հետևանքներ է տարել<sup>52</sup>:

Արդի ազգագրական նյութերից ելնելով, մենք տեսնում ենք, որ հայրիշխանական տոսնային հարաբերություններում էքսոգամիայի հիմքը կազմում են անտեսական պայմանները էնդոգամիական ամուսնությունը, երբ միևնույն տոսնային անդամներին մեջ է կայանում ամուսնությունը, ոչ մի տնտեսական առավելություն և նյութական շահ չի բերում տոսնային: Ընդհակառակը, իրենց տոսնայի դուրս ձեռք բերված կինը՝ նշանակում է աշխատավոր ձեռքերի հավելումը, տոսնային նյութական հարստության կուտակումը, իսկ տոսնայի հետացող կնոջով՝ սուսնում են ավյալ տոսնայի անտեսական շահերը: Այդ հողի վրա էլ արդի, այսպես կոչված, վայրենի ցեղերի միջև զոյություն ունեցող էքսոգամիան կատարվում է ոչ միայն առևանգմամբ ու զնամար, այլև բնական փոխանակությամբ, մի տոսնայի այլը սուլու է իր քրոջը կամ աղջկան ամուսնության մի այլ տոսնայի երիտասարդին, փոխարենը ստանալով նրա քրոջը: Այդ ամուսնական փոխանակությունը տարբեր տոսնայի ու ցեղի խմբական զստերի միջև այնքան է հետադուստրվում, որ նույնիսկ կատարվում է փոքր երեխաների վերաբերմամբ, նաև տակավին չծնվածների նկատմամբ, երբ ավյալ տոսնայի ամեն մի աղջիկ արդեն մանկությունից ամբաստանված է մի այլ տոսնայի ուրջ այլ մարդուն: Այդ սովորությունը ծագում էր մի ժամանակ նաև հայրի, թուրքերի և ֆոքր Ասիայի այլ ժողովուրդների մեջ, կրելով իր մեջ վաղեմի տոսնային էքսոգամիական ամուսնության վերադարձները: Դա այսպես կոչված շորաքսյախազն է հայրերի մեջ և բեռլիբայրքման թուրքերի և քրդերի կենցաղում<sup>53</sup>:

Այսպիսով, էքսոգամիական ամուսնությունը ստեղծված արյունահարից ազգակցական կապերը անպիտանում էին անտեսական կապեր ստեղծելու լավագույն եղանակը և յուրահասուղի միջոցը, որով շահագրգռված էր ամեն մի տոսնայ:

Ամբողջելով վերև առածները, հանդուս ենք այն տեսակետին, որ ստեղծմամբ ու զնամար ամուսնության ձևը պայման է

է ու զարգացել պատրիարխատական տոսնային հասարակության էքսոգամիական պայմաններում, որ ամուսնության այդ եղանակը կարող էր գոյություն ունենալ այն արտադրական հարաբերություններում, ուր արդեն տիրում է մասնավոր սեփականությունը: Այն պայմաններում, փոխանակական առևտուրը, որի շրջանառությունը մեջ մտնում էր նաև կինը, իրրի աշխատավոր ուս, բանավոր ձեռք, իրրի այլ մարդու սեփականատիրության առարկա, որ կոչված է ծառայելու նաև նրա սերնդի անմասն ու տոսնայի բովանակի քանակական ուժեղացման:

Ան այդ տեսակով մեզ բացատրյալ է դառնում, որ Հայկական լեռնաշխարհի հինավուրց պատմությունն էլ ապրել է այդ սոցիալ-անտեսական մոմենտը, երբ նախնազարյան-համայնական հասարակությունն իր զարգացման պատրիարխատական կատարում իրրի ամուսնության միջոց կիրարկել է կնոջ առևանգումն ու զնամար: Այդ են վկայում բազմաթիվ ազգագրական նյութեր, որոնք բնութագրում են հայ նահապետական կենցաղը մինչև վերջին դարերը: Թեև այդ ազգագրական ավյալները վերաբերում են տոսնային հասարակական կարգերից վաղուց արդեն դուրս եկած իրականությունը, բայց և այնպես նրանք վերագրական են, որոնք համար պահպանողականությունը կարողացել են բեռնորեն բնավ բնական տնտեսության քայքայող հանգամանքներում:

## 2. ԱՌԵՎԱՆՅՈՒՄԸ ԻՐԱՆԱՆՈՒՄ

Մովսես Խորենացին, պատմելով արևանքը արշավանքը հայոց վրա, հիշատակում է, որ Արատշես Բ. թագավորը, տեսնելով արևանքի զեղեցիկ իշխանազնուհուն, կամեցավ նրան կնուսնության, բայց մեթուստանալով, զիմեջ բռնի ուժի Ալյանդ Մովսես Խորենացին մեջ է բերում ժողովրդական վիզաստանությունից մի հատված, ուր նկարագրված է այդ տնտեսական պայմանները:

«Էձի՞սա արի արքայն Արատշէս 'ի սեւան զեղեցիկ, Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն, Եւ անցեալ որդէս զարձուի օրակն ընդ դեան, Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն՝ Ընկէց 'ի մէջք օրիորդին Ալանաց՝ Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին. Արագ հասուցանելով 'ի բանակն իւրս՝»<sup>54</sup>:

Մի կողմը թողնելով այս հասովածի մասին Մովսես Խորենացու տված բացատրությունը, մենք պետք է բառացի հասկանալ վերորեղյալ նկարագրերը եթե ժողովրդական վիպասանությունները մինչև իսկ երևակայական ու լեզվենյալը զեպք են պատմում այդ հասովածում, այնուամենայնիվ այդ վիպասանություններում նկարագրված պատկերները համապատասխան են լինում ժողովրդական կենցաղին, աշխարհայացքին՝ Տվյալ զեպքում էլ, եթե ժողովրդական կյանքում կենդանի չլինեք առևանգման սովորությունը կամ եթե այդ սովորությունը դատապարտելի համարվեք, երբեք վիպասանները բանաստեղծական երգ չէին հյուսել իրենց հերոսացրած թագավորի ամուսնություն մասին, որն առևանգվածը է կին տունում Ընդհակառակը, ժողովրդի կենցաղում առևանգված սովորական բան էր և այն էլ, ինչպես պետք է կուսել, շատ դարպասցած չափերով։ Նույն Մովսես Խորենացու ասեանքման մի այլ պատմություն էլ է սալիս «Բայց զկոյս մի զեղեցկագիրմակի, ի քերցն Աբասազզայ, զզոպցեալ Տաճատայ ուրումն... փախուցեալ 'ի կեսաբացուց քաղաքն ապրեցուցանելը, ամուսնաւորեալ ընդ ինքեան»<sup>50</sup>։

Մինչև մեր օրերը հասած ժողովրդական վիպասանություններում գտնում ենք տվյալներ, թե ինչպես ամուսնությունը տեղի էր ունենում առևանգման միջոցով։ Բազմաթիվ օրինակներից հիշենք միայն մեկը՝ որ բերված է «Շիրին շահ և Բահր» վեպի մեջ։ Սև սարի թագավորի թո՛ւ՛ Շիրինի հարմանցում փանգում է Բահրանց սամոցի իր հավանած աղջիկ Բահրին, որը գրառքքյարթմայով նաև համարվում էր Շիրինի հարմանցում։ Ոչինչ (Շիրինի կեղծ անունն է) խնձավ բոզ ձին—աթակին, կապեց թուր-կեծակին, առավ Բահրը իրոն թարկ ու փախցրեց»<sup>51</sup>։ Աղջիկ փախցնելու մասին կնույթյան համար հիշատակվում է նաև «Մասնա տուն» ժողովրդական վիպասանությունը (ԱՆ, XX, էջ 76 և 82)։

Հարս առևանգելու չափազանց տարածման ասպարեյց են մի շարք արդևրական ու պատմական կանոնները, որոնք սահմանվել են հին հայ օրենսդրությունում և դարերի ընթացքում շարունակ կրկնվել են։ Արդևրական օրենքների կարող էին երևան գալ միմյան այն դեպքում, երբ իրականությունում մեջ գոյություն են ունենում արդևրումն առաջացնող նախադրյալներ։ Բրիտանականությունը, մուսաբ գործելով Հայաստան, սկսեց հարածել այն ամուս-

նր, ինչ հիշեցնում էր հեթանոսության ցարգափարք։ Հակաբրեսանական էր նկատվելու անուշտ և առևանգման սովորությունը։ Եվ ահա հայ քրիստոնեության հենց առաջին բայում հորինվում է նաև առևանգման վերաբերյալ մի կանոն։ Վաղարշապատում գումարված եկեղեցական ժողովը (326 թ.) սահմանում է ի միջի այլ կանոնների նաև 9-րդ կանոնը, որ ստում է. «Եթե ոք առևանգարացել, պատկն այն շաւեր եղիցն, և պատկեալն ու՛մ կամի լիցի»<sup>52</sup>։ Մտավորապես մեկ դար հետո կայանում է Շահապիլանի ժողովը (447 թ.), որը մշակում են նոր կանոններ, որոնցից 7-րդը առևանգման հարցին է վերաբերում «Որք բունութեամբ և անիրուսութեամբ առևանգ առնիցեն, կալցեն զկինն և անդրէն տացեն զայս և ցմայը, և սուգան տացեն փոխանակ անարգեանցն, եթէ ազատ է՝ ԲՄ (1200) դրամ, եթէ շինական է՝ ՌՎ (600) դրամ։ Եւ որ հրոսն երթեալ էին օգնականք սուտ փեսային՝ առայն ձ (100) դրամ սուգանիցեն և արտոսն դրամն զկէան եկեղեցին տացեն և զկէան կարօտից։ Ապա եթէ սուտ փեսայն ընդ աղջկանն պոռնկեցու առանց դրակ դնելոյ՝ եկեղեցի տուգան կալցին ձ (100) դրամ, զի պատկն օրնութեան անարգեաց։ Գ (3) ամն յապաշխորութեան կացցէ։ Ապա եթէ երբցու ուրուք գաղապատկ եղեալ իցէ առանց հօր ու ընդ աղջկանն, երեցն դրամնայութեան չիշխէ պաշտել և ձ (100) դրամ սուգան կալցին և կարօտից տացեն. և պատկն զոր եղ՝ անավեր լցից։ Ապա եթէ ետ այսր խաղութեան և սուգանաց դարձեալ ի հաւանութեան գան կամօք աղջկանն և դնառացն, և յստայ պոռնկեալ են, պատկ մի օրնեսցի, այլ իբրև զերկակին ու առևանգութեալ զիցի՝ ի դրամն. ապա եթէ կուսան կացեալ են, ըստ օրինին պատկ օրնեսցի»<sup>53</sup>։

Այսպիսի կանոններ հորինվում են նաև հետագա ժողովուրդում։ Այնուհետև 12-րդ դարում ևս առևանգումը շարունակում էր արժանացած մնալ ժողովրդի կենցաղում, որի հետևանքով մի կողմից՝ Մխիթար Գոշը Հայաստանի մեկ ժայրում և մյուս կողմից՝ Ներսես Շնորհալին մյուս ծայրում կիրիկիայում, զբեթե միտմամանակ, բայց իրարից անկախ հիշատակում են այդ մասին։

Մխիթար Գոշն իր Գատաստանադրքի մեջ մտցնում է երեք կանոններ առևանգման զեմ Սրանցից մեկը՝ ԼԳ հատվածը (մասուն Ա.), որի մի հատվածը վերըրած է աշարքն հետևողաց ժե կա-



նոնից, ի միջև ալոց ասում է. «Ձառեանկան, թէև որդիս ծնցի և հայր և մայր և աղջկին չկամիցին մի ինչ ֆնաս կրեսցէ 'ի չարացազան հոգւոյն, անգրէն դարձուցանիք»<sup>60</sup>. Երկրորդը՝ ՄԱ հողվածք, ուր արժարժովում է նշանված աղջկա առևանգման զեպքը, իրեն հիմք է ընդունել Անկյուրբոյի ժողովի ժի կանոնը Այլ ՄԱ հողվածով հրամայվում է առևանգ նշանված աղջկը նա վերցնել, մինչև անգամ եթե բռնութեամբ սպաստանված լինի. «Որք մի անգամ խոսեալ աղջկունք են և զուգեալ գտանիցին, և յետ այտորի ալքը յափշտակեսցին, կամ եղև զի անգրէն տացեն, որում խոսեալն էր. թէև 'ի բռնութեան սպաստանիցէ, մի թողոցին՝ Մի զուգեալն և զխօսեան համարի և անգրէն դարձուցանել, թէև պակիցի ընդ յափշտակողին»<sup>61</sup>. Վերջապես երրորդ, այն է ՂՁ հողվածն արցղղովին առնված է Շահադիվանի ժողովի վերաբերյալ 7-րդ կանոնից ինչ-ինչ հավելումներով։ Սույն վերջին հողվածին մի թիվք Գոշը մեծ նշանութեամբ և ստվի, ստացարկելով դատական մարմիններին ուշադրութեան առնել այդ օրինքը և ըստ այնմ էլ վարվել խիստ հետևողութեամբ։

Կիրիկիայում ներսև Շնորհաւորն իր «Ընդհանրականի» մեջ դատապարտում և խախտ վարկերում է առևանգման սովորութիւնը ասելով. «Մի և այնոցիկ՝ որք առևանգս ասին, դնիցէ պակի, զի հակառակ օրինաց սաստուծոյ է և բերքը չարեաց պատճառք 'ի ստանալէ շարժեալք 'ի մտիկան արտա»<sup>62</sup>. Վերջապես նույն կիրիկիայում 13-րդ դարում ձեթում հայոց թողալորի եղբայր Մկրտա Գունչատարին իր կազմում Դատաստանազգբի մեջ էլ շարտիում է առևանգման հարցը, սահմանելով ԶԻ հողվածը<sup>63</sup>.

Նմանապես վրաց թողալոր Վաթիմազի դատաստանազգբի մեջ «Ձալական օրենքներ» խորաբով բաժնում դանում ենք 62-րդ հողվածը, որ վերցրած է Ատարա-հասնական» կոչված օրենքաբքի, օրի կի հողվածում ստված է. «Կուս աղջկան առևանգողը պետք է մահապատժի ենթարկելի. եթև եքիտասարք ոչ մի սեռական հարաբերութեան չի ունեցել աղջկա հետ ու փայցրել է նրան փոխադարձ համաձայնութեամբ, այն ժամանակ առևանգողը պատվում է իրեն շնացող»<sup>64</sup>.

Այսպես էին կովում դատակարգային հասարակութեան մեջ առևանգման դեմ, որն այնքան հատուկ էր սոսնա-ցիլային կազգերին և շարունակում էր պահպանել իր կենսունակութեանը

յնպիսի, որ նախնադարյան տոհմային հասարակութեան արդեն անկուցել էր Առևանգումը պահպանվում էր նույնպես, ինչպես և մի շարք հնամանի տոհմային կենցաղի վերապրուկները, շնորհիվ յուրահատուկ սնուցանող պայմանների։ Սակայն երկար ու ձիգ դարերի ընթացքում առևանգումն իրեն ամուսնութեան միջոց վերացավ հայ սովորութեան իրավունքից, բայց և այնպես նրա մնացուկները իսպառ չէին չքացել կարծես այդ արխայիկ սովորութիւնը երբեմն այս ու այնտեղ քնադարեն հարութեան էր անուամ ժողովրդական բարբերում ու հիշեցնել տալիս հարս դրավիտ այն դարերն, բայց և համարձեց միջոցը, որ զիջիթ» ու անվեհեր երբտասարկների գործ կարող էր լինել։ Տակալին անպայ զարի վերջերը հայ ժողովրդական կենցաղում տեղի էին ասնուամ առևանգման մասնակի զեպքեր, որոնք թևն չեն կարող ծառայել իրեն փաստ այն մասին, որ ներկայումս էլ առևանգումը կապում է սովորութեան իրավունքի կարգերից մեկը, սակայն և այնպես՝ ազացուցում են, որ այդ բարբերը միանգամայն արևատախիլ չեն եղել ժողովրդի կյանքից։ Առայժմ բերենք մի քանի օրինակներ։

«Նարս փայցնելու սովորութեանը դեռևս գոյութեան ունի Ախալցխայի զավատի հայերի մեջ, սակայն դա չի կարելի համարել սեղանական կյանքում հաճախ կրկնվող մի երևութի։ Առևանգումը, աղջկա կամքին հակառակ՝ զեթի թեղի չի ունենում, այն սովորաբար առևանգողը խոսք է կապում աղջկա հետ։ Առևանգման շարժումից մեծ մասամբ լինում է ծնողների անհամաձայնութեան իրենց աղջկա ամուսնութեան հարցում։ Երբեմն էլ պատճառ է, որ այդ տիթն աղջկա հոր անհամաձայնութեան է լինում, այս զեպքում աղջկա մայրը դառնում է առևանգման մասնակից։ Երիտասարդը, նախօրք պայմանավորվելով փոխառատի մասին աղջկա հետ, ստանում է նրանից մատուցի կամ որևէ րանգազիմ թան, իբրև գրավական։ Առևանգողը զայիս է իր ընկերներով (մոտավորապես 10 հոգի), բոլորը զինված։ Մտանալով աղջկա տանը և հարմար ժամանակ ընտրելով, հարձակում է դարձում երթիկից ի վայր, հափշտակում աղջկան և, հենկելով մին փախչում է ընկերների օգնութեամբ։ Առևանգողը փախչում է աղջկան որևէ հարևան գյուղ, իր ընկերով մտ և այնպիսի գիշեր պատկում նրա հետ։ Այնուհետև երիտասարդն ու աղջկը

շատագու՛ն են ծածկել իրենց արարքը եկեղեցական պահով, որ տեղի է ունենում 2—3 օրից հետո. ամենաուշը մեկ շաբաթից հետո, եթե եկեղեցու կողմից ոչ մի արդեւք չի լինում, Հակառակ պարտաշու՛մ նրանք սպրում են քաղաքացիական կենսակցութեամբ<sup>64</sup>:

Ախարալաքի գավառում պահպանվում է աղջիկ առեւանգելու սովորութեանը<sup>65</sup>, որի գլխավոր շարժառիթը համարվում է «հարկմասին»<sup>66</sup>:

Վարանդաշում «ղեւ մինչև աշոբ էլ հաճախ պատահում է, երբ մի երիտասարդին մերժում են առ իր սիրած աղջիկը, որի պատճառը սովորաբար երիտասարդի ստոր ծագումը կամ չքաշորութեանն է լինում, վերջինս հավաքելով իր մի քանի մտերիմ ընկերները՝ փախցնում է աղջկան: Շատ անգամ առնելով աղջկա համաձայնութեանը և ժամադիր լինելով նրա հետ, երիտասարդը ձիւռ գավառն է առնում աղջկան, որն իր հետ վերցրած է լինում իր բոլոր գործերը, և փախչում: Եթե աղջկա ծնողները շուտ են իմանում այս, խուսյն մի քանի ձիւավորներ հետևում են նրանց և, եթե հասնում են, տեղի է ունենում մի կատաղի կռիվ, որի ընթացքում երբեմն մարդիկ էլ են սպանվում: Եթե չեն կարողանում աղջիկը ետ խլել, աղան տանում է նրան մի ուրիշ գյուղ, իր մի բարեկամի տուն: Անմիջապես աղջկա հայրը հայտնում է մարմնավոր ու հոգևոր իշխանութեաններին, որոնք աղջկան կանչում և հարցաքննում են: Եթե աղջիկը խտառովանում է, որ իր աղաւ կամքով է փախել երիտասարդի հետ, նրանց թույլ է արվում պահպնելու, իսկ եթե ոչ, բռնադատ են. աղջկանը վերագրածնում են հորը, իսկ աղային պատժում են պետական օրենքներով: Երբեմն զլատահում է, որ երիտասարդը փախցնում է աղջկան առանց վերջինիս համաձայնութեան: Այսպիսի զեպքերում հազիվ է պատահում, որ աղջիկը չղիջի երիտասարդի ու նրա բարեկամները աղաչանքներին՝ հայտնելու, թե իբր յուր կամքով է փախել: Առեւանգված ու վերագրված աղջիկը սովորաբար հարգանք չի վայելում հասարակութեան մեջ, ուստի և ակամայից համաձայնում է ամուսնանալ առեւանգողի հետ<sup>67</sup>: նմանապես առեւանգումը տարածված է Դարբասղի մյուս գավառներում՝ Չանկղաբի և Զիվանիշի, ուր նա երևան է գալիս բազմաթիվ փաստերով<sup>68</sup>:

Բորչալուի գավառում (Լուում) առեւանգումը տեղի է ունենում, երբ աղջկա ծնողները համաձայն չեն լինում տալ իրենց աղջիկը սիրահարված երիտասարդին և երբ վերջինիս ծնողներն էլ չեն կամենում առնել նրա սիրած աղջիկը: Առաջին դեպքում սիրահարված երիտասարդը, հավաքելով իր ընկերներին, առեւանգում է աղջկան: Ընկերներից մեկը, հորմար տեղ գանկելով աղջկան, բռնում է նրա ճկույթ մասը, կռճիկները ծալում և հուպ տալիս, աղջիկը ցավից ստիպված՝ վազում է երիտասարդի հետևից մինչև որոշյալ տեղը, ուր թաքնված ձիւավոր սիրահարը առնում է նրան ձիւռ վրա և չափ ընկնում<sup>69</sup>: Այս ձևի առեւանգումից առաջացող հետեւանքներն ու փոխադրված հարաբերութեաններ վերջաբանը Բորչալուի գավառում նույնն է լինում, ինչ որ տեսանք նախորդ օրինակում՝ Վարանդաշի նկատմամբ:

Աղջկա առեւանգումը սովորական է նաև Անքսանգրողոյի (այժմ Լինինական) գավառի գյուղացիների մեջ և ստվանում է հետևյալ պատճառներից: Պրոպերում թե՛ աղայի և թե՛ աղջկա ընտրութեանը վերապահված է ծնողներին: Աղջիկն իրավունք չունի իրեն փեսացու ընտրել կամ ուզել. դա մեծերի գործն է: Տղան էլ, շատ քիչ բացառութեամբ, նույն դրութեան մեջ է: Պատահում է որ աղջիկը «աջ է քցած» լինում մի երիտասարդի վրա, և բնական է, որ ծնողները ընտրած ուրիշ փեսացուն նրան զզվելի պետք է լինի. բայց նա իրավունք չունի զրա դեմ բողոքելու. ծնողներն առաջ նրա տնունը կիսաշտառակվի, նրան ուրիշ աչքով կնային և աղջիկն ստիպված է լինում ժամանակավորապես խնդրել իրեն տանջող զգացումները: Եվ ահա մի պեղծիկ օր նա իր սիրած աղայի հետ փախչում է հոր տանից: Այս դեպքում շատ քիչերին է հաջողվում պահվել փախած աղայի հետ ու ապրել որպես ամուսիններ: Պատահում են բացառիկ դեպքեր էլ, երբ երիտասարդը սիրահարված է լինում մի աղջկա վրա, առանց վերջինից փոխադարձը ստանալու, և երբ աղջկա ծնողներից մերժում է ստանում, այն ժամանակ վճռում է «զոռով» փախցնել: Այսպիսի զեպքերը տիրալի վախճան են ունենում և շատ անգամ սպանութեանները տեղիք ստլիս<sup>70</sup>:

Նույնանման առեւանգման օրինակներ գտնում ենք Արարանի գյուղերում<sup>71</sup>, Մոնավանդ մեծ ծավալով առեւանգումը տարածված է Դաղախի գավառում, ուր, կարծես, այդ սովորութեանը

ծողովորդական կենցաղում ամուր արմատներ է թողել Այսպեղ տուևնդուհնեբը շատ անգամ կատարվում են նույնիսկ ծնողների կանխակա համաձայնությամբ, երբ աղջիկը հակառակ ծնողների ցանկության դրժում է նրանց ուզած երիտասարդի հետ ամուսնանալ<sup>72</sup>։

Այսպիսի բաղմամբով վատտեր ու տեղեկություններ ցրված կան մեր ազգազբաղկան նյութերում։ Նույնանման երևույթներ մենք տեսնում ենք նաև Արևի<sup>73</sup>, Նուխո<sup>74</sup>, Դարսի<sup>75</sup>, Վայոց Ձուրի<sup>76</sup>, Ծաղկալի<sup>77</sup> գավառների հայաբնակ գյուղերում։

Նման եղանակով առևանգումը գոյություն ունի նաև Թյուրքաճոյառատանում<sup>78</sup>։ Բուլաշերտում ամուսնագլուխ տեղի կունենա գլխավորապես աղջկա ու տղայի համաձայնությամբ, երկրորդ՝ երբ աղջիկը իրավին անհամաձայն է, և առևանգությունը կկատարվի բռնի ուժով։ Առևանգողները կ'աշխատեն շուտով աղջկա կուսուրթյունը խախտել, որդեկդի կամա-ակամա աղջիկը հնազանդեցնեն։ Փախստական պատասխաններն են հայ և բուլղար աղանդակներն ու մեծ օջախները, նաև վտնքերն, ուր մեծ պաշտպանութուն ցույց կարվի աղջկան ու տղային, ընծաներով կպատվեն, պատկել կուսան իրենց կնքավորությամբ ու սպասով միջոցներով կվերադարձնեն փեսայի տունը։ Եթե ժամանակին կիմացվի, աղջկա ծնողք, ազգականներն ու մերձավորները վրեժ-խնդիր հագով կհետապնդեն և շատ անգամ կամ աղջիկը կվերադարձնեն կամ սպանություն ու արյանահոսություն տեղի կունենա։ Իսկ երբ չաջողվի, վրեժ լուծվել կթողնեն սպագային՝ նման առևանգությամբ արածային վրեժխնդրության հագուբղջ գոհացնելու<sup>79</sup>։

Աղջիկ վախցնելու սովորությունը կա և Մուշ-Տարոն գավառում։ Երբ ծնողները չեն ուզում իրենց աղջիկը տալ կնության այն երիտասարդին, որի վրա սիրահարված է աղջիկը, երիտասարդը կամ աղբյուրի ճանապարհին կամ ոչխար կթնելու անդից իր հասակակիցների օգնությամբ առևանգում է աղջկան ու տանում իր ազգականներից մեկի մաս<sup>80</sup>։ Աղջիկ առևանգելու սովորությունից ետ չի մնացել նաև Պարսկահայաստանը, ուր Արարատականի հայ գյուղերում տեղի են ունենում ամուսնուրթյան այդ եղանակները<sup>81</sup>։

Վերոբերյալ բոլոր զեղբերում առևանգման պայմանները,

գործողության հանգամանքներն ու հետևանքները, ինչպես նկատում ենք, որոշ նմանություն ունեն հայաբնակ տարբեր վայրերի ժողովրդական կենցաղում։ Փաստերն առաջին հայացքից, կարծես, հաստատում են, որ ժամանակակից հայերի մեջ առևանգությունների գլխավոր պատճառը հանդիսանում է բաշլըղը, հաղեմասին, կամ խալաբը, այսինքն գլխադիրը։ Փետացուն փայտանում է իր ուզած աղջկան, երբ հնարավորություն չի ունենում նրա ծնողներին վճարելու պահանջած գլխադրի զուտարը, մանավանդ որ աղջկա ծնողները սովորաբար նշանում էին այն երիտասարդի հետ, որի ծնողներն ավելի առատ զիտադին էին պարտավորվում վճարել։ Հետևապես այս զեղբում պետք էր կունել, որ առևանգումը, իրրե իրավական ինստիտուտ, ծագել ու զարգացել է աղջկա դեման սովորութից։ Այսպես ուշադրության արժեքով ցան, ինչ որ վեր (ԼՂ 89—93) արժանեցնելու տևանդման ու զնման ձևերի պատմական ծագման ու փոխհարաբերություն մասին, հետևեցնում ենք, որ վերոհիշյալ զեղբերում գլխադիրը ոչ թե առևանգման գոյանալու հիմնական պատճառն է հանդիսանում, այլ սոսկ մի շարժատիժ է, որ ստիպում է չունեղ երիտասարդին դիմել այն պարզ ու բռնի միջոցին, որ վաղուց անտի գոյություն է ունեցել սովորութական իրավունքում Այս առևանգումը ստանում է ավելի հիմնական բնույթ, երբ դիտենք, որ հայ ազգազբաղկան նյութերում իրրե առևանգման «պատճառ» մի շարք բանահավաքներ հիշատակում են, բացի գլխադրից, նաև այս փաստերը։ Այդ փաստերի մեջ ամենահականն են. 1) ծնողների անհամաձայնությունը, անհավա միտպումայն գլխադրից, իրենց աղջիկը տալու ցանկացող երիտասարդին, 2) աղջկա կտրական մերժումն ամուսնանալու ծնողների բնորոշ երիտասարդի հետ, այս զեղբում առևանգումը կատարվում էր ծնողների կանխտեղ ճամաձայնությամբ<sup>82</sup>։ Այս հանգամանքները, որսեք նույնպես սոսկ զրգառիթներ են, միայն տղայացուցում են, որ իրականում այդ «պատճառները» չեն, որից ծագում և գոյանում է առևանգման սովորութի, այլ գլխադրի սովորութի հետ միասին պատկանվել են այնպիսի կենցաղա-հասարակական պայմաններ, որ առևանգումը սակավին պարբար հող է դառնում իր վաղեմի գոյությունը որոշ չափով շարունակելու, միակ էլք գաճախու, երբ դեռևս չանկացած պարբարխատական գաղափարախոսու-

թյան, հայրիշխանական կազմի մնացուկների միջառնություն, երկասարքերն մնում է կիրառել ամուսնության այդ արխայիկ ձևեր

3. ԱՌԵՎԱՆԳՄԱՆ ՎԵՐԱԳՐՈՒԿՆԵՐԸ  
ՀԱՐՄԱՆԵՆԿԱՆ ՄԵՍԵՐՈՒՄ

Չնայած վերորելյայ փաստերին, այնուամենայնիվ առևանգումը, իբրև սովորութիւնային իրավունք, ներկայումս պետք է արգելն վերացնել մեր ժողովրդական կյանքում: Սակայն երբեմնի դուռնիքն ունեցող առևանգման սովորութիւնը թողել է խորը հետքեր, որոնք շրջափելի են դառնում արդի հայ ժողովրդական կենցաղում: Սովորութիւնային իրավունքը դարձանալի պահպանողութիւնով մի տեսակ սրբազորման է բազմաթիվ ծնեհեր ու սինիսիկ արարողութիւններ, որոնք տեղի են ունենում նշանագրութիւն ու հարսանիքի ժամանակ: Առաջին հայացքից անխմատ ու աննպասակ թվացող ծիսական կարգերը, երբ վերլուծում ենք, այնտեղ դառնում ենք մնացուկներ տունային կյանքից, նախնադարյան սոցիալական հարաբերութիւններից, մի խոսքով՝ հետքեր, որոնց հիման վրա վերականգնում ենք այն պատկերը, թե արխայիկ տունային հասարակութիւնյան մեջ ի՞նչ ձևով էր կատարվում ամուսնութիւնը:

Հիրավի, ժամանակակից ժողովրդական հարսանիքի ծնեհեր ու սինիսիկութիւններն մեջ պահպանվել են արարողութիւններ, որոնք սինիսիկ կերպով վերարտադրում են ամուսնութիւնյան հընափանդ առևանգման եղանակը:

Առևանգումը հնարավոր էր ի կատար ածել ուրիշների օժանդակ ուժերի միջոցով: Այս դեպքում մեծ դեր էին խաղում տունակիցներն ու ազգականները, որոնք հրոսակախուրդ կազմելով արշավում էին ամուսնացող երիտասարդի հրամանատարութիւնով արշակ տունի վրա և փախցնում, լուսի ուժով տանում նրան: Հայաց հին օրենսդրերում նրանք միշտ հորջորջվում են հրապարակապէս «Որք հրոսն երթնել էին օգնականք սուս փեսային» (Նահապետի 7-րդ կանոնը): Նախորդ պիտում մեջ բերած օրենակներից էլ ակներև է, որ առևանգող երիտասարդը միշտ իր մտիկ ընկերներն օգնութիւնով է փախցնում ազգական Աղջիկն էլ ունեք պաշտպաններ իր տունիկներից ու ազգականներից, որոնք

գուրք էին դալին առևանգողների գեմ ներկայումս մնացել է հարսանիկան բնորոշ սովորութիւն, որ հիշելնուս է նախկին հրոսակը: Յուրաքանչյուր նորափեսա, նախքան հարսանիքը, հըրավիրում է մի խումբ երիտասարդներ՝ «ազապարիք», օժակարներն և այլ անուններով դանազան վայրերում, որոնք հարսանիքի ամբողջ ընթացքում միշտ փեսայի շուրջն են խմբված ու հարսանիքի գույն ավոզներն են հանդիսանում: Նմանապես նորահարսը շրջապատված է լինում յուրաքանչեքով՝ «հարսնեղբայրների», «հարսնքույրների» և այլ անուն տնձերով, որոնք մինչև հարսը մանի նորափեսի սուսը, իբրավանք են ստանում պահպանել աղջիկը: Ասկարները, ագափ-չարիները և ընդհանրապես փեսայի բնկերակիցները հարսանիքի ժամանակ, մանավանդ երբ գնում են հարսը բերելու հորանց տունից, գնված են լինում հրացաններով ու տարանակներով: Իսկ եթե աղջիկն ուրիշ գյուղումն է, գնում են նույնիսկ ձիավորված ու սպասուկնված:

Դարապայադում, սերը մտանում են հարսի գյուղին՝ հարսնչավորներն աշխատում են փայլել արտաքինով: Չունայի նվագածութիւնովը նորք սրբնթաց արշավում են ձիերի վրա, հարպիկ շարժումներն անում, հրացաններ արձակում, մի խոսքով՝ աշխատում են գյուղի ուշադրութիւնն իրենց վրա դարձնել: Սքռա արագութիւնովը մտանում են գյուղին և նորից ձիու գլուխը թեքում և նույն արագութիւնովը հա արշավում դեղի գուսնայիները, որոնք մյուս հանդիսականների ետևից կամաց առաջ են գալիս<sup>83</sup>: Այս նկարագրից՝ ագափների խումբը նմանում է սպասուկն հրոսի, որ գնում է կարծես հենվելով իր քաջութիւն վրա, հարուստ ավարտներում: Դրեմի հայերն մեջ հարսանիքի վերաբերմամբ կա հարսանիկան մի երգ, ուր նրանց հրոսային բնութիւնը որոշվում է ի միջի սայց հետևյալ խոսքերով.

«Թագավորս կուքս թուրով,  
Հալիք շատ է, կանուս գոտով»<sup>84</sup>:

Նույն նշանակութիւնն ունի այն երգը, որ երգում են Ախալքալաքի հայերը՝ հարսը հոր տանից գուրք բերելիս.

«Աղբորս շուշն կտորեցին,  
Գրով վախն պատուցին»<sup>85</sup>:

Նմանօրինակ երգ, որով բնորոշվում է հարսնառնների թշնամական հարձակման մտապատկերը, գոյություն է ունեցել Մուշ-Տարսնի գավառում:

«... Աղջիկներու մեր (մայր) ու ըտանք  
ժիր փակեցեք դրոււլըտանք,  
Զիգան կարին տղեկներ,  
Փախցնում զձեր աղբջրկներ»<sup>80</sup>;

Այդ տեսակ դիմված խմբի ներկայությունը պետք է բացատրել նրանով, որ յուրաքանչյուր տականդումն անշուշտ հանդիպելու էր դիմադրություն ու ընդհարման: Ահա այդ դիմադրությունն ու ընդհարումն արդեն սիմվոլիկ ձևերով շարունակվել է անդի ունեցող, հիշեցնելով վաղեմի արյունալի կռիվները: Եթե հարթ օտար գյուղից է, սրա համապատասխանները փակում են պարտնով ճանապարհը նորասփյուխ գյուղից եկած հարսնաբավորների արշավախմբի առաջ և մեկը նրանցից առաջ գալով, հրավիրում է նորեկներին ըմբշակով: Այստեղ փեսայի ազգականներն ստիպված են փող նվիրել հարսի համագյուղացի կտրիճներին, որպեսզի նրանք վերցնեն պարանն ու ճանապարհ բռնան նորեկ փեսայի խմբին<sup>81</sup>: Առաջ բերենք ուշադրով մի նկարագիր հարսնառի այդ տեսակ արշավախմբի: «Կալերի մտ մեր ճանապարհի վրա սպասում էր մեզ առույզ երեսասարկների մի խումբ. նրանցից միին չուխան համած, թևերը վեր քաշած, լրուխը բաց, երեսը վառ, աչքերը փայլուն, աշնպիտ մի զիբը էր բռնել, որ կարծես առյուծի նման պետք է հարձակվի իր որսի վրա: Նրա ընկերները, ստանձին խնամքով նրան բռնած, ծանրաքայլ կերպով առաջ էին մղում: Տո, Լա, ձիա բռնեք, ձիա բռնեք, մի ըշխացեք դար մեջքը քանի անդի կըկոտեն — ասաց և ձիուց մայր նեղվեց մեր խմբի մի առույզ, ուժեղ երիտասարդ: Փոքր էր մնացել, որ երկու ախոյանները կոչվեին իրար, բայց մի խումբը բռնեց մեր երիտասարդին և ապա հանելով խուրջինից երկած միտ, դաթա, հաց, զինի հանձնեցին Սաչիկու (գյուղի անուն) խմբին: Այս սովորությունը վերում է այն ժամանակ, երբ մի գյուղից գնում են մյուս գյուղը հարս բերելու: Նորահարսի գյուղի ազգիկները, դուրս գալով հարսընթացավորների առաջ, կըզահանջեն նրանցից կամ մեծամարտություն կամ ուռալիք և խմելիք, որ կոչվում է «ազափամա»<sup>82</sup>:

Երկու հակառակ խմբերի մրցման ու ընդհարման նույն պատկերի ենք տեսնում Բուլանըխում: «Խուրն ընդամուրեկ երիտասարդները (փեսայի կողմից) ստանալան չորերով վարզաբված քնարի ձիերու վրա հեծած, ձևաքերներ երկայն ու հաստ փայտեր և սմանց նաև զենքեր տառած, երգելով քրդական լուրն, ձիարշավով, ջրինցով առաջ կերթան: Ահա և մի խումբ ձիավորներ, որ աղջկա գյուղի կողմից կըզիմավորեն հարսնածին, ջրինցով մըր-սություն կակալի: Մեկն իր ձին, մյուսը իր ձևաքի ուժը կըփորձե, մական կըձգեն, հարված կըսան, կերպեն, կըբռնան և հրահրոցով կըմտանան գյուղին. բայց վերջինիս նպատակն է հարսնածից թողնու (չլիտարկ) փախցնել, որ եթե հաջողվի իրենց, հարսնածի համար մեծ անպատվություն կըհամարվի: Զրինդի իրարանցման միջոցին դիմավորող խմբից մեկը հարսնածի անպառնից մեկի քայուն առնելով կըփախչե: Բուրը ձիավորները կընդունեն նաև իր, կողմնակիցները կըքաջալերեն, և հկառակորդները կըհամոզեն մինչև գյուղը, եթե բռնել հաջողեցան՝ լավ կընդնպան, խն եթե ոչ՝ կըրադուրեն կըլինեն, և 10 – 20 քաղ տալով, քուրսը ետ կառնեն, եթե քուրս փախցնելը չըհաջողվի, ձիավորները, խողը շահունակելով և իրբև ախոյաններ մրցելով, կմտանան գյուղեին»<sup>83</sup>: Նույնաման երևույթի ենք հանդիպում Բուլանըխ հարսնի հարսնի Մուշ-Տարսն գավառում, որ «նորանածները ջրինդ են խաղում հայտի գյուղի երիտասարդների հետ՝ երկու ախոյան կեղծ թըշնամական բռնակի բռնումով: Այդ ջրինդ խաղալու ստան սովորական է քուրս փախցնել կեղծներին»<sup>84</sup>: Հարսնական ջրինդի մասին նաև գոյություն ունեն երգեր, որոնց մեջ պարզորոշ արտահայտվում է հարսնածի հրոսակային բնույթը:

«Ջերինդ էնիմ, վրադ կիզամ էլլարով»<sup>85</sup>:

Կեղծ դիմադրություն ցույց են ապրի փեսայի ընկերակիցներին ոչ միայն աղջկա գյուղի սահմանում, այլ և այն տանը, ուր սպորում է հարսնացուն: Ախոյանայի գավառում «հարսի ազգականները, առավելապես երիտասարդությունը կեղծորեն ընդդիմանում էր գավիթ ներս թողնել փեսացույին և սրա ուղեկիցներին, և ապա արգեն, երբ ընծանում են ստանում, թույլատրում են նորեկներին ներս մտնել հարսի տունը»<sup>86</sup>:

Ջավախքում, «երբ փեսի հայրը, սղամարդ բարեկամներն ու քավորը գավուլ գուռնի առաջնորդությունը հասնում են հարս-

նացուի առևը, տան փոքրիկներից մի քանիսը փակում են դուռը և միայն այն ժամանակ են բաց անում, երբ քաղրը տալիս է 20—30 կողմ<sup>57</sup>;

Նոր-Բայազետի դավառում հարսնացուի ծառան փակում է հարսնացուի տան դարպասը և չի թողնում հարսնացուին պահելու տանն, մինչև որ քաղրը մի ընծա չի տալիս<sup>58</sup>։ Նմանապես և Գողթման դավառում տան ծառան կանգնում է դռան առջև և թռչի չի տալիս հարսին տանելու, մինչև որ քաղրից ընծա չի ստանում<sup>59</sup>։

Ձեյթունում, երբ հարսին պետք է դուրս տանեն տանից, սրտ եղբայրը կամ մտանի ազգականներից մեկը փակում է դուռը և թռչի չի տալիս հարսին տանն, մինչև որ մի ընծա, մեծ մասամբ կարմրադույն կոչիկ, չտանա փեսայի կողմից<sup>60</sup>։ «Երկուսի շրջանում հարսնավորներն եկած, դռանը դեմ առած են, «Բացեք մեզ դդուռն, որ ուրախությամբ առցուք մեք զհարսն»։ Աղբարն է, որ ներսեն դուռը բանալու համար փեսային պարզև կը պահանջի, քիչով դո՞ւ չըլլար։ Վերջպպես՝ արաց է ձեզ դուռն մեք մտեք ի ներքս» տեսլով, դուռը բաց է անում և խուժանը ներս կը բռնափակի<sup>61</sup>։ Նմանապես և Բուլանըրում, «եբբ հարը կմեկնի չայրենական օժտիցի և մինչև սկեսրայրը զրսու դռան շեմքը կը փոխի, հարսի եղբայրներից մեկը դռան կշտին կանգնած, ձեռք կը ձգի խնամու օձիքը և կը պահանջի աղբար զտիթն, որ ընդունված սովորության համաձայն՝ անպատճառ կը տրվի և ապա հարսնածը կընգնի ճանապարհ»<sup>62</sup>։

Այդ ընծաները կամ զբամական վճարները ոչ այլ ինչ են՝ եթե ոչ փրկանքի գաղափարի մի տեսակ մարմնացումը, փրկանքի, որ հնում՝ առևանդողներն անգամ ստիպված էին լինում վճարել հարսի ազգականներին կամ սոսմիկներին կատարած հափըշտակության համար։ Փրկանքն այստեղ դարձել է այնպիսիված և յուր սկզբնական իմաստը կորցրած ծիսական ձև։

Հարկով, առևանդումից հետո թշնամական հարաբերություններ էին ստեղծվելու փեսայի ու հարսի ազգականների միջև։ Այդ թշնամական հարաբերությունները ձևակախություն արտահայտվում են հարսանեկան մի քանի սովորությունների մեջ։ Նախ՝ թշնամական վերաբերում կարելի է տեսնել այն երեւոյթի մեջ, որ հարսին շրջապատող ազգականները և մանավանդ համազույ-

գալիներն ամեն կերպ աշխատում են ծաղր ու ծանակի ենթարկել ու վիրավորել փեսացուի ընկերներին։

Դրանակի դավառում սովորություն կա երեկոյան, երբ գուռնան նվագում է հարսնետանը, բուրբ հարսնետրհերը նորից հավաքվում են հարսի առևը... Թախտի վրա իր մակարներով շքր-ջոպատված նորափեսան նստած է լինում և քերանը մի կտոր հաց չի գնում, մինչև որ անհրը որևէ բան չի նվիրում իբր քերամալացիէ։ Բայց իրեն այդպես ծանր ու հպարտ պահող նորափեսան ստատիկ սեացնում են նորահարսի ընկերուհիները, եթե նա զբոսած չի լինում նորահարսի մասնակցի մեջ պահված մտքը։ Այլիկները ցույց են տալիս այդ մտքը մակարներին և ծիծաղում փեսայի անշուք-քուքայան վրա, և երբ հենց իրեն են ուղարկում այդ նա կարծիքով փող է վճարում, որ թաքցնեն։ Եթե ազլիկները քիչ են համարում այդ վերադարձնում են փողը և կրկին ցույց տալիս մտքը, մինչև որ վերջպպես գոհացում են ստանում<sup>63</sup>։ Դարբալայրում, ինչպես և շատ վայրերում, եթե փեսայի մայրը նույնպես եկել է ազամարդկանց նա հարսը տանելու՝ նրա մասին երբևիցե տուրում են ծաղրական հետևյալ խոսքերը՝

«Խնամի, դու խոչ ես եկել,  
Դարտակ ու բոչ ես եկել,  
Երկու բոճ ես բերել,  
Ինչ էլ ճամբքին ես կերել,  
Բերածդ է կանաչ կապա,  
Թևերն ու փեշը ծակ ա.  
Խնամի, դու խոչ ես եկել,  
Դարտակ ու բոչ ես եկել»<sup>64</sup>։

Այդ տեսակ վիրավորանքներից մեկն էլ «բրող» փախցնելն է, որը, ինչպես վերը տեսանք, սեղի է ունենում Բուլանըրում և Մուշում։ Նույն Բուլանըրում, երբ հարսնածի խուռնն բջևանում է հարսի պյուղում, «հարսնած հյուրասիրող տանտերը մեծ զգուշություն կը բանեցնեն, որ թշնամի մարդիկ հարսնածի ձեռքի վրայ չկարեն, որ մեծ անպատվություն ու անարգանք է. և ինչպես շատ անգամ պատահել է, այդ կերպ անարգված անձեր սրտի կակիծեն մեռեր են»։ Նույն կեղծ վիրավորանքի պատկերն է ներկայացնում Բուլանըրում կատարվող հետևյալ սովորու-

թյունը «Թափորից դուրս, երկիայք երեսներին այլուք քսած տեսակ-տեսակ ծամածռություններ ու միմտություններ անկողվ կըվազվզին այս ու այն կողմը. փեսայի մերձավորներից մեկը, իշու վրա հեծնելով՝ սրչը կըտան ձեռքն ու չորս կողմից ձեթով ու քարե կղտեր կուտան, հս կուտան խեղճի ղլխուհն»<sup>101</sup>։ Ձեյթու-նում, երբ հարսին դուրս են բերում սանից, կակսն հրացանա-ձգություն, և երկիայքը ու շըջողատողները կըկանչեն. «Խարե-ցինք, առանք»<sup>102</sup>։

Շիրակում մինչև քահանայի դույն ու նշան օրհնելը հարսի սանը հավաքված ազգականները դանազան խորտիկներով լի սեղանը վայելելուց նետ, հարսնացուի ծնողներին ու մերձավոր-ներին լացացնելու նպատակով երգում են «Տանում, սանում են, ազն ջան» երգը<sup>103</sup>։ Ախալցխայի գավառում, նույնն է և շատ վայրերում, խաչկղարը պակի ստալին զիշերը չի քնում և հսկում է, վախենալով, մի դույնե աղջկա կղարը դողանա նրա-նից թուրը. եթե այդ դողացվի, զա մեծ անպատվություն է փե-սայի համար<sup>104</sup>։ Գարալագյազում հարսնառի ժամանակ ազգականներն ու նորափեսի ազգականները դուրսը կանգնած, դիմամբ զոչում-ներ են անում՝ «Ճիննինի, ճիննինի, հարսը սարանո, որպեսզի ծաղրեն ու բարեկացեն հարսի ծնողներին ու բարեկամնե-րին։ Այդ նրաժեշտի, լացի, աղմկի և ուրախության ժամանակ ազգականներից մեկը, որ կոչվում է «ազգիկ»՝ ընկնում է հարսի հո-րանց հավերի կտակից և ծածուկ աշխատում է բռնել նրանց ու տանել, որպեսզի նետ ազգականներն ուտեն, քեթ անեն»<sup>105</sup>։ Գամձակի գավառում հարսնածի ժամանակ մակարներն ու փեսի ազգական-ները ծաղրում են հարսնածը, երգելով.

«Մեջքը կտորի, հարսնամեր,  
կուտը կտորի, հարսնամեր,  
Ուտը կտորի, հարսնամեր,  
Աչքը դուրս գա, հարսնամեր,  
Այ բխմուրվաղ, էս ինչ օ,  
-Բախեղ գնում օ, էլ չի դալ»<sup>106</sup>։

Միևնույն ժամանակ մակարներն ստանց այլապլուծյան սկսում են սրով խիել ու սղանել պատահած հավերին, և սրանց ոչ մի տերը իրեն իրավունք չի համարում պահանջել հավի ար-

ժեքը։ Երբեմն էլ այսպես են վարվում նաև պատահած գառները և ուրիշի հետ<sup>107</sup>։

Բորչալիում (Լոռու) հարսնառ դնալիս եթե փեսան «բար-գան» կարճի որոշված նվերներից պակաս կամ վատ է բերել, հարսնացուի կողմի ազգաները ծեծում են նորափեսի մակարներին, ին ինչի են նոգա քիչ կամ վատ բերել։ Մոզորաբար հարսը գյուղի ազգաների համար փեսան նվեր է տանում թխվածքներ և հավ, ապա թե ոչ այդ ազգաները կհարձակվեն փեսայի մա-կարներով վրա և, իրենց պահանջը հայտնելով, կծեծեն նրանց<sup>108</sup>։

Թհամական աղպոսի հարսերու թխյունները երկու կողմերի միջև տվելու ևս ցայտուն կերպով ներկայացվում է հարս թաք-ցրնելու սովորու թխյուն մեջ, Վարանդալում, երբ փեսան իր ընկեր-ներով դալիս է հարսնացուի տունը, ամի քանի բողոմած բուրբը խուսում են ներս։ Ղարաքամի մի անկյունում վարագուրով կըտ-րված է լինում, որ կոչվում է պլախալ։ Սխաղ է լինում նորախարսն իր մի քանի ընկերուհիներով։ Մակարները դնում և նստում են վարագուրի մոտ, իսկ քավորը, նորափեսան և փեսեղարը կանգնում են զորդի առաջ վրա մամերը ձեռքին։ Տան ծերունին մտնում է նորափեսին և նվերներով նրան մի գոտի կամ որեէ այլ բան, հրավիրում է նստել։ Փեսան, եթե զոճ է նվերից, նըս-տում է, իսկ եթե ոչ՝ կանգնած մնում։ Այնուհետև անեղիներից ներկաները մտնում են ու խնդրում, որ նա բավականանա ստացած ընծաներով<sup>109</sup>։ Նույն գավառում, երբ հարսնազավորները դիմում են դեպի աղջկա տունը, վերջինիս հայրն իր հյուրերով դիմավորում է նրանց։ Միհն էլ մի կելտր մաշալու ձեռքին ստաջնորդում է նրանց։ Այս ատենիցով, մակարները սկսում են արևակել իրենց հրացաններն այդ մաշալուցի վրա և ուտա բղա-վում<sup>110</sup>։ Հրացանաձգություն տեղի է ունենում, ինչպես արդեն վերը հիշել ենք, նաև Ձեյթունում, երբ աղջկան սանում են հո-րանից, նույնը կատարվում է նաև Բորչալիում։ Ընդհանրապես շատ տեղերում հրացանաձգությունը մակարների կողմից անընդ-հատ տեղի է ունենում հարսանիքի ամբողջ ընթացքում, մանա-վանդ, երբ աղջկան ուղեկցում են հոր տանից դեպի եկեղեցի և այդ փեսայի տունը։

Առաջին հայացքից թվում է, թե հրացան են արձակում զվարճությունից։ Սակայն այդ սովորությունը, ինչպես նաև

չառ սովորութիւնները, ոչ այլ ինչ է, եթե ոչ այնքո՞հ հետեւ տեղի ունեցող առևանգման երևույթներէց մեկը: Չէ՞ որ առևանգումն աստեղց կռիւի ու արշուճանգութեան չէր անցնում. հետևապէս մեր ժամանակակից հրացանաձգութեան վրա նայելու է իրրեւ կեղծ պաշտպանողական միջոցի, որ փեսայի հրոսային ընկերները ձեռք են առնում իրենց կարծեցյալ հալածողների՝ հարսնացուի տոճիկներէ ու ազգականներէ դեմ:

Յնշամական (գունե առևանգման սկզբներում առաջացած) հարարերութիւններէ նշանները կարելի է նկատել հետևյալ ուշադրով սովորութեան մեջ: Ազդկա ծնողները, նմանապէս ազգականները երբեք ներկա չեն լինում թե կեղծեցու՞մ պատկազրութեանը և թե ընդհանրապէս հարսանիքում փեսայի տանը, այլ հարսը տանելուց հետո մնում են իրենց տանը: Եւ այն թշնամապէս նշաններն ալիկի բացահայտ են: Բուլանընի մի սովորութիւնից: Պատկերաց 4—5 շաբաթ հետո սովորութիւնն ունին հարսի հերունք՝ վերադարձնել ազջիկն իրենց տուն, որ կրկնապարփի հատուկ հրավիրակ կնոջ ձեռամբ: Մնալով 3—4 շաբաթ հերանց տանը, վերադարձը նույնպէս և փեսայի տան կողմից գնացող հրավիրակ կնոջ ձեռքով կրկնապարփու<sup>111</sup>: Այդ ժամանակից հետո հարսը իրավունք ունի հաճախել իր պապունց տունը: Այդ տեսակ կեղծ իզգված հարարերութիւնները երկու ընտանիքների միջև և հարսանիքից հետո, իհարկե պետք է բացատրել այն թշնամական զգացումով, որ առաջանում էր արխայիկ դարերում ազջիկ փոխցնելու երկու տոճիկի միջև: Անհրաժեշտ էր հաշտութիւն կայացնել որպէսզի ազջիկը կարողանար իր ծնողների մոտ հաճակել:

Ստիտակի շրջանի հայերի մեջ, որոնք դադարած են թշուրքաւայտասանից, սովորութիւնն կա, որ նորափեսան մինչև մեկ տարի պտակվելու օրից իրավունք չունի իր աներոջն ու զոքանչին երևալու: Տարվա վերջը ազջիկ ծնողները մեծ խնձուրք են ստրբում, ուր հրավիրում են բոլոր հարսնազարներին: Փեսան դալիւ է ընծաներով և այստեղ առաջին անգամ պաշտօնապէս ծանոթանում է իր աներոջ ու զոքանչի հետ: Այս խնձուրքից հետո միտքն սկսում է կանոնավոր բարեկամութիւն և փոխադարձ այցելութեան երկու խնամք ընտանիքներէ միջև<sup>112</sup>: Եւ այնուհետև սովորութիւնն սեռանում ենք: Դարալազայում, ուր մեծ պատի միջինքին (երբ հարսանիքը բարեկենդանին է տեղի ունե-

ցել) հարսի հայրն իր ազջիկ համար բերում է բարաղ, այն է՝ գունազան մրգեղեն և ուտելիք: Ծաղկազարդին ազջիկան հրավիրում է իր տունը, և այդ հրավիրը կտրվում է վարձ. ծնողները պահում են ազջիկան իրենց մոտ մինչև համարաձու<sup>113</sup>, եւ այնք տեղի ունի՝ վտարակահանում<sup>114</sup>, եւր-Բայազետում և այլուր: Սխալ ընտրու է Արարիկի ժամերի հարսանական մի սովորութիւնը, որ ցուցիկ է տալիս զեպի փեսան ստամա թշնամութեանը, երան հետապնդելու և հալածելու սիմվոլիկ զործողութեամբ արտահայտում: Պատկից տու՞յ խու՞ր մը երկտասարդներ կը կատարեն փեսային փոխցնելու հնօրյա ու նախապաշարյալ արարողութիւնը: Մի բանի վայրկեան հարեանի տանը պահելուց հետո կը դառնա հայրենի տունը և կոկպի պատկի տանխմբութիւնը<sup>115</sup>:

4. ՅՆՄԱՄԲ ԱՄՈՒՄՆԱՌԹՅԱՆ ԴԵՐՊՐՈՒՆԵՐԸ

Գնմամբ ամուսնութիւնը, որ գոյութիւն է ունեցել տակաւին տրիսայիկ դարերում, զրեթի տեւանդման հետ զուգընթաց, իր սկզբնական աստիճաններում այլ նշանաւորութեան է ունեցել: Եւ եղել է փրկանք, որ վճարվել է այսպիսի տանի կողմից ազջիկ տոճիկն, որպէսզի մի կողմից ծածկվէ այն փեսայ, որ կրում էր ազջիկ ընտանեկան համայնքը, զրկվելով տշխատավոր ձեռքից, և մյուս կողմից հատուցվի առևանգմամբ պատճառած ստնային վիրավորանքը: Սակայն, երբ տեւանդումն սկսում է նվազել և թուլանալ, գնումն ընդհատական սկսում է ծալվել և, առևտրական փոխանակութեան զարգացումով դառնում է միտնայամայն տիրապետող ձև ամուսնութեան՝ մեջ, մասնաւորապէս մայրիկ հասարակութեան քայքայման շրջանում: Գնմամբ ամուսնութեանը, արժատանալով հասարակական հարարութիւններում, ստանում է օրինական ուժ և արտահայտութիւն է գտնում հնազույն դատաստանազրբրում: Դա բացահայտ է Առաջավոր Աօխայի հնագույն ժողովուրդների մեջ, Հին բարեկական Համուրաբի (2120—2065 թ. թ. մեր տարեթվակ առաջ) օրենսգրքում՝ հիշատակվում է, որ նորափեսային հայրը վճարում է նորահարսի հարս օրոջ գումար՝ նիհալու նույնիսկ Համուրաբի թագավորի դարեր տալ՝ Միջագետքի ակիլայայն և սուսերական ժողովուրդների մեջ տիրում էր գնմամբ ամուսնութեան կրանակը, ինչպէս վկայում են հնագիտական արձանագրութիւնները<sup>116</sup>, Հայերի մեջ



էլ սկսած խոր հնությունից գոյութիւնն է ունեցել հարսի գնումը՝ որը որչափ փոփոխումներով շարունակել էր պահպանովել մինչև անցյալ դարի վերջերը:

Քն հին Հայաստանում գնմամբ ամուսնութիւնը համա-  
տարած երևույթ էր, դա մեզ հայտնի է գտնուած բյուզանդական  
կայսր Նուասինիանի նշանավոր XXI նովեմբրից՝ «De armenis,  
ut et illi per omnia Romanorum leges sequantur», որով 536  
թվականից Հայաստանի Բյուզանդիային ենթակա մասում մտն-  
վում էր ի կրթատուն հռոմեական իրավունքը Այդ օրենսգրա-  
կան կարգադրութեան մեջ բյուզանդական կայսրը նշում է, որ  
հայերը շատ սուր են գասում կանանց և թե Հայաստանում ազեղ  
սովորութիւնն կա, այն է դեռ հարս ամուսնութեան համար,  
որպէսի գործողութիւնն ըստ հռոմեական իրավունքի, այսուհետե  
խոտով արեղելում է<sup>117</sup>: Հիբրովի, տակաւին Մովսես Պարենացու  
պատմութեան մեջ հիշվում է, որ հին հայերը սովորութիւն են  
ունեցել գնմամբ կին առնել, այդ նպատակով վճարվող գումարը  
հայտնի էր վարձամբ տնտեսով: Հայոց Արտաշէս թագավորը, տեսնե-  
լով լաւանների թագավորի դեղեցիկ ազնկան, օրիորդ Սաթենիկին,  
ցանկանում է նրան կնութեան առնել և մարդ է ուղարկում  
ազնկան ուղեւոր: Բայց ալանների թագավորն առում է, «եւ ուստի  
տաց է քաջն Արտաշէս հաղարս ի հաղարաց և բիրս ի բիրաց  
ընդ քաջազոյս կոյս օրիորդին Ալանաց: Աւրեմն ալանների թա-  
գավորն իր ազնկա համար պահանջում էր մի մեծ գումար, որն  
ինչպէս երևում է, Արտաշէսը չի ցանկանում վճարել և առանձ-  
նում է. «սակեօղ շիկափոխ» պարանով նա ընում ու փախցում  
է Սաթենիկին: Մովսես Պարենացին հայ հին ժողովրդական վեպի  
այդ նկարագիրը բնագրութիւն է բացատրում: Զնախանաով  
առանգման փաստի էութեանը, նա ոսկեօղ պարանի մեջ այլա-  
բանորեն տեսնում է հարսի գնման գործողութիւն. «Քանզի պա-  
տուեալ է առ Ալանն մորթի կարմիր, լայքա շատ և ոսկի բազում  
տուեալ ի վարձանս, առնու գտիկին օրիորդն Սաթենիկը Այս է  
ոսկեօղ շիկափոխ պարանն»<sup>118</sup>, Մովսես Պարենացուն ավելի հաս-  
կանալի էր հարսի գնման փաստը, իբրև ոսկեօղ պարանի մեջ այլա-  
բանորեն, որին նա սկանասես էր հայկական կենցաղում, քան  
առանգումը, որը, թեքես նրա կարծիքով՝ անվայել բան էր  
թագավորի համար:

Միխիթար Գոշի գատաստանագրքից երևում է (զլ. ձիԱ,  
մասն առաջին), որ հարսնացուն պահկիլիս բերում էր իր հետ  
ամուսնու առնը իրեն սեփականութեան զարձած ինչքը, որ 12-րդ  
գարում հայտնի էր երեսացսես անունով և բաղկացած էր նշան-  
ված միջոցում իր փեսայուից և սրա ազգականներից ստացած  
նվերներից: «Երեսացեսուը» օրենքների ժողովածուների մի քանի  
հայ ձեռագրներում հիշատակվում է նաև սուայր անունով, ինչպէս  
օրինակ Ասորա-հռոմեական կողմած օրենագրքում: Տուայր բառը  
հին հայ հեղինակների կատարած թարգմանութիւնն է հռոմեացի  
հունական ծորձ կամ լատինական donatio տերմիններից, որնը  
նույն իրաժողութեան նշանակութիւնն ունիին, ինչ որ հայկա-  
կան երեսացսեսը<sup>119</sup>: Երեսացսեսն իր պատմական ծագումով գո-  
յացել է գնմամբ ամուսնութեան սովորութիւնից, որի աշխտիով  
նկն է նա հանդիսանում: Այն իմաստը, թե սուայր բառի մեջ  
պարփակվում է գնման գաղափարը, երևում է Ասորա-հռոմեական  
գատաստանագրքի երկու հոդվածներից, ուր օրենսգրքի հայ  
թարգմանիչը տալիս է բնագիրը հետևյալ զրուեթամբ. «Եթէ՛ ճք  
առն է սուայր, որ է մահր ըստ արարացոց և ըստ հայոց անձին  
վին աղջկանն...» (հոդ. թ) կամ «...զոր ինչ բերէ կինն գրեցոցն  
զայն պուռը, նույնպէս գրեցոցն զսուայրն, այսինքն է վարձանս...»  
(հոդվ. ին)<sup>120</sup>:

Հարսի գնման սովորութիւնը ժամանակները ընթացքում, ինչ-  
պէս այդ բացահայտ է դանպան ժողովուրդների իրավարանա-  
կան սովորութիւններից, փոփոխվելով սկսել է վերանալ ու վերած-  
վել մի ալ գործողութեան, այսինքն ընծայաբերութեան, որ  
ստում են փեսան ու սրա ծնողները կամ ազգականները՝ ազնկան,  
ինի դա գրումով կամ թանգարտեր իրերով: Նույնն է սեղի  
ունեցել նաև հին հայերի մեջ, ուր գնման սովորութիւնը վերա-  
փոխվել է հռոմեացի մի գործողութեան, այն է՝ երեսացսեսի կամ  
սուայրին:

Երեսացսեսը, որը, անշուշտ, զարգացել էր Միխիթար Գոշից շատ  
ու շատ առաջ, մինչև անցյալ դարի վերջերն անարտա պահպան-  
վում էր հայ ժողովրդական կենցաղում: Ախալքալարի ու Ղարա-  
բաղի զալտոններում հանդիսավոր նշանգրքից հետո փեսան,  
սրա ծնողներն ու սրանց հետ միասին կկամ ազգականները սկը-

տում են հարանայություն փոզ ընծայել, որպիսի գործողությունը կոչվում է երեստեսանք:

Հոռում (Բորչալուի գավառ) նշանդրքերն քահանայի պահպան-  
նիչից հետո փեսացուն գնում, նստում է իր տեղը, իսկ հարսնա-  
ցուն մնում է կանգնած, առնելով ձեռքը մի արևի կամ փոքրիկ  
մատուցարան: Փեսացուի կողմից եկողներն իսկույն «վեր են գա-  
լիս երեստեսանքը», այսինքն դրամ են ձգում այդ արևի մեջ՝  
50 կոպ, մինչև 5 սուրբի: Հարսնացուի կողմից հրավիրված հյու-  
րերը, քահանան ու տանուտերը պարտավոր չեն այդ նվերն  
անելու: Քահանան վերցնում է արևն հարսնացուի ձեռքից, համա-  
րում է դրամը և տալիս է հարսնացուի հորը (Աձ, X, 24): Աերես-  
տեսանքը կա նաև Վայոց Ձորում (Գարապաղյայ), որ լինում է  
նշանդրքից մի քանի օր հետո: Տղի ծնողները հրավիրում են  
իրենց մտակի ազգականներին, նաև քահանային, հյուրասերում  
են արանց մի թեթև ընթերցում և ապա արանց հետ միասին, գնում  
են հարսնացուի տունը, տանիցով իրենց հետ քաղախանջափ  
մրդեղեն, կերակուրներ և հարսնացուի համար մի ձեռք հանգրձ  
կամ մի բաղադրի և մի զույգ բոշեր: Ընթերցից հետո հարսնա-  
ցուն երեսը ծածկած նշանդրքի ժամանակ բերված «յաչուխում»,  
մի հարս ատաջնորդությունը դալիս է, համբուրում բուր հրա-  
վիրյալների ձեռքերը: Երբ նա հնոսանում է, երբեմն էլ նրա ներ-  
կայությունը, հարսնացուի կողմից մի ազգական վերցնում է մի  
արև և հրավիրում փեսացուի կողմի ազգականներին՝ հարսի  
երեսը տեսնելու պատճառով նվերներ տալ: Նախ տալիս է քա-  
վորը և ապա մյուսները (Աձ, XIII, 145—146): Շիրակում հարս-  
նախոստությունից մի քանի շաբաթ հետո թև քաղցրում և թև  
դուղիում սովորություն կա «հարսնոտես» անելու: Այս դեպքում  
հարսնացուին, բացի նշանդրքեթյան փողից ու մատանուց, փե-  
սայի ազգականները շաբաթով օսկի, արծաթեղեն և այլ իրեր են  
ընծա տանում<sup>121</sup>:

Հայաստանի այլ վայրերում երեսացտեսի սովորությունը կա-  
տարվում է ավելի բնորոշ ձևով: Վրաստանի շատ կողմերում  
հայերը սովորություն ունեն հարսն եկեղեցուց տուն բերելուն  
պես՝ ներս տանել սենյակի խաչկողարյուր բարձրացնում է նրա  
երեսի ջուլը և հրավիրում է ամենից առնանել հարսի երեսը,  
այսինքն տալ ընծաներ, ուստի այդ սովորությունը կոչվում է

երեստես կամ երեստեսուկ<sup>122</sup>, Շատ տեղերում էլ հարսը եկեղե-  
ցուց՝ պատկազրությունից դուռնալով, չի մանում փեսայի տունը  
և չի նստում, մինչև որ սկսուրը և փեսայի ազգականները չմո-  
տենան և մի-մի արծաթե կամ ոսկե դրամ տալով, ներս չհրավի-  
րեն: Գողթանում երեստեսուկ են անվանում այն ընծայարկերու-  
թյունը, որ կատարվում է հետևյալ կերպով. ատաղասի մյուս  
օրը, կանանց ճաշելուց հետո, որ տեղի է ունենում տղամարդկանց  
ճաշից հետո, նորահարսը մի կնոջ ատաջնորդությամբ գալիս է  
կանանց մոտ և հերթով համբուրում է բուրբի ձեռքերը, սրանք  
էլ մի-մի ընծա՝ մատանի, արծաթե դրամ, թելի վրա շաբաթ  
րուստեր և այլն, ընծա են տալիս նրան (Աձ, XII, 193): Ակհա  
մնջ (Թյուրքահայաստան) նշանդրքին, երբ երկու սակար-  
կությունից հետո աղջկա ծնողները տալիս են վերջնական հա-  
մաձայնությունը, փեսացուն, սրա ծնողներն ու եկած ազգական-  
ները ընծայում են արծաթե կամ ոսկե դրամներ հարսնացուին,  
օր հերթով մոտենում է ամենքին ու ձեռքերը համբուրում<sup>123</sup>,  
երեսացտեսի կամ, ինչպես ասում է մի հարաբերքի վավերագիր  
կրթումը հայերի կենցաղից, հարսնուսի ընծայարկերության սո-  
վորությունը խիստ ատրածված է եղել այնտեղ, ուստի 1826 թ.  
ատաջնորդի մի շրջաբերականով արգելվում է այդ սովորությու-  
նը. «Հարսնուսը պիտի մեծ քահայն մեկ ուսուսպի տա. և տան  
վարը մեկ աղսանուց տա, և տունս վարը մեկ հեթեթ մեծին և թե  
փոքրին ամենեկին բան մի խելա չպիտի տա ընծալ»<sup>124</sup>, Մեղրիհի-  
ստում (Թյուրքահայաստան) հարսանիքի օրը, պատկից հետո,  
ճաշի վրա աղջկա հոր կողմից եկողները, որոնց գալը չազնվելի-  
կի երթվալ են ասում, կատակի ձևով ի վարձ իրենց աղջկան  
որևէ բան են պահանջում փեսայի հորից, սա էլ խոստանում է  
իր այդին կամ տան կեղև և այլն իր ունեցածից: Տեղացիները  
պատմում են, որ հին ժամանակներն այդ տեսակ պահանջները  
փեսայի հորից չազնվելիքն գնացողները կողմեն ունենին իսկա-  
կան բնույթ. տանիքով խոստացածը բազումթիվ հյուրերի ատաջ՝  
պահում էր աղջկա հոր սեփականություն իրը գին իր աղջկա:  
Սակայն այդ սովորությունը ներկայումս իրականորեն վերանալով,  
պահվում է միայն իրրև ծիսական սովորությամբ, որ արտահայտ-  
վում է կատակի ձևով<sup>125</sup>, Սեղրիկ հայ գյուղերումն էլ նշանա-  
խոստության ժամանակ և սրանից հետո աղայի կողմից անպատ-  
հատ դրամական ընծաներ պիտի արվին աղջկան<sup>126</sup>:

Այնուհետև հիշատակելու է մի այլ տեսակ ընծայարե-  
թյուն, որ անուամ է փեսան հարսնացուին, երբ նրանք առաջին  
գիշերը մտնում են առագաստ Այդ կոչվում է բերանբացեի, որով  
փեսան, կարծես, գնում է աջջիւ կուսութեանը և նրա հետ խո-  
սելու իրավունքը, որովհետև սովորութեան համաձայն՝ փեսան  
ու հարսը նշանդրեքից սկսած մինչև այդ գիշերը իրար հետ չեն  
խոսում: Գողթանում «փեսան առագաստի գիշերը մի բնձա է սա-  
լի հարսին, իբր բերանբացեք, որ իր հնդ խոսի» (ԱՆ, XII, 134):  
Վէտան հարսերը ձրի ու էժման չեն խոսում իրենց փեսաների հետ  
առագաստի առաջին գիշերը, այլ սովորութեան է, որ փեսան մի  
լավ ու արժեքավոր գրուցեղա տա հարսին, որ առաջուց արդեն  
պատրաստած կլինի» («Արձագանք», 1897 թ., № 27, նաև ԱՆ,  
XX, 160):

Բերանբացեքի հետ սերտ աղերս ունի մի այլ ընծայարե-  
րութեան, որ արվում է հարսին առագաստից հետո, հաջորդ օրը:  
Այդ ընծայարեթյունը շատ քիչ տարբերութեամբ տեղի ունի  
և այլ ժողովուրդների մեջ և մասնավոր խիստ բնորոշ է հին  
գերմանական իրավունքում, ուր հայանի է Morgengabe (առա-  
վոտյան ընծա) անունով: Morgengabe-ի նշանակութեանը կայա-  
նում է նրանում, որ ամուսինն առաջին հարաբերութեանն ունե-  
նալուց հետո, առավոտյան մի ընծա տալով հարսին, կարծես,  
վճարում է կուսութեան գինը: Morgengabe-ն հայկական բերան-  
բացեքի հետ համանիշ նշանակութեան ունի, միայն այն փոքրիկ  
տարբերությամբ, որ բերանբացեթով փեսան վճարում է աջջիւն  
կուսութեան համար, նախքան ամուսնական հարաբերութեանը,  
մինչդեռ Morgengabe-ով փրկանք է վճարվում աջջիւն՝ որտե  
սիրերուց հետո Այնուամենայնիվ հայ սովորութեանի մեջ որոշ  
տեղերում նկատում ենք, որ, բացի բերանբացեքից, գոյություն  
ունի նաև առավոտյան ընծան: Սա գերմանական Morgengabe-ից  
տարբերվում է նրանով, որ գերմանացիների մեջ այդ ընծան  
տալիս է միայն փեսան, իսկ հայերի մեջ փեսայի ազգականնե-  
րը: Աջկիական այդ սովորութի մեջ պահպանվել են առկալին  
ստանալին հարաբերութեանների միացումները, իսկ գերմանա-  
կան ընծայարեթյունը կրում է արդեն անհատական ընծա-  
ների հարաբերութեանների բնույթ:

Վարանդայում «առագաստից մեկ օր հետո, առավոտյան շատ

վաղ հարսը վեր է կենում, ամբողջ տունը մաքրում, ալիլում,  
սպրը դռան մոտ հավաքում և իր քաշերը վրան դնում: Երբ սկե-  
սուրը վեր է կենում, մի քանի կողակ է գնում քոշերի մեջ»<sup>127</sup>:  
Չունկեզուրում առագաստի մյուս օրը առավոտյան հրավիրվում են  
հարսնատանը կանայք: Ճաշից տալի հարսը մեկի առաջնորդու-  
թյամբ ներկայանում է կանանց և համբուրում բոլորի ձևաքերը:  
սրանք գովաբանում են նրան, որ կույս է մնացել: Հետո հարսի  
չմուշիկը գնում են մեջ տեղ, և բոլոր հրավիրվածները զրամ են  
դրում նրա մեջ, որը տալիս են հարսին: Մի քանի տեղերում էլ  
խնձորի վրա են շարում դրամներ և սյնպիտ ապլիս հարսին<sup>128</sup>:  
Գանձակի զավատում առագաստի մյուս օրը «տառավոտյան հար-  
սնեւոր կանայք հավաքվում են թաղվորի տանը: Երբ բոլորը հա-  
վաքված են լինում, խաչեղբոր կենը կամ մայրը գնում է մի  
ստալմամատույցի վրա հարսի թաղը, որա վրա մի հաց և ապա  
ու արխու: Այնուհետև հրավիրում են հարսնեւորներին, որ սրանք  
նախերը սան հարսին Ամենքը 10 կույս.—5 բուր. գնում են ար-  
սեի մեջ. ամանք էլ զրամը խնձորի մեջ խրած գնում են առա-  
ջամատույցի վրա»<sup>129</sup>: Վերջապես Գողթանի երեստեւուքը, որի մա-  
սին վերը հիշել ենք, տալիս են հարսնեւորները հարսին առագաս-  
տի հաջորդ օրն առավոտյան, որով զա ստանում է Morgengabe-ի  
նշանակութեանը (ԱՆ, XII, 134):

Փեսայի, որա հոր ու ազգականների կողմից հարսնացուին  
ընծայարեթյուն անելու սովորութիւնը համատարած երեսլթ է  
դրեթի բոլոր ժողովուրդների սովորութեական իրավունքի մեջ,  
սրանք անցել են տոհմային հասարակութեան զարգացման պատ-  
րիարխատական էտապը: Այն բոլոր ընծաները, որ ստանում էր  
հարսնացուն, դառնում են նրա անձնական սեփականութեանը  
և հայերի մեջ կոչվում է շատ բնորոշ անունով արնագլի, այն է՝  
իր մարմնի, իր արյան գինը, իսկ թշուրեքայաստանի մի քանի  
վայրերում՝ սարվիս: Ուրեթն այդ ընծաները, որոնք գլխավորա-  
պես զրամական են, հանդիսանում են մի տեսակ հատուցում, յու-  
րահաստեղ գնումը կուսութեան, այսինքն կնութեան: Ակներե է  
այտադից, որ երեստեւուքը, արնագլինը և այլն ոչ այլ ինչ են,  
եթե ոչ երբեմնի հնում զործող գնման վերապրելիները:

Վերոհիշյալ բոլոր տեսակի ընծայարեթյունների (երե-  
ստեւս, հարսնես, բերանբացեք, առավոտյան ընծան և այլն)

մեջ ուշադրալ է այն սոցիալական մտնեալը, որ այդ գործողութիւններին մասնակցում են նորաստեղծ բուրգ ազգականները, նույնիսկ նրա կողմից հրավիրված համազուգուղացիները։ Այստեղ բացահայտ շեշտվում է այդ նվիրարերութիւններին համայնական բնուէթիւր, ազգակցական կոլեկտիվի մասնակցութիւնը, մի մտման, ուր ցայտուն կերպով արտայայտւում են պատրիարքատական ստանալին հասարակութեան սոցիալ-տնտեսական հարաբերութիւնները, երբ ստեմը մեծապես շահադրուած էր իր անդամի ամուսնութեամբ և խոր հնուս մասնակցում էր կոլեկտիվ կերպով իր ստանալից համար կին ձեռք բերելու գործում թէ առեանգմամբ և թէ գնմամբ։

5. ՔԵՄԱՄԵ ԱՄՈՒՍԻՆՈՒԹԱՆ ՄՆԱՅՈՒԿՆԵՐ

Վերը նկարագրած հարսանեկան սովորութիւններն ու ծեսերը հանդիսանում են վերապրուէկներ հարսի գնման երբեմին գործող սովորութեան իրավուէրի։ Մտաւոր մի շարք հայաբնակ վայրերում իրականութեան մեջ, առկալին անցյալ դարի վերջերը, կարելի էր հանդիպել, թէ ինչպէս ամուսնութեան հարցում միշտ երեան ևն պալին կնոջ վաճառքի ու գնման գործողութիւնները։ Թեև այդ գնումը տեղ-տեղ այլափոխված էր, բայց և այնպէս նա որոշակի աչքի է ընկնում իր առանձնահատուկ գծերով, որոնք սովորական են առևտրական բնուէթ ունեցող գործառններում։ Բավական է միայն այն տիրող հայացքը մեր ժողովրդական կենցաղում դեպի կինը, որ պարզ լինի, թէ ինչպէս էին վարվելու ամուսնութեան հարցում։ Աղջիկը օտարի սարսնք է՝ կամ օղջիկը ծախու ապրանք է՝—առ այն ստացվածները, որոնք միշտ հնչում էին մեր ժողովրդի բերանում և ստաջնորդում ըստ այնմ էլ իրագործել իր հայացքները։ Բուլաբուլում հարսնացուի նկատմամբ միշտ ասում են, «Աղջիկը թաշկիտի մէ է, որ պետք է ձգել ձեռաց վրա», և կամ նշանդրերի ժամանակ բարեմաղթում են. «Մեր տաննս քօ բազարից (առևտուրից)»։ Վարանդայում փեսացուի հարսնախոսները, երբ գնում են հարսնացուի ծնոցներին մտ աղջկա ձեռքը խնդրելու, սովորաբար ասում են, «Աստված աս անփոշմնեկի սովտա (առևտուր)» անի<sup>129</sup>, կազմակերպի շքանշում ժողովուրդին ասում է. «Իմ աղջիկը բարդու ձերին է, ով կարող է, թող իջեցնեն», այսինքն՝ ով

ցատ կվճարի աղջկա համար, նրան էլ կնութեան կրարվի<sup>131</sup>, Ամուսնութեանը Բուլաբուլում կատարվում է գրեթէ գնմամբ. հարսնախոսութեան ժամանակ սակարկում են, թէ որքան պետք է վճարի փեսան աղջկա համար, և այդ գումարը կոչվում է խալանի. որտ առաջին մասը վճարվում է աղջկա տիրոջը նշանալիքին, իսկ երկրորդը՝ պսակից 1—2 շարթի առջ<sup>132</sup>,

Գնման նույն երևույթները գտնում ենք Թուրքահայաստանի հայաբնակ շատ վայրերում։ Մուշի պատում գնմամբ ամուսնութեան համար վճարելը ասվում է խալան կտրել, խալան ալստեղ ունի նաև մի ալլ անուն՝ կազալ<sup>133</sup>, իսկան կամ կարն կտրել գրեթէ նույնութեամբ կատարվում է Վանի գավառում, ուր աղայի հայրը իր մերձավոր համազուգուղացիներին հետ պալին է աղջկա հոր մտ և վերջինիս պատվովոր համազուգուղացիներին և քահանայի ներկայութեամբ երկար ու ձիգ սակարկում են զխալանի մասին<sup>134</sup>, Եվ այսպէս նույն սովորութիւնը գրեթէ անփոփոխ գրանում ենք խալանի անվան առկ Ալաշկերտի<sup>135</sup>, Բայրի<sup>136</sup>, Պարտիզակի<sup>137</sup> հայ գյուղերում։ Արճեղում ամուսնութեանները գասված են առ ու ծախսի շարքում։ Այդ առթիվ բնորոշ է ժողովրդական մի երգի հետևյալ կտորը, որ աղան ուղղում է աղջկան և վերջինս էլ պատասխանում է.

«Կարմիր աղուխով աղջիկ,

Քու խորն ասա՛ թե տա ձիկ,

— Իմ խերն ինձ թնոց ա պախեր,

Գայմա մարդու չի ծախիր»<sup>138</sup>,

Գնմամբ ամուսնութեան սովորութիւն տեսնում ենք Արարատում և Քնմամբ ամուսնութեանը դեռևս գոյութիւն ունի նաև Վարանդայում, որ երեւում է նրի կտրել ձիկ մեջ, Այստեղ աղջկա ու աղի հայրերն ու բարեկամները երկար սակարկույց հետ որոշում են, թէ աղի հայրը որքան փող պիտի տա աղջկա հորը՝ աղջիկը տանելու համար։ Այս գումարը տատանվում է 20—100 ուսրբու միջև։ Մինչև այդ փողը նշանալիք աղջկա հորը, որ սովորաբար այդ օրն է տեղի ունենում, պսակը չի կարող տեղի ունենալ<sup>139</sup>։

Գնման գործողութեան իր էութեամբ մի դաշինք է, որ կապում են երկու շահագրգռված կողմերը. իսկ ամեն մի դաշինք-

քին նախագիտ կեանքում է սկզբնական համաձայնություն, որը կայանում է որևէ առնադասացյալի մեջ: Վերջինը դառնում է դաշինքի անխախտ իրականացման մի զբաղական: Ահա այս բնորոշ դիմը, որ հատուկ է առևտրական ու ընդհանրապես դաշինքների գործողություններին, գտնում ենք հարսի գնման սովորությունից մեջ: Վարանդյաում նրկար սեռ ու չէ՞ սակույց հետո, երբ վերջնական աղջկա ծնողները հայանում են իրենց համաձայնությունը, ամուսնացող երիտասարդն իր եղբոր կնոջ հետ, առնելով մի հասարակ 20—60 կողկանոց մատանի, գնում է աղջկա տունը: Փոքր ինչ խոսակցությունից հետո աղջիկը, իր երեսը բողով ծածկած, թիչ է մատուցում: Երիտասարդի հետ եկած կինն աշխատում է բանալ աղջկա երեսն ու տեսնել նրա զիզկցկությունը: Այդ համբուրում է ճակատից ու բերած մատանիին գնում է մատը: Այս ծեսը սակավան բարբառով բնի տեսնի է կոչվում<sup>140</sup>: Չանդեղություն մյն գումարը, որ վճարում են աղայի ծնողներն աղջկա ծնողներին հարսնացուի համար, ինչպես և Վարանդյանի եղի (ճանապարհ) կտրելը, կոչվում է Ելնապահ, այսինքն ճանապարհի գին, և կամ կոչվում է այլ անունով ծծազին, ժողովրդի կարծիքով այստեղ վճարվում է մորից ծծած կաթի գինը: Բացի ծծազինից՝ աղայի հայրը պարտավորվում է հարսնացուի ծնողներին ուղարկելու մի եղ կամ երկու ոչխար, 5—6 կուս գինի, կես կուս օղի, թոփ ու կես դարայի կտոր<sup>141</sup>: Հետաքրքիր է այն խորհուրդը, որ տեղի է ունենում Տաթևում—Սխիսնում աղջկա ու տղի ծնողների միջև, երբ որոշում են հարսանիքի օրը և թե որքան դրամ ու ընծա է տալու փեսայի կողմից, աղջկա տիրույթ: Այդ խորհուրդը տեղական բարբառով կոչվում է առլեանգ կամ բաշլըղ կտրել, որովհետև սակարկությունը մասնակցում են նաև երկու կողմի ազգականներից ընտրված մի-մի հավատարմատարներ՝ վախիճներ<sup>142</sup>: Իորչվում (Լոռում) հարսանիքից մի քանի շաբաթ առաջ փեսացուի հայրը քահանայի ու մի քանի մտերի անձերի հետ յոթ բողչա (կապոց) նվերներ վերցրած, գնում է հարսնացուի տուն: Այստեղ երկար սակարկից հետո հարսնացուի ազգականների հետ, վերջի վերջո համաձայնում են, որ փեսացուի կողմից տրվել հարսնացուի կողմին՝ մի խալաթ հարսնացուի մորը՝ 10—15 ուռ, արժողություն, որ կոչվում է կարմիրկից, 10—15 ուռ, դրամով ծախսերի համար, որ մնացուկ է բաշլըղի

կամ դիտարկի: Իսկ երբ փեսացուն այրի կամ հասակավոր է լինում, աղիկի շատ, մինչև 100 ուռ, են առնում, և այն ժամանակ հենց իրենք էլ այդ գումարը բաշլըղ են անվանում: Այս ամբողջ գործողությունը կոչվում է բարգյան կտրել (ԱՀ, X, 30):

Չավաթբում, երբ վերջնական աղջկա հայրը հայանում է աղայի կողմից եկած պատգամավորներին աղջիկը տալու համաձայնությունը, վերջինները գալիս են աղի հոր մոտ և խորհրդակցում, թե որքան գումար պետք է տալ աղջկա տերերին և, տեսնելով այդ գումարը, վերադառնում են աղջկա տունը: Զիշյալ գումարը կոչվում է կաղնիտի (տես ծանոթություն 66): Պետք է հիշել, որ պատգամավորները տղի տուն մտնելիս՝ ամեն անգամ հյուրասիրվում են, իսկ աղջկա տանը մինչև հաղեմասի տալը ոչ մի բանով չեն հյուրասիրվում: Աղջկա հայրը կանչում է իր ազգականներով մի քանիսին և պատգամավորների հետ նստում օդան: Պատգամավորները խոչորում են աղջկա հորը Սոռչալով, թե ինչ պիտի առնե աղի հորից աղջիկ տալու համար: Որ հրամարվում է, ստեղծվել աղջիկին իմն չէ, այս ինչին են, թող նա աղի: Սա էլ, նախապես իմանալով աղջկա հոր միտքը, սկսում է բարձրից բռնել: Պատգամավորներն սկսում են սակարկել և կանգ են առնում գլխավորապես վճարելի գումարի վրա, որ ստանալով է 30—200 ուռ, բուն միջև: Որքան աղան սիրահարած ու չքավոր լինի, այնքան հաղեմասին բարձր կլինի, այդ է պատճառը, որ չքավոր երիտասարդը ստիպված է լինում կամ պարտքի տակ ընկնել: կամ փախսքներ աղջկան: Երկար սակարկությունից հետո, որ երբեմն մի քանի օր է տևում, փոխադարձ դիմումներով ի վերջո համաձայնություն են կայացնում, և պատգամավորներն իսկույն վճարում են դրամը աղջկա հորը<sup>143</sup>:

Չավաթբի մասին մի ախալբաղցի թղթակից հետևյալն է գրում: «Ախալբաղցի գավառի հայ դյուղացին իր հարազատ աղջիկը ծախում է բախիս իսկույն նշանակությամբ, առանց մի փոքր խոչի խալթի զգալու: Ծախում է այնպես, ինչպես իր կովը, եզր, այսինքն աղջիկը տալիս է նրան, ով հարկմտի շատ է վճարում: Ես ինքս ամեն օր լսում եմ: Եվի՛ որ փարս շատ կուտամ, անոր կուտամ աղջիկու, սասնք ուղնտիկ աղջիկ ունենամ, ինչի՛ պիտի 200 մանեթ չառնեմ»: կամ թե՛ սես իմ մանչուս համար խարճեցի 400 մանեթ, հիմի ալ պարտքի տակ կըլտամ. ան ա, ինչի չէ արժեք»<sup>144</sup>:

Ոչ միայն կույս աղջիկներն են առևտրի առարկա լինում, այլև այլի կիներն ենթակա է նույն վիճակին: Այրի կնոջ տեղը որտեղ են ու սկեսրայրներն աշխատում են և նույնիսկ բռնի ստիպում են, որ սա ամուսնանա իրենց ուղած մարդու հետ, որպեսզի գլխազինը և այլ զբամական ընծաներն ստանան իրենք, իբրև այդ այրիի «տերեր»: Սրանով նրանք մտածում են նա ստանալ այն զուամարը, որ իրենք էին մի ժամանակ վճարել այդ կնոջ համար, երբ նրա հետ ամուսնացել էին իրենց կողմը կամ որդուն<sup>142</sup>: Լուսում այրի կանայք, որոնք սովորաբար մնում են սկեսրանց տանը, վերստին ամուսնանալիս, դառնում են առևտրի առարկա: Սկեսրանք այդ ժամանակ պահանջում են նոր փեսացուից այնպես գլխազին, որքան իրենք էին վճարել: այս պեղծում սեփականացնելով պահանջված զուամարը, թույլ են տալիս հարսին իր հետ տանելու հորանց տանից բերածը, հակառակ պարագայում խլում են նրանից նրա բոլոր ունեցածը և մի ձևով հանդերձով ճանապարհ ձգում» (Աձ, X, 25): Երբեմն գյուղի շքավորներից մեկը աճապին պարտքի տակ ընկնելով, մեծ դուժարով այրի կին էր գնում՝ հասնում իր «մուրազին» (Ախալքալաք Գանձա գյուղ)<sup>146</sup>: նույն երևույթը տիրում է նաև Աբարանի հայ գյուղերում, ուր ամուսնու մահվանից հետո այրիացած հարսը դառնում է վաճառքի առարկա. հանդուցյալի հայրը կամ տապրենբը աշխատում են բարձր եղանակով նրան ամուսնացնել<sup>147</sup>: Մենք ունենք նաև պատմական փաստ հայերի միջնադարյան շրջանին վերաբերյալ գնմամբ ամուսնություն մատին. իշխան Ապուղզես իր հորեղբոր աղջկան ուղարկ է կնուցյան, իսկ վերջինին հայրը պահանջում է նրանից անկարելի չափով «պարսն»<sup>148</sup>:

Ախալքալաքի գավառում էլ տարածված էր գնմամբ ամուսնությունը: Այն դումարը, որ վճարվում է փեսայի կողմից, հայտնի է գլխազին կամ թուրքերին բաշխող անուններով: Գլխազինը հատուցանում են հարսնացուի ծնողներին, երբ վերջինները գալիս են այցելություն փեսացուի տունը և հայտարարում վերջնականորեն, թե հոժար են իրենց աղջիկը տալու<sup>149</sup>: նույն տեղը սովորություն կա, որ նորավեհան հարսանիքից ստաջ քաղբի ու մի քանի մակարների առաջնորդությունով անձամբ գնում է բարեկամներին ու ծանոթներին հարսանիքի հրավիրելու: Վերջիններն այդ միջոցին, մի-մի աղյուի կապելով փեսացուի վզին,

չնորհավորում են՝ «բարի սուսորով»<sup>150</sup>, Հարսի գնման սովորությունը «բաշխող» եղանակով գոյություն ունի նաև Շիրակում: Առաջարկներն են—«100 մանեթ բաշխող, 5 հատ խալաթ, 1 թոփ Սպահանի լավ շալ, մեկ մահուզ չուխացու, մեկ լաստիկ արխալուցյու, 12 դազ դանավուզ, մեկ սյուս իսխի, այսինքն կարգադրվի»<sup>151</sup>:

Գնման սովորությունը պահպանվել է նաև Աբարանի հայերի մեծ: «Մտղների համաձայնությունն աղջիկ տալու մեծ մասամբ կախված է դալանի քանակից, դալան է կոչվում այն սուսորը, որ փեսացուն վճարում է հարսի ծնողներին»<sup>152</sup>: Գողթանում «հարսանիքից մի քանի շաբաթ առաջ փեսացուի մորեղբայրը կամ քեռայրը և կամ հորեղբայրը գնում են խնամոնց տուն, ուր հայով հյուրասիրվելուց հետո սակարկության էր մասնավոր հարսնացուի հոր հետ և վերջիվերջս որոշում, որ փեսացուի հայրը նրան տա իրեն հարսնեխալար 2 փութ միս կամ մեկ ոչխար, մեկ փութ բրինձ, 10 ֆունտ յուղ, 5 փութ հաց, 1—2 գլուխ շաբաբ և 4—5 սուրճանոց մետաքս սուփաս (արխալուի կամ չապկի կտոր) հարսնացուի մոր՝ իբր ծծապին և մեկ չուխա՝ հարբ: Երբեմն այդ բոլորը գնահատում են զբամով ու վճարում (Աձ, XII, 123), նույնն ենք տեսնում Վայոց Ձորում (Աձ, XIII, 149—150): նոր-Բայազետի գավառում հարսանիքից 2—3 շաբաթ առաջ փեսացուի հայրը քաղբի և մի քանի բարեկամների հետ գնում է հարսնացուի տուն, տանելով իր հետ մի գլուխ շաբաբ, մի փաթ յուղ, մի շալ կամ մի միլիթանացու՝ հարսնացուի մոր իրեն «կաթնագին» կամ մարմանդին, մի չուխացու մահուզ հորը՝ իրեն «ամակ հաթին» (երախտիքի վարձ): Քիչ նսանուց ու օղի խմելուց հետո ցույց են տալիս բերած ընծաները և հարցնում կամ ուղղակի առաջարկում 30—50 սուր. իբր բաշխող (գլխազին): Առաջներն այս դումարի վերաբերմամբ երկար սակարկություն էր տեղի ունենում, որ հաճախ անբավականություններ տեղի էր տալիս: Այժմ միայն ձևականություն համար շատ նշին պումար են տալիս: Վերջուպես որոշում են նաև խորակը, այսինքն թե հարսանիքի ժամանակ փեսացուի հայրը ինչ պիտի ուղարկի խնամուն՝ հյուրերին հյուրասիրելու համար: Ուղարկում էին 12 նուկի (1 նուկին = 12 ֆունտին) օղի, 7 լիտր միս, 5 լիտր բրինձ, 1 լիտր յուղ, 2 լիտր շաբաղ (չոր միզ)<sup>153</sup>: Գնմամբ ամուսնու-

Քյան մասին եղած փաստերից հիշենք նաև այդ սովորութեան առկայութիւնը Շամախու գավառում<sup>154</sup>, Կարաբոյսի և ընդհանրապես Արմավրի կողմերի չեքրեզանայերի մեջ<sup>155</sup>, Ծաղկայի (Թիֆլիսի նահանգ)<sup>156</sup> և Ջիսար գյուղի<sup>157</sup> հայերի մեջ, որոնք զաղթականներ են:

Սուք չկա, որ այդպիսի պայմաններում շատ ծանր է լինում հարսնացու աղջկա դրութեանը: Կարծես, ժողովրդի մեջ ամենքն էլ պղտւմ են այդ, բայց և այնպես հաշտութեամ են հարբը վաճառքի հանելու և գնելու իրականութեան հետ, հետեւելով ու հավատարիմ մնալով սպասելի աղաթին: Մանավանդ գիտակցում են իրենց այդ դարեր ստղակահան վիճակը հենց իրենք կանայք, որոնց հոգեկան արամազրութեանը բուռն արծազանք է գտնում ժողովրդական երգերում: Բուշաբլում, նմանապես և Ջավախքում, երբ հարսնացուին դարդարում են պակարութեան ու հարսանիքի համար, կանայք բովնում սովորաբար երգում են հետևյալ բնորոշ խոսքերը, որոնք ակնբախ ցույց են տալիս, թե կանանց ճակատագիրը որովում է առևտուրով՝ գնմամբ.

«Ձեներիկ խարեցին կուռն մի գինով,  
Ձմերիկ խարեցին թոփիկ մե շիրով,  
Ձաղերի խարեցին ջուխտակ մե ջղմով,  
Ձբուրիկ խարեցին մասիկ մե հինով.  
Ձգրամի հանդուրձ արձըկեցին՝  
Ձաղջիկ մամուց ջակեցին»<sup>158</sup>:

Նույնանման խմատ է բովանդակում նաև հետևյալ երգը, որ արբածված էր թյուրքահայաստանի մի քանի գավառներում.

«Հըմա մամս, ճըմա մամս, արի, բնջ է եդի.  
Եկած են գիս կրտանեն, բնջ են բերած.  
Բերած են ամբ ու արմբ, զըռ ու զըռ  
Պլանկնտին, մազն խարխիս, ծամ թոթվիչ,  
Ուս պակիչ, ապոյին բերած են քոլու մը.  
Մախաթ ձեր կըտուկըտա, կաննն վրեն,  
Հար քոտուքս բերան մեկ կերևա,  
Հըմա եկան տարան, տարան քաղտոջ  
Տուն զրեցին. իլափներ կերանք,  
Տերտեր եկավ. ըրեց պըտուպուտ,  
Գնաց. խը ես կտած չենք»<sup>159</sup>:

Ուշագրավ են այն խոսքերը, որ սովորաբար արտասանուձ է մայրը Գանձակի գավառում պակարութեան գիշերին իր աղջկանից բաժանվելիս. «Յի ես լաց ըլում, որ աղջիկն աս իր հոր ստիւն մնացել, որ զու մնա: Մի բուռ մտիքի ես՝ ուրիշին ենք ստիւն, պետք ա գնա: ջուրն ենք պղտւմ, պետք ա սուս կենաս, ընկնես, կրակն ենք պղտւմ, պետք ա աչքերդ խփես, մնջ ընկնես...»<sup>160</sup>:

6. ՕժտիՏ—ԲԱՏԻՆԸ:

Այն վայրերում, ուր հարսի գնումը քիչ թե շատ անարատ էր պահպանվել, գլխավորը (բաղբոյ, հաղմասի, դալան, ծծաղին) և ընդհանրապես հարսի համար վճարվող գումարն անցնում էր աղջկա հոր ձեռքը: Այլապես չէր էլ կարող լինել Գնմամբ ամուսնութեանը իր մնացուկներով ու վերացուկներով հանդերձ՝ ծաղկում էր մեր ժողովրդական կենցաղում այնտեղ, ուր նահապետական գերզատասանի կազմը կանգուն էր մնում տակավին սիրող քնատնտեսութեան պայմաններում: Հայ նահապետական գերզատասանն իր էութեամբ հանդիսանում էր ընտանեկան համայնք, որը տակավին կրում էր իր մեջ վաղուց անախնայած տոհմային հասարակութեանը բնորոշ կոլեկտիվիզմի՝ դժերը միյ ճամայնական սկզբունքի համեմատ տանուտերը, նախապետը, տան մեծը հանդես է դալիս հասարակական փոխադարձ հարաբերութեաններում իրեն ներկայացուցչի իր գերզատասանի, իրեն պատասխանատու անձն այն համայնքի, որին ինքը գլխավորում է: Օժտված լինելով իր գերզատասանի անդամների նկատմամբ անասման իրավունքով, գերզատասանի հայրը իր այդ ընտանութեան անշուշտ կտարածեր նաև իր աղջկա համար ստացված գումարների վրա, որն իրավաբանորեն գտնում էր իսկապես ամբողջ ընտանեկան համայնքի սեփականութեանը:

Բայց և մյուս կողմից արդեն գիտենք, որ յուրաքանչյուր ընձաները, ինչպես օրինակ «երեսացտեւը» (երեստեսուկ, երեստեսանք), իրեն հարսի գնման սովորութիւն վերադրուել, թեև հանձնվում էին գերզատասանի հորը, սակայն գտնում էին ոչ թե վերջինիս, այլ բացառապես հարսի անձնական սեփականութեանը, արձագիմ կամ սարմիս անունով: Նորահարսի ստացած զրամական և այլ ընձաները հարսանիքի ընթացքում, իսկ մի քտնի տեղերում նաև նշանադրութեան հանդեսին գտնում են

նրա՝ իրրև հատուկ կանացի սեփականությունը Ընդունելով ընձանքը, մանավանդ փեսայից, առաջապահ դիշերը (բերանբացիք) և նրա ազդակիցներից առաջատար հաջորդ օրը (Morgengabe) այն տիրող սոցիալ-իրավական հայացքների միջավայրում, ուր կնոջ վրա նայում էին իրրև գնման առարկայի, հարաբերականության նորին այդ ընձանքը համարում էր իր անձի, իր կուսուբթյան գնման հետևանքը։ Նույնիսկ արևմտյան բարձր պատկերավոր կերպով իմաստավորում է ժողովրդական այն հայացքը, թե այդ գումարը արյան գնով՝ կուսուբթյան արյան համար վճարած փողով է դոյացել, ուստի և միմիայն կանացի անձնական սեփականություն կարող է դառնալ։ Սա մի տեսակ անկասկածային է թվում հայրերի անկասկած (պատրիարխատական) վաղեմի սոցիալիզմի հասարակության արդիցիաներով սնված նահապետական դերպատանում, ուր ընտանեկան համայնքի բովանդակ կազմի առանցքը հանդիսանում է այդ մարդը նահապետի, տանուտերի մարմնապատկերը։ Սակայն հիշյալ հակասության զարտիքը կայանում է նրանում, որ կանացի անձնական սեփականության իրավաբանական ինքնին մի արևալիկ մնացուկ է այն զարգացմանից, երբ մատրիարխատական սոցիալիզմի հասարակությունից դիտարկություն դարձրեցավ պատրիարխատական սոցիալիզմի կազմը։ Վերջինս նոր արտադրական հարարերություններում կարողացավ խորտակել ու վերացնել մայրերի անկասկածայինը, մայրական իրավունքը, սակայն և այնպես նրա ավերակներում պահպանվեցին բնիկները երբեմնի գոյություն ունեցող մատրիարխատի, ուր կինն էր, մայրն էր հանդիսանում սոցիալիզմի կենտրոնական դեմքը։ Այդ բնիկներից մեկն է կանացի սեփականության իրավաբանականում այն չափով, ինչ չափով գա բլթում է կնոջ վաղեմի, հնազարդյան սոցիալական դիրքից, երբ ինքն էր տնօրինում իր անձն ամուսնական-սեռական հարաբերություններում այլ մարդկանց վերաբերմամբ (1, 265—267)։

Գարեբի հոսանքում սոցիալ-անտեսական պայմանների զարգացումով նահապետական դերպատանը սկսում է քայքայվել, ընտանեկան համայնքը սրբվում է առանձին անհատական ընտանիքների, որոնց վրա է խորսված դատակարարյին հասարակությունը։ Այսպես տիրում է արդեն անհատական պարզությամբ, մասնավոր սեփականատիրության բացարձակ սկզբունքը։ Այս

միջավայրում հոր իրավունքն ընտանիքի անդամների գույքի ու սեփականության, ինչպես և նրանց անձնական ինքնուրույնություն վրա սահմանափակվում է։ Ընտանիքի հայրն այլևս անկարող է լինում իր ազնվա համար գնման գումարի վրա այն իրավունքը բանեցնել, ինչ որ հատուկ է նահապետական դերպատանին։ Ոչ թե հայրը, այլ ազնվին է հանդիսանում տեր իր զլխույնի ու ընձանքի։ Ուստի ազնվին այն գումարը, որ վճարել են իր հորը իր անձի համար, տանում է իրրև անձնական սեփականություն ամուսնու տունը։ Ահա այստեղից ծագում է մեր ժողովրդագրական կենցաղում ամուսնություն հետ այնքան մեծ տգերս ունեցող բաժինը, որ մեր զբաղանության մեջ հայտնի է նաև օմիլա անունով։ Բաժինը տերինն էլ լեզվաբանական նշանակությամբ իմաստավորում է այն մոտեցումը, երբ ընտանեկան համայնքի գույքը բաժանվում է, և յուրաքանչյուր անդամ, անհատիկով, ստանում է իրեն հասած մասը՝ բաժինը։ Եթե պատրիարխատական իրավաբանական պայմաններում, այլ մարդիկ բաժանաբի զեղքում ստանում են իրրև անձնական սեփականություն իրենց համապատասխան մասը ընդհանուր դերպատանական գույքից, ապա կանայք այդ ընդհանուր գույքից ստանում են սակ այն իրերն ու գրանցներ, որոնք զոյացել են նրանց ամուսնություն հետևանքով նշանդրիքի ու հարսանիքի ժամանակ և կազմում են իրենց ֆիզիկական անձի, իրրև գնված կամ պահանջված ապրիլայի հետ սերտորեն կապված կանացի սեփական գույքը։ Ուստի կամ բաժինքի, սովորույթը բավական հին ծագում ունի։ Նա սկիզբ է առել պատրիարխատական սոցիալիզմի հասարակության քայքայումով։ Օժիան արդեն զոյություն ունեցող հուսնական ամուսնական իրավունքում քրոջ կամ քրոջ և հին հոսմական կենցաղում ծոս անուններով, որոնք նույնպես կանացի անձնական սեփականություն էին ճանաչվում։ Զին հայ պատմական գրականության մեջ էլ հիշատակվում է օժիտը և հայ գրաստանագրքերում ամուսնական իրավունքի նկատմամբ օժիտը հարցն արժարժվում է բավականաչափ հանգամանորեն։ Միջնադարյան թարգմանական հայ օրհնադրքերում օժիտ բառը շատ անգամ զործածվում է պարզա տերմինով, որը, ինչպես տեսնում ենք, փոխառված է հունական քրոջ տերմինից։ Միխիթար Գուրջոցատրում է, թե պորտյալ դասում է օժիտը և օժիտը պարզ, որ կոչի



օժիտաւ Միևնույն ժամանակ Միևիմար Գոշը հայ ժողովրդական սովորույթների ազդեցութեան ներքո՝ իր Դատաստանագրքի մի քանի հոդվածներում օժիտն անվանում է բաժին և համաձայն այդ դատաստանագրքի ձև, ձիւք և ձիւք հոդվածների (Ա. մասն) կնօք՝ անձնական սեփականութուն են կազմում հորից ստացած բաժնիքն ու ամուսնուց ստացած բնձանները:

Օժիտի սովորույթի ստատիստիկական դարգացման զուգընթաց բնզհակառակն սկսեց քայքայվել հարսի գնման սովորույթը, որ նետագա անսեսական դործոնները ճնշման տակ ալլիս չէր կարող դոյութուն ունենալ նոր դարգացող հասարակական հարմարութեաններում: Հարսի համար վճարված գլխագինն ու բնձանների գումարները օժիտի, կամ բաժնիքի գոյնալը երկարատև դարգացման պրոցես է դրամական անսեսութեանն ու առևտրական կապիտալի դարգացման պայմաններում: Ուստի օժիտի էութեանը տարբեր աստիճաններ է ներկայացնում: Մի տեղ անհոտում ենք, թե ինչպիս հարսի գլխագինն ու օժիտը միտամանակ գուզահեռ գոյութեամբ կիրառվում են ամուսնական սովորույթներում: մի այլ տեղ օժիտի արկայութունը, իր նորութեան շնորհիւ, գեռես քաղաքացիութեան չուսի: բնզհակառակը այն բոլոր տեղերում, ուր գլխագինն սովորույթը միանգամայն վերացել է, օժիտն գաղտնորը գերիշխող դիրք է բռնել ու այնքան ինքնուրույն բնույթ է ստացել, որ շատ սոցիոլոգների ճշտում են ապացուցել, թե օժիտը միանգամայն անկախ է գլխագինից ու առաջացել է ինքնուրույն պայմաններից: Այդ դատածառով էլ ժողովրդական սովորույթների բազմաթիւ ուսումնասիրական երկերում օժիտի ծագման ու էութեան մասին տիրում են այնքան թեր ու դեմ կարծիքներ:

Օժիտը կամ բաժնիքը, մերք բնզուտում ենք իբրև իրավաբանական մի սովորույթ, որն առաջացել է նախկին գլխագինն ու ամուսնութեան նետ առնող բնձանների, այսինքն հարսի գնման վճարի սովորույթից, երբ պատրիարխատական տոնալին հատարութեանն սկսեց քայքայվել ու տեղի տուլ դասակարգային հասարակութեանը, ուր վերջնականորեն տիրեց մասնավոր, անհատական սեփականութեան դարգախը: Լուսաբանները մի քանի բնորոշ փաստերով օժիտի վերաբերմամբ այդ տեսակետը:

Հին հրեական իրավունքի մեջ տիրապետում էր հարսի գըն-

ման սովորույթը: Փեսացուի կողմից վճարված գլխագինն մի մասը, ինչպես երևում է, անցնում էր աղջկա ձեռքն իբրև սեփականութեան: Այդ մասին կարելի է կողմնակի ապացույցներ գտնել Աւտովածառուչնա կոչված գրքի մի շարք հոդվածներում: Դիրք ճնշողի Ա Ա գլուխը բովանդակում է Հակոբի ու Լարանի պատմութեան այն մասնաբ, թե ինչպիս նոքա երկուսը փոխադարձ համաձայնութեան էին կապացրել, որով Լարանի հորից այն բոլոր խաշները, որոնք սորը խախտյալ պիտակ և իրալատեւրիք՝ ճնշվին, պետք է պատկանին Հակոբին, իսկ մնացյալները՝ Լարանին: Եղամ այնպես, որ մի քանի տարի անընդհատ ճնշում էին խաշներ այն գույնով ու նշանով, որ հարկավոր էին Հակոբին Աշոցիով Հակոբը հարստացավ ի հաշիվ Լարանի: Այն ժամանակ Լարանի օրգիները բողոքեցին Հակոբի դեմ, թե «եստ անկր դամնայն ինչս հոր մերոյ, և ի հոր մերոյ բնչից արար իւր դայն ամնայն փառս»: Ուստի Ռաքին ու Լիան, Լարանի աղջկաներ իրավունք համարեցին հայանել Հակոբի մոտ առաքած հրեշտակին. «Միթէ գոյ ես մեր այտուճեռես բաժին՝ և ժառանգութիւն՝ ի տան հոր մերոյ: Ոչ ապաքէն իբրև զօտարաւիս համարեալ եմք նոքա, զի վաճառեաց զմեզ՝ և եկեր ուսեալով գարծաթ մերս: Հայանի դիտնական Մայրը, լուսաբանելով վերջին այս խոսքերը իր աշխատութեան մեջ՝ «Die Rechte der Israeliten, Athenern und Römer» (Վերալիցիցիների, Աթենացիների ու Հռոմեացիների իրավունքները), նկատում է որ Լարանի աղջկաների խոսքերից հետևում է, որ սրանք իրենց հորից ստանում էին փեսացուի կողմից իրենց համար վճարած գլխագինն մի մասը: Հակոտակ դեղքում Հակոբի կանայքն ինչ հիմք ունին արտընջալու, թե իբր նոցա հայրը չուրացրել էր՝ «ուսեալով գարծաթ մերս, այսինքն նրանց գլխագինը»<sup>101</sup>,

Մասնագիտական իրավունքի մեջ հայտնի է, որ փեսացուի կողմը վճարում է հարսնացուի հորը սրողյով գլխագինն, որ կոչվում է մաիր: Մասնագիտական իրավունքի հանեֆիտական զգուցին պատկանող հայանի մի բուցարութեան՝ հեղալի մեջ խոսվում է մահրի մասին, իբրև մի վճարի, որի մեկ մասն աղջկա ճնողները դործագրում են օժիտի համար և հատկացնում են ի սեփականութուն աղջկան՝ ամուսնու տունը գնալիս: Գերմանական հին օրենսդրեցի երևում է, որ հարսնացուի հորը վճարված

գլխազնի ամբողջ գումարը հատկացվում էր հարսի օժիտին: Նույն իսկ Տախտասն իր «Germania» պատմության 23-րդ գլխում հաստատում է, թե իր ժամանակակից գերմանները, որոնք ապակվին ապրում էին անմալին պարբերաբարտական կարգերով, սովորութիւն ունեին, որ «Ինչպես փեսան է ընդուն հարսնապարտ համար գլխազնի, նմանապես էլ աղջիկն» է ընդուն փրկոյի տունը օժիտ»: Իրլանդական էին իրավունքունն էլ նկատելի է օժիտի զոյացումը գլխազնից այն փաստի հիման վրա, որ փեսացուն իր վճարելիք գլխազնի գումարը ինքստուրում էր, սակայն մեկ մասը աղջկա հորը, իսկ մյուսը հարսնացուին, իրբև նրա սեփականութուն, որ վերջինս իրբև ուսում տանում էր հետամուտու տունը: Օտերը 1866 թ. Կովիտում, երբ սեղանիան վարչական մարմինների աստիճանով ու իրենց մեկ կայացած փոխադարձ համաձայնութիւնը սրտակ էին վերացնել իրենց կենցաղում: Գոյութիւն ունեցող ֆրանսիացի սովորութիւնները, վճու էին ի միջի այլոց և այն, որ պայանհան հարսնացուի համար վճարվող գլխազնի, իրենց լեզվով՝ իրազի, մի երբորդ մասը հատկացվի օժիտ պարտատեւուն: Այդ քայլով արգեն ճանապարհ էր հարթված, որպեսզի զնամբ ամուսնութիւն սովորութիւնն աստիճանաբար վերանայ<sup>162</sup>:

Գաւանք հայ սովորութիւնի իրավունքին, ուսկից վերջւած մի քանի բնորոշ օրինակները պարզում են, որ մեր ժողովրդական կենցաղունն էլ օժիտի ու գլխազնի սովորութիւնները վերաբերելով փաստերի հոմանիշ պատկերն են ներկայացնում: գլխազնին ու օժիտն այստեղ էլ իրենց փոխադարձ ասնչութիւնը նույն նշանակութիւնն ու հետևանքներն են ունեցել:

Գանձակի զավտում այն գումարը, մասալորտայն 15—100 ուր., որ ապաի հայր իրբև գլխազնի վճարում է աղջկա հորը, կոչվում է երեսուր, կամ մի շատ բնորոշ բառով՝ պեմիքի փող, որովհետև այդ գումարի մի մասը ծախսում է հարսնացուի բաժինքի՝ օժիտի վրա<sup>163</sup>: Ընդհանրապես Գանձակի զավտում օժիտի սովորութիւնը միանգամայն նորմուտ և վերջին ժամանակներում զարգացած երևութիւն<sup>164</sup>: Վայոց Ձորում երեսուսուքից հաւաքված բոլոր նվերները հաշվելուց հետո հանձնվում են հարսնացուի հորը, որն իրավունք չունի այն ծախելու, այլ օժիտի

հետ միասին վերադարձնելու և և այդ գումարը համարվում է հարսի ասանձին սեփականութուն (ԱՆ, XIII, 146):

Ջավախքում հարսի օժիտը պարտաւսում է հաղեմուտ, սակայն ու երեսուսուսքի փողերով: Աղջկա հայրն իր կողմից պիտի չի տալիս այդ օժիտի համար<sup>165</sup>:

Վերոբերյայ օրինակներից պարզորոշ հետևում է, որ գլխազնի փողերի մի մասը հատկացվում է օժիտի համար ու գումունում է հարսի անձնական սեփականութուն: Նույն այդ բանը վկայում է զավտական մի թղթակից, սակայն՝ «Նայ գոյուպիցն միևնույն բաշարը վերադարձնում է աղջկա հետ միասին, ասանց իրենից մի բան ավելացնելու. նա օժիտ է տալիս խալի, կարպետ, գլխաւներ և այլն, նայելով բաշարի քանակին»<sup>166</sup>:

Չանկերուտան իրք խնամեղատներն ու պատշտմները սակարում են, թե որքան պետք է վճարի աղային հայրը, միտմանակն որոշում են, թե ինչ օժիտ պետք է սա աղջկա հորը, ինարկի գլխազնի համեմատ Ստեփան գլխազնի գումարը հետզհետե փոքրանում է և ընդհատուայն մեծանում է օժիտի գումարը: Մի քանի պայուսումն էլ գլխազնի սովորութիւնը սկսել է վերանայ<sup>167</sup>: Նույնն է կատարվում Վաբանդայում, ուր գլխազնի քունակը որոշելուց հետո, փեսացուի կողմն է ձայն բարձրացնում և պատնջում է օժիտ, որ չափվում է աղայի կողմից արվող գլխազնի գումարի քանակով<sup>168</sup>: Վերոբերյայ վերջին օրինակները հաստատում են, որ կան զավտներ, որ բարձր օժիտ զարգացուցիւթիւնն է ստացել և զոյութիւնն ունի գլխազնի հետ համար պր կերպով, ընդարում, եթե գլխազնին իսպառ չի վերացել, օժիտն ամբողջովին գոյանում է գլխազնից: Օժիտի ու գլխազնի այլպիսի զուգահետ ու համազար առկայութիւնը ժողովրդական կենցաղի մեջ գտնում ենք նաև Բորչալուի (ԱՆ, IX, 239, նաև իլպակց. Շուպլիբից—Արձակաւքը», 1893 թ. № 147), Նոր-Բարայտի (ԱՆ, XVII, 28) և Գողթանի (ԱՆ, XII, 135) պոյուսում:

Գլխազնի կամ բաշարի տիրապետութիւն կից օժիտի զոյացումը և զարգացումն ավելի բնորոշ կերպով արտահայտվում է իլուրքանսիքի սովորութիւններում: Բաղեւած տերող հարսանական ու ամուսնական սովորութիւններից երևում է, որ գլխազնին աստիճանաբար վերանում է ու նրա սեղը գրավում է օժիտը, որն իր զարգացման սկզբներում միշտ գոյանում է գլխազնի

զումարներից<sup>169</sup>։ Սղերզումն էլ արգիւն ուտք է գրել օժիտը, որ պատրաստվում է աղջկա հորը և աղջկան արված գրամական ընձաններից<sup>170</sup>։ Նոմանապես Վանում<sup>171</sup> և Բոււանբխում<sup>172</sup> զոյություն է ստել օժիտի, ինչպես տեղական բարբառով են ասում՝ զինեզի սովորույթը։ Վասպուրականի դուռերում փեսացուի կողմից մի հումար է արվում հարմնացուի ծնողներին՝ օժիտ պատրաստելու նպատակով։ Այս գումարը քանակը որոշելու համար՝ փեսացուի հայրը մի քանի բարեկամ մարդկանց հետ գնում է հարմնացուի տանը, ուր ճաշով հյուրասիրվելուց հետո՝ երկար սակարկում է, և վերջիվերջո որոշում են 4—25 սակի և մի քանի նվերներ տալ հարմնացուի ծնողներին ու բարեկամներին» (ԱՆ, XX, 143)։ Այստեղ ակնհեր է, որ փեսացուի նոր կողմից հարմնացուի հորը արվող դրամական և այլ նվերները բողբոջված գլխազինն է, որից պատրաստվում է օժիտը։ Ներկայումս մեջ եզկ է ժամանակ, որ ամուսնացող տղը անհրաժեշտ պիտք էր 500—1000 դրամանոց կարիքի գումար մը ունեցեն կամ արժանիքներ չունենալու շեղումներով պատրաստության համար։ Մյուս կողմին աղջկատիրոջ կրտսերի այնքան գումար մը «ջենեզի» պատրաստության համար<sup>173</sup>։

Բնչպես եզրակացնում ենք վերաբերյալ օրինակներից, շատ գումառներում օժիտը դարձել է արդեն տիրող սովորույթ, և ամուսնույցի գլխազինը, որն այդ տեղերում սկսում է վերանալ և կամ պահպանվում է իբրև մտած ծես, իր նշանակութունը կորցրած սովորույթ է ընդհանրապես, այն վայրերում, ուր, ինչպես, օրինակ՝ Միխանում, գլխազին սովորույթը տակավին անցյալ դարի վերջերս արվում էր համառ պահպանությամբ, այնտեղ օժիտի սովորույթը համարյա բացակայում էր։

XIII  
ԱՐՅԱՆ ՎՐԵՓԻ

1. ԱՐՅԱՆ ՎՐԵՓԻ ԷՆԻՓՅՈՒՆԸ

Նախորդ դուռներում արժանիքով հնագիտական ու ազգագրական նյութերը վկայում են, որ Հայկական լեռնաշխարհում ևս գոյություն է ունեցել նախնադարյան համայնական հասարակություն։ Տոմային արյունակցական ազգակցության վրա խորտված այդ հասարակության կենցաղն արտահայտվում էր

համայնական սեփականությամբ, համայնական արտոդրությամբ ու բաշխմամբ, մի կենսաձև, որն իր համապատասխան կնիքն էր գնում համայնքի սոցիալական կյանքի բոլոր արտահայտումներում, առավելապես ընտանեկան կազմի ու հասարակական հասարակությունների վրա։ Համայնական կապերն ու ազգակցական կախումն այդ պայմաններում երևան են գալիս ամեն մի քայլով խոխի, որովհետև տոմակիցները միշտ ակնատես են, միշտ իրարիկ են իրենցից յուրաքանչյուրի գործողություններին ու վարքին, հետևապես և յուրաքանչյուրը պատասխանատու է իրեն գրում իրենցից ամեն մեկի արարքի ու գործողության համար, որից կարող է սուսթել համայնքի ապստոլությունն ու տոմի շահերը։ Այդ արարքները շարքին են պատկանում տոմի ու հասարակական անդորրությունն ու կարգը, սահմանված ավանդական իրավունք խախտողներն ու սոսնձողները, որոնք մեր ժամանակակից դասակարգային հասարակության մեջ որակվում են իբրև քրեական հանցագործներ ու ենթակա են դասակարգային դատարանի վճռով նշանակված պատժական միջոցներին։ Սակայն այդպես չէր նախում այդ խախտումներին արևային տոմային հասարակությունը։ «...այս տոմական կազմակերպությունը,—ասում է Միր. Էնգելը,—իր ամբողջ մանկական պարզությամբ և միամտությամբ գոմծանալի մի կազմակերպություն է։ Ամեն բան գնում է իր կանոնավոր ընթացքով—առանց վեճիօրների, ժանդարմների ու ստաիկանների, առանց աղմուկահանության, թաղավարների, փոխորժանների, պրեֆեկտների և դատավորների, առանց բանասիրի, առանց դատավարությունների։ Ամեն մի վեճ ու կռիվ վեճում է այն մարդկանց ամբողջությունը, որոնց վերաբերում է այն, այն է՝ տոմը կամ ցեղը, կամ առանձին տոմներ հարա մեջ։ Միայն իբրև ծայրահեղ, հազվադեպ գործածվող միջոց ենթադես է գալիս այդպիսի վրեժխնդրությունը, որի լուկ քաղաքակրթված ձևն է մեր մահական պատիժը...» (ԷՐՄ, 112—113)։

Ահա արյան վրեժն է այն զերազույն միջոցը, որ գործադրում է տոմային հասարակությունն իր ամեն մի անդամի ապստոլյան համար, անդամի, որի մահով սուսթում է համայնքի անասական ուժը, վշանում է արյունակից ազգակցության բաղկացուցիչ օղակներից մեկը, հետևապես և փաստվում է տոմային կրեկտիվի հետագա ֆեդերակական աճումը ծննդաբերողից զրկվե-

լով: Փաստերը ցույց են տալիս, որ արքան վրեժը դրուելու է ունեցել բարձր այն ժողովուրդների մեջ, որոնք երբեմն աղբեր են ստանա-ցարդային կոչմով: և գոյություն ունեն ներկայումս էլ էրբև սրբազորված սովորութեան իրավունք այն բարձր հաստիաց ժողովուրդների մեջ, որոնք տակավին այսօր էլ պահպանել են իրենց ցեղական ու տոնական հասարակական կարգերը: Այս դեպքում արքան վրեժը կրում է բացարձակապես տոնալին բը-տուլի: Այսպես է քաղաքում Տը, Էնդիսը Հյուսիսային Ամերիկայի բնիկների՝ իրոնգոների տոնալին հասարակարգում տիրող արքան վրեժը. «Տոնականները պարտական են օգնել ու պաշտպանել մյուսները, հասկապես աշխօցել՝ վրեժինդիր լինելու օտարներին հասցրած վիրավորանքներին համար: Անհատը իր սպառնալու-թյունը հիմնում էր ստեղծի սպառնալության վրա և զորով էր այդ անել: ոչ փաստում էր նրան, փաստում էր ամբողջ տոնալին: Այս-տեղից, ասում էր արձանակապես կապիկից բղբում էր արքան վրեժ-ինդրության պարտականությունը, որ անպայման ընդունվում էր իրօրենքների կողմից: Եթե օտար ստեղծ անդամը սպանում էր տոնակցին, այս պատվածի ամբողջ տանը պարտական էր վրեժինդիր լինելու: Նախ և առաջ փորձում էին գործը հաշու-թյամբ վերջացնել: սպանողի տանը խորհրդի էր նստում և սպան-վածի ամուլի խորհրդին գործը հարգարելու ստանալինը էր նաևում, մեծ մասամբ որոշում էր ցավ հայտնել և արժեքավոր նվերներ առաջարկել: Եթե այս պայմաններն ընդունվում էին, այս գործը գրանով հաջվում էր: Հաջողակ դեպքում վիրավոր-ված տանը մի էամ մի քանի վրեժինդիրներ էր կաղզում, որոնց պարտականությունն էր հետագայից սպանողին և նրան էլ սպանել: Եթե հաջավում էր այս, այս սպանվածի տունն իրավունք չու-ներ դանդաղվելու: հարցը գրանով սպասվում էր» (ԷԸՄ, 100—101):

Սակայն տոնալին ու ցեղային հասարակությունների քայ-քայման ու վիրացման հետ չեն անկախում, ինչպես վրեժ անասնը, նրանք սոցիալ-անասական կազմի բաղմամբիլ երևութները, որոնք այսօրոքում ձևերով շարունակում են իրենց գոյությունը ժողովրդական կենցաղում իրեն վերապրուկներ կամ մնացուկներ: Նույնն ենք նկատում արքան վրեժինդրության մեջ: Բայց այս-տեղ արքան վրեժը, իրեն վերապրուկ, այնուամենայնիվ չի այ-տօրոքվում, չի կորցնում իր էությունը, իր հիմնական նշանա-

կությունը: Միակ փոփոխությունը, որին նա ենթարկվել է սոն-մային կոլեկտիվի քայքայումով և նոր հարաբերությունների առաջացումով, որոնք հիմնված են անհատական սեփականության գործունեիքի վրա, դա այն է, որ արքան վրեժն էլ անհատականա-նում է. նա դառնում է սոսկ տասնների ընտանիկան համայնքի, թերև և օմնապի պարտականություն: Նա դառնում է բնական անստեղծյան պայմաններում ապրող ժողովուրդների սովորու-թյան իրավունքի հիմնական սկզբունքներից մեկը՝ արյունն արյունով մալրել: Այդ սկզբունքը, ինչպես որ սրբազորված էր տոնալին հասարակության կրոնական հավատալիքներում, այն-պես էլ անխափան, թերևս ավելի աժեղ չափով պահպանում է իր կրոնական բնույթը նաև նոր առաջացած անհատական հասարա-կական պայմաններում: Այստեղ արքան վրեժի դադարվալը սերտա-րեն կապված է մեկայնիքի պատասխանելի նախ Սպանվածը եր-բև հանդիսա չի գտնի հորհրդայ աշխարհում և ժիշա շարու-թյամբ լցված կլինի զիզել յուր կենդանի ազգականները, մինչև որ վրեժը չըրթահանա, մինչև որ նրան մահ պատճառողն իր սեփական արյամբ չի մաքրի կատարած սպանությունը:

Ինչի ալ վրեժը մեր ժամանակակից կրթիկացիների vendeta-ն, կամ հին հատմացիների necis vindicta-ն, լինի դա հին հրեական gōel haddām կամ հին հունական օմնդղվածից, լինի դա հին գերման ու սլավ ցեղերի կամ մեր ժամանակակից մի քանի սլավոնական ժողովուրդների (սերբերի, սև-լեռնիցիների և այլն) ու կովկասյան բազմաթիվ լեռնական ժողովուրդների (չեչենների, լեզգիների, արթալների, ավանների, օսերի և այլն) արքան վրեժինդրությունները, ամենուր այդ վրեժը կանգուն է մնում և պահպանվում է ժողովրդի կրոնական հավատալիքներով, որոնք սրբազորվում են զարերով գոյություն ունեցող սովորույթը և սերնդից սերունդ, ազգականից ազգական պարտավորեցնում են այդ կատարել:

Ան այդ արքան վրեժն իր անհատականացած բնույթով պահպանվել էր նաև հայ ժողովրդական կենցաղում: Նա, իբրև վերապրուկ, բնորոշում է ժամանակակից հայ ժողովրդի սովորու-թյան իրավունքի մեջ տիրող այն ըմբռնումը, որ այնքան հա-տուկ էր երբեմին գոյություն ունեցող սոնմային հասարակու-թյանը: Այդ իրավաբանական դալիս է վլայելու ու հաստատելու

այն մեր գրույթը, որ Հայկական լեռնաշխարհի արխանդի սո-  
ցիալական ու տնտեսական հարաբերութիւնները կրում էին  
տուն-տնիկային բնույթը:

2. ԱՐՅԱՆ ՎՐԵՓԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏՄԱԿԱՆ  
ՏՎՅԱԼՆԵՐ

Արա Գեղեցիկի ու Շամիրամ թագուհու հարաբերութիւնները  
տառապելական պատմութեան մեջ նկարագրվում է, թե ինչպիսի  
Նինիանի այդ թագուհին ու՛ ու զողի մեջ է՛ ընկնում Արայի ըս-  
պանման պատճառով: Եթե ի զողու միւս անգամ զորացն Հայոց  
ի մարս պատերազմի ընդ տիկնոջն Շամիրամայ, Էիմախնդիր լինել  
մահուաճԱ Արայի՛ սաւ: «Շրտմայցի տառուածոցն իմոց լիզոււ ըզ-  
վէբս նորա, և կենդանացին»<sup>174</sup>: Հայերի՛ իրենց նահապետի համար  
վրիժառու լինելը զրդել էր թագուհուն խորեքայութեան զիմիւր:  
Ինչպիսի ավանդութիւնը պատմում է, երբ Արայի հարութիւնը  
հառապելներին օգնութիւյամբ չէր իրականացել և երբ զիսկն արդեն  
նեկովի էր, Շամիրամը հրամայում է հազցնել իր մտիկ մարդ-  
կանցից մեկին, որ շատ նման էր Արային, վերջինից հոնած  
շորերը և սպա ցույց տալ զըզոված ժողովրդին: Այդ միջոցով  
խորամանկ թագուհին կարողանում է հանգստացնել վրիժառու  
կրքերը: Այստեղ, ինչպիսի ակներև է, վրիժառուն ոչ թե մի անձն  
է, օրինակ՝ որդին, եղբայրը կամ մի այլ մերձագույն ազգականը,  
այլ ամբողջ ժողովուրդը: Հին պատմական շրջանը, որին վերաբը-  
րում է Արայի վեպը, տունային նահապետական կազմ էր ներ-  
կայացնում: Երբ տունի անդամներից մեկի համար վրեժ էր առնը-  
վելու, անշուշտ, այդ պարականութիւնը մանրանում էր ամենա-  
մտիկ ազգականի վրա, բայց և տունի մյուս անդամների արտա-  
զան պարտքն էր իրենց զործակցութեամբ օժանդակել վրեժխն-  
դիք տունակցին: Մակայն երբ վրիժառութիւն էր պահանջում  
նահապետի կամ տունի ավագի մասը, այս զեպտում վրեժ էին  
լռածու տունի բոլոր անդամները միասին, իբրև այդ նահապետի  
ավագի արևնակիցներ, որոնք սերված են մի ընդհանուր նահա-  
պետից: Ահա այս տեսակ համայնական վրեժ է պատկերացնում  
հին հայ ժողովրդական վեպը, որի մեջ արտացոլել է տունային  
կենցաղի բնորոշ գծեր և որին Մովսես Սորենացին, ըստ իր սովո-  
րութեան, տալիս է պատմական զուեմպրում:

Մի այլ տեղ նույն Մովսես Սորենացին պատմում է, թե  
հայոց թագավոր Սորոսը «և նոյն հետոյն միաբանեալ զզորս  
Հայոց, անցանէ ընդ լեռանն մեծ, վրէժս պահանջելով զմահուան  
հօրն» (գրքբ Բ, գլ. 46): Վրեժխնդրութեան ձայնը թելադրել է  
Սորոսին պատերազմի գնալ խաղաբների ու սարմասներին  
զեմ որոնք սպանել էին նրա հորը: Սորոսին այդ վրեժն տվելի  
անհատական բնույթ է կրում: Նա հանդես է գալիս իբրև անյա-  
նակ անձն, թեև այդ վրեժը նա կատար է անում մի ամբողջ ժո-  
ղովրդի դեմ և յուր զորքի միջոցով:

Նման օրինակ գտնում ենք Փալստոս Բուզանդի Պատմու-  
թեան մեջ Մուշեղ Մամիկոնյանին վերաբերմամբ: Եթե Մուշեղ  
զորավարն Հայաստանեաց շրջէր ընդ երկիրն, և աւերէր զաս-  
որշադուն Մաղղեղանցն, իսկ զՄաղղեղունն, որ մի անգամ ի բուռն  
արկին՝ զամենեստան սայր հրաման սպարապետն Մուշեղ ունել  
և հրով խորովիլ և... զբազում պատուաւոր տեսոր՝ որ պատուականը  
էրս անախն թագաւորին պարսից՝ ունել ձերբակալս Մուշեղ և  
սայր մորթիլ և ընուլ խտով և կանգնել ի վերայ պարսպացն: Ընդ  
բազում տեղիս զայս առնէր [Մուշեղ] ի վրէժս իրոյ վասակայ-  
(գլ. Ե, գլ. Ա): Իսկ Վասակ սպարապետ Մամիկոնյանին պարսից  
նապուհ թագավորը, նենգութեամբ զերկով, հրամայել էր սպանել  
և զմորթն հանել և ընուլ խտով, և տանել ընդ նոյն բերդն յԸնդ-  
միջն՝ որ Անյուշն կոչին» (Փալստոս Բուզանդ, զպր. Գ, գլ. ԾԳ):  
Վասակի որդի Մուշեղը վրեժ էր առնում նույն եղանակով  
սպանելով պարսից մեծամեծներին

Երբ սպանվածը որդիք չունի կամ նրանք անչափանա  
էին, այն ժամանակ վրեժխնդրութեան պարականութիւնն ընկ-  
նում էր նրա եղբայրների, կամ հոր և կամ մի այլ մերձավոր  
ազգականի վրա: Այսպիսի վրեժխնդրութեան օրինակ գտնում  
ենք Միքայտ պատմագրի մոտ: Եթե թուրք Ռմի սպանու պարոն  
Ստեֆանէ կորալը պարոն Թորոսի նենգութեամբ սնորէն Տու-  
կին Համուսին, որ ձայնեց զնա սիրով, և բունցին և խաչցին  
ի պղինձն: Եւ մնաց Ստեֆանէի երկու տղայ Ռուբէն և Լեւոն:  
Իսկ եղբայրն նորա պարոն Թորոս և պարոն Մէն զայրացեալ  
յնոց զործ նոցա առին վրեժ արեան Արամ կազարապատիլ յա-  
ւելուածով:<sup>175</sup>:

Սակայն վրեժխնդրութիւնն ազգակցութեան մեկ աստիճա-

նով չի վերջանում: Նա անցնում է սերնդից սերունդ, հայրերից՝ որդիներին, թոռներին և այլն: Մասնագրականների իրավաբանը՝ մտքի վրեժխնդրության պարտականությունն անցնում էր մասնազարթոթ միանկ սր անդամ սերնդից ոչ մի ներկայացուցիչ չէր մնում, սրն իր վրա վերցնե՛ր այդ պարտականությունը<sup>176</sup>: Նույնն էր ժամանակակից կովկասի լեռնականների՝ օսերի մեջ<sup>177</sup>: Հարուստան սովորությունը պայտվելուն էր բռնեցել նաև հայերի մեջ, ինչպես այդ ակնբան է՝ Մժբատ պատմագրի հիշատակած մի փաստից: «Ճանաչում բարեպաշտ պորոն Քորոս, և ասէ. «Ս դուք որ դայք հզօր և զօժեալ թագաւոր սպանիք, ինչ պայտեան սոսյք Հայոց ազգիս»: Էստ կան մի՛ ՚ի ձեռն, զնայ հաւաքս, եւարկ զնա՛ ՚ի զուէն և ստատկեաց: Յայնժամ գոհացաւ պորոն Քորոս զստեանոյ, որ այժմանի արքա զյնքն առնալ ՚ի նոցանէ զվրեժ արմանն՝ Կազիպ, բռնդի մեծ հայրն Յարս Ռարին յիշխանացն Կազիպ էր»: (Անդ, էջ 77): Այլուհան վրեժատությունը գործողությունները, որոնք անցնում էին ժառանգաբար, սակայն էին շեղում հակառակ կողմից՝ նոր վրեժխնդրություններ: Եվ նաև ծագում են մի շարք վրեժխնդրությունների պարտականություններ, որոնք երկու լանդերին համապաշտ արում էին իրար զմե, թշնամությունը բորբոքում, որ պատրաստ լինեն ամեն մի բողոքի իրենց ստիպներին չարիք հասցնել, մի կերպով վրեժի ծարավը հագեցնելու Համեմակն պատմագիր Տակիտոսն իր «Germania» պատմությունում մեջ, նկարագրելով հին պերսիանների տանձախնէ կենցաղը, ի միջի նայլոց ավանդում է, թե վրեժխնդրությունը նրանց մեջ անսասանն է և անցնում է սերնդից սերունդ, inimicitias seu patris, seu propinquus suscipere necesse est (դր. 21): Այդ տեսակ վրեժխնդրությունն պահպանվել էր նաև միջնադարյան պերսիանների մեջ քնորոշ փեհմ անունով<sup>178</sup>:

Անցնելով հին հայ սովորութեան իրավունքին, այստեղ նկատում ենք փոխադարձ վրեժխնդրության զեպչեր: Իբր ցարստուն ապացույցն է հայ նախարարական-Ֆեռզական տանների հարաբերականությունը պատմությունը, ուր բռնեցում էին արյունով վրեժատություններ և սևում էին երկար ու ձիգ տարիներ սերնդից սերունդ:

Մեզ հասել է խիստ ուշադրավ մի հին վկայություն, որը միանգամայն հաստատում է հին հայերի մեջ գոյություն ունեցած

արյան վրեժխնդրությունը բառիս իսկական ասումով և այդ սկզբունքը պաշտպանվում էր նույնիսկ դատավորների կողմից: Եղևացի ասորի Բարդասանը պրում է. «Նայերի ու պարթևների մեջ մարդապանները դատապարտվում են երբեմն դատավորների երբեմն սպանվածի ազգականների (տանիկների) կողմից, ի՞նչ մեկն սպանե իր կիներ, կամ իր անդամակ եղբորը, կամ անտրի ջրոջը կամ սղչկան, ոչ սքե կողմից չի ամբաստանում» այդ երկրենիքում սիրյալ զբնջների համաձայն<sup>179</sup>: Մարջան մեր նշնիկ կողմիցի մասնագիրն էլ ասելու է իր ժամանակվա հայերի (Ծարգ պար) մեջ ծագող վրեժխնդրության մասին հետաքրքիր տեղեկություններ: «Ճեսուն»-ը բն թագաւորն զիբոյ օրինոյ վրեժս կրեմանջէ, և զսահանջամը վրեժսուն զվրեժսն կարճէ, և դատաւորն զդրոն և զսակազին պրկէ և քրքէ վասն զլիսասակարութիւնն ՚ի միջոյ բանայոյ, և հայր զորդի զօնեայ մասնապատել զտատարաց մասնէ, և այլն ամենեւեամ զերբաքանչիւր զօնն իւր զանարգանաց վրեժս պանակնմ կամ անանար կամ իշխանե՞» (դր. Ա, ԺԵ): Ըստիպանց կարևոր են մեզ համար հայ մեծահնարի վնջընէ խոսքերը, որոնք հաստատում են այն, ինչ որ ստորի Բարդասանն է վկայում ավելի հին սամեմակների մասին: Իրավունքի, դատաստանի իրականացումը կախված էր բացառապես անհատի ինքնուրույնությունից, սեփական ձևաներեցությունից: Ուստի նշնիկ կողմացին շեշտում է, թե «անարգանց վրեժս պահանջն կամ անձամբ», այսինքն ինքը սուսողը պետք է սեփական ուժով, ինքնուրույնությամբ ձեռնամուխ լինել, որպեսզի իր կրած թե ընչպիսի և թե մարմնական վնաս բավարարի և ապա պատմի նմխարկի հանցավորին. և «կամ իշխանօք», այսինքն զիմն դատավորներին: Վնջըններն էլ, անշուշտ, հարմարվելով սիրյալ սովորություններին, միայն կատարելու և հաստատելու էին այն, ինչ որ անկող էր հակառակ պարագայում և ինքը սուսողը՝ վրեժխնդրության սկզբունքին հավատարիմ մնալ: Թե որքան հավատարիմ էին մնում այդ սկզբունքին և որ աստիճանի էր ասրածված վրեժխնդրությունը, զարացահայտ է ներսես Ծարսալու «Լուչահարականից»: Ինչ որ Ծարգ դարում բնական ու օրինական էր նշնիկ կողմացու համար, 12-րդ դարում արդեն սպորտի է թվում «Մի առ բարկութիւն շորձելով և ոչ ուղղադատ իրամօրք, կամ իրառ ինչ ասնք

մարդոջ կամ մահու զձեռ տայցէք. քանզի նոր օրէնք ոչ հրամային գալստսիկ, և հին օրէնքն թէպէս և հրամայեն, բայց ոչ վարդապար, այլ ըստ յանցանայն արժանաւորութեան զլեւաքանչիւրան դատել ՚ի խրատ... Իսկ եթէ առանց օրինաց զատիք զմարդիկ անիրաւարար ՚ի սպանումն և ՚ի խրատ, զխառնք հաստատուն, զի խնդրելոց է ՚ի ձէնջ ստուռած յաւուրն դատաստանի զարիւն սպանելոցն և զհատույ անդամ իրաւորոցն... Եւս զանչ և պատուիրան աւանդեմք ձեզ, մի լինիք վրիժաուք և քինախնդիրք» (Ելմիածին, 1865 թ., էջ 103):

Դատակարգային հասարակութեան մեջ, ուր արդևն զործում է պետական կազմը, արյան վրեժխնդրութեանը ենթարկվում է որոշ սահմանափակումներ. միջոցներ էին ձեռնարկվում սանձելու նրա ծախսումը: Այդ նպատակով սահմանվում էին որոշ առնական օրեր կամ շաբաթվա մեջ հատուկ օրեր (Gottesfreden), երբ արգելվում էր վրեժառուցելուը, նաև որոշ վայրեր՝ քաղաքներ, սանձարներ և այլն, վրեժխնդրութեան զործողութեանները խափանելու համար, այսպես անվանած ապաստանի իրավունքը՝ Asylrecht, իսկ արեւելքում՝ բեստը: Այդ միջոցները սրբութեամբ ու անպայման պահպանվում էին, հնարավորութեան սալով վրեժխնդիր սուրխների ծարավը որոշ ժամանակով զաղարեցնելու: Եթե վրեժխնդրութեանից հալածականը փախչում և սպաստանում էր այդպիսի մի տեղ կամ այդպիսի մի անձի մոտ, վրեժառու հետապնդողն իրավունք չուներ նրան ձեռք տալ: Քանի որ վրեժխնդրութեանը էր սպաստանի իրավունքը, նմանապես, եթե վրեժ արգելած օրերը վրեժխնդիր հակառակորդներն իրար հանդիպեին, իրավունք չուներին միմյանց վրա ձեռք բարձրացնել: Ապաստանի իրավունքը շատ զարգացած էր հին իսրայելացիներին, նաև հին ու միջնադարյան գերմանացիներին մեջ, էլ չենք ստում հին հռոմեացիներին և հույների մասին: Ահա այդպիսի մի սպաստանի մասին հետքեր ենք զոնում Հայաստանի հին պատմութեան մեջ: Շատ շուտ ժամանակա շինեաց իւր արքայն (Արշակ) դատակերտ մի ՚ի կող դաւառայն եւ եւ հրաման ընդ ամենայն պատուս իշխանութեան իւրոյ, և հրամայեաց կարգով քարոզ ընդ ամենայն տեղիս աշխարհացոյն, և զամենայն կողմանս գաւառաց իւրոց լի առնէր հրամանաւ արքունի, զի եթէ ոք ումեք ինչ պարտիցի, եթէ ոք ուրուք ուստեք ինչ վնասուլ իցէ, կամ

որ ումեք ինչ զատ պարտիցի, ամենեքեան կեկացեն ՚ի դատակերտն շինեացիս: Երկ արիւնհանալ ար իցի, կամ վնաս ուրուք արտելու իցէ, կամ զկին ուրուք տարելու իցէ, ... կամ ոք յումեքի կրկուգած ինչ իցէ, և կեկացէ յայն տեղի, որս և իրաւունք մի լիցին»<sup>180</sup>, Նույն այդ վնասի մասին գրում է նաև Մովսես Խոփնացիին իւր Հայոց Պատմութեան մեջ (գիրք Ք, գլ. Ին): Մակայն այդ երկու պատմագիրները բացատրական գումարով են ներկայացնում Արշակ Թաղապարիցի յայդ հիմնադրութեանը, անվանարկելով այդ իբրև մի ժողով մարդկան մեղաւորաց» (Մովսես Խոփնացի) կամ զվասն այսրիկ զամենայն մարդ հառաչելով վայելին, թէ իրավունք մեռան» (Փալատուս Բուզանդ): Նկատի աւանելով հայ հին պատմութեան մեջ հոգեւոր ու աշխարհիկ տիրապետողները զարեւոր մրցակցութեանը, որ իր զարգացման համար էր հասել այնպիսի տիրապետ անձերի միջև, որպիսիք էին Արշակ Բ. և Ներսես Մեծը, հասկանալի կլինի, որ պատմագիրները միանպատակ միտաւնաւոր զույներով էին ներկայացնում Արշակալանի հիմնադրումը: Այդտեղ նրանք միայն սեռնում էին, թե ինչպես ուղղում են զրկել ու խլիկ հոգեւոր իշխանութեան ձեռքից դատ ու գաւառաստանի իրավունքը: Մինչդեռ Արշակալանի հիմնարկումը, չընայած սուղ պատմական տեղեկութեաններին, իր այն նպատակով ու թաղապարի այն կողով, որ նսնծացնելու և վարակակեկելու գիտավորութեամբ հիշատակում են մեր պատմագիրները, հիմք է տալիս կատարու, որ զա ոչ այլ ինչ էր, եթե ոչ սպաստանի իրավունքի իրագործումը: Արշակալանը մի վայր էր, ուր երկրի ամեն կողմերից բոլոր անձինք կարող էին ազավիսի իրենց վրիժառուներին, հալածողներից և հետապնդողներից, ըստ երևույթի միայն անտի գաւութեան ունեցող սովորութեան իրավունքի համաձայն:

3. ԱՐՅԱՆ ՎՐԵՅԻ ԳՈՅՈՒՅՐԱՆ ԱՉՄԱՐԴԱԿԱՆ ՏՂԱՎԱՆԵՐԸ

Վերը սեռութեան տանված պատմական տվյալները հաստատում են արյան վրեժի զոյութեանը հին հայերի մեջ և նույնիսկ ազատ կերպով ներկայացնում են վրեժի զարգացման պատկան տատիճանները: Մակայն արյան վրեժի վերապրուկները տարբեր ձևերով մինչև անցյալ դարը վերջերը պահպանվել էին հայ ժողովրդական կենցաղում, ուր կենդանի էր մնում ճարտար

արյունով աննկուշ գազափարբ Այդ մասին բազմաթիվ անդե-  
կուսթյուններ են հաղորդում հայաբնակ վայրերի գավառական  
Քրիստիկոսները մեր պարբերական մամուլում: Արյան վրեժի  
սովորույթն առանձնապես կենտունակ էր Ղարաբաղի, Ջանդե-  
ղաբի, Ղաղախի, Գանձակի գավառներում<sup>151</sup>, Տաթևի շրջանում,  
ինչպես և ամբողջ Ջանդեղուրում, որպեսզի մարդասպանը կար-  
դանա ճողոպրել վրեժատուից, պետք է խմի սպանվածի արյունից  
մի բուռն կամ սպաստի իր շապկի օձիքը, հակառակ դեպքում  
սպանվածի արյունը նրան չի թողնի ոչ մի քայլ անել: Այդ  
նույն հավատալիքն ու սովորույթը գոյություն ունի Բազրե-  
վանդի հայերի մեջ<sup>152</sup>, նմանապես Տաթևի շրջանում, երբ անհայտ  
է սպանողը, սպանվածի արյունն ազետոր եփում են եռացրած  
ջրում աշխ հավատով, որ սպանողը բնազդորեն կմոտենա եռա-  
ցող կաթնառնին: Այսպիսով կարծում էին դանել սպանողի հետքն  
ու սորյունն արյունով աննկուշ<sup>153</sup>:

Նշված օրինակներում տեսնում ենք ժողովրդական այն  
հավատալիքը, որ սպանվածի արյունն օժտված է մողական  
ուժով. այդ ուժը կարող է բռնել, հարածել սպանողին, սքը միայն  
նրա արյունը խմելով, իր մեջ ընդունելով նրա ուժն ու մողական  
ազդեցությունը, կարող է ապավել մեկայլի հալածանքներից:  
Սակայն նա այնուամենայնիվ չի կարող աչատվել սպանվածի  
ազգականներին վրեժից, որոնք նույնպես կարող են հալածվել  
սպանվածի հողու հողմից, եթե նրա արյունն արյունով չառնեն:  
Ուստի սովորական էր, որպեսզի կարելի լիներ խուսափել սպան-  
վողի ազգականների հետագնդաբանից, որի վտիճանն անուշա  
լինելու էր սպանողի մահը, վերջինս դիմում է սպանվածի  
ազգականներին, թողություն խնդրելով: Այս դեպքում անդի է  
ունենում որոշ ձևականություն, որի մեջ պարփակված է  
այն գաղափարը, թե սպանողի կայնը սպանվածի հարգասանե-  
րի ձեռքին է: Ուստի նա ներկայանում է նրանց, պատկերացնե-  
լով սխմվովի ձևով իրեն, իբրև մահացած: Բազրեանդում հնա-  
վանդ սովորություն էր, որ սպանողը, իր փոքր երեխաներից  
մինը գրկելով, դնում էր սպանվածի սուռնը, երեխան իր երկու  
բաղուկներով լրա պառկեցրած, երեսը դեպի երկինք զարժած, նա  
գիմում է սպանվածի ազգականներին. «տես ես մի հատ սպանե-  
ցի, զուք մեկի անդ երկուսը սպանեցեք»: Ավելի բնորոշ է արյան

վրեժի սովորության տեսակետից՝ թողություն խնդրելու հետևյալ  
ձևը, որ նույնպես Բազրեանդումն է կատարվում, «Ավելի սովորու-  
կան է հայերի մեջ պատանք անելը, դնու սպանվածի թոճերի սիլը,  
ավ դուռն մաս է լինում, ական վրա նստել ու անել ու մեղք  
կնեցի, զեղ արունք իմ վրեց ցեղեցի. մկա եկերեմ ցիր դուռն շան  
պես գնկել թալեր եմ, ձեր օճախի դուռ, մկա կուզեք սպանեք, կուզեք  
սպառ կնեք: Տան շրջը կասե հարսներին, հարսներ, արունք մեր  
եկգով. մկա մեղք մեր հաց չհարթենեք, ուրիշ արունք բնրինք մեր  
գլուս. ար էրուսիք ասածուց թնդ զանի: Հարսներ կամ կիներ  
պատանքցու կառվ կհանեն սպանողի անեյի սակնի, կը ձևեն  
չապիկ: շուտ մը կը կարեն, կը հարցնեն, իբրև աշխարհ նոր ծնած  
ե իսյլ կըտան (ապառ կարձակեն)»<sup>154</sup>:

Սակայն արյան վրեժից պատվելու նպատակով թալություն  
խնդրել ավելի հաճախ կատարվում է միջնորդների օգնությամբ:  
Միջնորդները նախապես կհասնեն, կառնեն սպանողը, կասնեն  
սպանվածի սուռնը: Սպանվածը ուղղակի կհրեթա. կնստի թոճերի  
վրա, իբրև մի սուրբ վայր, և կասե, «Ջընկի ձեր օճախն եմ թալի:  
կուզեք սպառ կնեք, կուզեք սպանեցեք: Սպանողը կարձ կը-  
խտի: չի կարող արտատանել ակնին, այլ նրա կողմն միջնորդ-  
ները կը խոտեն: Սպանվածի անեցիք համաձայնություն կըզան,  
կը ներեն և իսյլ կըտան: Այս սպարաբառում սպանվածի անեցի-  
ները պայման կըզանեն, որ սպանողը սպանվածի զերեզմանի  
շուրջը 7 փամ շրջան անե, որպեսզի սպանվածի մեղքը սպա-  
նողի վրին ընկնեն (ibid.): Երբեմն էլ սպանողի վրին չվան ան-  
ցուցած, եկեղեցի կըտանեն, ապա սպանվածի ախրջը հայտնում  
էր, թե՛ ճոթ արունք ակնն եկեղեցին է, չվանն ես վրին, կամ  
պետք է ներես, կամ պիտի խեղդես: Սպանվածի անեցի կըզվի  
եկեղեցին, չվանը կարծախի, նրա երեսը կընամբուրե. նա ես նրա  
ձեռքերը կընամբուրե: Երբեանքն ես ավետարանն ու իսյլը համ-  
բ ուրելով կըմեկնին (ibid.): նույնիսկ այն դեպքում, երբ մարդա-  
սպանը վարչական մարմինների կողմից պատժի է ենթարկվում,  
ա նույնուամենայնիվ չի կարող ապավել սպանվածի մերձավոր  
ազգականներին արյան վրեժից: Այդպիսի դեպքի մասին պատ-  
մում է Ս. Հայկունին Բազրեանդի հայ կենցաղից. Ակուն (սպանողը)  
յանտես դուրս գալով, եկավ Ափրիկի (սպանվածի) զերեզմանի  
մաս, վրեց շրթա անցուցին, կուցավ չորքտանու համ, ձևով



ու ոտով թափելով գերեզմանի բուրբը 7 անգամ շրջեցավ-  
յուրաքանչյուր անգամ շրջան կատարելուն՝ սպանվածի աեքը  
կընարցնեն. «ցավուք զատաստանին ըսգոր մեղք քո վիշ եղին»-  
նա եւ պատասխանում է, «է՛ն, ցավուք զատաստանին, իբր  
մեղք եմ վիզն եղին», այսպես կրկնվում է 7 անգամ գերեզմանի  
բուրբը շրջան անելով (ibid.):

Վերորբրյալ սովորութիւնները նույնութեամբ գոյութեան  
ունեն նաև Զիթնուում<sup>186</sup>: Այստեղ վրեժառուցիւթունը, որ բավա-  
կան անարատ է պահպանելու կրում է միանգամայն տոնմային  
րնուէր: Ապստուծական զեղեցիկները սպանվածի ազգակիցները  
պատրաստ են միշտ պատասխանել նույնպես սպանութեամբ ու  
այգլխով հագնեցնել տոնմային վրեժի պարտականութիւնը  
Տոնմո-ցեղային վրեժխնդրութեանը սովորական երևույթ է նաև  
Մոսքի հայերի մեջ: ՍԵՃԱՍ պահպանող մի ցեղի սերունդը իրենց  
բնական անբրի բաժանման առթիվ մի առավոտ կալում էին  
փայտերով, սուր ու դմբոցով, և կռիվն աշնքան էր արագցել որ  
շատերի ջարդով գլուխներէջ, կտորված ճակատներից արյուն  
էր հոսում. միջամտողները նրանց իրարէջ հեռացրին և կռիվը  
առժամանակյա կերպով խաղաղվեց: Կեօրին երբ ամենքը վերա-  
դառնում էին ճաշելու, նույն անգամ նույն մարդիկ էլի կռիվ  
էին սկսել. այս անգամ կալողները ավելի շատ էին, և ուրիշներ  
էլ շատ կային խառն. նորից դուռն էր ջարդվում ու արյուն հո-  
սում: Երբ հարցնում էի, թե ինչու այնպես չկարողացան հան-  
դըստացնել, որ այդ կռիվը նորից չսկսեր, ինձ ասին. այս ուրիշ  
կռիվ է: Ի՞նչ կռիվ է. օճակն կռիվ: Այս անգամ առավոտ ցեղա-  
կից կալողները միացած իրենց հարեան մի ուրիշ ցեղի (գարձյալ  
հայ) դեմ էին կռվում: Ինձ հակայցրին, որ օտարի հետ եղած  
կռիվը վերջացնելուց հետո՝ իրենց միջի կռիվ է վրեժը՝ վրեժ-  
ցեղի ու օճակի պաշտպանութեան մեջ մեր իրարու դեմ ունեցած  
թշնամութիւնը լուծւմ էր<sup>186ա</sup>:

Այլ միայն սպանութեան, այլ և անձնական կամ ընտանեկան  
ընդհարումների զեղքերում, երբ հակառակորդների կրքերը հաս-  
նում են թշնամականի, ծագում է վրեժխնդրութեան սպանանքը  
Այստեղ վրեժխնդրութեանը կարող է արտահայտվել ոչ միայն  
սպանութեամբ, այլ և այնպիսի միջոցներով, որով հակառակորդ-  
ները ձգտում են միմյանց նյութական վնաս պատճառել, անձնա-

կան պոտիվը վրեժավորել և այլն. վրեժառուցիւթան այսպիսի մե-  
ջոքը միջոցներ է թվում Ալլահվերդյանը գեթիթուցիները կենցա-  
ղից. ՍՐԵԼ է վեժի առթիվ հակառակորդներից մեկը գիշերով  
գազառողի մշուսի տունն է մտնում և նրա քնած ատեն դուռը  
զնդկարով հրացան մ'արձակելու ջափ վառող բարձինքով կրկնել  
տես և ընդ փռւյթ կըհեռանա. սա առավոտյան արթնանալով  
կրտսնի ու կ'երկնչի, նշանակութեան սորա է. ահա եկա քովդ և  
ամեն միջոց ունէի քեզ սպանելու, բայց չըրի. դադար ուրեմն և  
զու այլես ի՞նձ հակառակիւ. և եթե հակառակորդն քան զատա-  
ջինն գրբավորացույն լինի, իրար հանգիպած ատեն զինուք կը-  
կտուին:—Նույնպես հակառակորդաց մին գիշերով եկեղեցու բակին  
դառալը կըգողանա և կըտանի թշնամույն դուռն ի վեր կըկանգ-  
նեցնեն. սա սպանելիք մ'է, որ կընշանակե՛ ջգրեջ դաղաղի  
վրա կըհանե՛ծ (կապանե՛ծ): Երեկոյին սկսյալ մինչև կես գիշեր-  
իրարու տուն կըքարթե՛ն: Տանիքի վրա գտնված լոյ քարերը  
բարձր տան մը վրային թշնամու տանիքի վրա կընեան, որ-  
սաստաղի ձողերը կըկտորել: Մինեկույզքն, ուր հող կամ փայ-  
տի շինված են՝ կըփուլցնեն: Ժամը 12-ին կամ անկե վերջն եթե  
իրարու կնձ հանդիպին՝ դիտույն և երեսին ծածկոցը կամ հակ-  
ան ոսկին կըհափշտակեն: Իրարու այդի մանելով որթները կըկտո-  
րեն՝ արժանից: Այդից մեջ գտնված ատենը կայրեն ևզին-  
ձին, ջրիին, իշուն ասին կամ ականջը կըկտորեն: Եթե հակառա-  
կորդաց մին ջաղացք ունի, ջրի ընթացքը կըխափանեն և այլն: Այս  
վերջին տեսակի վրեժառուցիւթունը, որի նպատակն է հակառակոր-  
դին նյութազուտ փնասել, համատարած երևույթ է հայ գյուղերում,  
որ զեղքերի ու մտքորդների հրկիւցումը, այդիների, խաղողի որ-  
թերի և ընդհանրապես ծառատուկերի ավերումը, անասուն-  
ների մշացումը և այլն, շատ սովորական միջոցներ են, որով  
հակառակորդները հազարը են սալին իրենց վրեժխնդրութեան  
բնազդներին<sup>186բ</sup>:

Վրեժխնդրութեանը շատ հաճախ ծագում էր տոնմային  
հասարակութեանների փոխադարձ հարաբերութեանների հողի  
վրա կնձ ատեանցման հետեանքով: Անշյալ դարերում հայ փողո-  
վորական կենցաղը հարուստ էր այդպիսի զեղքերով: Մի գավա-  
սական թղթակից այդ առթիվ գրում էր. «Ինչպես քուրդերի և  
այլ հետամնաց ցեղերի մեջ հաճախ աղէկու զեղքում տեղի

են ունենում դանազան արյունահեղ ընդհարումներ, միևնույն բանը նաև հաճախ տեղի է ունենում հայերի մեջ՝ Հայ դավառներում, գյուղերում գրեթե սովորական են միշտ աչքովիսի զեպքերը: Արարատյան նահանգում, ալիկի շատ Ապարանում, ուր ժողովուրդը համեմատաբար ավելի տղես է, քան մյուս կողմերում, միշտ անպակաս են արյունահեղ զեպքերն այդ կողմից: Շատ անգամ ամբողջ մի գյուղի բնակիչները, երկու կողմի բաժանված, մի աղջկա համար միմյանց միտ են կրճում, մեկը մյուսի տավարը թաղանուծ, մարագը, զեզը, քուլաշը կրակում, ծառերը կտորում և այլն: Կողմիս գյուղացու համար գա ինքնասիրության ինչպիսի է, իսկ երբ մեջ է գալիս վայրենի կիրքը, այն ժամանակ նա դառնում է վայրենի գազան» («Մշակ», 1902, № 141): Բուլանըխի մեջ առևանգության զեպքերում, «եթե ժամանակին կիմացվի, աղջկա ծնողները, աղջկանները, մերձավորները վրեժխնդիր ողով կը հետապնդեն և շատ անգամ կամ աղջիկը կը վերադարձնեն կամ սպանություն և արյունհեղություն տեղի կունենա. իսկ երբ չի հաջողվի, վրեժ լուծելը կը թողնեն սպագային նման առևանգությամբ տոհմային վրեժխնդրության հազուրդը գոհացնելու» (ԱՀ, V): Եմանօրինակ վրեժխնդրության, որ հետևում է անվանգմանը, պատահում ենք Ախալքալաքի և այլ հայաբնակ դավառներում:

Վրեժխնդրությունն իրրև տիրող սովորություն՝ շատ անգամ հիշատակվում է մեր ժողովրդական բանահյուսության մեջ: Ինչպես որ ժողովրդական վիպականությունից Մուսուս Սերհնացին մեզ ավանդում է իրրև փաստ Շամիրամի վախը հայերի վրեժխնդրությունից, նույնպես էլ մեր ժողովրդական բանահյուսության մեջ նկատում ենք, որ մեր գյուղական կենցաղում տակավին չէր փոխվել սոսմային վրեժառության վերաբերմամբ եղած հին հայացքը: Մեր ժողովրդական բանահյուսության մեջ նշանավոր տեղ է ըննում «Դավիթ ու Մհերի» գյուցադներգությունը, ուր անընթաց արտահայտվում է այն տիրող գաղափարը, թե սպանվածի որդին պարտավոր էր վրեժ առնել իր հոր սպանողից:

Ձիուց վե եկավ. Դավիթ, Մհեր մտան գյուլաշ.  
Մտան գյուլաշ. Մհեր Դավիթն ալից զեախն.  
Դրանակ խոսնեց, որ դժավիթ գեներ,

Դավիթն էսաց. «Այ տագ,  
Տյու բնձի կ'սպանես.  
Այր ընձի տղա ունիմ,  
Իմ տղեն կըզգ քեզ կըմարքի» (ԱՀ, VII—VIII, 107):

Մի այլ տեղ Մհերն խկապես վրեժ է հանում իր հոր՝ Դավիթի սպանության համար. երբ Դավիթը, Սըլվան Ձմուչկի հետ կողի բռնվելով, սպանվում է մի պատափի ձևքից, Մհերը լսում է իր հոր ձայնը՝ նա դեմում է ընդի թորոսին.

«Էլինք էրթանք, իմ խեր կնացիր է  
Սըլվան Ձմուչկի կողի.  
Իմ խեր սպանին».

Այնուհետև Մհերը—

«Որեզ քեռիք իրու խես տեց.  
Եկան կնացին Սըլվան Ձմուչկի կողի.  
Մտան Սըլվան Ձմուչկի քաղաք.  
.....

Ինչ կա, չկա՝ բերաղը սպանին  
Սըլվան Ձմուչկի զինքն էրավ մե կատու,  
Կնաց մեկրի կլետի, նստավ էնտեղը,  
Մհեր տեսավ .....  
Մհեր նետ-աղեղ կզարկ,  
Սըլվան Ձմուչկի սպանեց,  
Էլավ իրա խոր ջամգակ իբրամ,  
Տարավ Սասուն,  
Ժամով պատարագով վըրցուց» (ԱՀ, VII—VIII, 107):

Նույն գյուցադներգության մեջ, մի այլ տեղում, սեյպես է նկարագրվում արյան վրեժի սովորությունը: «Ձենով-Հովհան լե Սասնու բուռաց: Ու եկան Դավիթի հավորին: Դավիթ լե ըզ ջրէ մեջ զուր աղբոր ձեն լսեց»: Նրանք ման եկան, դստն Դավիթին հարվածող «չխի» աչքերով աղջկան, հանեցին թաքնված տեղից: «Իննեց Դավիթ՝ ոտք զրեց վըր մեկ ոտովուն ու քաշեց սըլվանց, թալեց սարու սըլիւ գեղ: Դավիթն իր վրեժն իր ձեռքով լուծեցուց հետո՝ չորս օրից մեռավ: Սակայն զրանով միտայն չի վերջա-

նում Դավիթի մահվան վրեժխնդրութիւնը: Մհերը, յուր հոր մահը հորեղբայրներից խմանալով, շատ լաց ու արասառք թափեց, «Տե՛ծայ՛ վզապու (հոր) քուտակ ու զնայ ի թլաթ, քարքարակէ շերեց: Հըմա կավրի... ու կենն նրմութեա պուլի, կիշկէ որ ծուխ կէշներ, հազմ լի կըբառներ: Տեսալ, որ պատվուկ մ'էր մանցի, զեն լն բունեց, դասն մեկ օտ կողեց ու զծաւեր թողեց, զեզ լն հմալ սպանեց, կըթթա ծուխ ու մուխ կարեց»<sup>187</sup>:

Քանի որ արշաւն վրեժը տունային հասարակութեան սոցիալական երևույթներից մեկն է ու ինքնապաշտպանութեան միջոց է տունին պատկանող անդամների համար, բնական է, որ յուրաքանչյուր տունիկ աշխատում է ապահովված լինել, որ անհրաժեշտ դեպքում միշտ ունենա պաշտպան ու վրեժառու: Ուստի, եթէ որե՛մ մեկն այդ կողմից ապահովված չէր և չունէր արեւակից մերձավոր, աշխատում էր այգիսին ունենալ արվեստական կերպով, «հոգևոր ազգացնութեամբ»: Այդ նպատակին էր ծառայում ապակա կոչված եզրայրակցաբայուկը, հայերի մեջ՝ «օզլու՛մ հոգբեր», սլավոններին մեջ՝ побрачство, հին հույների մեջ՝ ἀδελφοποιία, հին գերմանների մեջ՝ Blutsbrüderschaft կամ Verbrüderung: Դա մի սովորույթ էր, որ մեծ չափերով զարգացած էր տունային հասարակութիւններում և նահապետական կենցաղի մնացուկներով ազդող ներկայումս ժողովուրդների մեջ: Եղբայրակցութեան պապիփարը կայունում է նրանում, որ միանգամայն օտար երկու անձեր որոշ ծիսակատարութեամբ դառնում են ընդմիշտ ազգական: Այդ ծեսի մեջ ընորոշ գիծն այն է, որ փոխադարձաբար խմում են արշաւն և փոխանակվում զենքերով: Նրանք այդ բույեից կազմվում են անխզելի, ազգակցական համարվող կապերով, իբրև եղբայրներ, որոնք պարտավոր են իրար պաշտպանել փորձանքների ժամանակ, օգնութեան հասնել չքավրութեան ու այլ կարիքների մեջ և, մասնավոր, սրբութեամբ պահպանել արշաւն վրեժխնդրութիւնը: Մինչև վերջին ժամանակները հայ ժողովրդական կենցաղում պահպանվել էր եղբայրակցութեան սովորույթը: Զանգեզուրում եղբայրանալու ծեսը կատարվում էր հեկահայ կերպով. «Ձատկին, պատարագից հետո, երկու անձեր, որոնք եղբայրանալու են, միմյանց ձեռքերը բռնած համրուրում են ավետարանը և փոխադարձորեն խոստում տալիս իրենց վրա վերցնել եղբոր կամ քրոջ (նայած սեռին) պարտա-

վորութիւնները և մինչև մահ այդ կատարել: Այլ անդերում կորույրակցութեան ծիսակատարման միջոցին ծակում են իրենց ձեռքի մատերի ծայրերը և փոխադարձաբար ծծում են միմյանց արշաւը: Այս եղանակով կորույրակցները կոչվում են ավետարանի եղբայր կամ ողբույն եղբայր»<sup>188</sup>: Ինչպես տեսնում ենք, ողբույն կորույրութեամբ մեր ժողովրդական կենցաղում այնքան է սրբադրոժվել, որ նույնիսկ եկեղեցական աղբջութեանն է ենթարկվել:

#### 4. ՓՐԿԱՆՔ — ԱՐՅԱՆ ԳԻՆ

Դասակարգային հասարակութեան մեջ, ուր արդեն դործում է սոստական ապարտը, վրեժխնդրութեան գործողութեանները, մասնավորապէս արշաւն վրեժը, համարվում են այլ ևս հասարակական անգորութիւնը խոնարհող հանգամանք: Եվ քանի որ սոստական օրդաններն էին ստանձնել հասարակական անգորութիւնը պահպանելու ֆունկցիաները, ուստի և նրանք միջոցներ էին ձեռնարկում վրեժառուութեան գործողութեանները կասեցնելու: Այդ նպատակին էին ծառայում նախ՝ այնպես կոչված կաշտուրայն պահեսեղը (Friedensgebot), որ ընդհանրացած էր միջնագորշան ֆեոդալական եվրոպայում և երկրորդ՝ ապաշխարանքը, որ գործադրվում էր բացառապէս հոգևոր իշխանութեանների կողմից:

Զնայած այդ միջոցներին, վրեժխնդրութիւնը, այնուամենայնիվ շարունակում էր գործել, լայց արդեն որոշ չափով ձևափոխված: Արշաւն վրեժը փոխարկվում է կամպոզիցիոն սխտեմի, դրամական փոխատուցման կամ վճարելի փրկանքի: Այդ փրկանքը հայ ժողովրդական սովորութեաններում, նմանապէս հայ գաղտաստանադրբերում հայտնի է արշաւն գին անուով և հոմանիշ է միջնադարյան գերմանական Wergeld-ին կամ հին սուսական ГОЛОВНИЧЕСТВО-ին: Մտկայն փրկանքի, կամ արշաւն գինի ծագումը պետք է որոնել ավելի վաղ դարերում, թերևս տունային հասարակական կարգերում, իբր սկսում է տրբապակել անտեսութեան մեջ ապրանքային փոխանակութեանը և սրան հետևող գրումական շրջանառութեանը: Այդ անտեսական նոր պայմաններում տունային հասարակութեանն արդեն իր քայքայման վերջին պրոցեսն է ապրում: Ինչպես որ այդ նոր պայմանա-

ներում առեանգամբ ամուսնութեանը տեղի տվեց կնոջ գնանքը՝ դիտադինն, այնպես էլ արքան վրեժին սկսեց փոխարինել արքան դերը՝ փրկանքը։ Տոճմային հասարակութան քայքայումով և սոցիալական նոր շերտավորումով՝ արքան վրեժը կորցնում է իր վաղեմի ստինային նշանակությունն իբրև սրբազան, անքակտելի պարսականութուն, որ պաշտպանում էր տոճի ամբողջության դադափաբը։ Այժմ արդեն նյութական հարստության նախնական կուսակման շրջանում, անհատական սեփականատիրության հանգամանքներում՝ նյութական, դուրսբային փոխհատուցումն ավելի նպատակահարմար, ավելի շահավետ էր թվում, քան դատարի՛ արյուն թափելը։ Փրկանքը, փոխարինելով արքան վրեժին, անպայման ուղեկցվում էր հաշտության պահանջով և մասամբ էլ ապաշխարանքով։

Հաշտության պահանջն ու կոտորածը, ինչպես և փրկանքի հասուցումը հետաքրքիր է եղել կիլիկիայի (Ձևթեունի) հայերի մեջ, որը մեծ նմանություն ունի այլ ժողովուրդներին մեջ կատարվող հաշտության ու փրկանքի ձևերի հետ, օրինակ՝ օսերի կամ միջնադարյան գերմանացիների մեջ<sup>189</sup>։ Ձևթեունի հայերի կենցաղում տեղի ունեցող հաշտության և փրկանքի հասուցման եղանակն այսպես է նկարագրվում. «Եթե մեկը մարդ մը սպանե, ժամանակ անցնելու հետո հաշտարարք առ տերն սպանվելույն դիմելով՝ ներողութիւն կը խնդրեն և կտրամով հաճութունն ստանալու հետո՝ պատվովոր թաղեցվոց հետ միանալով՝ մարդասպանը նրա տունը կը տանին։ Սույն պարագային մեջ ոճրագործն 7 կանգուն կը տավ կանուտ իր հետ իբր պատանք և հորձամ մերձեցա ըստ պանելույն սանը՝ գլուխը կը փորտե և նորա տիրոջ օտից փախելով կըստ. «Հնտիկ իս, հատիկ պատանքիս, չեքք կուզիս էսն», որտ կը պատասխանեն, «Երն ըջ պետ էնը, չեքք էր էսա գանձեթնուք քեշիցիբը»։ Նմանօրինակ փոխանակյալ խոսքերի հետ հաշտարարք վերտան կը թախանձեն, որ վերջապես կը ներեն. «Երն իմ տեղյաս իս, պիտը սպաննըսունը, բոն էնմ էնի էաք ըսելով՝ Հեատ դինի կը բարձրանեն, և սպանիչը իր հակառակորդին բաժակ մը գինի տալով՝ ձեռքն կը բամբուրեն, այսպիսեպ և ՚ի հնուսն մի քանի հատ փոստալի (Ձևթեունից կոշիկ անուն) խոնձ և առաւովին 1000 դահեկանի չափ դրամ տալով՝ խնդիրն կը վերջանա եղբր, բայց մի քանի տարիս ՚ի վեր փոխարինութեան կամ

սուղանայ դրամն աստիճանաբար առավելած է»<sup>190</sup>։ Ինչպես կարելի է հետեցնել ղեյթունցիների հաշտության եղանակը՝ հար ու նման է Բագրեվանդի հայերի մեջ վրեժառության աղբրով կալցվող հաշտության ձևերին (էջ 141—144)։ Բագրեվանդուհ, ինչպես Ս. Հայկունին է գրում, արքան փրկանքի չափ չկա. սովորաբար, երբ սպանողի զերգաստանը, վրեժից խուսափելով, գլուխը հեռանա, այդ զերգաստանի ամբողջ անշարժ գույքը կը զերբավի սպանվածի տիրոջ կամ զերգաստանի կողմից։ Սակայն և այնպես արքան վրեժի պարսականութունն այնքան մեծ նշանակություն է ունեցել ժողովրդի իրավաբանական մեջ, որ փրկանքի վրա հնում նայել է, որպես մի անարժան ու անհասարակելի գործի։ Տակավին անցյալ դարի սկզբները Բագրեվանդի հայերի մեջ ճարունքային (արքան դին-փրկանք) ստեղծի հացը չէին ունում սակավ ընդհար թթխող արժու է<sup>191</sup>։ Արքան դին հասուցման սովորով մեծ գանու էնք հայ միջնադարյան պատմության մեջ ֆեոդալական ստինային հարաբերություններում. «Եւ սան նմա [Միքայա Օրբելյանին] գամնայն առածն թրով Ասւանին, և զմրոտն իւր երկրւան որ էր առ Բաշլւէին և իւր մեծածեծացն, և զերդոն Բորտանայ իւր կերոն, վասն սպանման հօր նորա անդեն Կրպարսի, սրղէս զին արեան լեաւ»<sup>192</sup>, Սովորական էր նաև հաշտություն կալցանել ամուսնութեամբ երկու ընտանիքների միջև, ուր ամուսնութունն ստանում էր փրկանքի նշանակություն (ԱՀ, XVI, 10)։

Ապաշխարանքը, որ ծագել է քրիստոնեության դարերում, մեծ դրժանություն է ունեցել հայ ժողովրդի մեջ սպանության զեպքերում, ինչպես այդ ակներև է մեզ հասած պատմական ավյաններից։ Հայ եկեղեցական ամենահին կանոններին մեջ սահմանվում է մարդասպանի համար՝ «որ կամօք մարդ սպանանէ, ստան և հինգ ամ ընդ ունկնդիր կացցէ, մի ամ ընդ ձեռամբ»<sup>193</sup>։ Այնուհետև մեր բոլոր եկեղեցական կանոնագրքերի մեջ սպաշխարանքը իր մի քանի տեսակներով դասնում է արքան վրեժ-ինդաութեանը փոխարինող միջոց։ Նույն թիկ Մխիթար Գուշե՛ Երաստատանագրքը՝ սուղանութեանը նախամեծար տեղ է սահմանում, որը տեղի է ունենում արքան դինը (փրկանքը) վրձարելուց հետո։ «Զի յորձամ սպանողն և կամ այլ չարագործի կրկին ցուցանէ պատիժս, քննել արժան է, զի յորձամ զգին ա-

քանն առցեն, թեթև ապշխարութիւն լիցի» (II, ձիՁ) կամ «թէ պէտք արեամբ դնոյ վճարել կարծի, մի արասցեն առանց ապաշխարութեան...» (անդ), Սակայն Մխիթար Գոշը տեղեկութիւն չի տալիս, թե ի՞նչ ձևով էին կատարում ժողովրդի մեջ փրկանքի հատուցումը և ապաշխարանքը:

Մխիթար Գոշի Դատաստանագրքը ընտրոշ է նրանով, որ նրա պատճական իրավունքը, չնայած քրիստոնեական դադափարի ներկայութեանը, ամբողջովին կրում է ժողովրդական կենցաղում խորը հնուց արգեն պահպանված արյան վրեժի սովորոյցի քիչ ազդեցութեան հատկանշները: Դա բացահայտ է այն պատճական եղանակներից, ինչպիսին են՝ մահվան դատաստանը, այնուհետև այսպես կոչված ius talionis, այսինքն համապատասխան փոխատուցումը, և վերջապես փրկանքը կամ արքան գինը:

Մահվան դատաստանը, այն է՝ մահապատիժը և ապա talion-ը ներկայացնում են իսկապես միևնույն պատժի, այսինքն համահավասար փոխադարձ հատուցման դադափարի զանազան աստիճանները: Չնայած այդ երկու պատճական եղանակների ներքին միակութեանը, այնուհետև հնուցից լիով պետք է նրանց ճանաչել պատճական առանձին տեղակներ: Ինչ վերաբերում է արյան գնին, թեև Մխիթար Գոշի կարծիքով՝ «գին արեան մարդուց ըստ արժանույն գնոյ ոչ է», բայց և այնպես նա գնում է արյան գնի մի չափ, որ հավանաբար է 365 դանեկանի, մարդու կյանքի գին, որը հաշված է մարդկության կյանքի մեկ տարվա օրերի թվով: Այս գումարը, լինելով սահմանված իրեպական չափ, նույն ժամանակահատվածում ավելանում է կամ նվազում, որի մեջ գեր է խաղում տուժողի սոցիալական դիրքը՝ ըստ աշխատանքայնության, կրօնը և սպանութեան եղանակը (II, Ա): Եւրոպանում ևս երևույթ ենք նկատում միջնադարյան եվրոպայի մի շարք իրավունքներում: Գերմանական Sachsenspiegel օրենսգրքում (III, 45, § 1) մի ամբողջ հոդվածի նյութն է Wergeld-ի (արյան գնի) քանակը զանազան սոցիալական խավերի վերաբերմամբ: Անշուշտ այդ բոլոր դեպքերում, ինչպես և Մխիթար Գոշի Դատաստանագրքի մեջ արտացոլել է ժամանակակից դասակարգչին հանարակութեան դադափարախոսութեանը, ուր սպանութեան հետևող վրեժխնդրությունը կորցրել է իր նախին տոհմային հասարակութեան հիմքը, կերպարանափոխվելով արյան

գնի, որն իրականում հարմարվում էր տիրող սոցիալական հարաբերություններին: Հետագրքից է, որ սպանութեան շարքին էր դասվում ըստ Մխիթար Գոշի, նաև կուտուրեթյան ընդ խախտումը, կանանց բռնաբարությունը ու ստեղծագործությունների արյան գնի միջոցով ամբողջությունը, երբեմն էլ ավելի մեծ չափով, օրինակ, կույս աղջկա առևանգումն ու բռնաբարումը, հատուցվում էր 600—1000 դանեկանով:

Talion-ի մասնակի ձևերը գտնում ենք այն դեպքերում, երբ մի կողմը մյուս կողմի մարմնի որևէ մասին զգալի վնաս է հասցնում. օրինակ՝ ձեռքից զրկում, աչքը կուրացնում, ոտքը կտրում կամ կտրում, մազերը փետում և այլն: Այստեղ ամեն մի վրեժխնդար անպատասխան առանձին է գնահատվում և ըստ այնմ արյան գնի հատուցվում. «տուղանք վճարեցի ըստ բանականի գնոյ արեան համեմատեալ»: Այս դեպքում փրկանքը չափվում է միջին քանակությամբ և ընդունվում է իբրև նոր ժքսան և վեց դանեկան և կես դանգ, զարի պակաս:

Աներկրա է, որ արյան գնի հանում է սպանվածի մերձավոր ազգականներին՝ հորը, մորը, որդուն, եղորը և այլն: Սակայն, ինչպես ահներ է Մխիթար Գոշի Դատաստանագրքից, մի որոշ մասն էլ հանում է զանաքարանին կամ թաղավորին: Առ թրեւս մի մնացող էր տոհմային հասարակագրից, որովհետև տոհմացեղային շրջանում, երբ արյան վրեժը չի վճարվում էր փրկանքով, վերջինից մի մաս էլ հանում էր անշուշտ տոհմապետին, որը նույնպես մասնակից էր տոհմային արյան վրեժին: Սակայն երբ տոհմային հասարակութեան ճոխքայնումով առաջացավ պետական կարգը, տոհմագիտի ֆունկցիաները պահպանվեցին իշխոսին, թաղավորի անձի մեջ, հետևապես և վրեժի փրկանքի այն մասը, որ պատկանում էր տոհմապետին կամ ցեղապետին, հետագայում դառնում է թաղավորի սեփականություն:

#### XIV

#### ՏՈՂՄԱՆՅԵՂԱՅԻՆ ԿԱՁՄ

Վերն արժարժված ազգաբնակչության նյութերը վերլուծելով իբրև վերադարձներ, մենք փորձեցինք լուսաբանել տոհմային հասարակական կազմի իր ընտրոշ առանձին երևույթներով: Մա-

կայն մենք ունենք նաև այնպիսի ազգագրական նյութեր, որոնք ներկայացնում են, նույնպես իբրև վերապրուկներ, ինչպիսին տոհմային հասարակական կազմը, որ պահպանվում էր մինչև անցյալ դարի վերջը մի քանի հեռամեաց վայրերի հայ գյուղացիական կենցաղում: Դժբախտաբար մեր ազգագրական քանակավաճիկներն այդ ուղղությամբ շատ քիչ արդյունքներ են տվել: Նրանք բեռնակ էին իրենց ուշադրությունը զիբաժնորային հավատալիքների, ֆոլկլորի, զանազան ծխական սովորությունների ու նեղ ընտանեկան կենցաղի վրա, աչքաթող անելով այն ազգագրական նյութերը, որոնք բնորոշում են սոցիալ-տնտեսական, իրավահասարակական հարաբերությունները: Այդ մեծ քանք թերևս բացատրելու է նրանով, որ մեր բանահավաքները, զուրկ լինելով բազմաթիվ սոցիոլոգիական պատրաստությունից, գիտական ձևերը հասունթյունից, անընդունակ հանդուստայն լրակատար կերպով ընդգրկելու այդ գործն ու չափազանց շարժում, անձուկ իմաստով էին ըմբռնում ազգագրությունը: Բայց և այնպես եղած սուղ նյութերն էլ սրտ չափով բավական են, որպեսզի հնարավոր լինեն ապացուցել ստեղծված նյութն ու այնտեղ մնացած տոհմային հասարակական կառուցվածքը, թեև քայքայված, վերապրուկային ձևերով: Երկար ու ձիգ դարեր են անցել այն օրերից, երբ բովանդակ հասարակական կազմը հիմնված էր տոհմային կարգերի վրա, երբ սոցիալ-տնտեսական հարաբերությունները հանգչում էին նախնադարյան կամունիզմի վրա, սակայն մտտիկ տնցյալում, ստեղծված մեր դարում, մենք այնուամենայնիվ հանդիպում ենք նրա վերջին բեկորներին: Դա այն միջավայրն էր, ուր գեոևս էին վերացել իսպառ այն նյութական պայմանները, արտադրական այն հարաբերությունները, որոնց նորհիվ՝ տոհմային հասարակական ձևը կարողանում էր պահպանել իր գոյությունը, թեև կազմալուծման ուղին բռնած, իր հողատեղի վերջին վայրկյաններն ապրող:

Համեմատական ազգագրական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր տոհմ ապրում էր առանձին և հատուկ գյուղով: Հին Հնդկաստանում որևէ գյուղի բնակիչներն իրար հետ մերձ ազգակցական կապերով էին միացած. այլ խոսքով՝ հին Հնդկական գյուղը ներկայացնում էր այնտեղ նստած, հաստատված տոհմ, կամ տոհմի մի որոշ ճյուղ<sup>194</sup>, Նույնն ենք

տեսնում հին իրանցիների՝ պարսիկների մեջ, ուր տոհմը հոմանիշ է գյուղին. միևնույն vie բառն իմաստավորում է միաժամանակ թե՛ գյուղ և թե՛ տոհմ: Նման երևույթ ենք գտնում հին գերմանների մեջ (էՐՄ, 142): Հին սլավոնական գյուղերը, որոնց անունները սովորաբար կրում են ԿԿ կամ օВИЧ կամ ԿУИ (Драшковици, Утисеновичи, Уветичи, Хвалимичи) վերջածանցը, որն իսկապես տոհմային ազգանունի վերջավորությունն է, նույնպես զուտ տոհմային բնակություններ էին հանդիսանում<sup>195</sup>. Վերջապես մեր ժամանակակից իտալական սոսերի մեջ, ուր մեծ չափերով պահպանվել են տոհմային վերապրուկները, գյուղերը կրում են պատրոնիմիկ անուններ և մեծ մասամբ բնակված են տոհմակց միևնույն ազգանուն կրող ընտանիքներով: Բայց դրանք մեր հայկական իրականությունը<sup>196</sup>,

Հայաստանի, մանավանդ վերջին դարերում գաղթի չեթարկված շատ գյուղերում բնակչության մեծ մասը մի քանի առանձին տեղերից, նահապետական գերդաստաններից են սերված, որոնք իրենց անվանում են ազգ, ցեղ կամ ուղղակի տեղը («մեր ազգը, «մեր տները»): Սրանք մեծ մասամբ գրադեցնում են առանձին թաղեր: Նույնիսկ կան տերողական գյուղեր մեկ տոհմից սերված (օր. Այգեհատը Լոռում), և այժմ էլ մեկ ազգանուն է կրում գյուղի ողջ բնակչությունը: Կան գյուղեր, ուր այժմ էլ գյուղի մի զգալի մասը, նույնիսկ հարյուրավոր անտեսություններ (օր. Աշտարակում) ունեն մեկ ազգանուն և գեոևս մեր գաղթի սկզբներին պահպանել էին տոհմային համարյա բոլոր հնավանդ սովորությունները:

Այլևի հաճախ է այդ երևույթը թյուրահասկաստանում: Ձեռքից բաժանվում է ձ թաղերի, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձին անունը, համապատասխան իր տիրոջ անունին: Սուրենյան, Կարկալարի, Ենի-Տյունյան ու Բող-Բայրի: Սրանցից ամեն մեկը բաղկացած է 50—60 բնտանիքից, որոնց զվարճություն են տոհմապետ-իշխանները<sup>197</sup>: Սուրենյան տոհմը, բերդի տերը լինելով, բնակվում է այնտեղ և իր հերթին բաժանվում է 7 ճյուղի՝ Սուրենյան, Սեթյան, Բոսիբոյան, Կեյիկյան, Վարդիվարյան, Ախաշյան, Թումիկյան (ibid.): «Ակարաշ կամ Արեզի գավառակն ընկնում է Ձեռքիցից հարավ-արևելք և ունի 300 տուն հայ բնակիչ, բաղկացած է 18—20 մեծ ու պստիկ

գյուղերից կամ տեղական բառով օբյեկտներ, որոնք կոչվում են տեղի մեծ բնասնիքի անուններով կամ ազգանուններով Ալաբաշը մի ընդարձակ նահապետական համայնք է, որ կառավարվում է մեկ ընդհանուր գյուղապետի կամ քեհյայի միջոցով, նա բաժանված է երեք մեծ գերդաստանների կամ աշխրթների, որոնց անուններն են՝ Վարդգանենք, Շենըքենք ու Եկենենք»<sup>198</sup>,

Նույն երևույթը հանդիպում ենք Մոքրում, որ գտնվում է Մուշի գավառում և մի հետամնաց լեռնային վայր է հանդիսանում Մոքրը բաժանված է թաղերի, որոնցից յուրաքանչյուրում ընտանիքներ են մի անոթի պատկանող ազգակիցները, և ամեն մի թաղ կրում է նույն ստանի անունը: ՃՄՐքի կենտրոնական թաղերից ամեն մեկն ունի իր ձեռագրի ավետարանը: Գրանք հնուեթյունների են, որ իբրև Նովբրական ու թանգ ժառանգություն և իբրև իրենց ցեղազուրթյուն պահպանվում են մեծ խնամքով: Անձգոնց թաղի ավետարանում կարդում ենք Մթթենց նախնի բեղի անունը, որ 200 տարի առաջ եկել է և որի տունը կա ու բնակվում է Անձղոնցում (թաղի անուն)՝ գանազան տների բաժանված: Կան և ուրիշ տոհմերի գլխավորների անուններ, որոնց բուրբ տոհմերն էլ այժմ կան և նույնպիսի հնուեթյուն ունեին Չարմանային այն է, որ ավետարանում հիշատակված տոհմերից դաս՝ ուրիշ նորեկներ չկան այժմ: Մի նորեկ հայ ընտանիք, որ թաղի ծայրին մի նոր առև է շինել իրավունք է ստացել բնակվելու այն պայմանով, որ տեղը պատկանում է թաղին»<sup>199</sup>:

Նույնը պետք է ստենք նաև Շաստախ քաղաքի մասին (Վանի սանջակում), որ «բաժանված էր մի քանի թաղերի, որոնք հիշեցնում էին հին հռոմեական արիները, ուր ընակվող ընտանիքները սերտորեն կապված էին իրար հետ ազգակցական կապերով ու քարեռք դրվիցում էր: Յուրաքանչյուր թաղի մտաւորապես միևնույն տարիքի բոլոր պատանիները կազմում էին մի սերտ ընկերակցություն, իրենց տրամադրության ներքո ունեին սեփական մեծ «օղա», ուր ազատ ժամերին, մեծ մասամբ կիրակի և տոների նոխորակներին հավաքվում էին ժամանցները համար՝ երգում, պարում էին, հեղաթիվներ պատում, այստեղից և այլ ժամադրքեր կազմում, փոխադրած զբաղուցթյուն սովորեցնում և այլն. այստեղ էլ ընթրում էին իրենց տանիքե-

րած կերակուրներով, իսկ հատուկ սոններին էլ, մասնավոր բարեկեցականին, ազմիպի խնամույթներ էին կատարվում: Այդ յուրա-տեսակ համայնական խումբը ամեն տարի իր անդամների միջից ընտրում էր իր ավագը կամ նախագահը, որ կոչվում էր աղա, առաջ ընտրվում էր սնորհն-կարգազրիչ՝ մալխա և սուբհանդակ՝ մթջա, որի վրա ընկնում էր սև աշխատանքի պարտականությունը»<sup>200</sup>, Անշուշտ այս պատանեկական ընկերակցություններն իրենց համայնական կազմով ու ավանդական սովորութիւններով՝ ներկայացնում են վերապրուկային արձագանքներ արևոտ տոհմային կենցաղից:

Գնործում ապրում էր Մերազյան բազմանգամ տոհմը, որ նույնպես բաժանված գերդաստաններով բնակվում էր հատուկ գյուղերում<sup>201</sup>, Միևնույն տոհմից սերված զուտ գյուղական համայնքը շատ սակավաթիվ է Բայրեհանցում, որովհետև ալաշկերտցին միշտ զաղթականության է ներթարկված ու նրա տեղը բռնում են այլ եկվոր զաղթականներ, սրանցից շատերը 50—60, նույնիսկ 100 տարվա գաղթական վերաբնակներ են, բայց տեղական բնիկները սրանց հետ բնավ ձուլված չեն և առանձնացած են իրենց պահում: Սակայն և այնպես կան հաս ու կենտ գյուղեր, որոնց բնակիչները միաձուլյա տոհմային հասարակական կազմ են ներկայացնում: Ամար գյուղի մեջ գոյություն ունի Գանդիլյան կամ Ղանդիլյան տոհմը, որ 200 տարվա պատմություն ունի: Ղարաբեկ գյուղում կա Կորքունեու բնիկ ցեղը, որ գյուղի բնակչության կեսն է կազմում»<sup>202</sup>:

Որ հին քաղերում տոհմային համայնքները բնակություն ունեին տանձին գյուղերով կամ հատուկ շեներով, դա երևում է նաև հետևյալ բնորոշ վրաստից: Ղանի մարդում միևնչ վերջին ժամանակները կային մի շարք հայ գյուղեր, որոնց անունները վերջում են անց կամ ենց անցնում:—Պոզանց, Ավանց, Զառանց, Ականց, Շուշանց, Նորավանց, Զրվանցալ, Կտղանց, Կասուկանց, Խուտականց, Լաշիանց, Պլթենց, Խավենց և այլն: Անշուշտ այդ անունները, թիրեա մատրիարխատական, բայց ավելի հավանական է, պատրիարխատական ծագում կարող են ունենալ և միանգամայն բնորոշում են իրենց սեռական հույզի հոգնակիով, համանիշ սլավոնական «ОВИЧІИ», «ИЧИ», տես էջ 155), որ

հիշյալ գլուղերը պատկանում էին սոյալ անունով կոչվող ստամին և այդ ստամային համայնքով էլ բնակված է հղել:

Նույնպիսի վերջածանցով հայ գլուղեր հանդիպում ենք Շատախում, Ինչպես Շեխանաց, Բաղվանց, Պապոյենց, Քերմենց և այլն. յուրաքանչյուրի բնակչությունը բաղկացած էր մտտիկ ազգականներից, որոնք իրենց սերված էին համարում մի նախնուրից: Քերմենցում ապրում էր «Աղեկի տունը», այսինքն Աղեկից սերվածները, Բաղվանցում՝ «Մանգուխ տունը», Հառուակիում՝ «մուրեք (մևիք) Մալխասը տունը» և այլն: Բացի այդ՝ հիշյալ գլուղերն իրենց «աներով» զոյացել են, արոճվելով նախկին «մըղ-աս»-ներից, ուր բնակվող տոճմի անդամներ թվելը, բնակաւորներն անելով, այլևս չէր կարող տեղավորվել ու ստիպված էր, բաժանվելով, նոր բնակություն վայր ընտրել նույն շրջանում<sup>209</sup>:

Տոճմա-ցեղային բնակություն այդ հանգամանքն արտահայտվել է նաև հայ գլուղների արտաքին տեսքի ու տեղադրությունից: Վրա: Հին հայիական գլուղերը մինչև վերջին ժամանակները ներկայացնում էին մի քանի թաղեր, որոնք խումբ-խումբ կուտակված տներ էին: Տների այդ թաղային կիսավածքն առաջացել է նրանից, որ գերլլատամները հետզհետե տրոհվել են, մայր ընտանիքից բաժանված նոր անգամ իր տունը մեծ ժառանգ կուտացել է հայրենական տան կողքին կպած, նույնիսկ շարունակելով նրա հարկը (կտուրը): Հետագայում վերջինից բաժանուղին իր հերթին կառուցել է սեփական տունը նրա կողքին: Եվ այսպես շարունակաբար երկար ու ձիգ տարիներ, թերևս դարերի ընթացքում մայր գերդաստանի շուրջը խիտ առ խիտ կուտակվել են սպած տոճմի սերունդները ու անշխատված անդամներն աները, կազմելով իրենց հասուկ թաղը, բաղկացած միևնույն ստամին պատկանող ազգակից ընտանիքների անբրից: Իրարից տրոհված այդ ստամային տները, շատ անգամ էլ նույնիսկ իրար ազգակցորեն օտար, բայց միևնույն գլուղական համայնքին պատկանող զբղից աների միացյալ ընդհանուր դատերի մեջ շինված են լինում պատուհաններ, որով մի գերդաստանը մյուսին հետ կապ է պահպանում, փոխ ատյով հարևանին տնային ամաններ ու իրեր, կրակ, մատուցում ուտելիքներ, հարդրում դանազան լուրեր, զգուշացնում ընդհանուր վտանգների մասին և այլն: Այս պարագան վկայում է, որ խոր հնում այդ առանձին տներն ունեցել

են ընդհանուր ազգակցական ու սնանկական միացյալ կապեր, որոնք սկզբում պարփակված են եղել ստամային համայնքի մեջ և հետագայում անջատվել են իրարից:

Վերահիշյալ ստամային կազմակերպությունները հանդիսանում են հասարակական կուլիակիներ, սցիբալական համայնքներ ոչ միայն իրենց արտաքին գծերով, այլև իրենց ներքին սնանկական կառուցքով, հասարակական նյութերու-թյուններով, արխայիկ կենցաղով, որոնք վերապատկան նյութերու-թյուններով են նրանց մեջ և որոնց մասին արդեն առիթ ունեցանք խոսելու նախնից զուգընկերում: Արդ՝ առաջ բերնից Լուուս վերն ախարկված ստամային համայնքների բնորոշ կենցաղային գծերը, որոնք լրացնում են այն պատկանը, որը հայ ազգաբնակչան նյութերի հիման վրա փորձնցինք վերակառուցել երբեմնի զոյաթյուն ունեցող նախնազարյան ստամերի մասին:

Այդ ստամերի մեջ տիրում է խիտ էքստրամիա: Յուրաքանչյուր ստամի բոլոր անդամները ոչ մի իրավունք չունեն միմյանց հետ ամուսնանալու: Որոշ չափով աղելովում է նրանց նաև իրենց ստամին պատկանող սերունդների անդամներին հետ խնամություն անել: Սակայն երբ մինը, արև ժառանգ չունենալով, պետք է յուր հարստություն իր աշխկան տար, այսպիսի դեպքում ստամը թույլ է տալիս իր անդամներից մեկին ամուսնանալու այդ աշխկան հետ, որպիսիս այդ հարստությունը ստամի սանձաններից զուրս չզնա: Տոճմը ժառանգում է անմասնող անդամի արողջ գույքը և անտիրիում այն իր որդյամբ, շատ անգամ հատկացնելով անուկ եկեղեցուն, կամ չբավորներին և կամ որևէ հասարակական օպտակար գործի:

Տոճմը հողում է իր անդամներին կարիքները փոխադարձ օգնությամբ: Երբ մեկը տուն է կառուցում, տոճմի մյուս անդամներն սաանց որևէ վարձատրություն փայտ, քար են կրում, մի դիտի հավաքվում են և այդ նոր շինվող տան միջև հողը գուրս սծում, կտուրը կոխկրտում, որ հողն ամբապնդվի: Երբ մեկը ցանկանում է իր ննջեցյալի գերեզմանի վրա գերեզմանաբար ձգել, գարձյալ ստամի անդամները հավաքվում են, դնում այդ գերեզմանաբար բերելու: Երբ մինի տավարը կորչում է, բոլորը խումբովին դնում են որոնելու: Միմյանց զորիքներ, ձի, էջ, հանդերձեղեն ձրի փոխ տալը ասվորական երևույթներ են: Միևնույն



կերպ կանայք են վարվում, հարսանիքի բրինձն ընտրելիս, բուրդ գզելիս, էրիշտոս անելիս, պարսեղներ քաղհանելիս, բազաքաղիտ հարս ու աղցիկ սիրով հավաքվում են, խոտելով, ծիծաղելով գործը միտարն կատարում և մեծիայն մի ճաշով հյուրասիրվելով՝ ցերբում են:

Տոնմը օգնութիւյն է հասնում թե՛ ուրախութիւյն և թե՛ տըխրութիւյն ժամանակ: Հարսանիքի օրերին «կանչի» միջոցով դրամական նվերներ տալով թեթևացնում է նրա ծախսերը, տղարեքրի ժամանակ շքանշարավաթ տանելով՝ ծննդկանին, օգնում է նրան լավ սնվելու: Ննկչկայի «յոթի» և ս. խաչի տոնին տրվող «նոգու հացի» ժամանակ զառներ ու զանազան թխվածքներ տանելով՝ պակասեցնում է ծախսերը: Տոնն օգնութիւյն է հասնում ամեն մի դժբախտ պատահարում: Երբ մեկի զեղը վառվում է, միքս սայլը լծած սկսում է ամեն մի տանից խոտ, հատի հավաքել ու սուլիս է նրան: Երբ մեկը որևէ պատճառով զրկվում է տավարից, շասերը մի-մի գառ, հորթ են նվիրում, որ պահի, մեծացնի, տավարի տեր դառնա: Իսկ չքավորներին թուխս ընկած հավը փոխ տալը խիստ սովորական է: Աղքատ կիներ մինչև թուխս ընկած հավը ժամանակավորապես վերցնելուց հետո՝ զրկիցաներից հավիկիթներ է հավաքում, թուխս դնում և վառելիքի ու հավերի տեր դառնում: Այլի, անտիրակիս կնոջ արտերը տոնն է ցատնում, հնձում կերտիկ և սոն օրերին:

Տոնը պաշտպան է հանդիսանում իր ամեն մի անդամին, վրեժխնդիր լինում նրա աշխատանքի մեր մեղք կալի է բռնվում մի այլ տոնի անդամի հետ, երկու կողմերի տոնները վրա են հասնում, և անհատական կոթիլը դառնում է տոնաչին:

Տոնի մի անանձնատիրությունն էլ այն է, որ առանձին զերեզմանատուն ունի, և ամեն մի անդամ փափաքում է այդ տոնաչին զերեզմանատանը, իրենց նախնիների մոտ թաղվել: Այդ պատճառով էլ, օտար տեղերում մեռնողներին ընտրում են իրենց տոնաչին զերեզմանատանը թաղելու: Հարկ է շեշտել, որ կանայք թաղվում են ոչ թե իրենց, այլ ամուսինների տոնաչին զերեզմանատանը:

Տոնն իր ներքին գործերը մեծ մասամբ վարում է տոնաչին ժողովներում, ուր հավաքվում են գլխավորապես ծերունիներ և ուր կերեմն մուշք են գործում և պատալներ: Օրինակ՝ երբ փո-

խաղարձ կռիվներ ու վեճեր են լինում, երբ մեկին մի գժբախտութիւյն է պատահում, երբ երբայցները կամենում են միմյանցից բաժանվել և այլն (ԱՀ, X, 113—119):

Մոքսի ու Զեյթունի տոնաչին կազմակերպութիւյնների նկարագրութիւյն մեջ հիշատակվում են «բեզի» ու «իշխանի» անուններ: Մրանք ոչ այլ ինչ են, եթե ոչ տոնապետներ, սակայն մեր ժամանակակից իմաստավորումն ստացած, ուր արտապայլում է արդեն դասակարգային հասարակութիւյն սոցիալական պաշտփարախոտութիւյնը: Կնոջանքապետ տոնապետների և կամ տոնի առաջնորդների ու զեկավարների մասին մենք չունենք փաստական տեղեկութիւյններ, թե ինչով էր արտահայտվում նրանց նշանակութիւյնն արխայիկ գաւրբում: Այդ նշանակութիւյնն ու նրանց զերբ պատկերապէսում հարց սոսկ հիմնվելով արդի, այսպես կոչված «վարչերի ցեղերի» տոնաչին կազմակերպութիւյն վերաբերյալ ազգագրական ավայելների վրա, ինչպես օրինակ՝ Հյուսիսային Ամերիկայի ինդիգների, հուրոնների կամ Ալյասկայի ընդհանրի և այլն: Սակայն կասկած չկա, որ նախնազգային հասարակութիւյն մեջ պետք է գոյութիւյն ունենային առաջնորդներ կամ ավագներ, որոնք անձնավորվում էին որպես տոնապետներ ու ցեղապետներ: Այդ բոլորում էր բնականորեն նախնազգային բովանդակ անանսական գործունեութիւյնից, տիրոջ արտագրական հարտերութիւյններից: Տոնաչին ավագի կամ առաջնորդի նշանակութիւյնը կ. Մարքսը բնորոշում է այսպես, «Գերագոյն հեղուկութիւյն ու զեկավարութիւյն աշխատանքն ունըրաժշտորեն ծագում է ամենուր, որտեղ արտագրութիւյն անմիջական պրոցեսը հասարակական-համայնցական (общественно-комбинированный) պրոցեսի և ոչ թե ինքնուրույն արտագրողների անջատ աշխատանքի ձև է կրում» («Капитал», III, 271): Այդ առումով՝ տոնաչին ավագների ու առաջնորդների հասարակական ֆունկցիաներն ունենին իրենց բնական հիմքը տոնի հասարակական կյանքի կարեւորներում ընդանրապես և կռիկտիվ արտագրութիւյն կարիքներում մասնավորապես, ուստի նա հանդիսանում էր ամբողջ տոնի, նրա բոլոր անդամների շահերի արտահայտիչը և յուր արյունակալն ազգականների կազմակերպութիւյն կռիկտիվ աշխատանքի զեկավարը: Նախնազգային հասարակական համայնքներում այդ զեկավարութիւյնն ու աշխատ-

տանքի նկարագրվումը վերազանցում էր համայնքի ամենափորձառու, ամենաընդունակ, ձեռնբեց ու խելացի անդամին՝ առաջնորդին՝ որ տարիքով հասունացած ավագն էր լինում սովորաբար Իր դարձուղեթյուններում տոհմային համայնքի առաջնորդը սահմանափակված էր համայնքի անդամների կարծիքներով ու արերոջ հնամենի սովորեթյուններով: Այդ ավագների իշխանությունը, ինչպես Յր. Էնգելսն է ասում, դուռ հայրական է, բարոյական-ստիպելու միջոցներ նրանք առավելին չունեն իրենց արամազրուսթյան ներքու: Ավագը, առաջնորդը կարող է տոհմի կողմից փոփոխվել, որից հետո նա զուգուցում է տոհմի ստակական անդամը, ինչպես որ ասած էր Մեր գյուղական համայնքներում մինչև վերջին ժամանակները կային այսպես հոչված ազնվախղվելի (թուրքերին բռտ, որ նշանակում է սպիտակամորուս), որոնք փորձված տոհմիկ ձերուհներ էին, ազդեցիկ էր էին խաղանքի և պատվավոր զինք մայելում գյուղական հասարակութայն մեջ. նրանք իրենց խորհուրդներով զեկեպար էին հանդիսանում գյուղական համայնքի ներքին կյանքում, վերդաստանների փոխադարձ հարաբերություններում, հողարածանուսներում, ուղղման ջրերի բաշխման մեջ և այլն: Այսպիսով անձնավորության մեջ վերապարտկային ձևով պահպանվել է տոհմային համայնքի նախկին նահապետի կամ առաջնորդի նշանակությունը, որ փոփոխվելով հասել էր մեր օրերը և պահպանվել գյուղական կենցաղում արերոջ պայմաններին համապատասխան զգեթով:

Այն սահմանակները, որոնք պատկերանում են հայ ազգապարհան նյութներում, օժտված են արդեն նաև որոշ վարչական ֆունկցիաներով. նրանք այլև չեն հանդիսանում նախնադարյան հասարակութայն զեկեպարների ու առաջնորդների սահմանափակ ֆունկցիաներով: Դա բնական է, քանի որ այդ սահմանակներն իրենց զերով ու նշանակությամբ արդեն նախնադարյան տոհմային հանրապետ նոր հասարակական կուլտուրայի զուխն են կանգնած, որոնք ստրուում են արդեն սոցիալական շերտավորման պայմաններում: Համենայն զեպս իրենց արդի նշանակությամբ այդ «իշխանները», ինչպես սովորաբար ժողովրդի մեջ անվանում են ներկա սահմանակներին, նախնադարյան տոհմի ավագի ու առաջնորդի այլափոխված ձևն է, սոցիալադարձանտեսական նոր պայմաններում հնի, վարդեմի անցյալի վերապարտկենքն են: Դա

բացատրյա է այն նշանակությունից, որ ունի Ձեյթունի տոհմային կարգերի մնացուկներում տոհմապետը «Ձեյթունի չորս թաղերն ունեն առանձին նահապետներ, որոնց զեյթունցիներն անվանում են իշխան: Թուրքաբանչուր թաղի մեջ կա մի բաղձանչուր զբրդաստան, որ նկատվում է իբրև տոհմային աղնվական և որի վրեպար անդամները ժողովրդի կողմից վայելում են հարգանք, իբրև երկրի մեծավորներ: Սույն զերտեստանների զըլթավոր անդամներից միայն նրանք, որ ունեն հայտնի արժանավորություն և ձերքեր, ընտրվում են իշխան կամ նահապետ: Իշխանները պարտավոր են մտածել ու հող տանել ժողովրդի բարեկեցության մասին. իշխանների իրավասությունն է՝ կարգադրել ու անօրինիկ ժողովրդական բուրք զործերը, վեճերը, զանական գատկերը. հասարակական, ամուսնական և այլ խնդիրներ: Թուրքաբանչուր թաղի իշխան կարող է միջնորդել միայն իր թաղի գրպիկին, իսկ հանրային խնդիրների կարգադրության զործում հավաքվում են չորս իշխաններն իրենց երկրորդականների հետ միասին և ընդհանուր համաձայնությամբ սահմանում են որոշումներն ու զործերի ընթացքը»<sup>204</sup>. Տոհմային առաջնորդի ավելի հնազույն զեմքը պատկերացված է Մովսես Խորենացու Պատմության մեջ իբրև իրական անձ, ներկայացված առասպելական կայի նահապետի, այդ հայ կյունիմի մեջ:

Տոհմային զեկավարի կամ առաջնորդի անձնավորության պատկերը ցույտուն կերպով պահպանվել է հայ ժողովրդական գյուղացուհարության մեջ, շնայած, որ այդ անապիտան վիպասանության մեջ զարբերի ընթացքում հեռզհետ տոհմապետի անձը, հասարակութայն զասակարգային շերտավորման հետևանքով և արան համասոստայան զաղափարախոսության ներքո, ստացել է իշխանի, թագավորի նշանակություն և բյուրեղացել է հրամայողի, իշխողի, թեկուս շահազործողի իմաստավորման մեջ: Մասամ ծուրում հանդիս է զավել միշտ ժողովրդը, մասամ «էլիտի» կամ «էլա հորքըլուսով, որին զլիտավորում է «էլ-աղախն», այսինքն ժողովրդապետը Այդպիսի ժողովրդապետ է հանդիսանում հայ գյուղացի Պավիթը՝ «շոջ Մհերի թուրք»: Սա զնում է «Արարատան» իր 2000 «էլը», որ զերի էր տարել Մարտավերք Դավթի հոր՝ Արամյիբեցի, ես վերազարմին Մասուն Այստիկ նա գտնում է այդ 2000 «էլիկն» իր «էլ-աղախով» հանդերձ: Սրանք արամադիր չեն վե-

բաղանձնայուս և, ընծաներ տալով Դավթին, խնդրում են, որ նա իրենց հանգրիստ թողնի: Մտկայն Դավթին ասում է, «հացն ու դինդն, սեր կենդանին. հրամանն է կըջարգեմ, իմ էլլիկն հք, թևչ էրևք, էրթանք»: «Էլլիկը քաշեց, առավ, էկավ Սասուն» (Աձ, XIII, 59): «Եկարգսին» կարբար զեպքերում ու հանրային շահերին վերաբերող հարցերում միշտ խորհրդակցում է իր «Էլլիկին» հետ: «Ես էլ-ազական մարզ զրկեց կանչեց էլլիկին, ասավ. էլլիկ, ասով, էսի Դավթին ա, մեր թաղավորի տղեն ա, Մորա-մելիքը էկավ էստոնց եսիք արավ տարավ. մկա քայալքցե, էկե մեր կուշտը. ամենքս մի զատ ընծա ասնք, որ տանա, լիանած (ibid.): Նույնպես էլ իր էլլիկի հետ է վարվում Դավթիքը, երբ ցանկանում է հեռանալ Սասունից. «Եկավ քեռի Թորոսի խեռ խաղա-տմիշ հերով, սորբտանքի հետ խաղալամիշ հերով, էլլիկին զանչեց, խալալամիշ հերով խետը, թև մացեք բարով, ևս էթում եմ» (Աձ, XIII, 64):

Վերջապես տոնմապետի, տոնմային առաջնորդի ու զինավա-րի գոյությունը նախնազարգյան հասարակության մեջ որոշ չա-փով ապացուցվում է նյութաբան կուշտաբայի այն փնտրողնե-րով, որոնք արգեն առիթ ունեցանք նշելու կիկլոպյան ամբող-նների կոնտրոլիով սենսացիանում: Կիկլոպյան ամբողջությունների միջնաբերդը, ուր մի քանի զեպքերում նկատվում են առանձին բնակարանածև կոբրիկ շենքեր<sup>200</sup>, ենթադրվում է, որ դա տոնի առաջնորդի կամ ավագի կայանն է, ուսկից նա զինավարում էր ամբողջ մեջ ապաստանված տոնի պաշտպանողական զործողա-թյունները հարձակվող թշնամիների դեմ: Բացի այդ՝ խաղապան սեպագրությունները, որոնք արձանագրում են Սևանի ընտանյա մարզերի նվաճումները, հիշատակում են ինչ որ թվազավորները մասին, որոնք տեղական բարբառով կոչվում էին իշամ և իպան: Նկատի առնելով ինչ որ մենք վերն արձարձեցինք այն խմատ-տակըման մասին, որ խաղերն իրենց ֆեոդալական տեսանկյու-նով են ներկայացնում արձանագրություններում տեղական տոն-մային համայնքների զլլավորող առաջնորդներին կամ ավագնե-րին, պետք է ենթադրել, որ հենց այդ իպաններն ու իշանե-րն էին լինելու տոնաբեր առաջնորդները, տոնմային համայնք-ների կրկնները զլլավորողները: Դժբախտաբար խաղադասները դեսես չեն կարողացել հիշող որոշել այդ բաների իմաստն ու

նշանակությունը լեզվաբանական ու սոցիալական տեսակետից: Եթե, իբրև, իշամ ու իպան առանձնեքով էին կոչվում տոնմային առաջնորդներն ու ավագները Սևանի շրջանի ներկայից, այդ մեք կուշենաք այն ժամանակ ցեղապետների կամ տոնմապետ-ների տեղական հորջորջումը, որը վկայում է տոնմա-ցեղային կազ-մի գոյություն մասին<sup>206</sup>,

XV

ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԳԵՐՂԱՍՏԱՆ

1. ԸՆՏԱՆԵՆԱՆ ԼԱՄԱՅՆՔ

Ջավախքում, ինչպես գրում է Ե. Լալայանը, հոր մահվանից հետո ավագութեանն անցնում է նրա երեց օրդուն: Ճան հաջորդութեան ժամանակ տան մեծի իրավունքը փոքր ինչ սամանափակվում է, նա ծանր գործերում պետք է խորհրդակցի չափահաս եղբայրների հետ ու ստանա նրանց համաձայնությունը: Ես պետք է զգուշանա իր անձնականին վերաբերյալ ծախսերից, որովհետև սրանից ոչ միայն կուլիներ են ծաղում, այլ և մյուս եղբայրներից յուրաքանչյուրը պանանջում է նույնպիսի ծախս և իր համար անել: Սակայն սրա իրավունքը ևս տարածվում է բուրդ անգլամներին, բայց հարսներից թե՛ անշարժ և թե՛ շարժական գույքերի վրա: Հիշյալ դավառի մասին բնագիտ գրեթե վկայում է նաև Ջեկիսակին Բոբալխուսե (Հուսում) էլ գերդաստանի հայրը, ծերանալով և զործից ես քաշվելով, հնազնևակ կորցնում է իր իշխանութունը, չափահաս օրդիններն այլ ևս նախկին խոնարհութեամբ չեն հպատակվում նրան և նա ստիպված է լինում մահարկչիս խնդրերից: Խորհրդակցել սրանց հետ: Այսպես ստում է մի ամօմանակ ևս, և նա է վերջո իր իշխանութունը հանձնում է իր ավագ օրդուն, վերապահելով իրեն միայն ընդհանուր վերահսկողութունը: Ավագ եղբայրն ևս, թեև դարձյալ համարվում է օրդին ամբողջ գերդաստանի ներկայացուցիչ, նրա շահերը շեղական ժողովներում, դատարանում պաշտպանող, ամբողջ գույքի սեփականատեր ու գանձապահ, սակայն և այնպես՝ նրա իշխանութունը բավականաչափ սահմանափակված է. նա պարտավոր է փոքր ի շատև լուրջ խնդիրներում խորհրդակցել իր եղբայրների հետ, հաշիվ սալ գերդաստանի կլ և մուտքի



մասին»<sup>230</sup>, Համանման երևույթ է արձանագրում պրոֆ. Ս. Եղևազարյանն Երևանի գավառի հայերի կենցաղում<sup>231</sup>,

Վերաբերյալ փաստերից ակնհայտ է, որ զերգլաստանի նահապետի մասնավոր կամ անուժ ձեռնօրհան հետևանքով հայրական իշխանությունն անցնում է երեք որդուն, սակայն միաժամանակ նույն փաստերից պարզվում է, որ նոր ժառանգող նահապետի իրավունքները համեմատաբար իր հոր հետ մասամբ նվազում են: Դա բացատրվում է նրանով, որ նոր պայմաններում սեղի է ունենում հայրական իշխանությունը երկրում, առաջանում է նահապետական զերգլաստանի քայքայման պրոցեսը: Հոր, այդ ինքնիշխան պետի մասնավոր երեցություն ժառանգող որդուն կից կանգնած են նրա եղբայրները, որոնք մինչև այժմ վերջինի հետ համահավասար իրավունքներով էին օժտված ու նրան հավասար ջանքերով ու աշխատանքով մասնակից էին ընտանիքի տնտեսական գործունեությանն ու համայնական գույքի անբաժան սեփականատիրությունը: Եղբայրները՝ հասարակական ու արտադրական զարգացող նոր պայմաններում սնված լինելով, չեն կարող արդեն հաշտվել այն մաքի հետ, որ իրենց վաղ եղբայրը հանկարծակի անբաժան աշխարհ մեծ իրավունքներ էր, գործազրի այն իշխանությունն իրենց վերաբերմամբ, որ ուներ երբեմն նրանց հայրը:

Նահապետական զերգլաստանի, այստեղից նաև հայրական իշխանությունն քայքայման պրոցեսը նկատելի է նույնպես մի ուշադրավ երևույթում, որն արձանագրելով, մեր բանահավաքները բացատրել են այլ կերպ: Այդ փաստերը, որոնք սակավաթիվ են միջ հասել, կարծես հակասում են ու տրամագծորեն տարբերվում վերոհիշյալ օրինակներից և նահապետի մասնավոր հետ զերգլաստանի ավագությունն սասնձելու ուրիշ կարգերի մասին են խոսում: Բանասեր Գրիգոր Վանցյանը հիշատակում է մի քանի բնորոշ փաստեր Ձավաթի սովորություններից: «Ղատո գյուղում Դոշոյանց զերգլաստանը, որ բաղկացած է 60 հոգուց և հենց այսօր նահապետական ընտանիքի տիպային ներկայացուցն կարող է համարվել, որի պատճառով էլ նա վախում է ամբողջ գավառի զարմանքն ու հարգանքը, տան վաղը ունի ոչ թե երեք, այլ երբորը եղբայր Մաթոս քենյային. երկու մյուս եղբայրները, թեև առույզ ու խելահաս, կառավարությունը հանձնել են Մաթոսին»

(կրտսերին) իրբե ավելի ճարտարին: Ճանճաղ դյուղում հոր և մեծ եղբոր ներկայությամբ Վանցուն առևր կառավարում է երկրորդ եղբայր Բարսիլը: Նույնն էին մի քանի տարի առաջ Ախթախենց, ինչպես Վերջինից և այլք բազմամարդ զերգլաստանները: Պատահում է, որ տան խաֆը մինչին է պատկանում, իսկ տնտեսական կառավարությունը մի ուրիշին. պատահում է, որ երկու եղբայրները միտին են կառավարում, մի խաֆով՝ այդ տեղ զեր ունի երեցություն հետ նաև ճարտարությունը, փորձառությունը, խելացիությունը, հասարակության մեջ էլ և մուտ ունենալու, «հակաս պարզ անկուժ» ընդունակությունը: Այնպես որ, եթե փոքր եղբայրը կամ հոր կենդանությանը՝ որդին ավելի ճարտար է կրտսերն ու զործունյա, ապա երեցությունը խնայարկում է խելի առաջ և ավագությունն անցնում է փոքրերին»<sup>232</sup>,

Նմանօրինակ երևույթի մասին գրում է նաև Ե. Լալայանը Վարանդայի նահապետական զերգլաստանի կյանքից. «Նոր մասնավորից հետ ընտանիքի կառավարությունը զեկը անմիջորեն անցնում է մեծ որդուն, եթե վերջինս չունի ոչ մի պակասություն և շատ փորձված է. իսկ եթե անընդունակ է և զիրը չունի թե ինչ առնր և թե հասարակության մեջ, այս զեղջում կառավարությունն անցնում է մյուս եղբայրներից ամենից ընդունակի ձեռքը»<sup>233</sup>:

Վերոհիշյալ բանահավաքները և, սրանց հետևելով, մի քանի ուրիշները, սխալ ըմբռնելով երեցի ներկայացրած փաստերը, կարծել են նրանց մեջ տեսնել ինքնուրույն մի ինստիտուտ և այն ստեսկեան են պաշտպանել, որ հայ նահապետական զերգլաստանի կենցաղում ընտանիքի ավագի երեցությունն ու հայրական իշխանությունն հետ զուգահեռ, որոշ վայրերում ձաղկել է նաև իրենց նկարագրած կարգը: Վերջինս միանգամայն հակասում է առնալից հասարակության պատրիարքատեսական կազմին, որի երկու վայրերից մեկին է նահապետական զերգլաստանը: Իսկ այդ հակասությունը հայ նահապետական կենցաղում առաջացել է նրանից, որ նահապետական զերգլաստանի պատրիարքատեսական ընդկրությունը արդեն քայքայման պրոցեսումն էր, հայրական իշխանությունն արդեն կազմալուծման ճանապարհի վրա էր, մի կտուր սոցիալ-տնտեսական մեծնետ, որ չնե կարողացել ըմբռնել մեր բանահավաքները: Այդ մոմենտը բնորոշ է նրանով, որ ցույց է տալիս պատրիարքատի քայքայման աստիճաններից մեկը,

երբ արդեն խախտվել է հայրական իշխանության գործանք, սահայն, ի հարկե, ժամանակավորապես զեռ կանգուն է մնում ընտանեկան համայնքը, որպես անսեսական միավոր, որի զոյու-թյան նախադրյալները առկալին չեն վերացիլ, որովհետև արտադրական պայմանները զեռ ու պահպանում էին իրենց դիրքերը: Տվյալ դեպքում, որ վրիպել է մեր ազգագրական բանահավաքների տեսողութունից, նշմարվում է դեռակտիկ զարգացման այն ուղին, որով նահապետական զերդաստանն իր քայքայումով ընթանում է զեպի հնազառ անհատական ընտանիքը, նահապետականի ալը հատնյալս:

#### 4. ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԳԵՐՊԱՍՏԱՆԻ ՔՍԵՓԱՅՈՒՄԸ

Վերն արժանաթամ մասերից ակններև հետևում է, որ նահապետական զերդաստանն արդեն սկսել էր քայքայվել: Այդ քայքայումն արտահայտվում է կրկու կարևոր մոմենտների մեջ, մի կողմից՝ նոր ժառանգող նահապետի իրավունքների որոշ սահմանավակումը, իսկ մյուս կողմից՝ երեցության սկզբունքի խախտումը: Նահապետի մահվամբ երեց որդու, իբրև զերդաստանի նոր տվադի կամ զլլիի ժառանգած իրավունքները ընտանեկան համայնքի անդամներին և զույգքի, զլլեավորապես իր հարկաբայրներին ու կղարյներին նկատմամբ զղալին կերպով նվազում են և ալլես զուրկ են լիամիտի ընտյթից, որ հատուկ էր նրանց հոր իշխանությանը, հայրական իշխանությանը՝ patria potestas, իբրև ալլալիսին, աարածվում է այժմ միտիայն ժառանգող նոր տվադի որդիներին ու հարսներին վրա և ոչ թև եղալյրներին համայնքից հարկաբայրներին վրա: Այդ քայքայումը մի քանի տեղերում այնչքան է հուու գնում, որ հայրիշխանության գաորրիարխատական սկզբունքը զերդաստանի նահապետի երեցության վերաբրմամբ արդեն սկսում է անէանալ ու տեղի տալ ընտանեկան համայնքի զլլեավորմանն այնպիսի անզամով, որը սարբերվում է ու աչքի է ընկնում իր անհատական առալիլություններով: Այդ հողի վրա սկսում են համախալի դառնալ զերդաստանի արուումները, երբ հոր մահվամբ բաժանվում են կղարյները, էլ չենք ասում հորեղալյրներին:

Դժբախտաբար մեր ազգագրական նյութերը նահապետական զերդաստանի բաժանման մասին անբավաբար տեղեկու-

թյուններ են տալիս: Մեր բանահավաքները չեն կարողացել վերհանել այդ արձանան հիմնական պատճաններն ու էական մոմենտները հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման, արտադրական հարաբերությունների ձևափոխման կապակցությանը:

Նահապետական զերդաստանն իր սոցիալ-տնտեսական ռու-թյամբ միանգամայն դեմ է բաժանմանը, բաժանումով ամբողջովին խորտակվում է այն հիմքը, որի վրա է խարխված հայրական իշխանությանը, արյունահից ազգականների համայնականությանը: Պատմականորեն նայած՝ նահապետական զերդաստանի բաժանումներն իրենց ժողման ու զարգացման առալչես չբնաններում կարող էին տեղի ունենալ միտիայն նահապետի մահից հետո, երբ հայրական իշխանությանը որոշ չափով երկր-վում է թուլանում էլր: Իսկ հետագայում, արտադրական հորաբու-թությունների հաջորդ զարգացման էապայելում, զերդաստանի բաժանումները տեղի էին ունենում նահապետի կենդանության ժամանակ, երբ ապարեղ են գալիս զերդաստանի անդամներին կենտրոնախույս ձգտումները:

Սովորաբար հայ ժողովրդական կենցաղում բազատորեն են վերաբրվում զերդաստանի բաժանումներին, ժողովուրդը բաժան-վելն ավերիչ է համարում: Մի թնդիբը էրկուս զըլլի. մի խար-եր էրկուս կլլատանա— ասում են Ջավախքում: Բորչալիում ճո-ղովուրդը բաժանումը մեղք է համարում, որովհետև քանդում են հայրական սուբը ոջլալը: Աստի, երբ բաժանումից հետո մինի որդին կամ կենդանին մեռում է, ասում են, բաժանըը նրա վրա լնեակվ՝ (ԱՀ, X, 129):

Հայ նահապետական զերդաստանի բաժանման պատմու-թյունը զիտողության աունելիս՝ նկատում ենք, որ այլուեղ կասարվում են բաժանումներ թև նահապետի կենդանության և թև մահվան ժամանակ: Այդ երկու տեսակ բաժանման մոմենտները հորի է իբրից տարբերել, յուրաքանչյուրն այդ մոմենտներից տարբեր հասարակական նշանակություն ունի, տարբեր անտեսու-կան հետևանքներ է հանդուս, երկտող մոմենտը, այն է՝ նահապետի մահվամբ տեղի ունեցող ընկառնումը՝ ապարեղի վրա է դնում մի գույք, որ պիտի հասնի արուվող ժառանգներին, որոնք ոգավում են զործող ժառանգական իրավունքից կամ ըստ սիրող ժողովրդական սովորույթների կամ ըստ պետական

օրհնարութեան Այդ մտմեաւ լրա կանգ առնել ավելորդ ենք համարում, քանի որ այս զեպքում այլևս վերանում է նահապետական գերդաստանը, և համայնական դուրբ ժառանգական իրավունքի նորմերով դառնում է մասնավոր անհատական սեփականութեան<sup>234</sup>: Այլևի ուշադրով է վերոհիշյալ առաջին մտմեաւ՝ նահապետական գերդաստանի բաժանումը նահապետի կենդանու- թյան ժամանակ, մի մտմեաւ, որ ցայտուն պատկեր է ներկայացնում ընտանեկան համայնքի քայքայման և ընդ սկիւն ուրեմն սահմային հասարակական ձևի վերջին մնացուկները անկացման պրոցեսի:

Ընդհանրապես բաժանվող որդին աղատվում է հայրական իշխանութեանից և իրազտ խղում է իր բոլոր անտեսական կապերը հոր ամեն հետ: Նույնիսկ հետագայում, հոր մահվամբ, նա այլևս իրավունք չունի մասնակցել ժառանգութեանը, որ ամբողջովին անցնում է այն որդիներին, որոնք անբաժան աղբյւր էին իրենց հոր հետ միասին մինչև նրա կյանքի վերջը<sup>235</sup>: Բորչալիում, եթե հայրը գերդաստանից բաժանվող որդուն ընթան հասնելիք բաժինն արգեն տված է լինում, այդ որդին այլևս ոչ մի իրավունք չի ունենում հայրական դուրբի վրա, այդ բոլորը բաժանվում է անբաժան եղբայրների մեջ՝ (ԱՆ, X, 128):

Եթե որդիները բաժանվում են նահապետի կենդանութեան ժամանակ, նրանց ստանալի մասերի քանակը կախված է բացառապես գերդաստանի մեծի կամքից, որովում է հայրական իշխանութեամբ: Քանի որ իրականում, ավյալ հասարակական հարաբերութեաններում նահապետն է հանդիսանում ընտանեկան համայնքի իրավաբանական անձը, նրա ներկայացուցիչ-սեփականատերն ու կորագաղթը, բնական է, թե ինչ մեծ զեր է խողում այս զեպքում հայրական իշխանութեանն ու կամքը: Հայրը, հիմնովիով իր այդ իշխանութեան վրա, կարող է բոլորովին գրիչը բաժանվող որդուն ընդհանուր դուրբի որևէ մասից: Զաւախբում հոճախ պատահում է, որ որդու վրա բարկացած հայրը ոչինչ չի տալիս նրան. «էլիկը կուտա ձեռքք և դուրս կենեք»<sup>236</sup>, նույնն ենք տեսնում Բորչալիում (ԱՆ, X, 128) և Ալեքսանդրուպոլի գավառում<sup>237</sup>:

Բաժանվող որդու բացարձակ զրկումն իրեն հասնելիք մասից ընդհանրապես չի ընդունված գյուղացիական կենցաղում:

այդ կարող է տեղի ունենալ սովոր ու բացառիկ զեպքերում, երբ որդին իր շույլ կամ փուչ վարքով արտավորում է նահապետական գերդաստանը: Այդպիսի որդու արտաքսման համար հասարակական կարծիքը չի պատասխարում հորը, որովհետև որդու պարտականութեանն է պահպանել «հորական օջախի» բարի անունն ու պատիվը, սահմային ավանդները: Երբ նա զավանդում է իր պարտականութեանները և ստնակիս է անում նահապետական ամեն զատիվը, այն ժամանակ հասարակական կարծիքը դրոշմվում է նրան «թեօջախ» անունը, որ հանդուրժելի չէ ոչ մի օրինակով նահապետական գերդաստանում<sup>238</sup>:

Սակայն Բորչալիում հոր մահից հետո գրկված եղբայրը գյուղական համայնքի միջամտութեամբ հավասար բաժին է պահանջում իր եղբայրներից և ստանում (ԱՆ, X, 127): Բացի այդ՝ գրկված որդին տակավին հոր կենդանութեան ժամանակ իրավունք ունի միայն մի պտանջը դնելու, այն է՝ իրեն չզրկել հորից: Այդպիսի զեպքում գյուղական համայնքը կարող է այդ անում միայն միջամտել. «Նա կարող է պահանջել, որ հայրը հանձնի այդ բաժանվող որդուն այն հոգաբարձիներ, որ նա ստացել է համայնական հողերից այդ որդու հաշիվն» (անդ): Թեև որդու բաժանման զեպքում «հայրը լիազոր է ստու նրան» (ինչ որ կամենա, բայց երբեք ավելի, քան նրան կհասնի») (ԱՆ, X, 127): Սովորաբար ընդունված է, որ հայրը հեռացող որդուն տա այնքան անչափ ու շարժական դուրբ համայնական ստացվածքից, որքան անհրաժեշտ է նոր ընտանիք, նոր անտեսութեան հիմնելու համար: Սակայն մեծ մասամբ բաժանվող ստանալիքի քանակը կախված է այն հանդամանքից, թե որդին բաժանվում է հոր համաձայնութեամբ, թե՛ նրա կամքի հակառակ: Վերջին զեպքում որդու վարժուհեքը համարվում է վերավորանք, որի պատճառով էլ բաժանվող որդին չի կարող հույս դնել իր ստանալիք մասի բավարար քանակի վրա:

Այն պարագայում, երբ հոր կենդանութեան ժամանակ բոլոր եղբայրները ցանկանում են բաժանվել, հայրը, իհարկե, այլևս անզոր է լինում օգտվելու իր հայրական իշխանութեանից և զրկելու նրանց: Այդպիսի բաժանումների ատարակն են, երբ հայրն որդին ձեռնարկում սովորված է լինում եւ քաշվել տան կուտավարութեանից: Բորչալիում այսպիսի զեպքերում «եղբայրներն

են հորը բաժին տալիս. նրանք հաճախ մի այդի, մի արտ են հատկացնում նրան, որպեսզի նրա արդյունքով ապրի, իսկ նրա մահից հետո կրկին բաժանովի եղբայրների միջև: Երբեմն էլ մի դուժար են տալիս նրան, սր մի մասը ծախսի, մյուսն էլ թողնի թաղամասու հողահայեի ծախսերը հողալու համար: Այս դեպքերը, որ 300—500 սուր. է անում, կոչվում է հողերաժող: Երբեմն էլ, կիկն նա գեւեւ առաջ է, եղբոր հավասար մասն են տալիս: Հայրն ընտրում է որդիներից մեկին, սովորաբար փոքրին, և նրա մաս առնում է, թողնելով իր ունեցածը նրան: Իսկ եթե առանձին է ապրում, մահից հետո որդիները կրկին հավաքվում են թաղաման ծախսերը հողալու և թե նրա ունեցածն իրենց մեջ բաժանելու:» (ԱՀ, X, 128):

Այսպիսով, նահապետական գերդաստանը ժամանակի ընթացքում ենթակա է կազմալուծման, որի պատճառները հարկ է որոնել հենց այդ հայրիշխանական ընտանիքի մեջ թաքնված հակասություններում:

Նահապետական գերդաստանի ներքին կյանքի ընտրված կերպի մեկն էլ այն է, որ այդպես անձը միանգամայն կլանված, միաձուլված է ընտանեկան համայնքի զանգվածում, կաշկանդված է ասից մինչև զլուխ իր համայնքի նեղ շահերով. անհատի ինքնուրույնությունը հողատակված է նահապետին, հայրական իշխանությունը, որով իմաստավորվում էր ընտանեկան կոլեկտիվը: Ինչպես որ տոհմային հասարակություն մեջ, տիրող արտադրական հարաբերություններում, առանձին անհատ անդր էր իր սոսնի տահմաններից դուրս իր գոյությունը պահպանելու, այնպես էլ անհատն իր ընտանեկան համայնքից դուրս անձար մի մարդ էր դառնում: Համայնքը բնավ թույլ չէր տալիս իր ընտանիքին պատկանող առանձին անձերին, որ սրանք կտրուկանային իրենց անհատական շնորհքը, ընդունակությունը, էներգիան դարդացնելու, կատարելագործելու. ըստ իրենց ձեռք առնելի, ցանկություններով ՎՄԻ չափանված բան կլինի նահապետական գերդաստանում, երբ գլուխացին մի ինքնուրույն արտաքին կարգի գործ սկսի առանց իր ընտանիքի նախանդամի, որ մեծի Դո այն ստատիկան հանդուպն քայլ է, որ առիթ կդառնա ընտանեկան ընդհարումների, երկպառակությունների: Ուրիշ խոսքով՝ հայ գյուղացին առանց իր մեծի հրամանի իրավուն չուներ իր հո-

պագործական արդյունքն իր կամքով անօրինել. ինքն իրեն առ ու ծախս անելի իր վարն իր հայեցողությունը սկսել: Ամեն մի գործում, ամեն մի քայլափոխում հայ ընտանիքը պարտավոր է իր մեծի, իր նախանդամի հրամանով շարժվել, նրա իրավունքով նրա ու կաց անելը<sup>230</sup>:

Հետևապես նահապետական գերդաստանն իր ամբողջ էությունով՝ թե իր արտադրական եղանակներում, տնտեսական տեխնիկայում և թե իր սոցիալական հարաբերություններում հակված է ավելի շուտ դեպի հին պատկանական ավանդապատկություն: պահպանողականությունը, ուստիման, քան թե սոցիալիկ նորարձակ նախաձեռնություն, ինքնագործունեություն, կենդանի հարտերցման ոգով:

Երբ աչքի ենք անցկացնում այն բազմաթիվ փաստերը, որոնք մեր աղագրական նյութներում առաջ են բերված իբրև պատճառներ հայ նահապետական գերդաստանի քայքայման, կըրհաճանք, որ հիշված տվյալները ոչ թե պատճառներ են, այլ ավելի շուտ հետևանքներն արդեն սկսված կաղմալուծման, որի հիմնական պատճառները շատ անգամ վրիպում են մեր բանահավաքների անփորձ աչքերից: Այդ փաստերից ստորև հիշատակում ենք ամենաբնորոշները, դասավորելով էական նշանակություն և բնույթաբարձր ընտյթ կրող օրինակները:

Երբեմն ընտանիքի բաժանման սկիզբը գլխավորապես կանայք կղնեն, երբեմն նա մարդիկ: Կանայք խմբված լինելով ամեն մեջ և մասնավանդ բուխանդի բնավորություն ունենալով, չնչին բաները առիթով վեճ ու կռիվ հանելու շատ առիթներ կունենան. այդ վեճերն երբեմն այնքան սուր կերպաբան կատանան, որ մարդիկ ուրիշ միջոց չգտնելով՝ եղբայրական խաղաղ առաջարկություն կբաժանվին իրարմի: Երկրորդ և ամենամեծ պատճառը զեռ հոր կենդանություն ժամանակ որոշոց առանձին դրամ պահելու և հարստություն գրիցելու ամենավատ սովորությունն է (սարմիս)<sup>231</sup>: Չավաքում ժողովուրդը բաժանման գլխավոր պատճառը սեզերինիկների անհամաձայնությունն է համարում. հետևանքը՝ կռիվներ են, որոնք առաջանում են նրանից, որ հարսները չեն ցանկանում նախնի սովորությունով իրենց արտադրականությունները կատարել անային աշխատանքի վերաբերմամբ: Բացի դրանից՝ այդ տեսակ կռիվների առիթ են գառ-

նում հարաների փոխադարձ զորութեան ղեկները, սկեսուրի աչառու և խիստ վերաբերմունքը ղեկի հարաները, կանանց արնագինն, որով փորձում են օգտվելու ամուսինները իրենց կանանց դիտութեամբ և դերդաստանի մյուս անդամներից զազանապես առանձին շահեցնելով զուրբ<sup>241</sup>: Գրեթե նույն երևույթը տեղի ունի Բորչալիում (Լոուս գավառում) (ԱՀ, X, 126—129):

Սակայն կան և բազմաթիվ փաստեր, որ ոչ միայն կանայք, այլ և յայլ մարդիկ ստիժ են տալիս զերգաստանի բաժանման: Բուլանթիում Եղրամասեր եղբայրներն առաջվա նման սիրով ու սրտացավանքով չեն աշխատեք տան օգտին, ժի՛մ ու ջու՛մ—ի հետ ծառայությունն ու անասրբերութեանը կժամենն տանից ներս և քանի հատ ոսկի ունեցողի համար այլևս տան շին կամ ավեր մնալը հոգ չի պատճառիր, որովհետև վտան է (սարթիսլի տերը), որ եթե տունը քանդվի (բաժանվի) էլ, ժառանգություն մի մասին դո՛նե տեք է ինքը և պարտատի դրամով կարող է նոր տուն ու տեղ զնեղ և ապրել թերևս առաջվանից ավելի լավ (անդ): Նույնն է կատարվում Ջավախքում, ժեղոր չափանա սրդիները աշխատանքն ընդհանուրին է պատկանում և անհաղաղ հանձնվում է տան մե՛ծին, սակայն ուս զրկված է ժառանգության իրավունքից. 20—30 տարի աշխատող օրգու հայրը կամ եղբայրը հավասար բաժին է աւնում դուքս 15 տարեկան եղբոր հետ: Նույն հիմունքով էլ, երբ եղբայրները մի քանիսը շատ որդիներ են ունենում, մյուսները չեն հոժարում հավասար աշխատք քանի որ մյուս եղբոր որդիները շատ են ուտում (անդ): Բորչալուի գավառում զերգաստանի քայքայման պատճառ է դառնում զպարզամեծներին տարբերությունը, որ շատ անգամ առաջանում է վարելանդերի պահատությունից: Գերգաստանի անգամներց մի քանիսը ստիպված են լինում դաղթել՝ քաղաքներում աշխատելու. ընդունում են այնտեղի զաղափորներն ու սովորությունները. իրենց վաստակն ամբողջովին տան մե՛ծին չեն ուղարկում. շատ անգամ ցանկանում են իրենց կնոջն իրենց մոտ տանել, իրենց երեխային ուսումն ատը. մինչդեռ զերգաստանը հակառակում է, որովհետև մյուս երեխաներին ուսման չեն սպա՛մ կամ բոլորովին չի կարելի տալ: Անդամներից մի քանիսն էլ արհեստներ են սովորում և, ավելի վաստակելով քան երկրագործ անգամները, ցանկանում են բաժանվել, իրենց ամբողջ վաստակ

իրենք վայելելու համար (ԱՀ, X, 126): Դազախի գավառում գնայերի մեջ ընտանեկան բաժանքները նահապետի կենդանութեան ժամանակ սակավազեպ են, սակայն վերջին ժամանակ զարկել են հաճախակի երևույթ: Որքան որ գյուղը հեռու է գտնվում մե՛ծ ճանապարհներից ու անտարական շուկաներից, որքան որ նա չի նեղվում իրեն հատկացված հողատեսերի քանակից և որքան որ ավելի թույլ կերպով է յուրացնում նորագույն ժամանակի սրաղ զարգացող կենսական պահանջները, այնքան ավելի կայուն ենք տեսնում ունեղ զերգաստաններ 30—40 հողուց քաղցկեցած նահապետ-ձերուկի զլիավորությունը: Բայց բավական է, որ այդ պայմաններում մասնաւս տան մե՛ծը՝ ձերուկը և հաճախապետական զերգաստանն սկսում է սրոնվիլ, բաժանվել ու սողբաստնոր: Սակայն զերգաստանի բաժանքներն ավելի հաճախ տեղի են ունենում սակավազ ու ոչ այնքան ունեղ զերգաստաններին մե՛ծը<sup>242</sup>, Լոմանիշ երևույթներ ենք գտնում Ջավախքում և այլ գավառներում:

Վերբերյալ բոլոր փաստերից եղրակացնում ենք, որ անհատականությունը դուռն է բարձրացնում զերգաստանի համայնական կյանքում և խարխուլում, քանդում է հայրիշխանական բնատանիքի ամբողջ շինքը: Մոլում են անձնական շահեր համայնականի փոխարեն. ծաղում են մասնավոր սեփականության ձգտումներ՝ ընտանեկան կրեկտվով սեփականության փոխարեն: Անհատականությունը հայ նահապետական զերգաստանում առաջացել է նոր զարգացող սոցիալ-անտեսական պայմաններից, որոնք և իսկապես պետք է համարել հայրիշխանական բնատանիքի կաղամուրձման ու քայքայման հիմնական պատճառները:

Մենք սուսանք նահապետական զերգաստանի բովանդակ անտեսական ձևն ու ներքին հարաբերությունները: Այստեղբուլթյան այդ ձևն էր, որ բնատնտեսության պայմաններում հայուն էր պահում համայնական սեփականությունը: Մակայն այդ համայնական կաղամի խորունկ ծալքերում թաքնված էին հակասութեան սպա՛մեր: Այդ հակասություններից մեկն էր արևադիեր կամ արվալն՝ կանանց անձնական սեփականությունը, որ գոյանում էր նշանադիրքի ու հարսանիքի ընթացքում ստացված նվիրներից և որը նորահարսը բերում էր իր հետ ստանալու տունը, ուր նա չէր միացվում համայնական գույքին: Իսկ դա բավական էր, որ հի-

շյալ մասնավոր դուշը, իրավաբանորեն կենդը պատկանող, փաստորեն դառնար, ինչպես ակնհերև է վերը բերված փաստերից, նրա ամուսնու շահագործման ու անօրինման ապարկա, վարժեցնելով այդ ամուսնական դուշը մասնավոր սեփականատիրության արտոթմակները նախապեսական զերդաստանի համայնական միջնորդում: Իսկ որովհետև յուրաքանչյուր զերդաստանում նույնքան այդպիսի դուշեր էին լինում, որքան և ամուսնացած կզարյաներ, սրբիներ, թևերև և թոռներ, ապա դժվար չէ կռահել, թե համայնական դուշը մեջ խցկված այդ մասնավոր սեփականություններն ինչ իրույթային քայքայիչ ավերումներ էին դրոճում ընտանեկան համայնքի հիմքերում: Այստեղ գիպելիով զարգացման մի ընդդէ կրեւոյթ է աչքի ընկնում: Եթե պատրիարխատը (հայրիշխանութիւնը) զհանապի սեռի համաշխարհային նշանակութիւն ունեցող պարտութիւնն էր», ապա նույն այդ հաղթանարված կանացի սեռի ձեռքին մարտիրոսութից (մայրիշխանութիւնից) Մնացած մի փոքր սեփականատիրութիւն վերապրուկն ընդունակ կզով իր հերթին խարխիւ պատրիարխատը ընտանեկան համայնքը և յուր կողմից խթանել նրա կատարայլ քայքայումը:

Մի այլ հակասութիւնն էլ, որ թաքնված էր նահապետական զերդաստանում, դա աշխատանքի բաժանումն էր, մի կարեւոր գործոն նրա արտադրական ձեւերում: Ինչպես վերը նկատարել ենք (X դ.) նահապետական զերդաստանում տիրում էր աշխատանքի բնական բաժանումը: Սակայն աշխատանքի այդ սեռա-հասարակչին բաժանումը բովանդակում էր իր մեջ այնպիսի գործողութիւններ, որոնք արտադրողական ուժերի զարգացումով վերջի վերջը վերածվում էին զանազան անհատների, անկախ սեռից ու հասակից, առանձնակի մասնազիտական ֆունկցիաների և որոնք արդեն բարդացած անտեսութիւն մեջ այլ ևս չէին կարող կատարվիլ միևնույն անձի ձեռքով, ինչպես դա յուրահատուկ էր համայնքի միասնական արտադրական օրգանիզմին: Աշխատանքի բնական բաժանումը վերածվում է աշխատանքի հասարակական բաժանման, ուր արդեն զեր է խաղած անհատական, անձնական աշխատանքը: Իսկ աշխատանքի անհատականացումը տանում է դեպի նրա արտադրած արդուներին անհատական յուրացումը և զեպի ապրանքային փոխանակութիւնը:

որոնք խորտակում են ընտանեկան համայնքի սոցիալ-տնտեսական իրականացի կազմը, առաջացնելով նրա մեջ արտադրողների, առաջող անդամների տրոհում: Աշխատանքի այդ բաժանումը, ասում է մ. Ընդելսը, զխարխում է արտադրութիւն և յուրացման բնականաբանութիւն հիմքերը, ընդհանուր կանոն է դարձնում յուրացումը առանձին անհատների կողմից» (ԷԼՄ, 212):

Այսպիսով նահապետական զերդաստանն ինքն իր մեջ էր պարփակում այն հակասութիւնները, որոնք, զարգանալով, ներսից սրայիցըրին այդ յուրահատուկ կազմը, որ ստանալին հասարակութիւն տղայմաններում էր ձևավորվիլ: Արդեն կարը Մարքսն ու մ. Ընդելսը նշել են իրենց ուսումնասիրութիւններում նախնադարյան կոմունիզմի այն հիմնական առանձնահատկութիւնը, որ նախարյան կրկնվող սեփականութիւնը համապատասխանում է միշտ արտադրողական ուժերի զարգացման հարաբերաբար ցածր մակարդակը: Սակայն արտադրողական ուժերը թմբած չեն. նրանք զարգանում են ու հանում այնպիսի մակարդակի, երբ կրկնվում, համայնական սեփականութիւնն իր զարգացման ձևից վերափոխվում է ու դառնում մի կաշկանդ, որ խափանում է արտադրողական ուժերի հետագա զարգացումը: Այդ են սպացուցում վերը հիշատակված մի շարք աղբազրողական նյութերը նահապետական զերդաստանի քայքայման պատճառների մասին: Որքան ավելի քիչ է զարգացած դեռ աշխատանքը, գրում է մ. Ընդելսը, որքան ավելի սանտնափակ է նրա արտադրանքների քանակութիւնը, որքան նաև հասարակութիւնն հարստութիւնը, այնքան ավելի ավյալ հասարակարգում զերտկող տիրապետութիւնն են ձեռք բերում սեռական կարգերը: Սակայն այս, սեռական կողերի վրա հիմնված, հասարակութիւն մեջ հեղուկան ավելի ու ավելի է զարգանում աշխատանքի արտադրողականութիւնը, իսկ դրա հետ միասին զարգանում են մասնավոր սեփականութիւնն ու փոխանակութիւնը, հարստութիւնն տարբերութիւնները, որիչի աշխատանքի ուժը գործազրկելու հարավորութիւնները...» (ԷԼՄ, 4):

Արտադրողական ուժերի զարգացումով ու բնական անտեսութիւնն անկումով, երբ հասարակութիւնն անտեսական գործուհեութիւն մեջ ստապրիզ են զալիլ նոր գործոններ՝ աշխատանքի հասարակական բաժանումը, ապրանքային փոխանակութիւնը,

զբամական շրջանառութիւնը, ակնհեր է, որ չքանուած են հետզհետեւ այն սոցիալ-տնտեսական պայմանները, որոնց միջով այլընտրուակ դարգանում և ապրում էր հայ նահապետական գերդաստանը: Նոր զարգացող արտադրական հարաբերութիւններում ծառայում են արդեն անհատականութեան ղեկը ու մասնավոր սեփականութիւնը ընտանեկան համայնքի գեմ, բաժան-բաժան են մտնում նրան: Գոյանում են անհատական ընտանիքներ, իրենց մասնավոր սեփականատիրական գույքով: Առաջ են դալիս նոր սոցիալական ստրբեր և հիմք է զրվում դասակարգային հակազդութիւնները:

### XVI

#### ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Տոնմային հասարակութիւնն իր դիպիկտիկ զարգացման վերջին էտապում, ընտանեկան համայնքի միջով, փոխվում է գլոյդակալիմ հումայնի: Արտադրողական ուժերի հարաճում զարգացումը բարձրացնում է հասարակական անտեսութիւնը, որի հետևանքով աճում և խտանում է ազգայնակութիւնը: Այս պրոցեսն ավելի մեծ չափերով զգալ է տալիս իր մասին երկրագործական համայնքներում: Եթե տոնմային հասարակութիւնն իր սկզբնական շրջանում ազատներն օգտվում էր իր համայնական հողերից, ապա բնակչութեան աճումով՝ այդ հողերի օգտագործման կարգերում առաջանում են որոշ դժվարութիւններ, որոնք պատճառ են լինում հողօգտագործման մեջ մտցնելու որոշ սահմանափակումներ, նորմալիզել հողային ֆոնդը համայնական տոնմային հասարակութեանը պատկանող ընտանեկան համայնքների կարգերից: Բացի այդ՝ հողի սղութեան պատճառով հարևան տոնմային հասարակութիւնների առանձին ընտանեկան համայնքներն իրենց վարելահողերի սահմաններում սկսում են համախմբվել: Առաջանում է նոր հասարակական կազմակերպութիւն, այն է՝ գրիցային համայնք, այլապես գլոյդական համայնք, որն իր սկզբնական շրջանում զետեւ գլոյդութիւն ուներ տոնմային կազմի հետ դուզանա:

Գլոյդական համայնքը, առաջանալով տոնմային համայնքից, ինքնին չի վերացնում իր միջից ընտանեկան համայնքի դոյու-

թիւնը: Ընդհակառակը, վերջինս հետագայում գլոյդական համայնքի շրջանակներէ մեջ ավելի զարգանում ու ամբանում է, որպէս ինքնավար տնտեսական անտեսական կազմ: Այսպիսով գլոյդական համայնքը հանդիսանում է տոնմային հասարակութեան բոլորային վերջին օղակը, արեւալիկ հասարակութեան անդասակարգ շրջանակի փոխանցիկ էտապը, որն իր մեջ պարփակում է հովուց, դիպիկտորին զարգացող դասակարգային հասարակութեան, այն է՝ ֆեոդալական կազմի նախադրայնները: Ելուդական համայնքը, — դրում է Կարլ Մարքսը, — լինելով հասարակութեան սկզբնական կազմակերպման վերջին փուլը, միեւնոյն ժամանակ հանդիսանում է փոխանցիկ փուլ դեպի հաջորդ երկրորդ կազմակերպումը, այսինքն մի փոխանցիկ փուլ՝ ընդհանուր սեփականութեան վրա հիմնված հասարակութեանից դեպի մասնավոր սեփականութեան վրա հիմնված հասարակութիւնը» (MIT3, 285):

Որո՞նք են գլոյդական համայնքի հատկանշիչները: Գլոյդական համայնքը, առաջանալով տոնմային հասարակութեանից, այնուամենայնիվ պահպանում է իր մեջ նախորդ տոնմային կազմի բնորոշ գծերը: Ամենակեանս այստեղ այն է, որ անխախտ են մնում հողերի ընդհանուր սեփականութիւնը և ընտանեկան համայնքների գոյութիւնը, որոնք այժմ համարում են ոչ թե տոնմային, այլ գլոյդական համայնքի բաղկացուցիչ կոմիտիով անդամներ: Մակայն գլոյդական համայնքի մեջ մտած ընտանիքները շաղկապող ցեղենուր ոչ թե տոնմային ազգակցութիւնն է, այլ անտեսական-արտադրական փոխադարձ կախումը, որով տոնմային համայնքն իրականում գտնում է տերիտորիալ համայնք:

Այսպէս է ընտեթադրում Կ. Մարքսը գլոյդական համայնքի բնորոշ հիմնական գծերը. 1) հողը մնում է հասարակական ընդհանուր սեփականութիւն ամբողջ գլոյդական համայնքի, բայց այդ հողը «պարբերաբար վերաբաժանվում է գլոյդական համայնքի անդամներին միջև, այնպէս որ յուրաքանչյուրն իր սեփական հաշիվով մշակում է իրեն հատկացված հողաբաժինները և բերքը դարձնում է իր սեփականութեանը. 2) «գլոյդական համայնքում սուէք և նրան կից բաւը պատկանում է երկրագործին իր բն անհատական սեփականութեանը» և 3) «կարելիով պորտապա-

բանը, որ նրան միացնում էր բնության հետ, նա զգանում է ազատ մարդկանց առաջին սոցիալական խմբավորումը, որոնք միացած կեն իրար հետ արևնակցական կապերով» (ՄՊԶ, 284)։

Ուրեմն նախորդ ազգակազմի սկզբունքը, որի վրա էր իրարսխմած տոնմային համայնքը, այժմ հետզհետե վերանում է։ Զանազան տոնմերին պատկանող խմբավորումները միանում է խառնվում են, կազմակերպվելով ըստ տերիտորիաների, ուր կենտրոնանում է նրանց բովանդակ տնտեսական զործունեությունն ու հասարակական կյանքը։ Նախկին տոնմի համայնական հողը արոճվում է, դառնալով գյուղական համայնքների պատկանող հանուր հողաչին ֆունդը, որոնք իրենց հերթին բաժանվում են առանձին մշակելի հողամասերի ըստ ընտանեկան համայնքների համամասն ուսողների քանակի, և ապա հետագայում սպարերաբար նորից վերաբաժանվում են գյուղական համայնքների մեջ տեղի ունեցող փոփոխումների ըստ գերզաստանների քանակության։ Անբաժանելի են մնում միայն անտառները, արտաավայրերը և այլ նման հողերը, որոնք շարունակում են ծառայել ընդհանուր կողմերի՝ օգտագործմանն ամբողջ գյուղական համայնքի համար։ Սակայն գյուղական համայնական հողերը, մասնահատվելով առանձին ընտանեկան համայնքներ միջև, իրենց ամբողջությամբ շարունակվում են մնալ որպես ընդհանուր ցեղային սեփականություն, որպես պատկանելիք այն ցեղի, որի կազմի մեջ էին այդ տոնմերը։

Գյուղական համայնքի զոչացումով, որ ներկայացնում է իրենով նոր սոցիալ-տնտեսական կազմակերպություն և միանգամայն տարբեր նախկին տոնմային կոլեկտիվիզմին, առաջանում է նաև այդ նոր հասարակական կազմին յուրահատուկ զեկավարություն։ Եթե տոնմային հասարակություններում կային տոնմային ավազներ ու առաջնորդներ, կամ տոնմապետներ, որոնք զեկավարում էին տոնմի հասարակական ու արտադրական բովանդակ կյանքը, ապա ևս առավել այդ զեկավարությունն պահանջում են անբաժանելությունը զարգանում են գյուղական համայնքում։ Այստեղ արտադրական հարաբերություններն ավելի բարդանում են, իսկ այդ արտադրական հարաբերությունները նրա ներքում բնորոշվում են նրանով, որ զարգանում է աշխատանքի հասարակական բաժանումը, սկսում է անջատվել ու ինքնուրույ-

նանով կազմակերպչական զործունեությունը և վերջապես երևան են գալիս փոխանակություն առաջին ձևերը։ Սկսում են ծագել սոցիալ-տնտեսական հակասությունները, բաղխումները թե՛ գյուղական համայնքի մեջ մտնող գերզաստանների միջև և թե՛ առանձին գյուղական համայնքների միջև, չնայած, որ զեկու գյուղական համայնքում, — գրում է Էնգելսը — տեղիցից ի վեր գոյություն ունեին ընդհանուր շահեր, որոնց պահպանումը, ընդհանուրի հակոպությունները, հանձնվում էր առանձին տնտեսաների, որպեսզի որոնք լուծեն վիճելի խնդիրները, ճնշեն առանձին անգամների անիրավացի արարքները, հսկեն ջրերի կարգավորման վրա, մանավանդ տաք երկիրներում, վերջապես՝ սասաններն կրոնական ֆունդիցիաներ» (ԷՄԴ, 231—232)։

Եվ նաև տոնմապետի փոխարեն հանդես է գալիս գյուղական համայնքի զեկավար-առաջնորդը հանձին գյուղապետի։ Առաջին գյուղապետներն անշուշտ լինելու էին ավյալ գյուղի, երբ նա ամբողջովին տոնմային համայնք էր ներկայացնում, նույն տոնմապետները, տոնմային նախապետները։ Սակայն հետագայում գյուղապետի ֆունկցիաները կենտրոնանում են գյուղական համայնքի ամենահարուստ ու ամենազգեցելի նահապետական պերզաստանի ընտանեկան համայնքի ավազի կամ նահապետի ձեռքին։ Այսպեսով առաջանում են հասուկ օրգաններ ընդհանուր շահերի ու վիճելի խնդիրների պաշտպանություն համար։ «Այս ամբողջությունը, — գրում է Յ. Էնգելսը, — արդեն հանդես գալով իբրև ամբողջ խմբավորման ընդհանուր շահերի ներկայացուցիչներ, յուրաքանչյուր համայնքի հանդեպ առանձնահատուկ վերաբերմունք են ունենում, իսկ որոշ պարագաներում նույնիսկ հակասուկ դերք զբաղվում, ընդորում շատով նրանք ավելի մեծ ենք նախալուծություն են ստանում, մասամբ ընտրելով պաշտոնավարության ժառանգականություն, որը բնականորեն անող միջավայրում տեղի է ունենում ինքնաբերաբար, մասամբ էլ շնորհիվ այն հարաձուռն անհրաժեշտություն, որը բղխում է մյուս խմբավորումների հետ հաճախակի դարձող ընդհարումներից» (ԷՄԴ, 232)։ Ինչպես հետևեցնում ենք վերաբերյալներից, գյուղական համայնքը, քայքայելով տոնմային հասարակության ամբողջ կազմն ու զբաղվելով նրա տեղը, ինքն արդեն պարունակում էր իր



մեջ այն գործոնները, որոնք վերջնականորեն անկացրին սոսնա-  
յին համայնական սեփականատիրութիւնը և, աճեցնելով նրա  
նրաւում ժամնալոր սեփականութիւնը, ճանապարհ հարթեցին  
հասարակութեան վերափոխմանն ըստ դատակարգային ձևերի Անա-  
թի ինչպէս և լուսարանում Կ. Մարքան այդ վերափոխման պը-  
րոցները. «Հասկանալի է, որ գլուղական համայնքին յուրանա-  
տուկ գուլպիզը (երկրութիւնը) կարող է նրան գտնակեղևի  
հուժկու կայանքով Ազատելով արևնակցական ազգակցութեան  
ամուր, բայց սերտ կապերից, նա կայուն հիմք է ստանում չորի  
հանուր սեփականութեան մեջ և զրանից ըզխող հասարակական  
հարաբերութեաններում և մինչևայն ժամանակ տունն ու սրան  
հարակից բակը, որ անհատական զերգաստանի բացառիկ սերու-  
թյունն է դառնում, պարզեցրածային անստույթյունն ու սրտ  
արագաբեքների մտանայն յուրաքանչիւր նպաստում են անձնավո-  
րութեան զարգացմանը, որ անհամատեղելի է ավելի հնազույն  
համայնքների կազմի հետ: Ստիպան պակաս սկներն չէ, որ ժա-  
մանակի ընթացքում նույն այդ գուլպիզը կարող է փոխվել քա-  
ջայանս սերմի: Ձխտելով ամեն տեսակ օտարութի, դրսից ներմը-  
տած ազգեցութեաններն մասին, համայնքն իր սեփական ըն-  
դերքում կրում է իրեն հյուսնող տարրերը: Հողի մասնավոր սե-  
փականութեանն արդեն ներխուժել է նրա մեջ՝ տան ձևով ու  
հանդիմ նրա գլուղական բակով, և այդ տունը կարող է դառնա-  
լով մի ամբողջ, ուսկից նախապատրաստվում են հարձակուները  
զործելու ընդհանուրի հողի վրա: Այդ տեղի էր ունենում Ստիպան  
ամենակահանը՝ պարզեցրածային տնտեսութեանն է, որպես մաս-  
նավոր յուրացման ազգյուր: Նա հիմք է ապիս կենտրոնացնե-  
ու շարժական դուշքը, օրինակ՝ անասուններ, դրամ, կրեմն էլ  
սպրիկներն ու ձորտեր: Համայնքի կոնտրոլին չենթարկվող այդ  
շարժական գույքը, անհատական փոխանակումների այդ առար-  
կան, որոնց մեջ խորանանկութեանն ու պատահականութեանն  
այնքան մեծ դեր են խաղում, ավելի ու ավելի ուժգին կճնշի  
բովանդակի գլուղական անստույթյան վրա: Անա այն մտնեալը,  
որ քայքայում է նախնապարջան տնտեսական ու սոցիալական  
հավասարութիւնը: Նա իր հետ բերում է օտարութի տարրեր,  
որոնք համայնքի ընդերքում հարուցում են շահերի ու կրքերի  
բաղադրանք և ընդունակ են քայքայել հանուր սեփականու-

թիւնը նախ՝ վարելահողերի, ապա նաև անասունների, արտա-  
վարների, խոզան հողերի և այլի վերաբերմամբ, որպիսիները,  
մի անգամ դասնալով մասնավոր սեփականութեան համայնական  
հավելումը, աստիճանաբար կվերածվեն մասնավոր սեփականու-  
թեան (ՄՅԻ, 284):

Հին Հայաստանում դուշքյուն ունեցող գլուղական համայնքի  
մասին տեղեկութեանն ենք քաղում Քսենոֆոնի «Բյուրուն նահան-  
քի» (Anabasis) պատմութեանից: Հայ գլուղի նկարագրիչը, որ տա-  
լի է Քսենոֆոնն իր պատմութեան մեջ մեր ասրեթականութեան  
նրից մոտ 400 տարի առաջ, իսկապես վերաբերում է գլուղական  
համայնքին<sup>24</sup>: Հայաստանում ամբողջ ճանապարհի վրա հույները  
հանդիպում էին միմիայն գլուղի՝ նահապետական կենցաղով,  
գնանալոր բնակարաններով, որոնց մեջ մարդիկ ապրում էին  
պանաղան անային կենդանիները հետ միասին: Գլուղներ շրջա-  
պատում էին հողապատաններով, անտերից շատերի վրա կանուց-  
ված էին աշտարակներ. նույնիսկ անտրապի պալատը կանվում  
էր գլուղուն: Գլուղների գլուխն էին կանգնած ավազներ, որոնք,  
ըստ Քսենոֆոնի հորձորման, կոչվում էին օրչօն Ե՛լ: Քօլպոց կամ  
աօլպօրչոց, որ բառացի նշանակում է գլուղապետ: Քսենոֆոնն  
ամրանկելով հայ գլուղը՝ Քօլպո, այդ տերմինի մեջ խմատապարում  
է հին հունական յուրահատուկ բնութեամբ, որի համաձայն Քօլպո,  
ներկայացնում էր ստինով ապրող գլուղական համայնք, կամ  
սլապուտ սոնմ-գլուղ, ինչպես դա ակնհեր է հին հույն պատմա-  
գիր Քսենոֆոնից: Այդ տերմիններից ամենակալ Քօլպօրչոց պետք  
է նշանակի գլուղական տոնմանուն Ստիպան հայկական գլուղը  
Քսենոֆոնի ժամանակ արդեն կորցրած պետք է լիներ իր գուտ  
սոնմային հասարակական կազմը. նա ապրում էր լիբրես ֆեո-  
դալական հարաբերութեաններին միջնակարգում կամ արդեն ֆեո-  
դալիզմի կազմավորման շնագրում և հանդիսանում էր սոցիալապես  
ու անտեսապես շերտավորվող գլուղական համայնք, որի Քօլպօրչոց  
— գլուղապետը կարող էր լինել լիբրես և տոնմապետ այն առու-  
նով, որ նա սովորաբար հանդիսանում էր գլուղի ամենահա-  
րուտա ու ազդեցիկ սոնմային զերգաստանի ավագը՝ նահապետը:

Նահանջող հույներն իրենց բուրբ հարաբերութեանները  
հայ գլուղների հետ ունենալիս՝ զիմում էին այդ գլուղապետներին:  
Քսենոֆոնը պատմում է, որ հույն զորքին, իբրև վարչաբ ուղեկ-

ցող հայ գյուղագետը «Երաժարվում էր ընդունել հույներից որե-  
վէ բուն, բայց երբ նա ճանապարհին հանդիպում էր իր սոսնա-  
կիցներից (συγγενών) որևէ մեկին, իսկույն նրան վերցնում էր  
իր մտած<sup>244</sup>։ Այսպիսով գյուղագետը ազատում էր հույների  
ձևերն ընկած իր համացելակիցներին։

Գյուղական այդ կառուցվածքի հատկանիշները, մանավանդ  
աշտարակները <sup>245</sup>, որնք, սնուչ, անշուշտ, ճատայում էին սառն պաշտ-  
պանություն համար թշնամիների հարձակման դեմ, քաղաքների  
կատարյալ բացակայությունը՝ բնորոշում են մի կենցաղ, որ  
հատուկ է միայն նահապետական գերդաստանին, այն էլ որոշ  
չափով անհատականացած ու մասնավոր սեփականատեր զարձած  
գյուղական համայնքի պայմաններում, ուր այլևս գոյություն  
չունենր նախկին սոսնային հասարակարգը։ Այդ սոցիալ-տնտե-  
սական պայմաններում միայն գյուղագետը կարող էր այն նշա-  
նակություն ունենալ ու այն հասարակական զեղը խաղալ, որը  
հաշվի էր ինն առնում Մեսոսֆոնի հույն զինվորները։

Իմ լատարարս մեր հին մատենագիրները չեն տալիս գյուղի-  
րի նկարագիրներ, որպեսզի կարելի լիներ պատկերացնել նրանց  
համայնական բնույթը։ Մակայն նրանց զբվածքներում պահպան-  
վել են Հայաստանի հողատիրության վերաբերյալ մի քանի տեղ-  
ություններ, որոնց հիման վրա հնարավոր է լինում վերականգնել  
մոտավորապես գյուղական հողատիրության ձևերը։ Այդ տեղումն-  
ներից է վիճակ բառը, որի ճիշտ լուսարանությունը տալիս է  
պրոֆ. Հ. Մանանդյանը<sup>246</sup>։ Հակառակ ն. Ալոնցի տեսակետի, որը  
հին Հայաստանի գյուղացիական հողաբաժիններ է համարում՝

«Էլյանք», «արարը կամ Եղարկ» («Арменія в эпоху Юстиніана»,  
480), Հ. Մանանդյանն ապացուցում է, որ «վիճակը» հին Հայաս-  
տանում նշանակում էր գյուղացիական հողաբաժին համայնական  
հողատիրության առումով։ Ամենայն հավանականությամբ, տի-  
րող համայնական հողատիրության պայմաններում գյուղական  
համայնքներն իրենց հողերի պարբերական վերաբաժանումները  
առանձին տնտեսությունների միջև կատարել են վիճակ պեղելով  
Ալգորիթմակ վիճակարկության բաշխված հողաբաժինն էլ ստացել  
է իր բնորոշ վիճակ անունը, իրեն այդ դրոժդուլության հետևանք։  
Նույն համիմաստ երևույթը նկատում ենք մի շարք հին գյու-  
ղական համայնքները պատմության մեջ. հին Ֆրանկների մաս

համայնական հողերի բաժանված մասերը կոչվում էին соfs, գեր-  
մանների մոտ՝ Loos, ուսաների մոտ— жеребье, որպիսի տերմին-  
ները նշանակում են վիճակ, աչիներն վիճակարկության բաշխ-  
ված հողաբաժիններ։ Busolt-ը իր Griedische Staatskunde (I, 1920,  
միջ. 143) ուսումնասիրության մեջ ցույց է տալիս, որ պատշաճի  
հունաստանում, մանավանդ Քեսապիայում, սակայնիս արևմտա-  
կան զարերում գյուղական համայնքների մեջ բաշխվող հողա-  
բաժինները կոչվում էին κλίστρος, որ բառացի նշանակում է վի-  
ճակ, ուրեմն վիճակարկության ստացված հողամաս։ Ուշագրավ  
է, որ մինչև անցյալ զարի վերջեր Անգրիկոլասի հայ գյուղա-  
կան համայնքներում երբեմն ստիպված էին լինում, ըստ հնավանդ  
սովորության, հողաբաժանումները կատարել վիճակարկությանը,  
պիսի պեղելով։

Բայց հին Հայաստանի գյուղական համայնքի նկատմամբ  
բացակայող պատմական տեղեկությունները կարելի է լրացնել է  
լուսարանել հայ ազգագրական նյութերում պարունակված  
սովորության կրթվածքի տվյալներով, որը համառ պահպանու-  
ղությանը շարունակել է իր գոյությունը տիրող քնասանտեսու-  
թյան պայմաններում վերապրուկների մեջ մնացած։ Հայկական  
գյուղերն անցյալ զարում տակալին կրում էին համայնական ձևը,  
որ անշուշտ ավանդաբար պահպանվել է հին զարերից։ Հենց այն  
որինակները, որ մի առ մի թվում էինք վերը (Գլ. VII և VIII) իբրև  
նախնազարյան-համայնական հասարակության վերապրուկներ,  
ինքնին արդեն կենցաղային կայունություն ունեին շնորհիվ մի-  
այն գյուղական համայնքի հասարակական կոոուրցվածքի։

Ազգագրահավաք Ս. Հայկունին տալիս է հետաքրքիր նկա-  
րագրություն Բաղրևաճուղի հայ գյուղական համայնքի, որը, իհար-  
կե, արդեն զգալի չափով աղբված է շրջապատող գոտակարգային  
հասարակության զործաններով։ Երջուղական համայնքը կազմում  
են առնաստարակ նույն գյուղում բնակող բնասնիքներն ու դեր-  
դաստանները, հարուստ է աղքատ, սուևարակիաններ ու արհեստա-  
վորներ, որոնք միացած են իրար հետ թև բարուշական և թև  
շահակցական կապերով։ Իսկ գյուղական համայնքի վարչությունը  
գյուղի համայնքի կողմից չի բնարկում և չի որոշվում, այլ ըստ  
տիրող սովորության նա, ով վաշելում է եամվա անունը և ունի  
50—100 ու ավելի սոմար (4 սոմարը = 1 օրավար) վարկանոյ

ու մարդագեղեցի, դուժման, նաև 5—6 դույզ կգ կամ ցոմեր, 300—1000 ոչխարի հոտ, համարվում է գյուղական համայնքի վարչութիան (մեջլիսի) սեփականությանը կազմակերպելու համար, որ թյուրքերը ընտրում է գյուղացու, որ թյուրքերը ընտրում է սեփական համայնքին վերաբերող բոլոր հասարակական հարցերն ու դեպքերը մտնում են այդ վարչութիան խորհրդատվության ու որոշման իրավասության մեջ, իսկ այդ որոշումների իրականացումը լինում է սեփական համայնքի անդամների կողմից: Գյուղական համայնքի անդամները ընտանեկան սեփականությանը, գերազանցապես նախապես հարկերը, նյութական ունեցությունը սեփական սեփականությանը, այդ ամենը սեփական հարկերը, նյութական սեփականությանը փոխանակում են, որոնք վկայում են սեփական հասարակության կազմակերպումը և նրա փոխարինումը գյուղական համայնքով, ուր արդեն հասարակական ղեկավարությունը պատկանում է հարուստ գերազանցողներին, նյութական ունեցողներին: Նույնիսկ այսպիսի գյուղական համայնքներում, ուր գերազանցողները որոշ մասը պատկանում է միևնույն տանտնազգակցական խմբավորմանը, համայնքի ղեկավարությունն ու առաջնորդությունը, այսպես ասած՝ գյուղացուները, սովորաբար գտնվում է ամենուրեք, հետևապես և ամենազգեցիկ գերազանցողներին:

Մեծագույն գյուղում (Գյուլիստի գավառ, Եփրատի աջ ափին), որ բաղկացած է 41 տուն հայերից, կազմում է մի համայնք, որն ստեղծվել է համարվում էր կը հնագույն իրենց մեծ տանը՝ Պաքըրճյանների գերազանցողներին, որն ամենահարուստն է ու ամենազգեցիկը: այդ մեծ տան ավելի հանդիսանում է գյուղական համայնքի ղեկավարն ու սնորհողը և փաստորեն գյուղացուները (Վարդան, 1900, էջ 260), նույն բանը պահպանվել էր մինչև այժմ: Գյուղում Անդրեովկայի հայ գյուղական համայնքներում, ուր տանտնային խմբավորումները (քրիստոնեական), չնայած, որ ուսանողները ընտրվում էր գյուղական համայնքի ժողովում մայրերի մեծամասնությամբ, փաստորեն ժողովական մեծամասնություն էր լինում գյուղի ազգային, հարուստ, համիր գերազանցողներին, որի անդամները հերթով կարողանում էին համագյուղացիների ջրվարկությունը շնորհիվ ընտրվել տանտները<sup>247</sup>:

Հենց տանտներ բառը, որով սովորաբար կոչվում էին գյուղացուները, քրիստոնեական ու սեփական հայ գյուղական համայնքներում մինչև վերջին ժամանակները, բնորոշ է իր լեզվական իմաստավորությունը: Տանտներ՝ արիական ժողովուրդ բառ է, որ անշուշտ նշանակում է տանտնապետ և իր իմաստով թերևս հիշեցնում է այն սեփական մեծամասն, կը ավելի տանտնապետ կը մի բնահանուր տան մեջ, ինչպես զա սովորական էր Ամերիկայի ու Աֆրիկայի տանտնային կենցաղով ապրող բնիկ ցեղերի մեջ կամ այսպիսի դարձում պատմական համայնքներում՝ սերբերի, սև լեռնացիների և այլոց մեջ:

Տանտնաբ բառը, անտարակոյա, մտել է հին հայերի մեջ արիական գաղթաշարժում և հետագույն թարգմանությունն է նախկին, ավելի հին տեղական տանտնային տերմինի, որը տակավին մեզ անհայտ է մնում<sup>248</sup>:

Ասկայն տանտնաբ բառի նշանակությունը մի այլ անունով գտնում ենք հին Հայաստանի տեղական կենցաղով ապրող տակավին նախահայկական պատմության շրջանում: Դա լեզվական երկու մեզ հայտնի թագավորների Արգիշտի անունն է, որ կազմում է բառը Argiš—Յի բառը՝ «սան գլխավորի» նշանակությամբ: Տուն—argi, որ պահպանվել է մինչև այժմ սկան լեզվում, մի քանի սկան բարբառներում նույն խոսքը հնչում է agi, որ աշխարհ, հանդում է ոչ թե arg բառին, այլ փոխանցական-զգեցիկ (не-ребойный-спиратный) և (ahgi) սկանով հանդում է asgi, asgi և argi հանդիսանում են միևնույն բառի երկու բարբառային ձևեր: Asgi բառը պահպանվել է նաև հայկական ու արմենական ազգ-arg տերմիններում, որն արտասանվում է նաև ազգ (միջին գաղթերի հայ ժողովուրդներում) մեջ մեծ մասամբ զործածական էր ազգ ուղղադարձությունը): այդ բառը նշանակում է տանտն, իսկուպես տուն<sup>249</sup>: Արգիշտի անունը Մ. Մալի վերաբերյալ բացատրությունից պետք է հետևյալն էր, որ հայկական ազգ բառի ծագումը, ընդհանուր, տանտն նշանակությամբ, ոչ թե իրանական-արիական շոնա բառից է բղկում (տես 52 և 53 էջ), այլ ավելի հին գաղթերից սեղան արդեն գյուղական ունեցող լեզվական, այն է հարևանական լեզվաբանություն:

Այսպիսով տանտնաբ տանտնային հասարակարգում համարվում էր գլխավոր ներկայացուցիչը, ավագը, տանտն ղեկավարը

անտեսական-հասարակական դորձերում, թիրև նակ ուղղակի առաջնորդը պատերազմների ժամանակ: Տանուտերը սովորաբար լինում էր տոնի մեջ ամենամեծը թե իր տարիքով և թե փորձառութեամբ, և մեծ մասամբ ժառանգական էր, անցնելով հաջորդաբար մեկի մահից հետո տոնի (տան) հետևյալ ավագին:

Հետագայում տոնատան հասարակութեան անխցուձով տաճարային անունը փոխանցել է աղքեմ ֆեոդալ իշխանական-նախարարական սոցիալիզմի գլխավորող ներկայացուցիչներին, այն է նահապետներին: Հիրավի, հայ հին պատմագիրները տաճարային բնույթը կիրառում են մեծ մասամբ ոչ թե գյուղացիների տունով, այլ նախարարական տոններին գլխավորելի, նահապետի, ավագի, այսինքն ֆեոդալ իշխանական սոցիալիզմի իմաստով: Իսկ գյուղական համայնքի վերաբերմամբ այդ պատմագիրները տանուտեր անվան փոխարեն դորձածու էին դասապետ (Փավստոս Բյուզանդ), գյուղապետ (Մովսես Կաղանկատվացի), գեղապետ, թեև, պետք է նշել, որ այս անվանները պատկանում են հին Հայաստանի պատմութեան ֆեոդալիզմի շրջանին, հետագայն կարող էին արդեն այլ նշանակություն ունենալ ճորտատերական կարգերի կառավարությամբ:

Պյուղոպետի հարջուրջումը տանուտեր անունով մեզ ահնում է զեպի այն սոցիալական մոմենտը, երբ գյուղացու ունի տոնատան կազմ և ուրեմն տոնատանն էլ կրում էր հին հայերի մեջ տաճարային անունը: Այնուհետև արդեն, գյուղական համայնքի առաջացումով, տանուտերի հորջորջումը փոխանցում է գյուղացիությանը, որը, ինչպես վերը նշել ենք, սովորաբար ծագում էր տիրապետող ազգեցիկ բնույթից: Նախապես համայնքից, հանձին նրա պատրիարխի (նահապետի), տոնի ավագի, որ նուշնյան կոչվում էր բնասանական համայնքի՝ գերդաստանի տանուտեր և իր իշխանութեանն ու սոցիալ-հասարակական ազդեցիկ դերը պահպանում էր ոչ միայն իր գերդաստանում, այլ և իր զլխավորած գյուղական համայնքում:

Համայնական նուշն կառույցն ենք հանդիպում Անդրկովկասի հայ գյուղերում (նաև աղբյուրային ու քրդական) զեպու անցյալ դարում: Անուշն, այդ գյուղական համայնքները, նախ պարսկական և սուլտանական հաջորդող ուսու կառավարութեանների օրոք, կորցրել էին իրենց վաղեմի բնույթը, հանդիսանալով սոսկ

հասարակական միավորներ, հարկային և այլ վարչա-իրավական պարտականութեանները համայնքային կերպով կատարողներ՝ իշխող պետութեան մարմինների առջև:

Ուրաքանչյուր գյուղական համայնք, պարսկական և ուսական տիրապետության ժամանակ, բաղկացած էր համայնքների, երբ պեճեղների, կիսանների, պեճեղների և վերջապես կեսպեճեղների որոշ քանակից: Ամբողջական լրակատար հողաբաժնի տերը կոչվում է կամիա, <sup>2/1</sup> հողաբաժնի տերը՝ երեկ պեճեղ, <sup>1/2</sup>-ի տերը՝ կիսամ, <sup>1/3</sup>-ինը՝ պեճեղ և <sup>1/4</sup>-ինը՝ կեսպեճեղ: Այդ հինգ դասաբաժնույթներով է որոշվում գյուղական համայնքի սոցիալ-տնտեսական բովանդակ կազմը և բոս այն էլ յուրաքանչյուր բնասանիքի կամ քուլախի իրավաբանական դրուժյունը, հարկային ու պարսկական պարտականութեանները: Ընդհանուր առմամբ բոլոր հողերը, բացառությամբ ցանկապատվածների ու շենքերով պրոպիանների, համարվում են ամբողջ գյուղական համայնքի սեփականութեան կամ տիրութեան առարկա: Այդ համայնքական ընդհանուր գույքին են պատկանում վարելահողերը, մարզագերիները, արտաները բնույթի գոտում և ճորտերը, խոհարարները, անասնային բացատները և գյուղին կից խոզան հողերը: Մեծ բնույթիները կամ գերդաստանները, ոչ պակաս 16 հողույց բաղկացած, կազմում են համայնքների գաղթ, երեք պեճեղն ու կիսաբեճեղ՝ միջակ բնասանիքներ, իսկ մնացածները՝ փոքր բնասանիքներ ու միայնակներ: Առաջինը, երբ նահապետական գերդաստանային կենցաղը գեա ևս տիրող էր, համայնքների գաղթ քանակով դերակընուում էր մյուսներին. սուտի գյուղական համայնքի զեկավարումը և զորձերի տնօրինումն ամբողջովին կենտրոնացած էր նահապետական գերդաստանների, այսինքն համայնքական բնույթի կենտրոնի ձեռքին նրանց էր պատկանում առաջնութեանը գյուղական հասարակական ժողովներում. նրանցից էր կախված գյուղացիության, այն է՝ տաճարների կամ մեղիքի բնարութեանը, հողային տնօրինության, ջրբաշխների և այլ հասարակական պաշտոնատար անձերի բնարութեանը: Հետևապես գյուղացիներ (տանուտերը) լինում էր սովորաբար ամենաուներ ու ամենաազդեցիկ համայնքում: Հինգ գյուղատնտեսի տաճարային հարջուրջումը հայերեն, կամ մեղիք՝ արբար-Քուրբերեն, իմաստավորում է նրա սոցիալական զիրքը՝ 'Պյուղապետը' հակացվում էր ոչ միայն իրեն մեծ, ազդեցիկ

գերագատանի տեր, այլ և ամբողջ գյուղական համայնքի պես Այս գեղքում պահպանվել է տո՛մախին հասարակական կարգի քնորոշ հիմքը, իբրև վերապրուկ այն շրջանից, երբ տո՛մը, որ հին հայերենի մեջ իմաստավորվում էր նաև առաջ քառով, ու՛նեք իր պեսը, իր ավագը Ուրեմն տանուտեր բառը ոչ այլ ինչ էր նշանակում, եթե ոչ նախնի տո՛մապետի իմաստավորումը: Նույն պեսքը է տակ Վելիմ արար-թուրքական ծագումով բառի մասին:

Տանուտերի կամ մեկի՛քի այդ սոցիալական նշանակությունը քաղահայտ է դա՛նում նրանով, որ շատ խոր հնուս. ինչպես վերն սկիտարկել ենք, գյուղական համայնքի տանուտիրությունը ժառանգական է եղել: Տանուտիրություն կոչումը դեռևս անցյալ դարի առաջին կեսում մի շարք գյուղական համայնքներում պահպանում էր իր ժառանգական սկզբունքը, որի ապացույցը առ՝վինը վերք մի շարք վրասարկով: Եռւյնն է վկայում նաև գերմանացի Հաքսհաուսըննն իր ուղեգրական հիշողություններում Երվանյան նահանգի նկատմամբ անցյալ դարի սկզբներում:

Նույնիսկ առանձին վերցրած այս օրինակներն ապացույցում են, որ գյուղական համայնքը դարգացել է տո՛մախին համայնքից: Ինչ ակներև է այն բնորոշ գծերից, որոնք անցել են տո՛մախին համայնքից և շարունակում են պահպանել իրենց համայնական առանձնահատուկ նշանները, իբրև վերապրուկների, նաև գյուղական համայնքում: Միևնույն ժամանակ հայ գյուղական համայնքը պարբերակում է իր մեջ այն դուստրիզմը, որի մասին ակնարկում է Գ. Մարքսը, և որն արդեն իր սոցիալ-տնտեսական հարաբերություններում դրսևորում է մասնավոր սեփականությունը, համայնքի անդամների անհատականությունը զարդացումը այն համայնականությունով, միջոցառում, որը մնացել է տո՛մախին հասարակությունից իբրև վերջին բեկորներ:

Հին Հայաստանի գյուղական համայնքի նկարագիրը, որ տալիս է Քանեֆոնը, Հնայած նրա թրուցիկ իմաստաստությունը, մեզ շատ բան է ասում, երբ այդ պատկերը տեսնելուց անենք համեմատակալով նրա այն ուրիշ նկարագրությունների հետ, որոնք նա բնութս է թե՛ հայտնի և թե՛ նրանց հարևան ժողովուրդների քաղաքական գրություն մասին: Հայաստանի հնագույն պատմության ուսումնասիրողները ձևականորեն են մտածել Քանեֆոնի

հիշյալ նկարագրին, բավականանալով միայն այդ ընդունել որպես հայ նահապետական կյանքի սոսկական նկարագիր: Մինչդեռ Քանեֆոնի աված անդեռությունը մի հասարակաթ է, որ թափանչում է հայոց պատմության այն շրջանը, որն ամենամալին է ու տակալին սպասում է իր լուսարանությունը:

Պատմագրություն մեջ ցարդ պարզված է հայ էթնոստի և ապա հայ ազգություն ու դեռականություն ծագումը: Մեր պատմության ամենահին պետական կայքը, այսպես կոչված Արտաշեսյան շրջանը, տակալին ենթադրական կարծիքների ու հիպոթեզների օրբաներումն է դեգերում: Մինչդեռ հայոց պատմության սկզբնական շրջանը մեզ էի ներկայացնում պետականություն տու՛նով հասարակական կազմ և ազգություն ասած բանը: Քանեֆոնի նկարագրած հայերը, թերևս սրբենները, ինչպես և այն բոլոր ժողովուրդները, որոնք ապրում էին հայերի բնակած երկրին կից և որոնց նա հանդիպել է հու՛նական զորքի նահանջի հանապարհին, դեռևս ազգություններ չէին, իբրև պատմական կատեգորիա, այլ մի ցեղեր էին, ավելի ճիշտ ասած, ցեղերի միություններ: Այս դեպքում մեր առաջին է մի ազգագրական կատեգորիա, որ տակալին անցնում էր իր էթնոգենեզի պրոցեսը: Ազգությունը կազմակերպվել է սկսում ֆեոդալիզմի արտադրական հարտիրությունների քայքայման շրջանից և արտադրության կապիտալիզմի տակահան եղանակի զարգացման մոմենտից, իսկ ընդերի միությունը կազմվում է արտադրության նախնադարյան համայնական հասարակություն քայքայման պայմաններում:

թյունը է ամենուր ուղղաբացիակի միջոցով — ասում է որ  
և Մարքսն ու Յ. Լենգելը<sup>21</sup>, մի նպատակարարական եղանակ էր  
ամենամեծ չափերով երևան է դալին տնտեսապես ու սոցիալա-  
պես շերտավորվող գյուղական համայնքում: Եվ ահա սարկական  
աշխատուժով մեծապես օժանդակ և անասական ուժ կուտակած  
տիրապետող տարրը գյուղական համայնքում սկսում է գրավել և  
յուրացնել հողային համայնական սեփականությունը: Առաջ-  
նկելով համայնական հողերն ու զտրմանով այն յուր սեփականու-  
թյուն, նորևուկ գերիշխող սոցիալական վերահսկովը տարածելու  
էր իր տիրապետությունը նաև այդ հողերի նախկին օգտագոր-  
ծողներին, այն է՝ համայնքի անդամ մյուս գյուղացիները վրա,  
գործադրելով արտասնտեսական ճնշման միջոցներ: Աղաք գյու-  
ղացիությունը ենթարկվում է նույն վիճակին, ինչ որ ունեցավ  
ուղղաբացիակի ենթարկված այն համայնական հողը, որի վրա  
նստած մշակում էր նա: Գյուղացիությունը կախված մնաց նոր  
հողատերերից, նա կորցրեց իր ազատությունը և ընկավ ճորտա-  
կան վիճակի մեջ:

Այժմ, երբ վերացավ հողային համայնատիրությունը, սակոճ-  
վեց այն նյութական բազան, որի շնորհիվ հնարավոր գործավ  
շահագործելու համայնքի անգամ գյուղացիներին:

Այսպիսով գյուղական համայնքի սոցիալ-անտեսական հա-

կասությունները իրենց վերջնական գարգացման հետևանքով  
փոխվելին ներհակությունների, սրանք խորտակեցին համայնքը:  
Ասպարեց եկան երկու ներհակ սոցիալ-հասարակական հիմնական  
զուսակաբերը, մի կողմից՝ խոշոր հողատերերը կամ կալվածատե-  
րերը, զինված շահագործման բոլոր միջոցներով և օժանդակ տե-  
րապետությունն ապարատով, իսկ մյուս կողմից շահագործող  
գյուղացիությունը՝ ճորտացած երկրագործ մասունի, երկու դասա-  
կարգեր, սրանք բնորոշում են խորտակված գյուղական համայնք-  
ներին, տոնմային հասարակության այդ վերջին մնացորդի ավե-  
րակները վրա բարձրացող նոր հասարակական ձևավորումը՝ ֆեո-  
դալիզմը:

Գյուղական համայնքի անկումով և գյուղացիության ճոր-  
տացումով տարելությունն էլ շարունակում է մնալ սակայն այլ  
սոցիալ-տնտեսական պայմաններում, որ հասուկ է ֆեոդալ հա-  
սարակության անտեսական ձևերին: Տոնմային հասարակության  
քայքայման պրոցեսները, նազած տոնմային հասարակության  
զարգացման ձևերին, գյուղական համայնքի սոցիալ-տնտեսական  
կազմի տեղական պայմաններին, կարող են տարբեր լինել<sup>22</sup>:  
Սրտ ղեկներում այդ քայքայման հետևանքով կարող է առաջա-  
նույ գասակաբազային հասարակություն, հիմնված բացառապես  
արտադրության սարկատիրական եղանակի վրա, ինչպես զա հին  
Հունաստանի և հին Հռոմի սարկական շահագործման տնտեսու-  
թյան վրա կառուցված հասարակապետություններն էին իրենց  
բնորոշ գասակաբազային կազմով, որոշ ղեկներում էլ, որն ավելի  
հաճախակի երևույթ է պատմության մեջ, առաջանում է դասա-  
կարգային հասարակություն, հիմնված արտադրության ֆեոդալ-  
ական եղանակի՝ ճորտության վրա: Այս ղեկներում քայքայված  
տոնմային հասարակությունն անմիջորին փոխանցում է ֆեոդալ  
դատակաբազային հասարակությանը: Ֆեոդալիզմի ծագման առջ ձևն  
երևան է պալին միջերկրածովյան աշխարհից զուրս զանդող երկր-  
ներում: Վերջին ղեկներում սարկատիրական հետագա զարգացումը  
կանոց է առնում, սեղի տալով ճորտատիրության ինտափոստային,  
և ֆեոդալ հասարակության արտադրական հարտերություննե-  
րում ընդունում է յուրահասուկ բնույթ, շահագործման եղանա-  
կի ոչ տիրապետող ձև:

Այդպես էր հին գերման տոնմային հասարակությունը, որն

ունենալով իր մեջ ստրկական աշխատանքի շահագործման եղանակը, անմիջորեն անցնում է ֆեոդալական կազմին, խորթվելով ճորտական աշխատանքի շահագործման ձևերի վրա: Այդպես էր հին Ռուսաստանը, մասնավորապես հին Արևելքը, ուր Բարեկրասանը, Ասորեստանը, եգիպտոսը հանդիսանում էին այնպիսի տոմսային հասարակություններ, որոնք նույնպես ստրկական աշխատանք էին կիրառում, բայց անցնում են իրենց հետագա զարգացման էտապում ոչ թե բացարձակ ստրկատիրական սոցիալ-տնտեսական ձևի, ինչպես դա անտիկ աշխարհումն էր, այլ ֆեոդալական հասարակական ձևի, որն Արևելքում ստանում է իր տոսանձանասուկ, այսպես կոչված ֆեոդալիզմի ստիական տարբերակը, կամ տրեկյան հասարակություն ձևը:

Ինչպես էին կայանում ֆեոդալիզմի ստիական տարբերակի, կամ, այլոտես ասած, արտադրության ստիական եղանակի հիմնական հատկանիշները:

Նախորդ գլուխներում տեսանք, որ գյուղական համայնքը, անցնելով ֆեոդալական հասարակական ֆորմացիային, չնայած իր սոցիալ-տնտեսական շերտավորման, այնուհանդերձ չի կորցնում իսպառ իր համայնական բնույթը: Այդ հանդամանքը դանդաղով ընթացք էր առնում Արևելքի ստիական երկրները պրոպրետին և յուրահատուկ ձևերով կազմավորում էր նրանց գեղի դասակարգային հասարակությունը փոխանցելը: Ասիական հասարակությունները այդ դանդաղով զարգացման ընթացքը պետք է բացատրել ինչպես ցույց է տալիս Կ. Մարքսը, նրանց անտեսական ստրուկտուրայով: Այդ առթիվ Կ. Մարքսն ասում է. «Այս ինքնաբավ համայնքները արտադրության պարզ օրգանիզմը, որտեղ մշտապես վերարտադրվում են միևնույն ձևով և որոնք պատահաբար կործանվելու զեղջուրում էլի վերականգնվում են միևնույն սեղում, միևնույն անսևնով, բանալի է առնում ստիական հասարակությունները անփոփոխության զագոնիքը բռնելու, անփոփոխություն, որ այնպես ակնբախ հակադասակեր է կազմում ստիական պետությունների մշտական խորտակման ու նորոտեղծման և դիսաստիանների անդադար փոփոխվելու հետ համեմատած» (ԿՄԿ, 324—325):

Ասիական հասարակությունների այդ դանդաղ զարգացման ընթացքում առաջացած ֆեոդալ պետության մեջ գյուղական հա-

մայնքները շարունակում են տակավին իրենց դերը խաղալ ու պահպանել, որպես մնացուկներ, տոնմա-ցեղային հասարակության տոսանձանակությունները: Այդպես բացակայում է հողի մասնավոր սեփականատիրությունը. հողը համայնքային սիրույթյան ու անօրինման ներքո է, իսկ հողի իրավական սեփականատերը պետություն է հանձնելու իշխող թագավորին: Հողի այդ ձևի սեփականությունն ու սիրույթյան զարգացումը կանգուն է մնում, շնորհիվ համայնքային արտադրության պայմանների, որոնք կայանում են զլխավորապես հետևյալում.

ա) Արհեստական ջրատուգման սխեմներ, որի կառուցումը և պահպանումը, գետերի հոսանքների կանոնավորումը պահանջում է համայնքային կոլեկտիվ աշխատանք և իր հերթին հանդիսանում է այդ հասարակության մեջ արտադրության միջոցներից մեկը. միևնույն ժամանակ այդ ջրատուգման բավանդակ սխեմի շինարարությունը և գերազույն անօրինումը կատարվում է խիստ կենսարոնացած իշխանության ձևերով, հանձնի ստիական ֆեոդալ պետությունը զլխավորող բունակալ-թագավորի:

բ) Տակավին գոյություն ունեցող նահապետական գերզատոսները (ընտանեկան համայնքներ) կազմը, որի մեջ ավանդորեն պահպանվում են տոնմա-ցեղային վերապրուկները, հանդիսանում է հիմնական տնտեսական քլիշե:

գ) Գերակշռում են հողային սեփականության ձևերը (աշխատապարտ ու արդյունքային), որոնք միաժամանակ հանդիսանում են պետական հարկահանություն զլխավոր մոմենտը: Արևելքի մասին այդ առթիվ Կ. Մարքսն ասում է. «Միևնույն ու հարկը համընկնում են, կամ ավելի ճիշտ ասած, գոյություն չունի այնպիսի մի հարկ, որ տարբեր լինի հողային սեփականից» (KMK, III, Գ. 2, էջ 271):

դ) Շահագործման եղանակը տարվում էր միաժամանակ թե ճորտության և թե ստրկության հիմքերի վրա, ըստ որում վերջին տակավին արմատախիլ չէր արված ժողովրդական տնտեսության միջոց. հետևապես ֆեոդալները կարող էին լինել միաժամանակ թե ճորտատեր և թե ստրկատեր. ճորտերը և ստրկները դառնում էին ֆեոդալի հողի մշակման ու բավանդակ տնտեսության մեջ իսկական արտադրողներ և հատուցում էին իրենց

## ՏԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՍԱՐԿԱԿՈՒՅՑՈՒՆ

1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԱՐԿ

շահագործողներին ոչ միայն հավելյալ արդյունք, այլ և իրենց գոյություն համար անհրաժեշտ արդյունքների զգալի մասը:

Վերջերսյալ անտեսական հանգամանքները տալիս էին հողային համայնքից գոյացած ներհակ հասարակությունն այնպիսի շարահատուկ դասակարգային կառույցք, որ բնորոշ է ասիական պետություններին, որոնք տիրապետող դասակարգի շահերի տեսակետից արհեստականորեն պահպանում էին այդ գյուղական համայնքներն իրենց ցեղա-տոհմային վերապրուկներով: Այդ շահագործող դասակարգի տիրապետության միակ հնարավոր ձևը կազապարվում է ասպմա-ֆեոդալական պետության մեջ, որ ստանում է ասիական դեպոտարայի, բանակալության բնույթի Ասիական պետությունների՝ Բարեկասաանի, Ասորեստանի, Պարսկաստանի, Եգիպտոսի և այլ թագավորները՝ արևելյան դեպոտաներ էին, որոնք զերազունք ֆեոդալներ էին, սովորյժ պետական հողի սեփականատերերը, որպիսի հողային սեփականատիրություն մեջ պահպանվել էին նրա համայնական ծագման հետքերը, իսկ այդ թագավորներին ենթակա ֆեոդալները (պատեսի, բուզալ, սասարապ, նամարի և այլն) դառնում էին մի տեսակ պաշտոնյաներ կամ «գործակալներ», ինչպես կոչվում էին այդ տիպի ֆեոդալները էին հայ մասնագրություն մեջ, կամ «սատրապներ», ինչպես նրանց որակում էր Ֆր. Էնզելսը: Այս ենթակա ֆեոդալները, կենտրոնաձիգ իշխանության տեղական օրգաններն էին, որոնց անօրինական ու տիրություն ներքո էին գտնվում իրենց հանձնարված հողային կալվածների ճորտական ու ստրկական աշխատանքի շահագործումը և որոնց մենաշնորհն էին դառնում արտադրության հիմնական միջոցները: Չուր չէ ստում Ֆ. Էնզելսը, թե «հին համայնքներն այնտեղ, ուր նրանք շարունակում են գոյություն պահպանել, հազարամյակների ընթացքում հանդիսանում էին արևելյան բանակալության ամենակոպիտ պետական ձևի՝ «հեղուկը» (Է.Ա.Գ.):

Այդ ասիական հասարակության ձևն էր ներկայացնում նաև Հայկական լեռնաշխարհի տոհմային հասարակության քայքայումով գյուղական համայնքից ծագած ֆեոդալիզմը:

Ֆեոդալական հասարակությունը դասակարգային մի կազմ է, որի հիմքը հանդիսանում է արտադրության ֆեոդալական եղանակը: Արդյունքի ճիշտ գտակի ֆեոդալական արտադրության մասին, — ասում է Կարլ Մարքսը, պետք է այն գիտել իբրև ներհակության վրա հիմնված արտադրության եղանակ» («История философии», Сочин. т. V, стр. 374): Այդ ներհակությունն արտահայտվում է երկու ծայրանկ բեկումների միջև. մի կողմից՝ արտադրության պայմանների սեփականատիրոջ, այն է՝ ֆեոդալի, հողի մենաշնորհ տիրոջ, և մյուս կողմից՝ իսկական արտադրողի միջև, որը թեև ունի արտադրական միջոցներ, բացի հողից, սակայն արտատնտեսական ստիպման ներքո դառնում է կախյալ անձ, այն է՝ ճորտ կամ կրտսածնոր: Այդ արտադրական հարաբերություններում ֆեոդալը հնարավորություն է ստանում յուրացնելու իսկական արտադրողից թե՛ հավելյալ արդյունքը և թե՛ նրա կենսագոյությունն անհրաժեշտ արդյունքի որոշ մասը:

Անս այն երկու ներհակ դասակարգերը՝ շահագործող, իշխող հողատերը և շահագործվող գյուղացիությունը, որոնք բնորոշում են ֆեոդալական հասարակությունը, սբի սցիթակալան հարաբերությունները ներկայացնում են անմիջական տիրապետության ու ենթակայության այս կամ այն աստիճանի անձնական անազատության, ճորտության հարաբերություններ: Ֆեոդալիզմի պայմաններում «հողային սեփական դառնում է հավելյալ արժեքի ու հավելյալ արդյունքի միակ տիրող ու նորմալ ձևը» (ՌՄԿ, III<sup>2</sup>, 572):

Մեկնելով արտադրության հասարակական պրոցեսի զար-

զացման դանազան աստիճաններին, Կ. Մարքսը ֆեոդալական արտադրության եղանակի զարգացման մեջ նշում է երեք հիմնական էտապներ — աշխատազարս սենսա, արդյունքային սենսա ու գրամական սենսա: Ֆեոդալական հարաբերությունները սկզբնական վաղադուրյն աստիճանին համապատասխանում է աշխատազարս սենսա, որով «անմիջական արտադրողը շարաքվա մի մասում մշակում է փաստորեն իրեն պատկանող հողը փաստորեն ու իրաժարանորեն հենց իրեն պատկանող աշխատանքի գործիքների (արքր, անասուններ և այլն) օգնությամբ, իսկ շարաքվա մյուս օրերը նա աշխատում է հողատիրոջ կալվածքում, արքոջ հողի վրա ձրխապես» (KMK, III<sup>2</sup>, 569): Դա կու ու բեկանն է, որպիսի շահագործման եղանակը ստրկական աշխատանքի ուղղակի ու անմիջական ժառանգությունն է, որը ֆեոդալական պոլիտիկաներում մեղմանալու, անցել է արդեն ճարտարած դուրս: Գոցիություն վրա: Սրա հանրոջ աստիճանն է արդյունավետն սենսա, այն է՝ բարձրան Այս ձևի սենսան բնորոշում է անմիջական արտադրողի զարգացման ավելի բարձր աստիճանը, երբ արտադրության ֆեոդալական ձևն ըստ ամենայնի ամբողջովում է ու ֆեոդալական հարաբերությունները հասնում են կատարյալ զարգացման: Այստեղ իսկական արտադրողը, ինչպես նշում է Կ. Մարքսը, աշխատում է ոչ թե հողատիրոջ անմիջական հսկողությունն ու ստիպման ներքո, այլ իր սեփական պատասխանատվությամբ (KMK<sup>2</sup>, III, 572—573): Մեծնալի այդ ձևում, արդյունքային սենսան, որի մեջ մարմնանում է հավելյալ աշխատանքը կարող է չտպանել դուրսական ընտանիքի ավելցուկային աշխատանքը: Ընդհակառակն, այստեղ արտադրողին տրվում է համեմատաբար աշխատազարս սենսալի նեա, ավելի մեծ ընդարձակություն, որպիսի նա կարողանա ժամանակ շահել ավելցուկային աշխատանքի համար, որի արդյունքը պատկանում է իրեն» (ibid.): Վերջապես երրորդ էտապն է հանդիսանում դրամական սենսան, որ կապված է արդեն ֆեոդալիզմի քայքայման դարձադրման հետ և ոչ այլ ինչ է, եթե ոչ արդյունքային սենսայի սոսկ կերպարանափոխումը դրամական արժեքի:

Չնայած, որ այդ երեք տեսակ սենսաներից յուրաքանչյուրը համապատասխանում է ֆեոդալական հարաբերություններին զարգացման երեք շրջաններին, բայց և այնպես նրանք չեն

արտահայտում իրենց ուրույն անկախությունը, անձատ գոյությունը: Մենք նկատում ենք առաջին էտապում ոչ միայն կուրսային և բանքային սկզբնական որոշ զարգացումը, և կուրս հանրոջ կապիներում բնավ չի վերանում: Դրանումն է ֆեոդալական շահագործման բնորոշ հարաստությունը:

Այսպես է պատկերացվում արևմտա-երոզական ֆեոդալիզմի բնույթը, ոչ ծաղկում էր միջին դարերում, ծաղկում անտիկ հասարակության (Հուստանի և Հուսի) արտադրության եղանակի քայքայումից, սարկատիրական հասարակության կազմավորումից:

Ֆեոդալիզմի մի սուսնանահատուկ, բնորոշ տարրերակն է ներկայացնում ֆեոդալական հասարակությունը Փոքր ու Առաջավոր Ասիայում, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհում Ասիական այդ ֆեոդալիզմը կամ Վարկային հասարակությունը որոշ չափով տարբերվում է արևմտա-երոզականից, սակայն հիմնականում իր սոցիալ-տնտեսական էությունը կրում է նույն էական գծերը, որնք այնպես ցայտուն կերպով վեր է հանել Կ. Մարքսը իր սենսության մեջ: Եթե արևմտա-երոզական ֆեոդալիզմի ուսումնասիրության դրամն ու նրա սենսությունն իր արամադրության ներքո ունի միջնադարից մեզ ավանդ հասած բազմաճարտար վավերագրերի անադին պարզ, այդ այդ կողմից համեմատաբար շատ աղքատ ու անախտանձիլ են հեն տախական ֆեոդալիզմի պատմական պրոպոզիցիան: Սրանք դերագանցորեն հնագիտական հասարակություններ են, այն էլ անցյալ դարի դիտական արշավախորհրդի գործունեության հետևանքով լույս սեսած: Յարգ հայտարարված ուղյակները դեռևս բավարար չափով չեն պատկերացնում Առաջավոր Ասիայի զանազան երկրներում երբեմնի գոյություն ունեցած հնադույն դարերի ֆեոդալական հարաբերությունները, մանավանդ ճորտության և ստրկության էությունները, դասակարգային ներհակության բովանդակ զարգացումը:

Միայն պատմական ուղյակները, որնք մեզ հայտնի են այժմ հնագիտական հետախուզումներ շնորհիվ և որոնց հիման վրա հարավոր է քիչ թիվ շատ մտավոր գաղափար կազմել Հայկական լեռնաշխարհի ֆեոդալիզմի սոսնանից զարբերի մասին, վերաբերում են խաղերի պատմությանը, Վանի թագավորությանը: Մոկոյին պոտո պատմական փաստերը նշում են, որ խաղական

Ֆեոդալիզմից առաջ էլ գոյացել են Հայկական լեռնաշխարհում ֆեոդալ կազմաւթյուններ, ինչպես Միտանի, որը ժամանակագրորէն ամենահինն է համարվելու, և ապա Ուրարտուն Արքիին գոտկանուէ է, ինչպես և խաղաղան թագաւթրությունը, իր ծաւունով Նալիբի երկրներէ ժողովրդական զանգվածներէ սոցիաւանտեսական զարգացմանը, բայց Միտանին (1, 66) կրում է իր մէջ հաթական տարրեր, հետևապես նրա ֆեոդալական զարգացման պատկերը որոշ շաթով հարունձանց է լինելու ընդհանրապես հաթական երկրներում երբեմնի տիրող ֆեոդալիզմին:

Միտանին, որ գոյություն է ունեցել շուրջ երկու և կես դար (15-րդ դարէ վերջին կեսից մինչև 13-րդ դար ներառյումը տարեթվակ. առաջ) մի լայնածաղալ ռազմիկ պետություն էր, հյուսիս-արևմուտքից սահմանակից լինելով հաթական թագաւթրության, արևմուտքից՝ Միքիային, իսկ հարավից՝ Բաբելաստանին, իր մէջ ընդգրկելով, որպես վասալ իշխանություն, նաև Ասորեստանը: Վերջինս, հետզհետև հզորանալով, կարողացավ զուրա գալ իր վասալական զրությունից, ապաակն Միտանիի իշխանությունը և նրա տեղը զբաղել իբրև մի հզոր ֆեոդալական աշխարհակալ պետություն: Ինչպես սեպագին արձանագրություններից երևում է, Միտանիի թագաւթրության մէջ իշխող տարր էր հանդիսանում նախճող խարրի, կամ, թնրես ավելի հինա ընթերցումով, խարրի ժողովուրդը, որ համարվում է արիական էթնիկ ծագում ունեցող: Խարրիները կազմում էին Միտանի թագաւթրության մարտիկ ազնվական զստը, ֆեոդալական զասակարգը: Նախճված ընթիկ ժողովուրդը, որի էթնիկ բաղկացությունը զես ևս պտտմագիտության միջ պարզաբանված չէ<sup>276</sup>, անշուշտ այն շահաւորվող հոծ կախյալ մասսան էր, որ հանդիսանում էր իսկական արտադրող: Այդ նախճված տարրի արտադրած արդյունքներէ յուրացւածով էր իր գոյությունը պահպանում տիրապետող խարրի վեոդալականությունը թագաւթրու զլլ-խաւթրությամբ: Գծբախտաբար զեսուս քացախյալում են շրջափելի ավյալներ որոշելու համար նրանց արտադրական հարաբերությունների լնուլթը, ֆեոդալական կազմի սոցիաւանտեսական պատկերը: Սակայն այն պարզապես, որ Միտանիի թագաւթրությունը, ջնալած իր քաղաքական հանկարծակի վերելքից ու էջուպանիային, այնուամենայնիվ կարճատև գոյություն ունեցավ,

էթիւր է ապրիս որոշ կուսուսներ անկոււ: Նախճող խարրի տարրը իր արտադրության ֆեոդալական կազմակով, բաա երևուլթին, անկարող կզավ իրեն համար զորեղ ու կայուն զիրք սակզծել միկոզմից՝ իր, որպես տիրապետող ազնվական վերնախավի քանակական նախորության հետևանքով և մյուս կողմից՝ այն պատճառով, որ նախճված մասսան, որին շահաղործում էին խարրի ֆեոդալները, թնրես սոյնպիսի ատուր սոցիալական զանգված էր հանդիսանում, որի արտադրական միջոցները կարողանում էին զիմազրոթել նախճողների արտադրության ֆեոդալական կազմակին: Այլապես աամ, պետք է ենթադրել, որ տեսանական ընթիկ տարրը զեսուս ապրում էր այնպիսի կուս ցեղութեանում հաստարակարգով, այնպիսի սովեղ պետական համայնքներով, որի վրին եկվոր խարրիներէ իշխանությունը անղոր կզավ վաթթելու արտադրության սեփական կազմակը:

Միտան դարեր անցնելուց հետո, երբ Միտանիի թագաւթրության, այսինքն տիրապետող խարրի ֆեոդալականության անկումով, սկսեց զլուի բարձրացնել տարեստանյան ֆեոդալ զասակարգն ու կազմակերպվեց հզոր Ասորեստանի թագաւթրությունը, վերջինս հետզհետև առաջ խաղաց իր նախճուսներով զեսի հյուսիս և կարողացավ հարանուս, զարավոր արշալանքներով՝ իր արտադրության ֆեոդալական կազմակին ենթակրել, իր շահաղործման սխտեմի մէջ սանել նախճված երկրները: Այն, ինչ որ անկարող կզավ անելու խարրի տիրապետող ֆեոդալ զասակարգը Միտանիում, ընդունակ հանդիսացավ անելու հետագայում Ասորեստանը, երբ որդեն նալիբիի երկրներում, որոնք կազմում էին Միտանին, սոնմա-ցեղային հասարակական ձեղ, արտադրական ուժերի զարգացումով, սկսել էր քաչբալել, մանավանդ որ այլ երկիրն ընկած էր ասեսարական փոխանակության հարաբերությունների տարանջեղի կարեր հանդուլթի վրա:

Հայկական լեռնաշխարհի արևալիկ նյութական կուլտուրան յի ներխալացնում իրենից մի կզգիցանում, անշուս, ինքնաբավ կատեզորիա: Գն մի կուլտուրա է, որ, թնկ զարգացել է սեղական յուրահասուկ պտտմական պայմաններում, բայց և այնպես մի օղակն է այն համատարած կուլտուրայի, որը մի կողմից՝ զարավոր հորձանքներով սղղում էր բոլոր երկրները Միջագետքի հարավից՝ Բաբելոնից զեպլէ հյուսիս՝ մինչև կուկասյան լեռները,

խիկ մյուս կողմից՝ Փոքր Ասիայի վրայով միջերկրածովյան օվս-  
զանից հոսելով, խաչածնվում էր Հայկական լեռնաշխարհում ասորա-  
բարելական այդ կուլտուրայի ավերակների հետ: Մի կողմը թողած  
Հայկական լեռնաշխարհի նյութական կուլտուրայի բազմաթիվ  
երևույթները, որոնք աղերս են ցույց տալիս ասորա-բարելական  
կուլտուրայի հետ և որոնց մասին նշել ենք սույն աշխատանքի մասին  
II հատորում, բավական է միայն ընդդեմ այն ակնբախ փաստը,  
որ Հայկական լեռնաշխարհի ժողովուրդներն յուրացրել էին բա-  
րելական սեպագրութեանը՝ Հայկական լեռնաշխարհը, ընկած  
լինելով այդ խաչածնված հանդուրձում, իր տեղական կուլտուրայի  
մեջ ներծծում էր իր վրա անցնող հոսանքների տարրերը: Այդ  
կուլտուրան ստանում էր մի սեսակ սինկրետիկ բնույթով, մի հաս-  
կություն, որ աչքին է ընկնում ցյուրում զծեղով ոչ միայն ներկա  
սեսակության նյութի ժամանակը, այլև նաև հետագայում առ-  
ջողջ հայկական պատմության մեջ: Նույնը պետք է ասել նաև  
սոցիալական կուլտուրայի մասին, որի բազան է հանդիսանում  
նյութական կուլտուրան:

Այդ սեսակետից անա Հայկական լեռնաշխարհի ֆեոդալի-  
զացիայի արագացմանը նպաստեցին Ասորա-Բարելաստանի տես-  
կան արշավանքները, և նրանց արտադրական-սոցիալական հա-  
րաբերությունների բնորոշ գծերը թափանցեցին Նայիրի: Բայց  
միաժամանակ Նայիրիի երկրները թափանցել էին նաև հարակա-  
ն ֆեոդալիզմի տարրերը, որոնք մասնավորվում էին մնացել Մի-  
տանից՝ վերջինիս անկումից հետո: Սակայն և այնպես այդ եր-  
կու զանազան կողմերից թափանցող ֆեոդալիզմի տարրերը բնավ  
խորթ չէին իրար: Հիմնոված լինելով միևնույն ֆեոդալական ար-  
տադրության եղանակի վրա, ներկայացնելով միևնույն սոցիալա-  
կան զասակարգերի ներհակությունը, ասորեստանյան ու հայկա-  
կան ֆեոդալական հասարակությունները սակ մասնակի սիմե-  
թիկներ էին ասիական ֆեոդալիզմի: Այդ ասիական ֆեոդալիզմն  
էր կազմում նաև լազական թագավորության հիմքը:

Ուստի սեսություն ստեղծիս այն ֆեոդալական հասարակու-  
թյունը, որը բարձրացել էր Հայկական լեռնաշխարհի տոմային  
հասարակության ավերակների վրա, և ենթ աչքին առավ ենթ ու-  
նենալու ասորա-բարելական ֆեոդալիզմը: Վերջինս մեզ ներկա-  
յանում է համեմատաբար ավելի հարուստ պատմական ավայունե-

քով, որոյնի պարագան հնարավորություն կտա մասամբ լրացնել  
այն թերին ու բացելը, որոնց հանդիպում ենք Հայկական լեռ-  
նաշխարհի ֆեոդալիզմը գիտելիս:

Ասորեստանի նվաճողական արշավանքների արձանագրու-  
թյուններում (15-10-րդ դարերում մեր տարեթվակ. առաջ)  
հիշված փաստերը ներկայացնում են Նայիրին, բաղկացած բազ-  
մաթիվ մանր, իրարից անջատ ու անկախ մարզերից, որոնք,  
ինչպես վերը առիթ ունեցանք եզրակացնելու, առանձին առնմա-  
ցիկային հասարակություններով բնակված տերիտորիաներ էին:  
Քե ինչպես էին կոչվում այդ ժողովրդական զանգվածները՝ մեզ  
հայտնի չէ, որովհետև ասորեստանյան նվաճողները չեն հիշատա-  
կում նրանց անունները: Եվ չէին էլ կարող ասել, քանի որ իրա-  
կանում այդ ցեղա-տոհմային հասարակությունները սակավին  
համաձուլված չէին մի էթնոսի, որ միացյանք բոլոր այդ մանր  
երկրները ու զոչացյանք միասնական ցեղային զանգված մի ա-  
բույն իզովով ու պետական կազմով:

Միայն Նայիրիի երկրների սոհմային հասարակությունների  
փերջնական քայքայումով ու զարգացող ֆեոդալիզմով՝ մենք  
սեսնում ենք այդ անջատ մարզերի համախորուն ու միացումը,  
էթնոսի զոչացումը և պետության առաջացումն իր թագավորու-  
կան իշխանութայամբ: Ըստ ասորեստանյան արձանագրություն-  
ների՝ 9-րդ դարի առաջին կիսում Նայիրիի երկրների նյութա-  
յին իւումը ներկայացնում էր ինքնուրույն թագավորություն,  
որ տարածվում էր Արամանի գետի այն կողմը և կոչվում էր  
Արարտու: Արձանագրությունները մեզ չեն տվանդում մանրու-  
մանություններ, թե ինչ էր ներկայացնում այդ թագավորու-  
թյունը: Սակայն զժվար չէ կուսնել, որ իր սոցիալ-տնտեսական  
կուսույցվածքով ավելի առաջադիմած մի ժողովուրդ, որն անշուշտ  
կրում էր Ուրարտու ցեղական անունը (ըստ հունական հին պատ-  
մադրական պարոյ), կարող էր այնքան ամբանալ և ուժեղանալ,  
որ համայնքում է իր շուրջը հարևան երկրներն ու ենթարկում  
իր իշխանութայանը: Այսպիսով Նայիրիի այդ մասի երկրներն  
իրենց ժելխաններով, զլուս ունենալով Ուրարտուի ավելի զորեղ  
ու աղեղեղի իշխանին, կազմում են մի ֆեոդալական պետու-  
թյուն:

Սակայն ուրարտական ֆեոդալ թագավորությունն երկար



չապրելը: Ես տեղի տվեց մի նոր ստաֆացած ավելի ուժեղ ֆեոդալ պետությունը՝ խաղաղամ կամ Բիայնայի, այլապես Վանյան թագավորությունը, որ ստագրել է դալեմ Զ-րդ դարի 2-րդ կեսին մեր սարքիվով: Ես ասում եմ: Անշուշտ, խաղաղ անունն էր կրում այն դերիշխող ցեղային դոմինանտը, որ ամենից ուժեղն ու զորավորն էր հանդիսանալով, դարձավ էթնիկ կոորդին, որի շուրջը կազմակերպվեց ու միաձուլվեց խաղաղական պետությունն իր թագավորով: Իրեն դերիշխան ֆեոդալ, ու նրան միացած կերպերով ու սրանց զինավորող իշխաններով, իրեն հզորացրեց ֆեոդալների Բակ այդ ցեղը կոչվում էր խալ՝ իր ցեղական ստաֆու խալի անունով, որն հանդիսանում է այս դեպքում անվանազիր հերոսը (էպոսիմ): Հետևապես տեղի է ունենում ցեղային էթնիկ միավորում հանդիսանում է միավորումով, որին գլխավորում էր մայր ստաֆուրը:

Մինչդեռ Արարատի թագավորներ՝ Կուսիպրիս, Սարգուր, Արամն իրենց անվանում էին սթագավոր նաչիրիթ, որի մայրաքաղաքն էր Արգաշտուն, Վանի ծովի հյուսիսակողմը, ապա խաղաղական առաջին թագավորը՝ Սարգուրը, Արամի որդին, և սրա հաջորդները մինչև Բիայնայի անկումն իրենց կոչում էին սթագավոր Բիայնայի, իրենց մայրաքաղաք ունենալով Բիայնասայն է՝ Վան, Տուշդա (հին հայկական Տոսո) քաղաքը, որ դանդաղում էր Վանս լճի հարավ-արևելյան կողմում: Նաչիրի անունն այդև իսպառ վերանում է հին պատմական արձանագրություններին, տեղի տալով Բիայնա անվանը:

Արարատի փոխվելը Բիայնայի թագավորությունը և նոր թագավորության կենտրոն-քաղաքի տեղափոխվելն Արգաշտունից Տուշդա՝ մի ուղարկով պարագա է, որ ցույց է տալիս նաչիրի երկրների ֆեոդալականացման ընթացքը, ուր փոփոխական հաջորդություններով հանդես է եկել այս կամ այն էթնիկ ցեղն իր նվաճողական ուժով ու հաստատել իր դերիշխանությունը: Այդ ֆեոդալիզացիայի վերջին նստայն էր Բիայնան իր քաղաք Տուշդայով (Տոսո), ուր վերջնականորեն կազմակերպվում է խալի ֆեոդալական տիրապետությունը: Սակայն Բիայնայի և Տուշդայի անունները, ինչպես պարզվում է լեզվագիտական վերլուծումից, բնավ խաղաղական ծագում չունեն և գոյություն են ունեցել նախքան խալերի այդպեղ հաստատվելը: Նույնիսկ Տուշդան, խալ-

գիրի այդ մայրաքաղաքը, իրենք խալերը չեն հիմնել, քանի որ այդ մասին իրենք ոչ մի բան չեն ասում իրենց արձանագրություններում: Հետևապես, խալ անունով ցեղը, որպես հաղթական ժողովուրդ, որ խոսում էր խալերեն և պաշտում ինչպես սրածուն, տիրացել էր Բիայնային: Վերջինը, լինելով նախախաղաղական անուն, խալերի արձանագրություններում հորջորջվում է իրեն սերվիլի Բիայնա: Բայց նկատի անելով, որ հին խալական արձանագրություններում հիշատակված աշխարհագրական անունների իմաստավորման մեջ պետք է տեսնել էթնիկ տեղափոխ, ապա պետք է ենթադրել, որ այդ անվան իսկական իմաստը կղկ է սերվիլի բիայնա ցեղի (կամ ժողովրդի): Ուրեմն խալերը տիրել են Բիայնա ժողովրդին ու դարձել են տիրապետող, իշխող սարքը:

Արգարե, լեզվագիտական վերլուծումը Բիայնա և Տուշդա անունների, ըստ հարեթական թեորիայի, կրեան է հանում մի ուղարկով հանգամանք, որ Բիայնան խաղաղական ֆեոդալիզմի հաստատանով ներկայացնում էր կրե էթնիկ բազադություն: Ինչպես ակադեմիկոս Ն. Մոսն է ապացուցում, Բիայնա անվան մեջ նկատվում է hay (հայ) ցեղական անվան հետքը, իսկ Տուշդա անվան մեջ պարունակվում է արև ցեղական անունը<sup>255</sup>: Տուշ ցեղի մասին ավանդում է Մովսես Խորենացին, հիմնվելով ժողովրդական երգի վրա. «Մա [Վարդաբ թագավորը, Տիգրան թագավորի որդին] պատեաց պարսպալ և զգորդ արանի Վարդգեսի, որ ի վերայ Քասաղ գետոյ. զորմէ յառասպելան ասեն. «Հաստեած գետեակ Վարդգես մանուկն Ի Տուիաց գավառեն, գՔասոսղ զեամով, կեկալ նստեալ զՇրէշ բլլում, զԱրտիմէդ քաղաքաւ, զՔասոսղ գետով, կռել կոթել զգրեանն Երուսղեայ արքայիս (գիրք Բ, գլ. Կն):

Մալղական ֆեոդալիզմի զարգացման պրոցեսը նկատվել է նաև մի այլ կարևոր կրեուլի մեջ: Թեև խալի ժողովրդի գերագույն ստաֆուն է Խալը, որի անունով էլ կոչվում է այդ ժողովուրդը, բայց Բիայնայում տիրող խաղաղական թագավորների սեպակներ հուշարձաններում միշտ հիշատակվում է նաև ստաֆուն կրեուլները, որ ստանալիս հասարակության մեջ, ցեղի ու պաշտօնային անունները ստորաբաժան համանիչ են: Հետևապես կրեուլացնելու ենք, որ խաղաղական պանթեոնի երբորդությունը հա-

մադրատեսիան է լինելու Բիսյնայի խաղաղան թագավորութայն  
ենթակա ժողովրդի էթնիկ ընդհանրության երեք սարքերին՝  
Այդ երեք աստվածություններին՝ Պալլը, որ համարվում է դե-  
մոգոսյնը, դարձել է հանուր սուզգլին-պետական ի գեմս արքա-  
պետոզ ու գերիշխող խաղը ցեղի, որի էթնիկ աստվածն է եղել  
Մյուս երկու աստվածությունները՝ Քեյշերն ու Արդին, անշուշտ  
հանդիսանում են երկու սարքեր էթնիկ աստվածներ, խաղերի  
տիրապետությանն ենթարկված երկու ցեղերի, արդյո՞ք hay = հայ  
թԲ նա ցեղերի, առայժմ գովար է որոշիչ։ Կնարավար է ենթա-  
դրել, որ Արդի աստվածը կարող է Ուրարտուի էթնոսին պատկա-  
նել, Ուրարտուի, որի թագավորությունն անցավ խաղաղանին,  
երբ վերջինս հաստատվեց Բիսյնայում։ Իսկ Քեյշերը, որ համա-  
նիշ է հաթական ու Միտանիի գլխավոր աստված Քեշուրին, կա-  
րող էր Տուշուայի աստվածը լինել, հետևապես նա ցեղի աստ-  
վածը, կամ էպոնիմը<sup>278</sup>։ Վերորդերյալ ավյալներից հետևում է, թե  
ինչպես գանազան ցեղերի միավորումը, որոնք թերևս պարսեռա-  
կում էին իրենց մեջ էլ սոցիալ-անասնական դարգացման ներակա  
(իմանենա) ուժեր, կատարվում է խաղերի տիրապետությանը,  
ուր սոցիալական շերտավորումն ավելի ուժեղ էր դարգանում և  
ասպրեղ էր գալիս արտադրական միջոցներն իր ձեռքում կենա-  
րոնացած մի զորեղ դասակարգ, որ կարողանում էր իր գերիշ-  
խանությանն ենթարկել մյուս ցեղերը։

Ահա այսպես առաջացավ ֆեոդալական հիմքերի վրա խաղ-  
աղական թագավորությունը, որը, ընդգրկելով իր մեջ Նայիրիի  
նախկին բոլոր ցեղերով՝ աճողին դործուն գեր խաղաց Առաջավոր  
Ասիայում, սարձակով իր ազդեցությունը վաճա լինց մինչ  
Քուռ-Արաքս երկգեայան ավազանը ու Սիանի լինը և արևելքից  
այժմյան Ուրմիա լճից մինչև արևմուտք՝ Եփրատ գետը ու տեղի  
մինչև 6-րդ դարը մեր տարիթվակ. առաջ։

II

ԵՄԼԻԳԱԿԱՆ ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՆԱԼԻԶԸ

Մաղաղական ֆեոդալիզմի ցայտուն պատկերը մեզ ներկայաց-  
նում է խաղերի բովանդակ նյութական կառուցումն, որն իր  
դարգացմամբ դասնում է այն հիմքը, որի վրա խարսխվում է

ֆեոդալական հասարակադը։ Հերթի, խաղական նյութական  
կուլտուրայի ըարձը դարգացումը, մասնավոր նրա կենարտագալը  
ճուշտայում, ամբողջովին ամփոփում է իր մեջ ֆեոդալիզմի էա-  
կան սարքերը։ Այդ կուլտուրան հետևանք է այն արտադրական  
կարարութայնությանն, որոնք արտանյալ հնարավորություններ  
էին ընձևում տիրապետող ֆեոդալ դասակարգին՝ արտասան-  
ական հնչման միջոցով շահագործման ենթարկել ներտակ, սոցիա-  
լապես ստորադաս աշխատավոր զանգվածներն ու իր սեփակա-  
նությունը դարձնել երկրի ամբողջ նյութական արտադրությանը։

Մաղաղական ֆեոդալիզմը բնորոշ առիական ընձևակալ պետու-  
թյան էր, որին զվաճվորում էր ամենամեծ ու ամենահարուստ  
ֆեոդալ՝ թագավորը, միտածամանակ ամենագրեղին իրեն հպա-  
տակ ֆեոդալները մեջ ներկայացնելով իրենից խիստ կենարտագա-  
լած հիերարխիական մի իշխանություն, խաղական թագավոր-  
ները կարողանում էին զլուել բերել ու ծաղկել այն մեծ շինա-  
րարական զործերը, որոնք այնքան բնորոշ են խաղերի նյութ-  
ական կուլտուրայում և որոնք հանդիսանում են խաղական  
ֆեոդալիզմի սոցիալ-քաղաքական ամբայնպման և նյութական  
կարատության հավանները։ Մաղերի այդ նյութական կուլտուրան  
մենք արդեն հանգամանորեն տեսուլթյան ենք անել ներկա մեր  
այնաստության երկրորդ հատորում, սակայն նորից վերադառնա-  
լով այդ նյութին, մենք այտուել կիրթմենք վերլուծել այդ  
կուլտուրայի միայն բնորոշ կողմեն այն շարով, ինչ շարով  
նրանք յուրահասուել են ֆեոդալական հասարակությունը։

Այդ տեսակետից առաջնակարգ նշանակություն ունեն այն  
արխայիկ ամբոց-բերդերը, որոնց կատարյալը պատկանում է  
խաղական դարաշրջանին։ Այդ ամբոցները եղել են խաղական  
ֆեոդալ դասակարգի ընձևակալներ ու ծառայել են ոչ միայն  
պառագանելու իրենց տերերին արտաքին ու ներքին թշնամի-  
ների հարձակումներից, այլ և ապահով շտեմարան են եղել իրենց  
պանաստեղծում և ժողաններում կուլտուրալ ֆեոդալ իրիտանե-  
րի հարստություններից։ Ուստի այդ արխայիկ ամբոցների բու-  
վանդակ կոնստրուկտիվ կողմը համապատասխանում էր ֆեոդա-  
լական կենցաղին և ծառայում տիրապետող դասակարգի հասա-  
պիղած շահերին, ունենալով սոսկ սոցիալական ֆունկցիոնալ  
նշանակություն։ Երբ մենք տեսուլթյան ենք առնում կրկնողյուն

ամբողջները (զլ. IV, նաև II հատ. զլ. Ժ.), առիթ ունեցանք բրնձորշերտ նրանց ֆունկցիոնալ նշանակութունը մասնավորապես տոնմային հասարակութայն աղերսով, մասամբ էլ թեթևակի շոշափելով այդ ամբողջներից մի քանիսնների ֆեոդալական կոնսարուկցիան:

Մենք արդեն նկարագրել ենք (հատ. II, էջ 239—249) խորզական ամբողջները, որոնք կորցրել էին իրենց նախկին կիկլոսայան կառույցներին հասուկ, սոնմային հասարակարգի համար բնորոշ գծերը: Նախորդ դարաշրջանի կիկլոսայան ճարտարագիտութունը վերափոխվել էր նոր կոնսարուկայով՝ ձևերի Պտտերը սահանում էին ավելի կանոնավոր ձև, բավական հարթ ստրուքին և բացի այդ՝ անկյուններում, երբեմն էլ որմերի միջիններում կառուցվում էին ելուսաններ, որոնք կարող էին ծառայել երկու նպատակի՝ կառույցի պտտերի գլխացկանութայն և մյուս կողմից՝ իբրև ուղղմական բուրգեր: Այդպես էին խաղաղի կառուցած Արմավիրի ամրոցը, Վանի Սարգուրաբերդը<sup>13</sup>, Քարառաշական ձևը կիրառվում էր խալդեերի կողմից, իբրև՝ իրենց մասնագիտորեն ծաղկած արվեստ, նաև բոլոր հասարակական կառույցներում: Թոփրակ-կալեում պեղումներով հայտարկված պալատի, տաճարի և այլ շինքերը կառուցված են այդ արվեստով:

Սակայն խալդական դարաշրջանի ամրոցներն ունեն այն առանձնահատուկ գիծը, որից միանգամայն դուրս են տոնմային հասարակութայնը պատկանող կիկլոսայան ամրոցները: Մոցիալական շերտավորումը, անտեսական անհամաարևութունը, արտադրողի իշխանութունն ակնշարի շնչանքով արասահայտվել են խալդական ամրոցների կառույցներում: Այստեղ ամենից առավաչքի է ընկնում միջնարբը, որ շրջապատված է ամրակուսու անառիկ որմերով, պաշտպանված լինելով ոչ միայն արտաքին կողմից, այլ և իրեն հարող, իր լանջերում փռված շինանյութի, որն իր հերթին ընդգրկված է պարիսպներով: Այս տիպի ամրութունները խալդական արձանագրութայններում կոչվում են սթադավորական քաղաքներ: Միջնարբը անհամար ֆեոդալ

իշխանն իր դուզազով՝ թիկնապահ զորամբով, իր անտեսական պապարկող շինքերով ու սոսնդակ պահեսաներով շրջապատված, որոնք իրենց անառիկ ամրութուններով ապահովված էին թե սրտաքին թշնամու հարձակումներից ու հակառակորդ ֆեոդալներից՝ ապառաժակումներից և թե իրեն հպատակ բնակչութայնից, թեև վերջինը նրա ճնշումների և շահագործումների ներքո որևէ թրատութայն կամ թշնամական ելույթի փորձ աներ նրա դեմ:

Ֆեոդալիզմի հետագա զարգացումով և ուժեղացումով, երբ շահագործման ճնշումներն ավելի էին ծանրանում ու զստակարգային ներհակութայնն ավելի էր խոտանում, միջնարբը անփոփոխ է պարսպապատ շինանյութից՝ քաղաքից և միանգամայն ինքնուրույն ամրութայն է դառնում, բարձրանալով բլրի գագաթին կամ բնական անմատչելի զրբում, մինչդեռ քաղաքը փոփոխ է մնում նրա ստորոտում, կամ միջնարբից բաժանված աստիճան լանջերում: Այդ տիպի միջնարբերից պաժանված է սակ իշխանական բնակատեղ ամրոց, յուրահատուկ ինքնամփոփ կենցաղով անտեսական-վարչական ինքնուրույն ֆունկցիաներով՝ հպատակ բնակչութայն վերահսկումը: Այդ ձևի վերափոխված ամրոցներն ավելի հասարակաց էին եղել խալդական մասնահալըջանում, ավելի հաճախելի օբիեկտներ են ներկայումս պահպանված ավերակներում ու մեղ հայտնի հնագիտական վայրերում՝ նախկին խալդական թագավորութայն ասանաների մեջ, առավելապես Վասպուրականում (Վանի շրջան), որտեղից նրանք երկարամեջ շրջապով տարածված են արևմտյան ասանում: Տիրբիսի ու Եփրատի վերին հոսանքների ձորերով: Այս ձևի ֆեոդալական ամրոց-քերդերը մեծ մասամբ ժայռերի մեջ քարակալի կառույցներ են, որոնք անհամեմատ ավելի կույուն ու զովմարածոչելի կովաններ են եղել ֆեոդալի համար, քան թե քարաշար կառույցները: Այդպես են Վանի, Բալուխ, հասանքեֆի, Մամադկերտի, Հին Բալազանի, Խարբերդի, Կամախի և այլ բազմաթիվ ժայռակալ իշխանական ամրոցները: Երբ խալդական թագավոր Սարգուր III (750—733 թ. մեր տարեթիվակ. առաջ), Արդիշտիի որդին, պարտվում է Ասորեստանի թագավոր Թիգլաթ Պալասար III-ի (747—728 թ. մեր տարեթիվ. առաջ) դեմ մղած պատերազմում, վերջինիս հաղթական արշավից նահանջվելու՝ ապավինում է իր զորքով Տուշպա (Վանի)

<sup>13</sup> Քաղաքական բերդերի լավագույն նմուշներից է երևանի մոտ վերջին տարիներս պեղվող նորմիր-բուրդը:

միջնաբերդում: Թիզլաթ Պալատարն ապագատեղում է ամբողջ Բիսյանն, նույնիսկ ավերում, հրկիզում է միջնաբերդի տակ ընկած քաղաքը, տակալն անցրը է վրնում գրավելու միջնաբերդն ու ապարդշուն պաշարումից հետո, խուլում, հեռանում է (LHA, II, նաև MX, 36):

Ահա այդ տիպի միջնաբերդը, որ խալդերն իրենց սկսապիր նուշարձաններում անվանում են palari, բնորոշ են նրանով, որ խալդական ֆեոդալիզմի ծագվածան վերելքում հանդիսանում է տիրապետող իշխանի քանակավաճը և միտնդամայն անշատ է նրպատակ բնակչութունից, որը կենտրոնացած է միջնաբերդի տակը դանձող քաղաքում: Ինչպես որ ֆեոդալն է իշխում իրեն հնթակա բնակչութուն վրա, այնպես էլ նրա ամբողջ-միջնաբերդը բարձրից իշխում է քաղաքի վրա: Դա ապացույց է շեշտակի սոցիալական սրտնման, որով քաղաքի բնակչութունը ներկայացնում էր իրենով ֆեոդալ-ազնվական դասակարգից առանձնացած ու անշատ սոցիալական մասնա, բազկացած գլխավորապես արտադրող տարբերից՝ երկրադորձներից ու արհեստավորներից, մասնավորապես նաև առևտրականներից: Այդ իտիական քաղաքը մեր առումով, ուր կենտրոնանում էր հասարակութուն բովանդակ անտեսական կյանքը, խալդերը հետագայում սկսում են տարբերել palari-ից և հորջորջել imoni անունով<sup>27</sup>:

Միջնաբերդի է բուն քաղաքի սոցիալական տարբերություն տեսազեր, իրքե ֆեոդալական հասարակութուն բնորոշ հանդամանք, այնուհետև պահպանված ենք դառնում ոչ միայն ամբողջ խալդական պատմութուն մեջ, այլ և խալդերին հաշորդող հին հայերի կյանքում: Թալդական ֆեոդալիզմին հետևող հին հայկական ֆեոդալիզմը մեծ մասամբ հաստատվում է նույն միջնաբերդում և քաղաքներում, վերափոխելով այդ ամբութուններն ու բնակողներին իրենց ժամանակակից պայմաններ համաձայն, այլ և հիմնում են նորերը, հետևելով նույն կառուցողական պահանջներին: Այդպես էր, օրինակ, Արշակունյանց թագավորների Անի բերդը, որ բարձրացել էր ուրարտական Կրմախ (Կամախ) ամրոցի տեղում (II, 342): Մենք դեռ ավելին կանենք, նույն այդ սոցիալական տեսողներ պահպանվում էին հայկական միջնադարի ֆեոդալ իշխանական ամրոցների ու հարակից քաղաքների կառուցվածքներում:

Այսպիսով խալդական ամրոցն ու նրան հարակից շենք կազմում են ֆեոդալ-ազնվական դասակարգի նյութական գլխավոր կովանները, ընդ որում ամբողջ ծառայում էր ֆեոդալներին արտաքին պաշտպանութուն համար և նրա բովանդակ անտեսութուն շահերին: Ուստի խալդական կնտանով շինարար ամբողջ գործունեութունը, որ զարմանալի աշխատունակ թափ է ցույցարբում և ամբողջ ճարտարագիտական արվեստը, որ բարձր գարգացման էր հասել, արժանավոր և ծավալվում էր լով այդ նպատակներին ծառայելու ուղղութվածք:

Ընարկով ամրոցներին կառուցման համար բնութունից սովորած անմտաչելի ու դժվարամերձ դիրքեր, ֆեոդալն իր բնակավայրն ամբապնում էր ու անասիկ պարձնում նաև արհեստական միջոցներով, պարսպելով հսկայական և դժմացիկում որմերով, պատանշներով ու իրամասներով և այլ օժանդակ կառույցներով: Նախատեսելով հանկարծակի ու անսպասելի հարձակումներ և պաշարուններ թշնամիների կողմից, ֆեոդալը միջնաբերդի մեջ շինում էր դադարնի ստորերկրյա անցքեր դրսի աշխարհի հետ հարաբերութվուններ ունենալու համար, պահականոցներ, ջրամբարներ, դադարնի վրանյքներ, մթերանոցներ և շահմարաններ, ինչպես վկայում են Վանի և մի շարք այլ քարակոթի ամրոցները:

Շտեմարաններ հարկավոր էին, որովհետև խալդական ֆեոդալները և սրանց մեջ առաջին տեղում թագավորները, իրենց անվերջ պատերազմներով ավարտուն մե ու սպաստիկումը բարձրել էին իրենց հարստութուն և նյութական կուտակման գլխավոր աղբյուրը: Այդ կողմից առանձնապես աչքի են ընկնում Մենուա (810—778), Արգիշտի (778—750) և Սարգսր III (750—733 թ. մեր տարեթիվով. առաջ) թագավորները, որոնք հսկայական ավարներ էին կուտակում Բայը և միևնույն ժամանակ այդ շահմարաններում էին դիզվում շահագործվող գյուղական համայնքներից ու այլ արտադրողներից յուրացված բնական արդյունքները, իրենց նպատակներից ու ենթակա վատլա ֆեոդալներից հավաքած բնատուրքերը: Թորթակ-Կուրի (750) պեղումներով կեման-Նուստյուր հայտարարել է մի այդ տեսակ շահմարան-մասնիկ ավերակներ, որ դանձվում էր բլրի հյուսիս-արևելյան մասում կառուցված տաճարից մի փոքր հեռու գեղյի

հարավահայկերէն Այդ ալիբազնեանցի գուրս են հանված մաս 25 հաս մեծ կազմ կարասներ, բարբը փշրված, բացի երկուսից, և մանր կազմ սափորներ: Այդ կարասները ծառայում էին թե դրին, պարեմներ և այլ ներուկներին և թե ցորենին, զարու և այլ հացահատիկների սահմանման համար. իսկ փոքրիկ սափորները չափեր էին (LHA, II<sup>2</sup>, 466—467): Այդպիսի շտեմարան-ժառանգներ հայտարարվել են Կրեմոն-միկենյան հինավուրց կուլտուրայի վերաբերյալ պեղումների շնորհիվ՝ արքայական պալատներին կից՝ Կոստում, Միկենում, Փետտում, Տիրինֆում և այլուր: Նույնանման հակալական շտեմարաններ գոյություն ունեին Իտալիայում և Ասորեստանում, ինչպես և Աքեմենյան պարսիկ թագավորների մաս:

Ասորեստանի թագավորները, նվաճելով Նախըրի երկրները, կոտորեցում էին այգանց հակալական շտեմարաններ, ուր հակաբռնում էին Նախըրից վերջածած վաճառ ու ստացված հարկերը: Երկրորդ շտեմարանները կազմին Նախըրի Բիտ-Չամանի երկրի Տուշահ ամրոցում: Ասուրնախրբալ թագավորը (9-րդ դար մեր ասրեթիվով. առաջ) իր մի հաղթական նվաճումից հետո արձանագրում է. «Նախըրի հունձքը հնձեցի և իմ երկրիս օգտին համար դանձք Տուսիայի, Գամդանուայի, Մինարուի և Տիգուի մեջ համրարեցի»<sup>250</sup>: Այդ շտեմարաններում էին գանձում և պահում բացի արձագանքներից, նաև թանգուգին մետաղներ՝ երկաթ, արծաթ, սպիտակ, Այդ շտեմարանները միաժամանակ գանձատներ էին, ուսկից թագավորներն ու իշխանները հողում էին ոչ միայն իրենց անձնական, այլ և իրենց երկրի ծախքերը, վճարելով դինարականներին, զուցե և պետական այլ պաշտոնյաների սոճիկները, պալատականներին սպանող կենսապարենը և այլն: Այդպիսով այդ հակալական շտեմարաններն ամենաախարհ կերպով կապված էին թագավորների և ֆեոդալ-իշխանների անտեսութան հետ և դառնում էին յուրաքանչյուր, խոշոր չափի ցանտեսաական ձեռնարկութուններ, որոնցից հետագայում հետզհետե գորգանում են պետական «ֆինանսները», աղբուրի գանձարանները:

Սակայն ֆեոդալ-իշխանն իր սիրապետութունը պահպանում և իրողործում էր ոչ միայն զինվորական ուժով, այլ և մոլորակական գանդվածների վրա հողերանորին աղբուր միջոցներով: Նա շրջապատում էր իր անձնավորութունը միտակ նը-

շանորանով և իր մենաշնորհն էր համարում աստվածների առաջ միջնորդ հանդիսանալու և կրոնական պաշտամունքը հովանավորելու: Այդ պարագան նյութականացնելու արտահայտում էր շրջիլ տաճարները՝ «Տալլ աստճու դեներ» կառուցելու ձեռնարկումներով: Իր իշխանական, աշխարհական անձնավորութունը ստորերկրում համար ստիպական հպատակներից, ֆեոդալը, մասնավորապես թագավորը, իրեն հետո պահելով մտացալ ժողովրդական գանդվածից, իր ստորագաս հպատակներից, շրջապատում էր իր անձնավորութունն արտաքին շուքով, փոստակց կենցաղով: Այդ նպատակին էին ծառայում միջնաբերդում բարձրացող ֆեոդալական կամ թագավորական ապարանքները, նրանց արդ ու զարբը: Խոսակարգային սիրապետութան այդ արտաքին նշանները աստճանական պարագանի էին խաղաղական թագավորութան քաղաքական գործառնումն ու բարձրացման հետ զուգահեռ: Մասնավորապես այդ հանդամները ցայտուն կերպով աչքի է ընկնում խաղաղական թագավորութան ծաղկման վերջին շրջանում, երբ թագավորանիստ միջնաբերդը Վանից տեղափոխվում է թագավոր նուստ 1-ի օրով (8-րդ դար մեր ասրեթիվով. առաջ) Թոփրակ-կաթի վրա (LHA, II<sup>2</sup>, 462, 859): Ինչպես ապացուցում են Լեման-Շաուպուրի հնագիտական պեղումները Թոփրակ-Կաթում, օպտակց կառուցվել են շքիլ տաճար հանդերձ իր շտեմարաններով, իշխանական պալատ իր հարակից ու օժանդակ անտեսանել և այլ շենքերով: Այստեղ հայտարարվել են այդ շենքերի պեղմանութունը վիճարկ սքրատաջ քարեր, հատակների մոլորակի ծածկի գույնավոր ու երկրաչափական դանդան ձևերով քարի բնկերներ, արձաթի ու ոսկի գանդան անթիներ ու պարսպաններ, տանարը զորդարող իշխանական վանքներ, արձաններ, աշատանակներ, իշխանական կահույքի մնացորդներ և այլն (ստ. 11 հատ.): Թոփրակ-Կաթի միջնաբերդի տակ շինված է կելլ ստորերկրյա ժայռափոր անպին սրտ՝ խորունկ ավազանով, որը խաղաղ ժամանակ կարող էր իրեն իշխանական լուգարան-բաղնիկ ծառայել, իսկ թշնամու պաշարման զեպրում՝ ջրամբար. զեպի այդ ավազանը զբոսից ջուր մատակարարելու համար մի քանի կելլամար երկարութան ջրանցք է փորված ժայռերի մեջ, հեղում գանձող լեռնային աղբուրից (LHA, II, 464—465):

Սաղաղական թագավորները, նվաճելով նոր երկրներ ու մո-

զովուրցները, սամն սեղ կառուցում էին իրենց ամբոցները նախորդ հնի փոխարեն, անվանելով այդ իրենց անունով, և առաջին նվագ գորգարում էին Պաղ սասձուն նվիրած տաճարով, կամ «Պաղի զոնկերով»: Այդպես էր նաչերիի Լիխիունի քաղաքի գերավումով՝ խաղաղական Մենուտ ֆազավորի կառուցումը, Մենուտայի որդի Արզիշախի (778—750) կառուցումներն Արմավիրում, Ռուսա I (733—714) վերաշինում է Արզիսի քաղաքն ու վերահանում Պաղի տաճարը: Վերջնական, խաղաղական ֆազավորութան պարձանքն ու իշխանական կառուցություն հիմքն էր համարվում Մուսասիրի տաճարը, Պաղ սասձուն պաշտամունքի կենտրոնավայրը իր հատուկ ապարանքով, ուր նստում էր իադրական թագավորի վասուր-ֆետրալը: Այսպիսի վասուր խաղաղական պատմությունից կարելի էր առաջ բերել բազմաթիվ օրենսդրություն, սակայն վերոհիշյալներն էլ բավական են մեր ասածը հաստատելու համար:

Շահագործման նպատակին էին ծուռույթով խաղ սիրապետողների նաև շինարարական այն հսկա ձևառարկումները, որոնք այսօր մեր դարձանքն են շարժում իրենց սեխնիկայով ու ձորասարուրկետով: Ամբոցների շուրջը կառուցվող քաղաքային շենքերը, ջրանցքները, տնիված այգեստանները և այլն, ոչ այլ ինչ էին, եթե ոչ տնտեսական ձևառարկումներ, որոնք ֆետրալներն ի կատար էին անում անմիջական օրտադրությունի մեջոցով հենց նրանց շահագործելու և իրենց նյութական հարստությունները դիզելու նպատակով: Մի շարք սեպագիր հուշարձաններում խաղաղական ֆազավորները հավերժացնում են, իբրև իրենց մեծագործություններ, ջրանցքների շինարարությունը, որ ընկնում է 780—650 թ. մեր տարեթվականությունից առաջ ժամանակակիցություն, ինչպես օրինակ՝ Վանի, Սարգարբադի, Կարաղալի, Արմավիրի երկու, Զվարթնոցի և այլ ուրիշ սեպագրությունները:

Այդ պետք հնում, ինչպես և այսօր, արհեստական ուսուցումը կազմում էր երկրագործության հիմքը Հայկական լեռնաշխարհի ստաբիլացման համար: Եթե ստձային հասարակության պայմաններում այդ ուսուցումը հնարավոր էր սեղական տառերի օրհանով, որոնք բավարարում էին կիրկուլյան ամբոցների ապը հասող գեների ու գեներների մաս անմիջ-

րեն վրված շենքերին և գյուղական համայնքներին, ապա ֆետրալիզմի պայմաններում, երբ ահալին տարածությամը հողեր էին կենարձանում ֆետրալ գոտակարգի ձևերին, որոնք շատ անգամ հետև էին գտնվում գետերից, այլ ևս տառերն անբավարար էին: Նետարար անհրաժեշտ էր արհեստական ուսուցումը կատարել պլանային ու լայնացանց ջրանցքային մեջոցով: Իսկ այդպիսի ջրանցքային արարությունը հնարավոր էր գտնում ոչ թե ցիրուցան, իրարից անջատ, ստանձնացված, երբեմն նաև իրար թշնամարար պրամագրված ստձային ու ցեղերի մեջ, այլ այն կենտրոնածիղ իշխանություն շնորհիվ, որ գոյանում էր Արևելքի ֆետրալական հասարակարգում: Թիբևս այդ ջրանցքային արարության անտեսական գերի մեջ պետք է տեսնել ու որոնել այն քաղաքական հատկանիշը, որ այնպես բնորոշ է Արևելքի, մասնավորապես Առաջավոր Ասիայի ֆետրալական հասարակության մեջ, ինչպես Եգիպտոսում, Բաբելոնում, Ասորեստանում, Իրանյանում, ուր թագավորի իշխանությունը լատանում է կենտրոնածիղ ձևի մեջ ու հանում զարեկայան բանակարկության աստիճանի:

Բխայնայի ջրանցքների մեջ կառուցված քային հանձարով աչքի են ընկնում Մենուտ ֆազավորի շինած ջրանցքը, որն այժմ էլ գոյություն ունի, 28 դար անցնելուց հետո, Շամիրամ-ուտ հորհուրդից հենց և Ռուսայի ջրանցքը՝ ներկայիս Քեշիշ-դյուլ անուն լճով: Մենուտայի ջրանցքը, որ մաս 80 կիլոմետր երկարություն ունի (Ա, 261—63), բերված է մինչև Վանի միջնաբերդի տակ, ուր այդ թագավորը անկել էր ավել մի մեծ այլևստան, որի ավերակներն են միայն քարե, և մյուս կողմից նպատակ ունեցող մաստակարարելու ալդադիի քաղաքային բնակչությունը (LHA, I, 9—10, II, 95—109): Վանի ֆազավորանիստ փոխարկելով Թոփրակ-Կալի, Ռուսա ֆազավորն առաջին ներթին կառուցում է անհրաժեշտ ջրանցքը, որի ջրի պաշարն ապահովելու համար, նա շինում է մի մեծ արհեստական լիճ, մաս 60 միլիան խորանարդ մետր ջրի ապարովությամբ, ուսկից ջուրը հասնում է մինչև Թոփրակ-Կալի ստորոտը: Քեշիշ-դյուլը բնում է մի ձոր, որն առաջից ու ետևից փակված է երկու հակառակն ամբարտակով՝ կիրկուլյան կառույցի: Առաջին ամբարտակը 100 մետր երկարություն է, իսկ երկրորդը՝ 50 մետր, երկուսի հաս-

տութիւնը 20-ական մետր է, իսկ բարձրութիւնը՝ 6 մետր: Լը-  
ճի մաս էլ կանգնեցրած է նրա կառուցող թագազոր Ռուսայի  
սեպագիր սրունարձանը: Լեման-Հաուզաի միանգամայն հիմնա-  
վոր բուստրանութեամբ այդ թագազորը եղի է Ռուսա 1-ը (733—  
714 թ. մեր տարեթիվ. առաջ) (Ն.Մ.Ա., II, 43—50): Քոփրակ-Կարիի  
ստորտունն էլ այդ թագազորը խաղողի և այլ սրտառու ծառե-  
րի այդիներ է անկում, որոնց տերիտորիան, ամենայն հավա-  
նականութեամբ, բռնում է Վանի «Այդեսառն» կոչված թաղը:

Բոլոր արձանագրութիւններից, ինչպես և ջրանցքների  
ուղղութիւններից բացահայտ երևում է, որ ջրանցքները կա-  
ռուցվում էին սուզման նպատակներով. խողան դաշտերում  
ջրանցքների վերջավորութեան վրա ֆեոդալ-կալվածատերերը  
անկում էին պահատու, զլխավորապես խաղողի այդիներ, իսկ ջր-  
անցքներից ճյուղավորվող առուները հոսում էին կենարար ջուր  
մատակարարելով գյուղական համայնքների մշակած դաշտե-  
րին: Մեծ պտղակներ ռուսայիների անկման մասին հիշատա-  
կում են Արամիի, Չվարթնոցի, Արամմետի և այլ սեպագիր  
հուշարձանները: Այլպիսի այգիներ անկելու դործում մեծ ջանք  
էր թափել Մարզուր III (750—733), նրա որդի Ռուսա I և ապա  
Ռուսա II (680—645): Ռուսա 1-ի ջրանցքաշինարարութեան վե-  
րաբերմամբ արձանագրութիւնը հիշատակում է. «և հողագործի  
զվարթուն երգը հասնում էր քաղաքի բնակիչներին մինչ այդ  
խողան եղած դաշտերից» (MX, 43):

Նմանապես այլ ջրանցքների շնորհիվ բանում էին բազմա-  
թիվ ջրագոյններ, որոնք անշուշտ պատկանում էին ֆեոդալներին  
ու շահագործվում էին նրանց ձեռքով:

Այսպիսով ֆեոդալ-կալվածատերերը զարգացնում էին գյուղ-  
դատնետնական արդյունաբերութիւնը, որի մեջ զլխավոր արտա-  
դրական ճյուղերն էին հացահատիկային մշակույթին ու զինեղոր-  
ծութիւնը, պողպատեութիւնն ու անասնապահութիւնը, որ հով-  
վական բնույթ ուներ: Այլ արտադրական ճյուղերը կազմում էին  
ֆեոդալական շահագործման հիմնական աղբյուրները:

Վերջապես անստում ենք նաև կամուրջների ու ճանապարհ-  
ների շինարարութիւնը, որոնք խաղաղական ֆեոդալիզմի համար  
ուժեղին ոչ միայն ուղղմական նշանակութիւն, այլ և դարձ էին  
տալիս անարտ-անտեսական հարաբերութիւններին: Այլ հիւսնա-

վորց ճանապարհներից մեծ նշանակութիւն են ներկայացնում  
այժմայն Քիլիզիի լեռնանցքով ճանապարհը, որ ներկայումս էլ  
կանգնանում է Քյուրքչալից զեղի Իրան տանող ճանապարհ-  
ներից մեկը, իսկ մյուսն էլ որ նույնպես Քյուրքչալի ու Իրանի  
միջև է, զա հինավուրց ուղին էր Վանից զեղի Մուսասիր, որն  
անցնում էր այժմյան Քոփրակուր վրայով՝ Զիլեկանի մոտով  
(LIIA, I, 252—260. II, 301—307): Այդ երկու ճանապարհների  
վրա խաղաղական թագավորները հավերժացրի են իրենց անու-  
նները, զնեղով սեպագիր երկու կոթողներ: Մուսասիրը թաղ  
աստ-  
ծու ատճաղով կենսարանական կրօնական նշանակութիւն ուներ  
ամբողջ Բիսյանայի համար, ուր ուխտադրացութեան էին գիտում  
թագավորութեան բոլոր ծայրերից: Աւստի այդ «արքայան» քա-  
ղաքը դառնում էր միաժամանակ անտերական փոխանակութիւն-  
ների եռուն կենտրոն, որը շահագործվում էր անգլանի ֆեոդալի  
պիսին և դարձնում էր նրան խաղաղական ֆեոդալներից ամենաու-  
ժեղներից մեկը: Բնականաբար այդ ճանապարհները կարելի  
էր կին խաղում Բիսյանայի անտեսական ու քաղաքական կյանքում:

Սաղաքի անտեսական-շինարարական այդ բարձր կառու-  
թան ամբողջովին ստեղծվել էր անմիջական արտադրողների՝ աշ-  
խատավոր մասանների դարավոր աշխատանքով: Մտկայն այդ շա-  
հագործվող մասանների վիճակի մասին շատ քիչ բան են ասում  
մեզ հասած հնագիտական աղբյուրներ: Ենթև այսօր հազարավոր  
տարիներից հետո խաղաղական փառահեղ շինարարական դործերը  
նուրբողները ներկայացնում են ֆեոդալ-իշխանների, ազնվական-  
ների ու թագավորների հզորութիւնը, հարստութիւնը, ինքնա-  
զան կենցաղը, ապա նույն այդ հնագիտական վայրերում տակ-  
վին չեն հայտարարվել պարսպաներ, որոնք պատմին մեզ շա-  
հագործվող հած դանդաղների կենցաղը, աշխատանքի ու գոյու-  
թիւն պայմանները: Եվ ամենայն հավանականութեամբ երբեք  
էլ չեն հայտարարվի: Թղճուկ հյուզերը, հողի խրճիթները, թեր-  
ուս զեանափոր բնակարանները, որոնք տակվին գոյութիւն  
ունենին հետագայում էլ Քսենոֆոնի հույն զորքերի նասանջի ժա-  
մանակ, իրենց կենցաղային իրերով առանյակ դարերի ընթաց-  
քում վաղուց անտի հավասարվել են զեանի հետ, խառնվել է  
նուրբել են հողային շերտերի հետ երկրի ընդերքում:

ԽԱՂԻՍԿԱՆ ՖԵՈՒՍԼԻԶՄԻ ՄՈՅԻԱԼԱԿԱՆ ԱՆԱԼԻԶԸ

1. ԱՍՈՐԱ-ԲԱՐԵՆԱԿԱՆ ՕՒ ԽԱՂԻՍԿԱՆ ՖԵՈՒՍԼԻԶՄԻ ՓՈՅՄՆԱԲԵՐ ԱՔՆՁՈՒՅՑՈՒՆԸ

Մենք արդեն տեսանք, թե ինչպես տոճմային հասարակությունը գյուղական համայնքի միջով հետզհետե փոխվում է ֆեոդալական հասարակության: Գյուղական համայնքում տիրող «տունավորք», արտադրողական ուժերի զարգացմամբ, ժամանակի ընթացքում փոխվելով ներհակության, այն հետևանքն է ունենում, որ տառջանում է ներհակ դասակարգային հասարակություն:

Ինչպես ժամանակին ասացուցել է Կ. Մաքքար է ինչպես դա ակնրարն է պատմական փաստերից, այդ փոփոխման պրոցեսում մեծ դեր են խաղացել պատերազմական նվաճումները, որոնք այս դեպքում հանդիսանում են հիշյալ պրոցեսն արագացնող գործոններ: Այս պատմական երևույթն Առանձնապես ցայտուն կերպով աչքի է ընկնում Առաջավոր Ասիայի, մասնավորապես Հայկական լեռնաշխարհի ֆեոդալիզմի ծագման պատմության մեջ: Կ. Մաքքար ժողովուրդների պատմության մեջ նվաճումների խաղացած դերի մասին հետևյալն է ասում.

«Իսկ որ նվաճումների ժամանակ երեք տեսակ էլք է հնարավոր: նվաճող ժողովուրդը ենթարկում է նվաճված ժողովրդին արտադրության այն եղանակին, որ հատուկ է իրեն՝ նվաճողին (օրինակ՝ անգլիացիներն Իրանիիցում այս դարում, մասամբ Հնդկաստանում). կամ նվաճող ժողովուրդը թողնում է, որ հինը մնա և բավականանում է առաքելով (օրինակ՝ հոսսիացիք և թուրքերը). կամ առաջ է դալին փոխադրեցություն, որի միջոցով առաջանում է մի նորը, իբրև սինթեզ (մասամբ գերմանական նըվաճումների ժամանակ): Բոլոր դեպքերումն էլ արտադրության եղանակն է, — լինի դա նվաճող ժողովրդինը, թե նվաճվածինը կամ թե երկուսի խառնուրդից առաջ եկածը.—որ որոշում է նոր, տեղակալող, բնշխումը: Թեև այդ բոլորումը հրապարակ է դալուն իբրև նոր արտադրանքանի նախորդյալ բայց և այնպես նա ինքը կրկին արտադրության արդյունք է, այն էլ ոչ թե ընդ-

հանրապես պատմական, այլ մի որոշ պատմական արտադրության արդյունք: Օրինակ՝ մոնղոլները վարվում էին իրենց արտադրության եղանակի համաձայն՝ ելքը ամառացնում էին Ռուսաստանը. անտանապահության համար գլխավոր պայմանն են մեծ, անմարդարեակ առաքածություններ: Փրման բարբարոսները, որոնց գլխավոր արտադրությունը նորոտերի միջոցով կատարվող հողագործությունն էր, ինչպես և մեկուսացած կյանքը գյուղում, այնպես ամիլի հնչառությամբ կարողացան ենթարկել այդ պայմաններին հումանական նախադեմերը, որքան այնտեղ տեղի ունեցած հողատնտեսության կանցնիտացիան ամիլի էր խորտակել հողագործության հին հիստորիան: Մի ավանդական հայացք կա, բայց որի մարդիկ որոշ ժամանակաշրջաններում աղբյուր են ավարտության: Սակայն ավարտել կարողանալու համար պետք է ավարելու մի բան լինի, — այսինքն արտադրություն» (ՄԳԲ, 39—40)<sup>391</sup>.

Կ. Մաքքարի վերըբերյալ խոսքերից հետևում է, որ նվաճումները սերտորեն կապված են տիրապետող դասակարգերի շահերի հետ. ընդհանրապես նվաճումները, պատերազմները, ավարտումները դառնում են տիրապետող դասակարգի որոշակի քաղաքականություն, որ ծառայում է նրա ստիպու-անտեսական շահերին:

